

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԻՋԻՆ ԽՄԲԻ
(4-5 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ) ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ

2011

ՀՏԴ 373
ԳՄԴ 74.10
Ս 260

Հաստատված է

ՀՀ ԿԳ նախարարի՝ 27.10.2011 թ. թիվ 1192 Ա/Ք հրամանով

Ծրագրի համակարգող՝ **Հ.Միտոյան**

Հեղինակային խումբ՝

**Հ. Միտոյան, Ս. Մարության - մանկ. գիտ. քեկնածու, պրոֆեսոր,
Լ. Սմբատյան, Հ. Մինասյան, Գ. Մարտիրոսյան,
Հ. Հարությունյան, Կ. Ղազարյան, Լ. Վերոյան, Ժ. Ավետիսյան**

Ա 260 Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր
ծրագիր /Հ. Միտոյան և ուրիշ.։ ՀՀ ԿԳՆ, Կրթ. ազգ. ինստ., - Եր., Կրթ.
ազգ. ինս-տ. 2011. – 168 էջ:

ՀՏԴ 373

ԳՄԴ 74.10

ISBN 978 – 9939 – 806 – 37 – 2

© ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, 2011

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Միջին խմբի կրթական ծրագիրը կազմված է 4-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչների հիման վրա՝ այդ տարիքի երեխաների դաստիարակության, ուսուցման և հոգեֆիզիոլոգիական հնարավորությունների հաշվառմամբ: Ծրագիրը հենվում է կառուցողական տեսության վրա, որի կենտրոնում երեխայի բնական ու համակողմանի զարգացումն է: Այն միտված է խթանելու երեխայի զարգացման բոլոր ոլորտները:

Ծրագրում առաջին պլան է մղված կրթության զարգացնող գործառույթը: Միաժամանակ նկատառվել են ազգային ավանդույթները, ազգային և համամարդկային արժեքային համակարգը, որոնց հիմքով հնարավոր է ապահովել երեխայի անձի կացումը՝ բացահայտելով նրա անհատական առանձնահատկությունները:

Ծրագրային նյութի ընտրության գլխավոր չափանիշը դրա դաստիարակչական արժեքն է՝ գեղագիտական մակարդակի, տվյալ փուլում երեխայի համակողմանի ու ներդաշնակ զարգացման հնարավորությունների առկայությամբ:

Ծրագրի առաջատար նպատակներն են՝ երեխայի տարիքային և անհատական առանձնահատկություններին համապատասխան հոգեկան ու ֆիզիկական ներդաշնակ զարգացման ապահովումը՝ կյանքին և արդի հասարակությանն ըստ ամենայնի նախապատրաստելու ակնկալիքով: Ծրագրի նպատակներն իրացվում են մանկական տարաբնույթ գործունեության տեսակների ներկայացմամբ՝ խաղային, ուսումնական, գեղարվեստական, շարժողական, աշխատանքային:

Ելակետային է համարվել երեխաների ուսումնական և խաղային բեռնվածության երաշխավորվող չափի, երեխայակենտրոն ուսուցման ու դաստիարակության, շարունակական կրթության ապահովման պահանջը:

ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծրագիրը սահմանում է տվյալ տարիքային խմբի(4-5 տարեկան) կրթության բովանդակության ընդհանրական կառուցվածքը, կանոնակարգային պահերը, ուսումնական տարվա սկիզբը, ավարտը, հիմնական ուղղություններին հատկացվող շաբաթական և տարեկան պարապմունքների քանակը, սաների շաբաթական բեռնվածության առավելագույն քանակը, ակնկալվող արդյունքները՝ ըստ զարգացման ոլորտների ու գործունեության ձևերի:

Բոլոր բաժինների գծով ծրագրային նյութը տրված է ըստ եռամսյակների: Այդ կերպ հեշտացվում է նյութի հավասարաչափ բաշխումը, և իրացվում է կրկնության սկզբունքը:

Ծրագրում զետեղված են կրթադաստիարակչական գործընթացում կիրառվող գրական, երաժշտական ստեղծագործությունների, շարժախաղերի, դիդակտիկ խաղերի անվանացանկը և հանձնարարվող գրականության ցանկը: Ներկայացված են տվյալ տարիքային խմբի երեխաների հոգեֆիզիկական զարգացման առանձնահատկությունների բնութագիրը, դաստիարակության և ուսուցման ընդհանուր ու շեշտադրված, հատուկ խնդիրները, երեխաների կյանքի և կենսագործունեության կազմակերպումը: Նախատեսված է հնարավոր պատկերացումների, կյանքում, առօրյայում և ուսուցման ընթացքում անհրաժեշտ կարողությունների ու հմտությունների ձևավորումը: Ծրագրում մշակված է մանկական տոների, զվարճալիքների, ժամանցների բովանդակությունը: Շեշտադրված է նախադպրոցական հաստատությունում տարեվերջին երեխայի զարգացման ակնկալվող մակարդակը, տրված են կոնկրետ ձեռքբերումների արտացոլման չափանիշները:

Օգտագործված են նախադպրոցական կրթության ոլորտի մանկավարժական, նորարարական մեթոդաբանության և տեխնոլոգիայի հիմունքները:

Ծրագրի բովանդակային յուրաքանչյուր բաղադրիչ ուղեկցվում է *հավելվածով*, որտեղ ներառված են ուսումնական տարվա ընթացքում կրթադաստիարակչական գործընթացի հեռանկարային պլանավորումը, ըստ ծրագրի բաղադրիչների՝ մեթոդական ցուցումներ, նյութեր, հանձնարարականներ, պարապմունքների նմուշօրինակներ:

Հավելվածների նպատակն է՝ սատարել 4-5 տարեկան երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետ իրականացմանը և աջակցել նախադպրոցական հաստատությունների դաստիարակներին՝ ուսումնական տարվա ընթացքում կրթադաստիարակչական գործընթացը պլանավորել առավել նպատակաուղղված, մատչելի և համակարգված: Ուսումնական տարվա ընթացքում երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների հեռանկարային պլանավորումն ըստ ծրագրի՝ ներկայացվում է հետևյալ բաղադրիչներով.

- **Երեխան և շրջակա աշխարհը**

Առարկայական միջավայր: Հասարակական կյանքի երևույթներ:

Բնության հետ ծանոթացում: Տարրական էկոլոգիական պատկերացումների ձևավորում:

- **Խոսքի զարգացում: Գեղարվեստական գրականություն**
- **Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորում**
- **Կերպարվեստային գործունեություն**
- **Կառուցողական աշխատանք**
- **Երաժշտական պարապմունքներ**
- **Ֆիզկուլտուրայի պարապմունքներ**

Հիշեցնենք. պետք է, որ դաստիարակները միանշանակ ընդունեն հավելվածներում ներկայացված պարապմունքների շաբաթական թեմատիկ բաշխումը: Խմբում աշխատող դաստիարակը, հաշվի առնելով սեփական փորձը, հենվելով երեխաների հնարավորությունների վրա, կարող է, կողմնորոշվելով աղյուսակի տեսքով ներկայացված տարաբնույթ աշխատանքների հաջորդականությամբ, իր հայեցողությամբ իրականացնել պլանավորման որոշ փոփոխություններ և կատարել լրացումներ:

ՄԻՋԻՆ ԽՄԲԻ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջին նախադպրոցական տարիքը /4-5 տարեկան/ բավական բարդ ժամանակաշրջան է երեխայի համար: Այս մեկ տարվա ընթացքում տեղի են ունենում ֆիզիոլոգիական և հոգեկան զարգացման նկատելի որակական փոփոխություններ: Եթե տարեսկզբին փոքրիկն իր ցուցանիշներով նման է կրտսեր նախադպրոցականին, ապա տարեվերջին նա կարծես դառնում է ավագ նախադպրոցական:

Երեխայի քաշն աճում է մոտավորապես 2 կգ-ով, իսկ հասակը՝ 6-7 սմ-ով: Այս տարիքի երեխաների մեջ մկանային հյուսվածքից բացի, արագորեն զարգանում է նաև ոսկրային համակարգը: Երեխան կարծես ձգվում է: Ոսկրերն աճում են՝ կռճիկային հյուսվածքը ոսկրային փոխարինվելու հաշվին: Զարգանում են նաև գանգոսկրերը /երեխայի գլուխը մի տեսակ մեծանում է/: Շարունակվում է գլխուղեղի կառուցվածքի և ֆունկցիաների բուռն զարգացումը: Գլխուղեղում որոշ բջիջների «միացման», որոշների էլ առավել ամրացման շնորհիվ ձևավորվում են նոր կապեր՝ ավելի հստակություն հաղորդելով ուղեղի կառուցվածքին: Կատարելագործվում են մեծ կիսագնդերի կեղևի ֆունկցիաները: Մեծանում է երեխայի ակտիվությունը, նպատակաուղղվածությունը: Շարժումները դառնում են բազմազան և համակարգված: 4 տարեկան երեխան արդեն պետք է ունենա բոլոր կաթնատամները՝ 20 հատ:

Այս տարիքի երեխան աճում է շարժման մեջ և զարգանում համամասնորեն: Նրա արարքներն առավել տրամաբանված են, ավելի կանխատեսելի: Մեծահասակն ավելի հեշտ է հասկանում փոքրիկին: Նրա հարցերի միջոցով կամաց-կամաց

ի հայտ է գալիս որոշակի համակարգ, և տրված հարցերով կարելի է իմանալ նրա հետաքրքրությունների շրջանակը, անգամ պարզել, թե հետագայի համար գործու-
նեության ինչ ասպարեզ է նախընտրելու փոքրիկը:

Իր կարողությունների չափով երեխան հասկանում է շրջապատող աշխարհն ու
իր տեղն այդ աշխարհում: Գիտակցում է նաև, որ այդ տեղն այնքան էլ կենտրոնա-
կան չէ, այսինքն՝ իրեն դիտարկում է քննադատորեն: Մեծահասակի օգնությամբ
նա ճանաչում է աշխարհն իր ամբողջ բազմազանությամբ: Շարունակ հետաքրքր-
վում է շրջապատով, ամեն մի նոր գիտելիք փորձարկում իր վրա:

Ամենակարևոր և առաջատար գործունեությունը, որն ի հայտ է գալիս այս տա-
րիքում, **սյուժետադերային խաղն է:**

Այն դիտարկվում է որպես վարքի փորձառության հավաքագրման ու կշռադատ-
ման ընդհանրական և երեխայի բարոյական ու սոցիալական ձգտումների հիմնա-
կան բաղկացուցիչների ձևավորման միջոց: Խաղի ընթացքում տիրապետող է զգա-
յական այնպիսի մթնոլորտ, որը նպաստում է երեխայի ապրումակցային խառնվածքի,
այն է՝ ուշադրության, նրբազգացության, հոգատարության, պատրաստականության,
բարյացականության և արդարացիության հատկանիշների ձևավորմանը: Խաղը երե-
խային դարձնում է գործուն սուբյեկտ, նպաստում կախյալ, անհամարձակ, անվստահ
երեխաների անհատական աճին ու զարգացմանը: Այսպիսով՝ անգնահատելի է խա-
ղային գործունեության դերն ու նշանակությունը երեխայի հոգեկանի ձևավորման և
նրա հոգևոր կյանքի հարստացման առումով:

Դերային խաղն ավելի մոտ է իրականությանը. ուշադրություն է դարձվում ման-
րամասներին, ժամանակին և տարածությանը: Երեխան վերարտադրում է իրեն լավ
ծանոթ իրավիճակներն ու հարաբերությունները: Այդ խաղերը սովորաբար մեծերի
կյանքի մանկական մեկնաբանություններ են, որոնցում դրսևորվում է փոքրերի վերա-
բերմունքը մեծերի «խաղի» նկատմամբ:

Դերաբաժանումը կարևոր սոցիալական նշանակություն ունի. այն սովորաբար
ինքնաբերաբար է կատարվում /ի տարբերություն ներկայացման նախապատրաստ-
մանը/: Այդ ընթացքում երեխան զնահատում ու յուրացնում է հասարակության մեջ ըն-
դունված սոցիալական դերերն ու հարաբերությունները, վերարտադրում դրանք: Օգ-
տագործելով փոխարինելու, հանդգելու, բանակցելու ունակությունները՝ լուծվում են
խաղընկերների հետ առաջացող պրոբլեմները:

Եական նշանակություն ունեն դիդակտիկ խաղերն ու շարժախաղերը, որոնցում
ձևավորվում են երեխաների ճանաչողական գործընթացները: Դրանց միջոցով զար-
գանում են դիտունակությունը, կանոններին ենթարկվելու կարողությունը, կազմավոր-
վում են վարքի ունակությունները: Դիդակտիկ խաղերի բովանդակությունը միշտ որևէ
մտավոր խնդրի իրականացումն է: Ուստի՝ դրանք հիմնականում անցկացվում են դաս-
տիարակի ղեկավարությամբ՝ հստակ կազմակերպված պարապմունքների միջոցով:
Պարապմունքների խաղային բնույթը շարժում է երեխաների հետաքրքրությունը, լա-
րում նրանց ուշադրությունը, իսկ ուսուցողական խնդիրը լուծվում է խաղի ընթաց-

քում:

Խաղի հետ մեկտեղ արագորեն զարգանում են գործունեության արդյունավետ ձևերը, հատկապես կերպարվեստային ու կառուցողական: Բավական բազմազան է դառնում նրանց կատարած նկարների և կառուցումների բովանդակությունը՝ չնայած մտահղացումները մնում են դեռևս ոչ բավարար հստակ ու կայուն:

4-5 տարեկան երեխան, կարելի է ասել, ապրում է ավելի շատ մտքով: Այս տարիքը կարելի է անվանել «մտավոր քաղցի» տարիք: Փոքրիկն ուզում է բառացիորեն ամեն ինչ իմանալ, շատ հարցեր է տալիս, երբեմն՝ բարդ և անսպասելի:

Նա ավելի հանգիստ ու կենտրոնացած է, քան 3 տարեկանում: Լավ է տիրապետում իրեն, ինքնատիրապետումը կորցնում է միայն բացառիկ դեպքերում: Դրա հետ մեկտեղ նա նաև նրբազգաց է և նրբանկատություն է պահանջում:

Այս տարիքի երեխան արդեն անհատ է, նա դրսևորում է ամեն ինչի և բոլորին նմանվելու բուռն ցանկություն: Արագ գտնում է իր կատարելատիպը, որը ժամանակի ընթացքում կարող է փոխվել: Բնավորության գծերից է հետաքրքրասիրությունը, որն աճում է խոսքի զարգացման հետ մեկտեղ: Այստեղից էլ հասկանալի է դառնում հարցերի այն տարափը, որ նա թափում է մեծահասակի վրա:

4-5 տարեկանում փոքրիկի խոսելու հմտություններն ավելի են կատարելագործվում: Ջարգանում են խոսքի՝ մենախոսության և երկխոսության ձևերը: Նրանք կարողանում են պատմություններ հորինել՝ օգտագործելով բարդ նախադասություններ: Հատկանշական է, որ այս տարիքում արդեն երեխաները պատմում են ոչ միայն այն մասին, թե ինչ է կատարվել իրենց հետ, այլև ներկայացնում են այն, ինչ զգում և մտածում են: Նշանակալիորեն մեծանում է նաև ակտիվ բառապաշարը: Նրանք տարբերակում են բանաստեղծական և պատմողական տեքստերը: Աճում է հետաքրքրությունը հեքիաթներ, ոտանավորներ, պատմություններ լսելու նկատմամբ, ուժեղանում է մեծերի խոսքային արտահայտչականությունն ընդօրինակելու ձգտումը: Բարձրանում է երեխաների ըմբռնողականությունը զեղարվեստական ստեղծագործությունների ժանրերի և մի քանի տարրերի նկատմամբ՝ ռիթմ, հանգ:

Տարիքային այս խմբում սկսում է կատարելագործվել կերպարային մտածողությունը: Տրամաբանական մտածողության շնորհիվ երեխաներն սկսում են առանձնացնել առարկաների ընդհանուր նշանները, խմբավորել դրանք ըստ արտաքին հատկանիշների, նյութի և նշանակության, հասկանալ երևույթների պատճառահետևանքային պարզագույն կապերը, վերլուծել, հակադրել, համադրել, ընդհանրացնել դեպքերն ու փաստերը:

4-5 տարեկանում, երբ երեխան զգալիորեն մեծացել է և՛ արտաքնապես, և՛ մտավոր զարգացման առումով, բավականին աննկատ ձևով ձեռք է բերում ինչ-որ սոցիալական երանգավորում: Այդ փոփոխության մեջ հիմնական դերը պատկանում է բանականության կատարելագործմանը:

Ձգայական զարգացումը մտավոր դաստիարակության բաղադրամասերից է: Նախադպրոցական տարիքը զգայական ինտենսիվ զարգացման շրջան է, առար-

կաների ու երևույթների արտաքին հատկանիշների ու հարաբերությունների, տարածության, ժամանակի մեջ կողմնորոշվելու կատարելագործման շրջան: Տարիքային այս փուլում որոշակիորեն ընդլայնվում է ժամանակի ըմբռնումը. երեխան կարողանում է խոսել երեկվա, այսօրվա կամ վաղվա մասին:

Հաշվի առնելով երեխայի արտակարգ զարգացած և ճկուն երևակայությունը՝ համոզված կարելի է ասել, որ նա անպայման ինչ-որ բան կհասկանա ամենաբարդ բացատրությունից անգամ. հնարավոր է, որ երևակայության շնորհիվ աչքերի առաջ ինչ-որ ֆանտաստիկ պատկեր անցնի: Այս տարիքում ի հայտ է գալիս հատկապես ստեղծագործական երևակայությունը, որը կրում է կամային բնույթ: Այն բուռն կերպով զարգանում է հատկապես դերային խաղի ժամանակ: Երեխան խաղը վերարտադրում է ըստ իր հասկացածի: Ստեղծագործում է, ավելացնում, պակասեցնում դրա տարրերը:

Այս տարիքի երեխաների հոգեկան գործընթացների զարգացման առանձնահատկություններից է այն, որ դրանք հիմնականում զարգանում են միաձույլ կերպով: Դրանցից են, օրինակ, ուշադրությունը, հիշողությունը և երևակայությունը: Այսպես, թեև հիշողությունը տվյալ տարիքում դառնում է առաջատար հոգեկան գործառույթ, այնուամենայնիվ, այն հանդես է գալիս երևակայության հետ միաձուլված: Ընդլայնվում է հիշողության ծավալը: Երեխան կարող է հիշել թվարկած 6-8 առարկաներ, մեծերի հանձնարարություններ, սովորում և մտապահում է ոտանավորներ, երգեր:

Ուսուցման և դաստիարակության շնորհիվ երեխան դրսևորում է պարզագույն գիտակցություն և կամային ուշադրություն. նախադպրոցականը կարողանում է ըմբռնել, մտապահել, հիշել, վերարտադրել, սովորել խաղի կանոնները, ճանաչել շրջապատող առարկաներն ու երևույթները: Միաժամանակ ձեռք է բերում որոշակի ունակություններ, հմտություններ, սովորություններ: Ուշադրության կենտրոնացումը, տարիքային նախորդ խմբի համեմատությամբ, ավելի երկարատև է՝ 15-20 րոպե: Չնայած այդ հանգամանքին՝ ուշադրությունը կարող է նաև հեշտորեն շեղվել:

Այս տարիքի երեխաների գործունեության բնորոշ առանձնահատկություններից է զգացմունքայնությունը: Ջգացմունքներն իշխում են երեխայի կյանքի մյուս բոլոր կողմերի վրա՝ դրանց տալով մի նոր գունավորում ու արտահայտչականություն: Շրջապատի հետ ունեցած հարաբերություններից երեխայի մեջ կարող են արթնանալ ուրախության, տխրության, հպարտության, ինչպես նաև սիրո, խանդի, վախի, գեղեցիկի, ամոթի զգացողություններ: Կարեկցանքի երևան գալը վկայում է, որ երեխան ընդունակ է ապրումակցման: Սակայն այս տարիքի երեխայի զգացմունքները դեռևս իրավիճակային են և անկայուն: Նա ի վիճակի չէ տևական կարեկցանքի, ուրիշների նկատմամբ հոգատարության:

Նախադպրոցական այս տարիքում ծնվում է կամային որակը՝ որպես երեխայի վարքի արտաքին ու ներքին գործողությունների գիտակցական կառավարում: Փոքրիկը սկսում է պլանավորել սեփական գործողությունները, դեպի նպատակը

տանող ճանապարհին որոշակի խնդիրներ կարգավորել և հաղթահարել դժվարությունները:

Միջին խմբի երեխաներն ընդունակ են գիտակցաբար համաձայնեցնելու սեփական վարքը ընկերների վարքի հետ և գնահատելու հնարավորությունները:

ՂԱՍՏԻԱՐԱՎԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կյանքի հիմնգերոդդ տարին երեխայի օրգանիզմի աճման և զարգացման ինտենսիվ շրջանն է:

Ծրագրի նպատակն է՝ նպաստել երեխաների պատկերացումների ընդլայնմանը՝ մարդկանց գործունեության, շրջակա միջավայրի առարկաների և բնության, հասարակական երևույթների վերաբերյալ, սովորեցնել տարանջատել առարկայի առանձին մասեր և բնութագրիչ հատկանիշներ (գույն, ձև, մեծություն), շարունակել զարգացնել ըստ այդ հատկանիշների՝ առարկաները համեմատելու, խմբավորելու կարողությունները: Այս ասպարեզում հիմնական խնդիրներն են՝

➤ Ձևավորել ընդհանրացված պատկերացումներ առարկաների և երևույթների մասին, սահմանել դրանցից մի քանիսի պարզագույն կապերը:

➤ Բավարարել երեխաների պահանջարկը՝ կոնկրետ իրավիճակից դուրս մանկավարժի կողմից տեղեկատվություն ստանալու և քննարկելու ուղղությամբ: Ցուցաբերել անմիջականություն երեխաների դատողությունների հանդեպ:

➤ Կատարելագործել երեխաների՝ սեփական գործողությունները պլանավորելու, որոշակի մտահղացումներ իրականացնելու կարողություն, ձևավորել գործողության նպատակի, դրան հասնելու եղանակների մասին պատկերացումներ:

➤ Շարունակել երեխաների առողջության ամրապնդման, օրգանիզմի կոփման ուղղությամբ տարվող աշխատանքները. ապահովել ռեժիմի հստակ իրականացում:

➤ Դաստիարակել ճիշտ կեցվածք, ապահովել ֆիզիկական ներդաշնակ զարգացում:

➤ Ամրապնդել կուլտուր-առողջապահական և ինքնասպասարկման ունակությունները. շարունակել զարգացնել ինքնուրույնությունը:

➤ Ծանոթացնել մոտ մարդկանց մասնագիտություններին՝ ընդգծելով նրանց աշխատանքի կարևորությունը:

➤ Շարունակել հարստացնել երեխաների խաղերի բովանդակությունը. խրախուսել ինքնուրույն, փոքրիկ խմբերով խաղերը: հղկել խոսքը խաղերի ժամանակ: Ձևավորել խնամքով վերաբերմունք խաղալիքների նկատմամբ:

➤ Դաստիարակել սեր աշխատանքի նկատմամբ: Կատարելագործել ինքնուրույն և համատեղ աշխատելու, սկսած գործը մինչև վերջ հասցնելու կարողություն:

➤ Ձևավորել հասակակիցների և մեծերի հանդեպ հարգալից վերաբերմունք: Սովորեցնել ճիշտ գնահատել ինչպես սեփական, այնպես էլ հասակակիցների

արարքները: Տարբեր իրավիճակներում լինել հանդուրժող և համբերատար:

➤ Ձևավորել պատկերացումներ՝ զսպվածության, բարության, հոգատարության, համարձակության վերաբերյալ: Սովորեցնել լինել արդար, ներողամիտ, միաժամանակ սխալ արարքի դեպքում դրսևորել ամոթի զգացում՝:

➤ Խուսափել երեխաների արարքների հրապարակավ քննադատությունից: Ավելի շատ խրախուսել և կոնկրետ նշել, թե ինչու են արժանացել զովեստի:

➤ Շարունակել դաստիարակել սեր հայրենիքի, հայրենի տան, մանկապարտեզի հանդեպ: Ընդարձակել պատկերացումները շրջապատող առարկաների և երևույթների մասին: Կարողանալ գտնել պարզագույն կապեր դրանց միջև:

➤ Կարողանալ տարբերել առարկաների առանձին մասեր և բնութագրել դրանք, ինչպես նաև համադրել և համեմատել ըստ ձևի, գույնի և մեծության:

➤ Ձևավորել պարզագույն գիտելիքներ՝ արտաքին միջավայրի որոշակի պայմաններից բուսական և կենդանական աշխարհի կախվածության մասին: Ձարգացնել դիտումնակությունը և հետաքրքրասիրությունը:

➤ Շարունակել զարգացնել խոսքը: Կատարելագործել հնչարտաբերումը, ընդարձակել ակտիվ բառապաշարը: Սովորեցնել պահպանել խոսքի քերականական ճիշտ կառուցվածքը: Ձարգացնել խոսքի մեմախոսության և երկխոսության ձևերը:

➤ Ձևավորել ոտանավոր արտասանելու, հեքիաթ պատմելու, դրանք հուզականորեն վերարտադրելու ունակություններ: Օգնել երեխաներին՝ ակտիվ մասնակցելու առաջադրված թեմայով զրույցներին, կազմել փոքրիկ պատմություններ սեփական փորձի, խաղալիքի, թեմատիկ նկարի վերաբերյալ:

➤ Ձարգացնել գեղարվեստագեղագիտական, բարոյագեղագիտական զգացմունքներն առօրյայում, խաղերում, բնության զրկում:

➤ Արթնացնել գեղարվեստական գործունեության տարբեր ձևերի հանդեպ հետաքրքրություն: Ձարգացնել երաժշտական, բանաստեղծական լսողության, գույնի, ռիթմի, ձևի զգացողություն:

➤ Ձարգացնել արտահայտիչ արտասանելու, երգելու, պարելու, գեղարվեստական ստեղծագործության հերոսներին իրենց նկարներում և դերերում վերարտադրելու կարողություններ:

➤ Երեխաներին հաղորդակից դարձնել ժողովրդական ավանդույթներին, մշակույթին, պատմական իրադարձություններին, տոնակատարություններին: Դաստիարակել սեր հայրենի եզերքի, Հայաստան-աշխարհի, մայրաքաղաք Երևանի, հայրենի երկրի մշակույթի, ճարտարապետական հուշարձանների, կենցաղի մշակույթի, նրա անցյալի, ներկայի պատմական իրադարձությունների հանդեպ:

➤ Նպաստել երեխաների համակողմանի զարգացմանը: Շարունակել զարգացնել ուշադրությունը, խոսքը, տրամաբանական մտածողությունը, հիշողությունը, երևակայությունը և կամային որակները:

**ՄԻՋԻՆ ԽՄԲԻ ՇԱԲԱԹԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՑԱՆԿ**

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
Ծանոթացում շրջակա միջավայրին և հասարակական կյանքի երևույթներին. առարկայական միջավայր, հասարակական կյանքի երևույթներ, բնության երևույթներ, էկոլոգիական դաստիարակություն	1 (հերթագայմամբ)
Խոսքի զարգացում. գեղարվեստական գրականություն	2 (հերթագայմամբ)
Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացում	1
Նկարչություն	2
Ծեփ	1
Ապլիկացիա, կառուցողական	1/2
Ֆիզկուլտուրա	2
Երաժշտություն	2

Շաբաթական ընդամենը` 12 պարապմունք

Պարապմունքներն անցկացվում են սեպտեմբերից մինչև հունիսի մեկը /առաջին երկու շաբաթը հարմարվողականության շրջան է, հատուկ պարապմունքներ չեն անցկացվում/, 20-25 րոպե տևողությամբ: Պարապմունքների միջև ընկած ժամանակահատվածը` ընդմիջումներ 10-15 րոպե տևողությամբ:

ՄԻՋԻՆ ԽՄԲՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՔԱՆԱԿԸ
Ծանոթացում շրջակա միջավայրին և հասարակական կյանքի երևույթներին. առարկայական միջավայր, հասարակական կյանքի երևույթներ, բնության երևույթներ, էկոլոգիական դաստիարակություն	36 (հերթագայմամբ) Այդ թվում` 18-Շրջակա միջավայր, հասարակական կյանքի երևույթներ 18-Ծանոթացում բնությանը, էկոլոգիական դաստիարակություն
Խոսքի զարգացում.գեղարվեստական գրականություն	72 (հերթագայմամբ)
Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացում	36
Նկարչություն	72
Ծեփ	36
Ապլիկացիա, կառուցողական աշխատանք	36- 18/18
Ֆիզկուլտուրա	72
Երաժշտություն	72
Դաստիարակի հայեցողությամբ	36

**4-5 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ԽՄԲԻ ՕՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՌԵԺԻՄԻ ՏԱՐԲԵՐԱԿ
(9-10.5 ժամյա՝ հնգօրյա աշխատանքային ռեժիմով)**

Օրվա ռեժիմը պարապմունքների սանդղակի կազմման, դաստիարակչական աշխատանքների ու գործունեության ազատ ձևերի պլանավորման, երեխաների ֆիզիկական և մտավոր աշխատանքների ճիշտ հերթագայման, ծանրաբեռնվածության ներդաշնակ բաշխման մեխանիզմ է: Ստորև բերվում է օրվա ռեժիմի մտավոր տարբերակ՝ հնգօրյա աշխատանքային շաբաթով, 9-10.5 ժամ տևողության համար: **Առաջնորդվելով դրանով՝ յուրաքանչյուր մանկապարտեզ պետք է կազմի իր պայմաններին և առանձնահատկություններին համապատասխան ռեժիմ:** Շուրջօրյա խմբերում կամ մանկապարտեզներում ռեժիմային պահերը կարելի է տեղաշարժել 20 րոպեից մինչև 30 րոպե, նկատի ունենալով, որ երեխաները ժամանակ չեն կորցնում մանկապարտեզ գալու ճանապարհին:

N	Կանոնակարգային պահեր	Ժամերը՝ տարվա ցուրտ եղանակին	Ժամերը՝ տարվա տաք եղանակին
1.	Երեխաների ընդունելություն, խաղեր, առավոտյան մարմնամաքություն	8 ³⁰ -9 ³⁰	8 ³⁰ -9 ³⁰
2.	Նախաճաշի նախապատրաստում, նախաճաշ	9 ³⁰ -10 ⁰⁰	9 ³⁰ -10 ⁰⁰
3.	Պարապմունքի նախապատրաստում՝ առաջին երկրորդ երրորդ	10 ⁰⁰ -10 ¹⁰ 10 ¹⁰ -10 ³⁵ 10 ⁴⁵ -11 ¹⁰ 11 ²⁰ -11 ⁴⁵	10 ⁰⁰ -10 ¹⁰ 10 ¹⁰ -10 ³⁵
4.	Խաղեր, զբոսանքի նախապատրաստում, զբոսանք (խաղեր, դիտումներ, աշխատանք)	11 ⁴⁵ -12 ⁴⁰	10 ³⁵ -12 ³⁰
5.	Վերադարձ զբոսանքից, խաղեր	12 ⁴⁰ -12 ⁴⁵	12 ³⁰ -12 ⁴⁵
6.	Ճաշի նախապատրաստում, ճաշ	12 ⁴⁵ -13 ¹⁵	12 ⁴⁵ -13 ¹⁵
7.	Ցերեկային քնի նախապատրաստում, քուն	13 ¹⁵ -15 ²⁰	13 ¹⁵ -15 ²⁰
8.	Արթնացում, կոփման արարողություն	15 ²⁰ -15 ⁵⁰	15 ²⁰ -15 ⁵⁰
9.	Հետճաշիկի նախապատրաստում, հետճաշիկ, խաղեր	15 ⁵⁰ -16 ³⁰	15 ⁵⁰ -16 ³⁰
10.	Զբոսանքի նախապատրաստում,զբոսանք, տուն ճանապարհել	16 ³⁰ -17 ³⁰ 10,5-ժամյա	16 ³⁰ -17 ³⁰ 10,5-ժամյա
	Զբոսանքի նախապատրաստում,զբոսանք, տուն ճանապարհել	16 ³⁰ -19 ⁰⁰	16 ³⁰ -19 ⁰⁰

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական հաստատություններում երեխաների ֆիզիկական դաստիարակությունը նպատակաուղղված է նրանց առողջության պահպանմանը և ամրապնդմանը, օրգան-համակարգերի գործունեության բարելավմանը, ֆիզիկական զարգացմանը, ինչպես նաև նրանց շարժողական կարողությունների ու հմտությունների ձևավորմանը:

Երեխաները տիրապետում են տարբեր ֆիզիկական վարժությունների և շարժախաղերի, որոնք նպաստում են նրանց առողջության ամրապնդմանը, կեցվածքի ձևավորմանը, օրգանիզմի կոփմանը, ֆիզիկական համաչափ զարգացմանը, շարժողական ընդունակությունների /արագություն, ճկունություն, ճարպկություն, ուժ, դիմացկունություն/ մշակմանը և կամային որակների դաստիարակմանը:

Միջին խմբերի ծրագրում տրված են հիմնական շարժումներ, խաղեր, մարմնամարզական, պարային և ռիթմիկ-մարմնամարզական վարժություններ, մարմնի ճիշտ կեցվածքի ձևավորման, շարժողական ընդունակությունների զարգացման, հարթաթաթության կանխման, շնչառությունը կարգավորող վարժություններ, որոնք պետք է իրականացվեն մանկապարտեզի կրթադաստիարակչական ամբողջ աշխատանքի ընթացքում:

Ծրագրի համաձայն շաբաթվա ընթացքում անցկացվում են ֆիզկուլտուրայի պարապմունքներ: Բացի այդ՝ օրվա ընթացքում դաստիարակը կազմակերպում է զանազան խաղեր, ֆիզիկական վարժությունների տարբեր ձևեր, նմանողական շարժումներ, պարային շարժումների տարրեր և այլն, որոնց միջոցով երեխաները տիրապետում են հիմնական շարժումներին, երաժշտական ռիթմերին, պարային շարժումներին, ինչպես նաև շարժումների կուլտուրային և այլն:

Այս խնդիրները կարգավորվում են ֆիզիկական դաստիարակության տարբեր ձևերով՝ ֆիզկուլտուրայի պարապմունքներ, խաղեր, ֆիզկուլտ-առողջարարական միջոցառումներ և այլն:

Շարժողական ռեժիմում մեծ տեղ է հատկացվում երեխաների ինքնուրույն շարժողական գործունեությանը, որտեղ երեխան իր նախասիրություններին համապատասխան ստանում է ազատ ընտրության հնարավորություն՝ զբաղվելու գործունեության տարբեր ձևերով, միաժամանակ ձեռք է բերում ինքնահաստատման, ինքնաճանաչման հնարավորություն: Տարվա ընթացքում անցկացվում են նաև ժամանցներ, մարզական տոներ, սպորտլանդիաներ և այլ մարզական միջոցառումներ, որտեղ երեխաները հնարավորություն են ունենում ցուցադրելու իրենց ձեռք բերած կարողությունները և հմտությունները:

Ֆիզիկական դաստիարակության այս խնդիրների լուծման համար կարևոր նշանակություն ունի մանկապարտեզում հիգիենիկ բարենպաստ պայմանների

ստեղծունը՝ մարզադահլիճ, անհրաժեշտ մարզագույք, խաղահրապարակ և հնարավորության դեպքում նաև լողավազան:

Ֆիզիկական զարգացման տարիքային բնութագրիչներ

Երեխաների յուրաքանչյուր տարիքային խումբ ունի ֆիզիկական զարգացման որոշակի մակարդակ, մտավոր գործունեության, կամային և հուզական գերիշխող հատկանիշներ: Յետևաբար, ֆիզիկական դաստիարակության աշխատանքները կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների տարիքային առանձնահատկությունները և ֆիզիկական զարգացման բնութագրիչները:

Շարունակվում է միջին խմբում ընդգրկված երեխաների օրգանիզմի աճն ու զարգացումը: Կատարելագործվում են ֆիզիոլոգիական ֆունկցիաները: Բարելավվում են նյութափոխանակության և ջերմակարգավորման գործընթացները: Փոփոխվում է կրծքավանդակի ձևը, ակտիվորեն ձևավորվում է գանգոսկրը, կոնքոսկրը, ձեռքերի և ոտքերի մատները, ողնաշարը: Կառուցվածքային փոփոխություններ են տեղի ունենում նաև մկանաթելերի և հողակապանային ապարատում:

Սակայն դեռևս լրիվ չի ձևավորված ոսկրամկանային համակարգը, ինչի պատճառով անբարենպաստ պայմանները /երկարատև անհարմար դիրք, ուժեղ մկանային լարվածություն/ կարող են նախապայման լինել երեխաների բնական զարգացման խախտումների համար՝ կեցվածքի շեղումներ, հոդերի ձևափոխություն, հարթաթաթություն:

Այս տարիքում արագորեն զարգանում են շարժողական ֆունկցիաները: Երեխայի շարժողական ակտիվությունը բնութագրվում է ինքնուրույն գործունեության բավականին բարձր մակարդակով: Այստեղ միջինում երեխաների շարժողական ակտիվության ծավալը կազմում է 10-14 հազար պայմանական քայլեր, տևողությունը 240-250 րոպե, մոտավորապես 4 ժամ, ակտիվությունը՝ 40-55 շարժում՝ մեկ րոպեում: Մեկ օրվա շարժողական ակտիվությունը կարող է տատանվել ըստ եղանակային տատանումների, շարժողական գործունեության բնույթի և բովանդակության:

Այս տարիքում երեխաների շարժումները դառնում են առավել վստահ, համաչափ, ուշադրությունը՝ հաստատուն: Կատարելագործվում է տեսողական, լսողական և զգայական ընկալումը, զարգանում առարկայական հիշողությունը: Երեխան դրսևորում է խոշոր շարժումներով պայմանավորված հիմնական հմտություններ՝ քայլքի, վազքի, ցատկելու, մագլցելու, բարձրանալու և իջնելու ժամանակ ցուցաբերելով հավասարակշռության, կոորդինացիայի զարգացնող ունակություններ: Երեխան ցուցաբերում է ձեռքերի և մատների շարժումների կատարման հմտություններ:

**4 – 5 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

ՏԱՐԻՔ	ՍԵՌ	ՄԱՐՄՆԻ ՀԱՍՆԿԸ /սմ/	ՄԱՐՄՆԻ ՔԱՇԸ /կգ/	ԿՐԾՔԱՎԱՆՊԱԿԻ ՇՐՋԱԳԻԾԸ /սմ/
4 տարեկան	Տղաներ	99 – 109	14,5 – 18,5	51,1 – 55,3
	Աղջիկներ	98 – 109	13,9 – 18,2	49,3 – 54,0
5 տարեկան	Տղաներ	106 -116	16,4 – 19,7	52,0 – 57,0
	Աղջիկներ	102 – 111	15,4 – 19,0	51,6 – 56,2

Միջին խմբում Ֆիզիկական դաստիարակության խնդիրները

Միջին խմբերում Ֆիզիկական դաստիարակության խնդիրներն են՝

- նպաստել երեխաների առողջության պահպանմանը և ամրապնդմանը,
- ձևավորել ճիշտ կեցվածք, համաչափ, ներդաշնակ մարմնի կառուցվածք,
- սովորեցնել վարժությունների կատարման ժամանակ ճիշտ շնչել և արտաշնչել՝ առանց շնչարգելումների,
- քայլել ձեռքերի ազատ և բնական շարժումներով, կեցվածքը պահել ուղիղ, քայլքի ժամանակ ամրապնդել ձեռքերի և ոտքերի համաձայնեցված շարժումները,
- վազել թեթև, ռիթմիկ՝ հրվելով թաթով և ոտքերը լրիվ ուղղելով,
- զարգացնել շարժումների կատարման ճշգրտությունը,
- սովորեցնել տեղից ցատկել ճիշտ ելման դրությունից, թափով առաջ մղվել՝ գուգակցելով ձեռքերի շարժումները, և փափուկ վայրէջք կատարելը,
- նետումների ժամանակ սովորեցնել ընդունել ճիշտ ելման դրություն /դիրք/:

Ֆիզիկական վարժությունների, հիմնական շարժումների, խաղերի, ընդհանուր զարգացնող վարժությունների յուրացման միջոցով ընդլայնել, հարստացնել երեխաների շարժողական փորձը:

Աստիճանաբար և զգուշորեն խթանել շարժողական ընդունակությունների /արագաշարժություն, ճարպկություն, ուժ, ճկունություն, դիմացկունության/ զարգացումը, ժամանակի և տարածության մեջ՝ կողմնորոշումը, աչքաչափը, հավասարակշռության պահպանումը:

Ֆիզիկական դաստիարակության այս խնդիրները կարող են հաջողությամբ լուծվել միայն ամենօրյա նպատակային շարժողական ռեժիմի իրականացման պայմաններում: Դրանք են՝ ամենօրյա ֆիզկուլտ-առողջարարական միջոցառումների, տարբեր ֆիզիկական վարժությունների և խաղերի կազմակերպումը, ինչպես նաև երեխաների ազատ, ինքնուրույն շարժողական գործունեությունը:

Ֆիզիկական դաստիարակության աշխատանքի ձևերը

Աշխատանքի ձևերը	Կազմակերպման առանձնահատկությունները
1. Ուսումնական աշխատանք՝ Ֆիզկուլտուրայի պարապմունքներ	Շաբաթական 2 պարապմունք՝ 20-25 րոպե տևողությամբ
2. Ֆիզկուլտ-առողջարարական աշխատանքներ օրվա ընթացքում	
- Առավոտյան մարմնամարզություն	Ամեն օր, 6-8 րոպե տևողությամբ
- Շարժողական նախաձեռնումք ցերեկային քնից հետո, օդային և ջրային արարողակարգեր	Ամեն օր 5-10 րոպե
- Ֆիզկուլտ-րոպե /դադար/	Ըստ անհրաժեշտության՝ պարապմունքների ընթացքում՝ 1-3 րոպե
- Բացօթյա ֆիզիկական վարժություններ և շարժախաղեր	Ամեն օր
- Ձբոսանքներ, արշավներ	Ամիսը մեկ անգամ 40-50 րոպե
3. Ինքնուրույն շարժողական գործունեություն	Ամեն օր, բնույթը և տևողությունը կապված են երեխաների անհատական հնարավորություններից և նրանց պահանջներից: Այն անցկացվում է դաստիարակի հսկողությամբ:
4. Ակտիվ հանգիստ	Ամիսը 1 - 2 անգամ՝ 20-30 րոպե
Ֆիզկուլտուրային ժամանցներ	Տարին 1 - 2 անգամ՝ 40-50 րոպե
Ֆիզկուլտուրայի տոներ	Տարին 1 - 2 անգամ
Առողջության օր	Տարին 1-2 անգամ

Ծրագրի բովանդակությունը

Հիմնական կիրառական վարժություններ

Քայլք. քայլել ոտնաթաթերի վրա, քայլել փոքր և լայն քայլերով, շարասյունով: Քայլել ձեռքերի տարբեր դիրքերով՝ գոտկատեղին, կողմ, մեջքին: Կից քայլեր՝ առաջ, կողմ, հետ: Քայլքի հերթագայումը՝ վազքով, ցատկով՝ ձեռքերի տարբեր դիրքով:

Վազք. վազել ոտնաթաթերի վրա, շարասյունով, շրջանով, զույգերով, շրջանցելով առարկաները: Ազդանշանով գտնել իր տեղը շարքում: Վազելով բռնել խաղընկերոջը և խուսափել նրանից: Դանդաղ վազել 1-1,5 րոպե: Վազել 40մ. միջին արագությամբ, 3-4 անգամ: Վազքը հերթագայել քայլքով 60-100մ, 2-3 անգամ: Արագ վազք՝ 10մ, 2-3 անգամ ընդմիջումներով: Դանդաղ վազք տեղանքում 200մ: Մաքր-

քավազք 30 մ: Արագ վազք 20մ. տարվա վերջում:

Ցատկեր. ոստյուններ զույգ ոտքերով՝ ոտքերը միասին, ոտքերը գատած, դարձումներ կատարելով: Ոստյուններ՝ առաջ շարժվելով 2-3մ., շրջանից շրջան: 20 ցատկ 2-3 անգամ՝ ընդմիջումներով: Ցատկ մեկ ոտքի վրա, աջ, ձախ: Ցատկել 5-10սմ բարձրությամբ 2-3 առարկայի վրայով: Հաջորդաբար ցատկել 4-6 գծերի միջով (գծերի հեռավորությունը՝ 40-50սմ): Տեղից հեռացատկ /70սմ և ավելի/: Վարցատկ 20-30սմ բարձրությունից:

Նետումներ . գնդակը, օղակը առարկաների միջով գլորել միմյանց: Գնդակը նետել վեր և բռնել 3-4 անգամ: Գնդակը հարվածել գետնին և բռնել: Գնդակը նետել միմյանց՝ ներքևից, գլխի վրայից և բռնել այն 1,5մ հեռավորությունից: Գնդակը նետել երկու ձեռքով՝ գլխի վրայից, և մեկ ձեռքով՝ 2մ հեռավորության արգելքի վրայով: Գնդակով հարվածել հատակին աջ և ձախ ձեռքով հերթականորեն՝ 5 անգամ: Գնդակի նետում հորիզոնական նպատակակետին աջ և ձախ ձեռքով՝ 2-2,5մ. հեռավորությունից: Գնդակի նետում ուղղահայաց նպատակակետին՝ 2-2,5մ հեռավորությունից, թիրախի բարձրությունը 1,5մ: Գնդակի նետում հեռավորության աջ և ձախ ձեռքերով:

Հավասարակշռության վարժություններ. քայլել հատակին գծված գծի վրայով, ավազե պարկը պահելով առաջ պարզած ձեռքերում, գլխին: Դարձումներ կատարել սահմանափակ մակերեսի վրա: Քայլել մարմնամարզական նստարանի վրայով՝ ձեռքերի տարբեր դիրքերով: Պահպանել հավասարակշռությունը մեկ ոտքին կանգնած, ձեռքերի տարբեր դիրքումներով:

Սողանցում և մազլցում. սողանցում 10մ: Սողանցում առարկաների տակով աջ և ձախ: Սողանցում առարկաների միջով, մարմնամարզական նստարանի վրայով՝ փորին պառկած դիրքումից ձգվելով ձեռքերով: Չորեքթաթ շարժվել՝ գլխով գլորելով գնդակը 2-3 մ: Մազլցում մարզապատի վրայով աջ և ձախ:

Ընդհանուր զարգացնող վարժություններ

Ձեռքերի և ուսագոտու համար. ձեռքերը ծավված կատարել շրջանաձև պտույտներ: Ձեռքերը բարձրացնել վեր, մեջքով սեղմված պատին, և իջեցնել: Ձեռքերը տանել առաջ, վեր, կողմ և իջեցնել: Ձեռքերը թափահարել առաջ, հետ: Փայտը վեր բարձրացնել, դնել ուսին և իջեցնել: Ձեռքերը թափով տանել կողմերը և իջեցնել:

Իրանի համար. ձեռքերը գոտկատեղին թեքվել աջ և ձախ: Կանգնել ոտքերը միասին, թեքվել առաջ և ուղղվել: Ոտքերը կողմ գատած, թեքվել առաջ՝ մատներով հասնել ոտնաթաթերին, դնել և վերցնել առարկան: Նստած և ծնկներին նստած դիրքերից գնդակը գլորել իր շուրջը: Բարձրացնել մեկ ոտքը, ծնկատակով առարկան փոխանցել մի ձեռքից մյուսը: Նստած, ձեռքերը հետևում հենելով հատակին,

նոտքերը բարձրացնել վեր, ծալել և ուղղել, իջեցնել: Ծնկներին նստած դիրքից թեքվել առաջ և ուղղվել, հերթականությամբ բարձրացնել ձեռքերը: Մեջքին պառկած դիրքից շրջվել փորի վրա: Փորի վրա պառկած՝ բարձրացնել ձեռքերը, ուսերը և գլուխը:

Ոտքերի համար. կքանստել՝ ձեռքերը գոտկատեղին, առաջ և կողմ դրություններով:

Ծնկային հողում ծալված նոտքն ուղղել, ծալել և իջեցնել: Ձգել ոտնաթաթը, ծալել ներքանը: Ներքանով բռնել և տեղից տեղ տեղափոխել առարկաներ:

ՇԱՐՈՒՄ ԵՎ ՇԱՐՎՓՈՒՄՈՒՄ

Ինքնուրույն շարվել ամբողջ խմբով և ենթախմբով: Միասյուն շարքից կազմել շրջան, տողան և զույգեր: Հավասարվել կողմնորոշիչով՝ հատակին նշագծված գիծ: Դարձումներ աջ, ձախ, հետ:

Պարային և ռիթմիկ վարժություններ

Շարվել երաժշտության տեմպին համապատասխան: Շարվել զույգերով, շրջանով: Շարափոխվել երաժշտական ազդանշանով: Բարձրանալ ոտնաթաթերին: Ոտքերը հերթականությամբ դնել առաջ՝ կրունկին, ապա թաթին, կատարել կիսակքանիստ՝ ձեռքերի տարբեր դիրքերով: Ռիթմիկ մարմնամարզության պարզագույն տարրերի համակցումներ:

Շարժախաղեր

Խաղեր, խաղային վարժություններ

Խաղեր վազքով՝ «Ով արագ կհասնի դրոշակին», «Անցի՛ր, մի՛ գցիր», «Բռնոցի», «Ինքնաթիռներ», «Ծիտիկները և կատուն», «Ձիուկներ», «Արջի մոտ՝ անտառում», «Գտի՛ր քո զույգը», «Վազե՛ք դրոշակի մոտ», «Որսորդը և թռչունները», «Ես անցա»:

Խաղեր ցատկերով՝ «Նապաստակները և գայլը», «Նապաստակը լվացվում է», «Անցի՛ր առվակի վրայով», «Աղվեսը հավաքում», «Ցատկի՛ր բարձր», «Թմբից թումբ»:

Խաղեր սողանցումով և մագլցումով՝ «Թռչունների չուն», «Կատուն և ձագերը», «Հովիվը և հոտը», «Սկները մառանում», «Շուտ հասի՛ր դրոշակին»:

Խաղեր նետումներով՝ «Նետի՛ր, բռնիր», «Հարվածի՛ր կեզլիին», «Գնդակը ցանցի վրայով», «Նետի՛ր օղակի մեջ», «Շրջոցի», «Գտի՛ր՝ որտե՞ղ է պահված», «Գտի՛ր և լռիր», «Ո՛վ գնաց»:

Մարզական վարժությունների տարրեր

Սահք սահնակով:

Հեծանիվ. վարել եռանիվ և երկանիվ հեծանիվ, ուղիղ գծով և շրջանաձև, աջ և ձախ:

Լող

Անցկացվում է համապատասխան պայմանների առկայության դեպքում և ելնելով բնակլիմայական պայմաններից:

Տարեվերջին երեխաները պետք է կարողանան`

- շարվել միասյունով, միասյուն շարքից շարափոխվել շրջանի, տողանի, զույգերի, ազդանշանով գտնել իր տեղը շարքում,
- կատարել դարձումներ աջ և ձախ,
- քայլել և վազել միասյունով պահպանելով շարժումների ճիշտ համաձայնեցումը,
- վազել միջին արագությամբ 40մ, դանդաղ վազել մինչև 1-1,5 րոպե, վազել արագ 20մ /6-5,5վրկ արագությամբ/,
- քայլել հատակին գծված ուղիղ գծի վրայով` ավազե պարկը պահելով առաջ պարզած ձեռքերում, գլխին,
- կանգնել մեկ ոտքի վրա` առնվազն 10 վայրկյան,
- քայլել մարմնամարզական նստարանի վրայով` ձեռքերի տարբեր դիրքերով,
- ուստյուններ զույգ ոտքերով, ցատկել ոտքերը միասին` առաջ,
- ցատկել 5-10 սմ. բարձրությամբ առարկաների վրայով,
- տեղից հեռացատկել 60 - 70սմ,
- սողանցել հատակին` 10մ, սողանցել առարկաների տակով,
- մագլցել մարմնամարզական պատի վրայով,
- գնդակը նետել վեր և բռնել, հարվածել հատակին և բռնել աջ և ձախ ձեռքով,
- գնդակը նետել միմյանց և բռնել 1, 5մ հեռավորությունից,
- գնդակը նետել 2- 2,5մ հեռավորությամբ հորիզոնական մշանակետին` բարձրությունը 1, 5 մ,
- գնդակը նետել ըստ հեռավորության / 4-6մ/,
- երաժշտության նվագակցությամբ շարվել և շարափոխվել զույգերով,
- կատարել ռիթմիկ մարմնամարզության պարզագույն տարրերի համակցումներ,
- մասնակցել շարժախաղերին, իմանալ խաղերի անունները,
- սահել սահնակով,
- վարել եռանիվ հեծանիվ:

ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ
ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԵՄԲԵՐ

Շարժման տեսակները	Ծրագրային նյութը	Խաղեր և վարժություններ՝ ծրագրային նյութի յուրացման համար
Քայլք	<ul style="list-style-type: none"> - Քայլք՝ շարասյունով - Քայլք՝ փոքր և լայն քայլով - Քայլք՝ ոտնաթաթերի վրա - Քայլք՝ ձեռքերի տարբեր դիրքերով 	<ul style="list-style-type: none"> -Քայլել ամբողջ խմբով՝ մարզադահլիճի, հրապարակի եզրերով -Քայլել փոքր և լայն քայլով շրջանցելով առարկաները -Քայլել ոտնաթաթերի վրա -Քայլք՝ ծնկները վեր բարձրացնելով -Քայլել ձեռքերը կողմ, վեր, գլխին
Վազք	<ul style="list-style-type: none"> - Վազել շարասյունով, շրջանով, զույգերով - Վազել ոտնաթաթերի վրա - Վազել երկու զուգահեռ գծերի միջով - Վազքը հերթագայել քայլքով - Դանդաղ վազք 	<ul style="list-style-type: none"> -Վազել ամբողջ խմբով մարզադահլիճի, հրապարակի եզրերով -վազել ազդանշանով, գտնել իր տեղը շարքում -վազել ոտնաթաթերի վրա -վազել երկու զուգահեռ գծերի միջով -վազելով բռնել խաղընկերոջը և խուսափել նրանից -վազել 30մ այն հերթագայելով 30մ. քայլքի -դանդաղ վազել 1 րոպե <p>Շարժախաղեր «Ով արագ կհասնի դրոշակին», «Բռնոցի», «Գունավոր ավտոմեքենաներ», «Արջի մոտ՝ անտառում», «Գտի՛ր քո զույգը», «Ինքնաթիռներ»</p>
Ցատկեր	<ul style="list-style-type: none"> - Ոստյուններ՝ զույգ ոտքերով - Ցատկեր՝ զույգ ոտքերով - Ցատկեր՝ առաջ շարժվելով 2-3մ - Ցատկել 5-10սմ բարձրության վրայով - Ցատկել հաջորդաբար 4 գծերի միջով 	<ul style="list-style-type: none"> -Ոստյուններ կատարել զույգ ոտքերով՝ ոտքերը միասին -Ցատկել զույգ ոտքերով՝ դարձումներ կատարելով -Ցատկել առաջ շարժվելով 2-3մ, շրջանից շրջան -Ցատկել 5-10սմ բարձրության դրված 2-3 առարկայի վրայով -Հաջորդաբար ցատկել 4 գծերի միջով (գծերի հեռավորությունը 40-50սմ) <p>Շարժախաղեր՝ «Անցի՛ր առվակի վրայով», «Աղվեսը հավաքնուն», «Ցատկի՛ր բարձր»</p>

<p>Նետումներ</p>	<ul style="list-style-type: none"> - Օղակը և գնդակը գլորել միմյանց - Գնդակը հարվածել հատակին և բռնել - Գնդակը նետել վեր և բռնել - Գնդակը նետել միմյանց՝ երկու ձեռքով - Գնդակի նետում հորիզոնական նպատակակետին 	<ul style="list-style-type: none"> - Օղակը և գնդակը գլորել միմյանց, առարկաների միջով - Գնդակը հարվածել հատակին և բռնել երկու ձեռքով - Գնդակը նետել վեր և բռնել երկու ձեռքով, 3-4 անգամ - Գնդակը նետել միմյանց երկու ձեռքով՝ ներքևից, գլխի վրայից - Գնդակի նետում հորիզոնական նպատակակետին աջ և ձախ ձեռքով՝ 2-2,5մ. հեռավորությունից <p>Շարժախաղեր «Նետի՛ր-բռնի՛ր», «Հարվածի՛ր գուրգին», «Գնդակը ցանցի վրայով», «Նետի՛ր օղակի մեջ»:</p>
<p>Սողանցում և մագլցում</p>	<ul style="list-style-type: none"> - Սողանցում 10մ - Սողանցում առարկաների տակով - Սողանցում առարկաների միջով - Սողանցում մարմնամարզական նստարանի վրայով - Մագլցում մարզապատի վրայով 	<ul style="list-style-type: none"> - Սողանցում՝ 10մ - Սողանցում առարկաների տակով՝ աջ և ձախ - Սողանցում՝ առարկաների միջով - Սողանցում մարմնամարզական նստարանի վրայով՝ փորհին պառկած դրությունից ձգվելով ձեռքերով - Մագլցում մարզապատի վրայով աջ և ձախ <p>Շարժախաղեր «Թռչունների չուն», «Կատուն և ձագերը»:</p>
<p>Հավասարակշռության պահպանման վարժություններ</p>	<ul style="list-style-type: none"> - Քայլել հատակին գծված գծի վրայով - Դարձումներ կատարել սահմանափակ մակերեսի վրա - Քայլել մարմնամարզական նստարանի վրայով - Հավասարակշռությունը պահպանել մեկ ոտքին կանգնած 	<ul style="list-style-type: none"> - Քայլել հատակին գծված գծի վրայով՝ ավագե պարկը պահելով առաջ պարզած ձեռքերում, գլխին - Դարձումներ կատարել սահմանափակ մակերեսի վրա - Քայլել մարմնամարզական նստարանի վրայով՝ ձեռքերի տարբեր դիրքերով - Հավասարակշռությունը պահպանել մեկ ոտքին կանգնած, ձեռքերի տարբեր դրություններով
<p>Պարային և ռիթմիկ վարժություններ</p>	<ul style="list-style-type: none"> - Շարվել երաժշտության տեմպին և բնույթին համապատասխան - Շարափոխվել երաժշտական ազդանշանով 	<ul style="list-style-type: none"> - Շարվել զույգերով, շրջանով, բարձրանալ ոտնաթաթերին - Ոտքերը հերթականությամբ դնել առաջ՝ կրունկին, ապա թաթին, կատարել կիսակթանիստ՝ ձեռքերի տարբեր դիրքերով
<p>Շարումներ</p>	<ul style="list-style-type: none"> - Շարվել ամբողջ խմբով և ենթախմբով - Միասյուն շարքից կազմել շրջան, տողան, զույգեր - Դարձումներ տեղում 	<ul style="list-style-type: none"> - Շարվել ամբողջ խմբով և ենթախմբով, - Միասյուն շարքից կազմել շրջան, տողան - Դարձումներ կատարել տեղում՝ աջ, ձախ, հետ

**ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ
ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՀՈՒՆՎԱՐ, ՓԵՏՐՎԱՐ**

Շարժման տեսակները	Ծրագրային նյութը	Խաղեր և վարժություններ ծրագրային նյութի յուրացման համար
Քայլք	<ul style="list-style-type: none"> - Քայլք՝ շարասյունով, շրջանով, զույգերով - քայլք՝ փոքր և լայն քայլերով - քայլք՝ ոտնաթաթերի վրա - կից քայլեր՝ առաջ, կողմ, հետ - քայլք՝ ձեռքերի տարբեր դիրքերով 	<ul style="list-style-type: none"> - Քայլել ամբողջ խմբով մարզադահլիճի եզրերով, անկյուններով - Քայլել փոքր և լայն քայլերով՝ շրջանցելով առարկաները - Քայլել ոտնաթաթերի վրա, ծնկները վեր բարձրացնել - Քայլել ձեռքերը կողմ, վեր, գլխին, գոտկատեղին
Վազք	<ul style="list-style-type: none"> - Վազել շարասյունով, շրջանով, զույգերով - Վազել ոտնաթաթերի վրա - Վազել երկու զուգահեռ գծերի միջով - Վազել դանդաղ և միջին արագությամբ - Վազքը հերթագայել քայլքով - Արագ վազք 	<ul style="list-style-type: none"> - Վազել շարասյունով, շրջանով, զույգերով՝ մարզադահլիճի եզրերով, անկյուններով - Վազել ոտնաթաթերի վրա՝ ձեռքերը գոտկատեղին - Վազք՝ երկու զուգահեռ գծերի միջով - Դանդաղ վազել 1,5 րոպե - Վազել 40մ՝ միջին արագությամբ - Վազել 40մ, այն հերթագայել 40մ քայլքով - Արագ վազք 10մ՝ 2-3 անգամ ընդմիջումներով Շարժախաղեր՝ «Ծիտիկները և կատուն», «Արջի մոտ՝ անտառում», «Ձիուկներ», «Բռնոցի» «Վազեք դրոշակի մոտ» «Որսորդը և թռչունները»
Ցատկեր	<ul style="list-style-type: none"> - Ոստյուններ՝ զույգ ոտքերով - Ցատկեր՝ զույգ ոտքերով - Ցատկեր՝ առաջ շարժվելով - Ցատկ՝ մեկ ոտքի վրա - Ցատկել բարձրության վրայով - Ցատկել հաջորդաբար՝ 4 գծերի միջով - Վարցատկ՝ 20-30մ բարձրությունից 	<ul style="list-style-type: none"> Ոստյուններ զույգ ոտքերով՝ ոտքերը միասին - Ցատկել զույգ ոտքերով դարձումներ կատարելով - Ցատկել առաջ շարժվելով 2-3 մ, շրջանից շրջան - Ցատկել մեկ ոտքի վրա՝ աջ, ձախ, - Ցատկել 10սմ բարձրությամբ 2-3 առարկայի վրայով - Հաջորդաբար ցատկել 4 գծերի միջով (գծերի հեռավորությունը 40-50 սմ) - Վարցատկ՝ 20-30մ բարձրությունից: Շարժախաղեր «Նապաստակները և գայլը», «Անցիր առվակի վրայով», «Նապաստակը լվացվում է»

<p>Նետուճներ</p>	<ul style="list-style-type: none"> - Գնդակը գլորել միմյանց - գնդակը հարվածել հատակին և բռնել - Գնդակը նետել վեր և բռնել - Գնդակը նետել միմյանց երկու ձեռքով - Գնդակի նետում ուղղահայաց՝ նպատակակետին 	<ul style="list-style-type: none"> - Գնդակը գլորել միմյանց, առարկաների միջով - Գնդակը հարվածել հատակին և բռնել երկու ձեռքով - Գնդակը նետել վեր և բռնել երկու ձեռքով, 3-4 անգամ - Գնդակը նետել միմյանց երկու ձեռքով՝ ներքևից, գլխի վրայից - Գնդակը նետել երկու ձեռքով գլխի վրայից, մեկ ձեռքով՝ 2մ. հեռավորության արգելքի վրայով - Գնդակի նետում ուղղահայաց նպատակակետին՝ 2-2,5մ հեռավորությունից, թիրախի բարձրությունը 1,5մ <p>Շարժախաղեր «Գտիր՝ որտեղ է պահված», «Հարվածիր գուրզին», «Գնդակը ցանցի վրայով», «Շրջոցի», «Գտիր և լքիր»</p>
<p>Սողանցում և մագլցում</p>	<ul style="list-style-type: none"> - Սողանցում 10մ, - Սողանցում առարկաների տակով - Սողանցում առարկաների միջով - Սողանցում մարմնամարզական նստարանի վրայով - Մագլցում մարզապատի վրայով 	<ul style="list-style-type: none"> - Սողանցում 10մ, - Սողանցում առարկաների տակով՝ աջ և ձախ - Սողանցում առարկաների միջով - Սողանցում մարմնամարզական նստարանի վրայով՝ փորին պռակած դրությունից ձգվելով ձեռքերով, - մագլցում մարզապատի վրայով աջ և ձախ: <p>Շարժախաղեր «Հովիվը և հոտը», «Թռչունների չուն», «Կատուն և ձագերը»:</p>
<p>Հավասարակշռություն պահպանման վարժություններ</p>	<ul style="list-style-type: none"> - Քայլել հատակին զծված գծի վրայով - Դարձումներ կատարել սահմանափակ մակերեսի վրա - Քայլել մարմնամարզական նստարանի վրայով - Հավասարակշռությունը պահպանել մեկ ոտքին կանգնած 	<ul style="list-style-type: none"> - Քայլել հատակին զծված գծի վրայով՝ ավագե պարկը պահելով առաջ պարզած ձեռքերում, գլխին, - դարձումներ կատարել սահմանափակ մակերեսի վրա, - քայլել մարմնամարզական նստարանի վրայով՝ ձեռքերի տարբեր դիրքերով: - հավասարակշռությունը պահպանել մեկ ոտքին կանգնած, ձեռքերի տարբեր դիրքումներով
<p>Պարային և ռիթմիկ վարժություններ</p>	<ul style="list-style-type: none"> - Շարվել երաժշտության տեմպին և բնույթին համապատասխան - Շարափոխվել երաժշտական ազդանշանով 	<ul style="list-style-type: none"> - Շարվել զույգերով, շրջանով, բարձրանալ ոտնաթաթերին - Երաժշտության տակ քայլել և վազել ռիթմիկ - Ռիթմիկ մարմնամարզության պարզագույն տարրերի համակցումներ

Շարուններ	<ul style="list-style-type: none"> - Շարվել ամբողջ խմբով և ենթախմբով - Միասյուն շարքից կազմել շրջան, տողան - Դարձուններ տեղում 	<ul style="list-style-type: none"> - Շարվել ամբողջ խմբով և ենթախմբով - Միասյուն շարքից կազմել շրջան, տողան - Դարձուններ կատարել տեղում՝ աջ, ձախ, հետ
------------------	-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

**ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ
ՄԱՐՏ, ԱՊՐԻԼ, ՄԱՅԻՍ**

Շարժման տեսակները	Ծրագրային նյութը	Խաղեր և վարժություններ ծրագրային նյութի յուրացման համար
Քայլք	<ul style="list-style-type: none"> - Քայլք շարասյունով, շրջանով, զույգերով - Քայլք փոքր և լայն քայլով - Քայլք ոտնաթաթերի վրա - Կից քայլեր՝ առաջ, կողմ, հետ - Քայլք՝ ձեռքերի տարբեր դիրքերով 	<ul style="list-style-type: none"> -Քայլել ամբողջ խմբով մարզադահլիճի, եզրերով, անկյուններով -Քայլել փոքր և լայն քայլով շրջանցելով առարկաները -Քայլել ոտնաթաթերի վրա, կրունկների վրա -Կից քայլեր առաջ, կողմ, հետ -Քայլել՝ ձեռքերը կողմ, վեր, գլխին, գոտկատեղին
Վազք	<ul style="list-style-type: none"> - Վազել շարասյունով, շրջանով, զույգերով - Վազել ոտնաթաթերի վրա - Վազել երկու զուգահեռ գծերի միջով - Վազել դանդաղ և միջին արագությամբ - Մաքրքավազք 30մ - Արագ վազք 	<ul style="list-style-type: none"> -Վազել շարասյունով, շրջանով, զույգերով՝ մարզադահլիճի եզրերով, անկյուններով -Վազել ոտնաթաթերի վրա ձեռքերը՝ գոտկատեղին -Վազք երկու զուգահեռ գծերի միջով -Դանդաղ վազել 200մ. -Վազել միջին արագությամբ 40մ -Մաքրքավազք 30մ -Արագ վազք 20մ Շարժախաղեր՝ «Ինքնաթիռներ», «Գունավոր ավտոմեքենաներ», «Անցիր մի գցիր», «Ծիտիկները և կատուն», «Ով արագ կհասնի դրոսին», «Ես անցա»
Ցատկեր	<ul style="list-style-type: none"> -Ցատկեր՝ զույգ ոտքերով -Ցատկեր՝ առաջ շարժվելով -Ցատկ՝ մեկ ոտքի վրա -Ցատկել բարձրության վրայով -Ցատկել հաջորդաբար 4 գծերի միջով -Վարցատկ՝ 20-30մ բարձրությունից 	<ul style="list-style-type: none"> -Ցատկեր զույգ ոտքերով դարձուններ կատարելով -Ցատկեր առաջ շարժվելով 2-3մ, շրջանից շրջան -Ցատկ մեկ ոտքի վրա՝ աջ, ձախ, առաջ -Ցատկել 10սմ բարձրությամբ 2-3 առարկայի վրայով -Հաջորդաբար ցատկել 4 գծերի միջով (գծերի հեռավորությունը 40-50 սմ), -Վարցատկ՝ 20-30մ բարձրությունից Շարժախաղեր «Անցիր առվակի վրայով», «Նապաստակը լվացվում է», «Աղվեսը հավաքում» «Ցատկի բարձր»

<p>Նետումներ</p>	<ul style="list-style-type: none"> -Գնդակը գլորել միմյանց -գնդակը հարվածել հատակին և բռնել -Գնդակը նետել վեր և բռնել -Գնդակը նետել միմյանց երկու ձեռքով -Գնդակի նետում ուղղահայաց՝ նպատակակետին -Գնդակի նետում հեռավորության 	<ul style="list-style-type: none"> -Գնդակը գլորել միմյանց, առարկաների միջով -Գնդակը հարվածել հատակին աջ և ձախ ձեռքով հերթականորեն 5 անգամ, -Գնդակը նետել վեր և բռնել երկու ձեռքով 3-4 անգամ -Գնդակը նետել միմյանց երկու ձեռքով՝ ներքևից, գլխի վրայից և բռնել 1,5մ. հեռավորությունից -Գնդակը նետել երկու ձեռքով գլխի վրայից -մեկ ձեռքով՝ 2 մ հեռավորության արգելքի վրայով -Գնդակի նետում ուղղահայաց նպատակակետին՝ 2-2, 5 մ հեռավորությունից, թիրախի բարձրությունը 1, 5 մ, -գնդակի նետում հեռավորության աջ և ձախ ձեռքով <p>Շարժախաղեր «Գտիր՝ որտեղ է պահված», «Հարվածիր գուրգին», «Գնդակը ցանցի վրայով», «Գտիր և լռիր», «Շրջոցի»:</p>
<p>Սողանցում և մագլցում</p>	<ul style="list-style-type: none"> -Սողանցում 10մ -Սողանցում՝ առարկաների տակով -Սողանցում՝ առարկաների միջով -Սողանցում մարմնամարզական նստարանի վրայով -Չորեքթաթ շարժվել՝ գլխով գլորելով գնդակը -Մ ագլցում մարզապատի վրայով: 	<ul style="list-style-type: none"> - Սողանցում 10մ - Սողանցում աջ և ձախ, առարկաների տակով - Սողանցում առարկաների միջով, 40մ - Սողանցում մարմնամարզական նստարանի վրայով՝ փորին պառկած դրությունից ձգվելով ձեռքերով - Չորեքթաթ շարժվել՝ գլխով գլորելով գնդակը 2- 3 մետր - Մագլցում մարզապատի վրայով աջ և ձախ <p>Շարժախաղեր «Սկները մառանում», «Շուտ հասիր դրոշակին» «Թռչունների չուն», «Կատուն և ձագերը»</p>
<p>Հավասարակշռության պահպանման վարժություններ</p>	<ul style="list-style-type: none"> - Քայլել հատակին դրված պարանի վրայով - Դարձումներ կատարել սահմանափակ մակերեսի վրա - Քայլել մարմնամարզական նստարանի վրայով, - Հավասարակշռությունը պահպանել մեկ ոտքին կանգնած 	<ul style="list-style-type: none"> - Քայլել հատակին դրված պարանի վրայով՝ ավագե պարկը պահելով առաջ պարզած ձեռքերում, գլխին - Դարձումներ կատարել սահմանափակ մակերեսի վրա - Քայլել մարմնամարզական նստարանի վրայով՝ ձեռքերի տարբեր դիրքերով -Հավասարակշռությունը պահպանել մեկ ոտքին կանգնած, ձեռքերի տարբեր դրություններով

Պարային և ռիթմիկ վարժություններ	<ul style="list-style-type: none"> - Շարվել երաժշտության տեմպին և բնույթին համապատասխան - Շարափոխվել երաժշտական ազդանշանով 	<ul style="list-style-type: none"> - Շարժումները սկսել և ավարտել երաժշտության հետ մեկտեղ - Շարափոխվել, քայլել և վազել ռիթմիկ, շարժումների տեսակները փոխել երաժշտության բնույթին համապատասխան -Ռիթմիկ մարմնամարզության պարզագույն տարրերի համակցումներ
Շարումներ	<ul style="list-style-type: none"> - Շարվել ամբողջ խմբով և ենթախմբով - Միասյուն շարքից կազմել շրջան, տողան - Դարձումներ տեղում 	<ul style="list-style-type: none"> - Շարվել ամբողջ խմբով և ենթախմբով - Միասյուն շարքից կազմել շրջան, տողան - Դարձումներ կատարել տեղում՝ աջ, ձախ, հետ

4–րդ եռամսյակում՝ ամռան ամիսներին, կազմակերպվում են բացօթյա խաղեր՝ մարզական զվարճանքներ, սպորտլանդիաներ, կոփման միջոցառումներ, լող, եռանիվ և երկանիվ հեծանիվ վարել, ինչպես նաև տարվա ընթացքում չյուրացված ֆիզիկական վարժությունների կրկնություններ:

**ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ,
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

Նախադպրոցական հաստատությունների միջին խմբերում ֆիզիկական դաստիարակությունն իրականացվում է հետևյալ ձևերով`

- ֆիզկուլտուրային պարապմունքներ,
- ֆիզկուլտ-առողջարարական միջոցառումներ օրվա ընթացքում,
- ակտիվ հանգիստ,
- երեխաների ազատ, ինքնուրույն շարժողական գործողություն:

Մեկամսյա օրինակելի պլանավորում

Ա-միս	Պարապմունքի մասեր և խնդիրներ	1-ին շաբաթ	2-րդ շաբաթ	3-րդ շաբաթ	4-րդ շաբաթ	
1	2	3	4	5	6	
Մեկամսյա	Պարապմունքի համարը	պարապմունք 1-2-րդ	պարապմունք 3 – 4 - րդ	պարապմունք 5 - 6 - րդ	պարապմունք 7– 8 - րդ	
	Նպատակը և խնդիրները	<p>Սովորեցնել.</p> <ul style="list-style-type: none"> - քայլել նեղ մակերեսի վրայով` պահպանելով հավասարակշռությունը, - կատարել ուսույուններ և ցատկեր զույգ ոտքով, - գնդակը նետել վեր և բռնել երկու ձեռքով, - ամրապնդել գնդակի ուղիղ գլորումը միմյանց, - խմբով սողանցումը պարանի տակով: <p>Վարժեցնել` շարասյունով քայլքին և վազքին, ուշադրություն դարձնել ճիշտ շնչառությանը:</p>				
	1-ին ` ներգրավիչ մաս	<p>Քայլք` շարասյունով, ոտնաթաթերի վրա, ծնկները վեր բարձրացնելով, «կանգ» հրահանգի ժամանակ կանգնել, վազք` շարասյունով, խմբերով, բարձրացնելով ծնկները, շարափոխվել շրջանի, երկու խմբի:</p>				

	Ընդհանուր գարգացնող վարժություններ	Առանց առարկաների	Դրոշակներով	Գնդակներով	Օղերով
	2-րդ մաս՝ Հիմնական շարժումներ	1.Քայք և վազք՝ երկու զուգահեռ գծերի միջով (հեռ. 3մ, լայն. 15 սմ) 2. Ցատկեր զույգ ոտքերով՝ աջ և ձախ: 3.Քայք և վազք՝ ոտնաթաթերի վրա 4.Ցատկել երկու ոտքով՝ առաջ շարժվելով մինչև դրոշակը	1.Ոստյուններ տեղում՝ երկու ոտքով հասնելով առարկային 2. Գնդակը նետել վեր և բռնել, 3-4 անգամ 3. Կրկնել ցատկերը 4.Չորեքթաթ սողանցել պարանի տակով	1.Գնդակը երկու ձեռքով գլորել մինչանց, առարկաների միջով 2. Անցում պարանի տակով՝ առանց ձեռքերը հատակին դնելու 3. Գնդակը նետել վեր և բռնել երկու ձեռքով 4.Անցում պարանի տակով, երկու շարասյունով 5.Ցատկել զույգ ոտքով առարկաների միջոցով	1.Քայք՝ հատակին դրված տախտակի վրայով, ձեռքերը գոտկատեղին 2. Քայք՝ նստարանի վրայով բարձր. (15սմ) 3. Քայլանցում խորանարդիկի վրայով՝ ձեռքերը գոտկատեղին 4.Խաղային վարժություն՝ տեղում զույգ ոտքով ցատկելով
	3-րդ մաս Եզրափակիչ շարժախաղեր	«Գտի՛ր քո զույգին»	«Ցատկի՛ր բարձր»	«Գունավոր ավտոմեքենաներ»	«Կատուն և ձագերը»
	Քիչ շարժունակություն պահանջող խաղեր	Քայք շարասյունով՝ ամբողջ մարգադահիլճի եզրերով	«Գտի՛ր և լռի՛ր»	Քայք՝ փոքր և լայն քայլերով, քայք՝ ձեռքերը կողմ, մեջքին	Քայք ոտնաթաթերի վրա՝ ձեռքերը գոտկատեղին

Ֆիզկուլտուրային պարապմունքների կազմակերպման առանձնահատկությունները

Նախադպրոցական տարիքում երեխաների մեջ ձևավորվում են կենսական կարևոր հենքային շարժողական կարողություններն ու հմտությունները: Ստեղծվում է շարժողական փորձի հիմք, որի վրա հետագայում ձևավորվում է երեխայի շարժողական գործողությունը:

Շարժողական ակտիվությունն այն հիմնական միջոցներից է, որը ոչ միայն բարձրացնում է երեխաների օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունները, այլև նպաստում է առողջության ամրապնդմանը, հիվանդությունների կանխարգելմանը և ֆիզիկական զարգացմանը:

Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակը պետք է պայ-

մաններ ստեղծի երեխաների տարբեր շարժողական ունակությունների զարգացման համար՝ հաշվի առնելով նրանց տարիքային և անհատական առանձնահատկությունները: Ֆիզկուլտուրայի պարապմունքների ընթացքում անցկացվող վարժությունները պետք է լինեն տարբեր մկանախմբերի համար, իսկ խաղերի և պարապմունքների մեջ անհրաժեշտ է ընդգրկել քայլեր, վազքեր, ցատկեր, նետումներ, հավասարակշռության պահպանման, սողանցման ու մագլցման, ինչպես նաև տարբեր մարզագույքով և սարքավորումներով վարժություններ: Ֆիզկուլտուրայի պարապմունքների և խաղերի ժամանակ անհրաժեշտ է յուրաքանչյուր երեխայի նկատմամբ ցուցաբերել անհատական մոտեցում: Երեխաների խմբերը պետք է ձևավորել՝ ելնելով նրանց առողջական վիճակից և ֆիզիկական զարգացման մակարդակից:

Պարապմունքների ընթացքում անհրաժեշտ է հետևել երեխաների առողջական վիճակին. էական է նրանց հակազդումը ֆիզիկական ծանրաբեռնվածությանը: Դա երևում է դեմքի գույնից, շնչառությունից և այլն: Մեղմ ձևով խրախուսելով նրանց՝ պետք է շտկել նրանց կեցվածքը և շարժումները՝ միաժամանակ զարգացնելով անձնական հիգիենայի հմտություններ:

Անհրաժեշտ է յուրաքանչյուր երեխայի մեջ առաջացնել հետաքրքրություն ֆիզկուլտուրայի պարապմունքների նկատմամբ և ցանկություն՝ զբաղվելու ֆիզկուլտուրայով, տարբեր մարզախաղերով:

Ծրագրում տրված են ֆիզիկական հիմնական շարժումներ /քայլք, վազք, ցատկեր և այլն/, պարային, ռիթմիկ մարմնամարզական վարժություններ, շարժախաղեր, ինչպես նաև մարմնի ճիշտ կեցվածքի ձևավորման վարժություններ, որոնց իրականացումը հիմնականում կատարվում է ֆիզկուլտուրայի պարապմունքների միջոցով:

Ֆիզկուլտուրային պարապմունքների ընթացքում երեխաները տիրապետում են իրենց ծանոթ շարժումներին, սովորում են նոր շարժումներ և խաղեր:

Մանկապարտեզի միջին խմբում ֆիզկուլտուրայի պարապմունքների տևողությունը 20-25 րոպե է:

Պարապմունքների անցկացման կարևոր նախադրյալներից է՝ պլանավորումը, ճիշտ կառուցվածքի պահպանումը և յուրաքանչյուր պարապմունքի համար մեթոդների ընտրությունը՝ ելնելով խնդիրներից:

Ֆիզիկական դաստիարակության պարապմունքները պետք է անցկացնել տարվա տաք եղանակին՝ բացօթյա, իսկ ձմռանը՝ օդափոխված մարզադահլիճներում:

Ֆիզկուլտուրայի պարապմունքները կառուցվում են երեք մասով՝ **ներգրավիչ, հիմնական, եզրափակիչ**, որոնք սերտորեն կապված են միմյանց հետ: Յուրաքանչյուր մաս ունի իր խնդիրները և դրանց իրականացման համար անհրաժեշտ միջոցները:

Ներգրավիչ մասի խնդիրն է՝ կազմակերպել խումբը, երեխաների ուշադրությունը կենտրոնացնել, տրամադրությունը բարձրացնել, հետաքրքրություն առաջացնել և ձևավորել ճիշտ կեցվածք: Պարապմունքի ներգրավիչ մասում տրվում են տարբեր շարժումներ (շրջանով, մեկ շարքով, երկու շարքով և այլն), շարափոխումներ (մի շարքից-շրջանի, մեկ շարքից՝ երկու շարքի և այլն), քայլքի տարատեսակներ՝ ոտնաթաթերի, կրունկների վրա, ծնկները վեր բարձրացնելով, կից քայլերով, տարբեր ուղղություններով և այլն: Շարային վարժությունների ուսուցման ընթացքում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել համապատասխան

հրահանգների ճիշտ կատարմանը, տարածության մեջ արագ կողմնորոշման հմտությունների յուրացմանը, տեղում աջ, ձախ, հետ դարձումների ճիշտ կատարմանը:

Հիմնական մասի խնդիրն է՝ զարգացնել երեխաների շարժողական ունակություններն ու հմտությունները, քայլքի, վազքի, ցատկերի, նետումների, մագլցման կարողությունները, նրանց սովորեցնել մարմնամարզական, շարային, ռիթմիկ-մարմնամարզական վարժություններ և շարժախաղեր:

Պարապմունքի հիմնական մասի խնդիրներից է նաև մշակել երեխաների շարժողական ընդունակությունները՝ արագաշարժությունը, ճկունությունը, ճարպկությունը, դիմացկունությունը, ուժը, շարժումների համաձայնեցումը, ինչպես նաև դաստիարակելու համարձակություն, դժվարությունները հաղթահարելու կամք, համագործակցելու, փոխօգնության կարողություններ և այլն:

Պարապմունքի հիմնական մասի սկզբում տրվում են ընդհանուր զարգացնող վարժություններ, որոնք նպաստում են երեխայի ճիշտ կեցվածքի մշակմանը, ֆիզիկական ընդհանուր զարգացմանը, ինչպես նաև հարթաթաթության կանխարգելմանը: Յուրաքանչյուր պարապմունքի ընթացքում տրվում են ընդհանուր զարգացնող 5-6 վարժություններ, որոնք կրկնվում են 4-5 անգամ՝ կախված դրանց բարդությունից: Այդ վարժությունների կատարման ժամանակ անհրաժեշտ է հետևել, որ երեխաներն ընդունեն ճիշտ ելման դրություն, պահպանեն շարժման ուղղությունը, տեմպը, ինչպես նաև վարժության ավարտը, օրինակ՝ կքանիստ կատարելու ժամանակ մեջքը պահել ուղիղ, գլուխը չիջեցնել, ոտնաթաթերը պահել միասին, բարձրանալիս ոտնաթաթերը ձգել և այլն:

Ընդհանուր զարգացմանը նպաստող վարժությունները կատարվում են առանց առարկաների և առարկաներով (գնդակ, օղ, մարզափայտ): Դաստիարակը հստակ բացատրությամբ և ճիշտ առոգանությամբ ցուցադրելով վարժությունը՝ պետք է նշի կատարման տեմպը: Նոր վարժություններ ուսուցանելիս անհրաժեշտ է նշել վարժության անվանումը, ցուցադրել այն՝ զուգակցելով բացատրության հետ: Եթե ոչ բարդ կամ արդեն սովորած վարժություն է, ապա կարելի է միայն բացատրել կամ ցուցադրել, և երեխաները հրահանգներով կարող են ինքնուրույն կատարել այն: Ընդհանուր զարգացմանը նպաստող վարժությունների կատարումից հետո ուսուցանվում են այն հիմնական շարժումները, որոնք նախատեսված են ծրագրով և դաստիարակի կողմից պլանավորված են տվյալ պարապմունքի համար: Յուրաքանչյուր պարապմունքի հիմնական մասում պետք է տրվի միայն մեկ շարժախաղ:

Եզրափակիչ մաս: Պարապմունքի այս մասի խնդիրն է՝ հիմնական մասում ստացած ծանրաբեռնվածությունից հետո երեխայի օրգանիզմը բերել հանգիստ վիճակի, վերականգնել սրտի զարկերի հաճախականությունը և շնչառությունը: Դա իրականացվում է հանգիստ քայլքի, շնչառությունը կարգավորող, հանգստացնող վարժությունների միջոցով:

Ցանկալի է ֆիզկուլտուլտուրայի պարապմունքներն անցկացնել երաժշտության ուղեկցությամբ: Դա բարձրացնում է հուզականությունը, նպաստում է ռիթմի զգացողությանը, ուշադրության զարգացմանը, կազմակերպվածությանը և գեղագիտական դաստիարակությանը:

Հիմնական շարժումների, մարմնամարզական վարժությունների, շարժախաղերի կազմակերպման և ուսուցման առանձնահատկությունները

Ֆիզկուլտուրայի պարապմունքների ընթացքում հիմնական շարժումների՝ քայլքի, վազքի, ցատկերի, նետումների, մագլցման, հավասարակշռության պահպանման, ընդհանուր զարգացմանը նպաստող վարժությունների կատարման ժամանակ անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել երեխաների ճիշտ կեցվածքը, ձեռքերի, ոտքերի շարժումների համաչափությունը, ինչպես նաև շարժումների համաձայնեցումը շնչառության հետ:

Քայլքի, վազքերի, մագլցման ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երեխաների ձեռքերի և ոտքերի շարժումների համաձայնեցմանը:

Նետումների ժամանակ պետք է ուշադրություն դարձնել, որ երեխաներն ընդունեն ճիշտ ելման դրություն և կատարեն նետումը:

Ցատկերի ժամանակ երեխաները պետք է ճիշտ կատարեն հրումը, երկու ոտքի վրա փափուկ վայրէջք կատարեն՝ ծնկները մի փոքր ծալելով:

Ֆիզկուլտուրայի պարապմունքների ժամանակ մեծ տեղ է տրվում **շարժախաղերին**: Այդ ընթացքում երեխաները դրսևորում են բարձր ակտիվություն: Խաղերի միջոցով նրանք հմտանում են սովորած շարժանների մեջ (քայլք, վազք, ցատկեր, նետումներ և այլն): Մշակվում են նրանց շարժողական ընդունակությունները՝ ճարակությունը, ճկունությունը, արագաշարժությունը, ուժը, դիմացկունությունը, կորդիկնացիան և կողմնորոշումը տարածության մեջ:

Շարժախաղերը նպաստում են երեխայի համարձակության, նախաձեռնության, ինքնուրույնության, սեփական ուժերի նկատմամբ վստահության դաստիարակմանը:

Հուզականությունը խաղի կարևոր հատկանիշներից է: Խաղի ընթացքում երեխաները ստանում են մեծ բավականություն, դրսևորում ազատ ստեղծագործական գործունեություն, որին մասնակցում են երեխայի հոգեկան գործընթացները՝ մտածողությունը, երևակայությունը, հիշողությունը, հույզը, ուշադրությունը, մկանային լարվածությունը: Դրանով է պայմանավորված խաղերի նշանակալից ներգործությունը երեխայի անձնավորության՝ նրա բնավորության, կամքի ու բարոյական կերպարի վրա:

Խաղերի ընթացքում երեխան հանդես է գալիս իր նախաձեռնությամբ: Նա պետք է կարողանա զսպել իրեն, օգնել ընկերոջը, հաղթահարել որոշ դժվարություններ, պայմաններին համապատասխան փոփոխել շարժման բնույթը և ուղղությունը: Բացի այդ, շարժախաղերը՝ որպես խմբային գործունեություն, օժանդակում են երեխաների ընկերասիրության, ազնվության, փոխօգնության և համագործակցային հմտությունների ձևավորմանը:

Դաստիարակը պետք է պարզ ու հակիրճ բացատրի կամ հիշեցնի խաղի կանոնները, այնուհետև հետևի, որ երեխաները պահպանեն դրանք և կատարեն ճիշտ շարժումներ:

Շարժախաղերի ժամանակ անհրաժեշտ է պահպանել անվտանգության կանոնները. եթե դրանք անցկացվում են մարզադահլիճում, ապա հարկավոր է այն ազատել մարզագործիքներից, իսկ եթե ա բացօթյա են, ապա խաղահրապարակը պետք է լինի հարթ, մաքուր և նշագծված:

Ֆիզկուլտուրայի պարապմունքների ընթացքում կարևոր նշանակություն ունի երեխաների շարժումների կատարման որակի գնահատումը, հատկապես խրա-

խուսումը, որտեղ պետք է հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունները և հնարավորությունները: Անհրաժեշտ է նշել բոլոր երեխաների հաջողությունները, իսկ նրանց, որոնց մոտ դեռևս ամեն ինչ լավ չի ստացվում պետք է ոգևորել, խրախուսել:

Ֆիզկուլտուրայի պարապմունքների բովանդակության մեջ անհրաժեշտ է ընդգրկել կեցվածքի ձևավորման և հարթաթաթության կանխարգելման վարժություններ:

Ֆիզկուլտուրայի պարապմունքների ընթացքում ֆիզիկական տարբեր շարժումների, վարժությունների, խաղերի ուսուցման և շարժողական ունակությունների զարգացման նպատակով կիրառվում են տարբեր մեթոդներ` **խոսքային, զննական, գործնական, խաղային**: Պարապմունքի ժամանակ ուսուցման հիմնական միջոցներն են բացատրությունը և վարժությունների ցուցադրումը: Դաստիարակի կողմից վարժության ցուցադրումը պետք է լինի ճիշտ, գեղեցիկ, սահուն և առանց լարվածության: Սովորաբար վարժությունը պետք է ցուցադրել մի քանի անգամ, առաջին ցուցադրումն ընդհանուր պատկերացում է տալիս տվյալ վարժության մասին: Այնուհետև անհրաժեշտ է ցուցադրել այդ նույն վարժության առանձին բաղադրամասերը: Վարժության ցուցադրումը պետք է զուգակցել բացատրության հետ: Բացատրությունը պետք է լինի հասկանալի, համոզիչ և մատչելի: Եթե վարժությունը ծանոթ է երեխաներին, ապա դաստիարակը հիշեցնում է, իսկ երեխաները կատարում են:

Պարապմունքների ընթացքում տրվում են նաև հրահանգներ և ցուցումներ, որոնք դաստիարակի կողմից օգտագործվող խոսքային ցուցումներ են` կապված կատարվելիք վարժությունների հետ: Հրահանգները և ցուցումները պետք է լինեն հասկանալի, հստակ, հակիրճ և ոչ շատ բարձր ձայնով: Ֆիզկուլտուրայի պարապմունքներ անցկացնելիս կարևոր նշանակություն ունի դաստիարակի մանկավարժական տակտը, խաղերի և վարժությունների կատարման ժամանակ բարենպաստ հոգեբանական մթնոլորտի ստեղծումը:

ՖԻԶԿՈՒԼՏ - ԱՌՈՂՋԱՐԱՐՎԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Առավոտյան մարմնամարզության կազմակերպումը

Առավոտյան մարմնամարզությունը համարվում է մանկապարտեզի օրվա ռեժիմի կարևոր առողջարարական միջոցառումներից մեկը: Այն ունի նաև դաստիարակչական նշանակությունը:

Առավոտյան մարմնամարզությունը դրականորեն է ազդում երեխաների օրգանիզմի վրա` նպաստում է նյութափոխանակությանը, բարելավում սրտի և թոքերի գործունեությունը, կենտրոնական նյարդային համակարգի ֆունկցիոնալ վիճակը, բարձրացնում է տրամադրությունը, ակտիվացնում նրանց ուշադրությունը:

Ամեն օր որոշակի ժամերին անցկացվող մարմնամարզության միջոցով մշակվում են երեխայի կեցվածքը, շարժողական ունակությունները և հմտությունները, կանխվում են կեցվածքի շեղումները: Սիստեմատիկ և բացօթյա անցկացվող առավոտյան մարմնամարզությունը կոփում է երեխաների օրգանիզմը, բարձրացնում նրա դիմադրողականությունը, ինչպես նաև զարգացնում շարժողական ունակությունները:

Երեխաներն ամեն օր նույն ժամին մարզվելով` վարժվում են ռեժիմին. ամրա-

կայվում են այնպիսի հատկություններ, ինչպիսիք են՝ ուշադրությունը, կարգապահությունը, կազմակերպվածությունը, համագործակցությունը և այլն:

Առավոտյան մարմնամարզությունը երաժշտության նվագակցությամբ նպաստում է երեխաների գեղագիտական ճաշակի, երաժշտական լսողության, ռիթմի զգացողության զարգացմանը:

Առավոտյան մարմնամարզությունը մանկապարտեզում անցկացվում է ամեն օր, առավոտյան դաստիարակի կամ ֆիզկուլտուրայի մարզիչի /դաստիարակի/ կողմից: Նպատակահարմար է առավոտյան մարմնամարզությունները պլանավորել 2 – 4 շաբաթը մեկ: Այդ ընթացքում եթե երեխաները յուրացնում են այս կամ այն վարժությունը, այն փոխարինվում է մեկ այլ վարժությամբ:

Պլանով նախատեսված վարժությունները երեխաները յուրացնում են ֆիզկուլտուրայի պարապմունքների ընթացքում:

Առավոտյան մարմնամարզությունը հիմնականում անցկացվում է բացօթյա, իսկ տարվա ցուրտ եղանակներին՝ դահլիճում կամ փակ տարածքներում:

Առավոտյան մարմնամարզության արդյունավետ անցկացման համար կարևոր նշանակություն ունի դրա կազմակերպման և ուսուցման մեթոդիկային առնչվող մանկավարժական և հիգիենիկ պահանջների պահպանումը:

Առավոտյան մարմնամարզության հաջող կազմակերպման համար խիստ կարևոր է, որ յուրաքանչյուր դաստիարակ լավ իմանա հանձնարարվող բոլոր վարժությունները, դրանց կատարման տեմպը և կրկնության քանակը:

Նախապես պետք է նախապատրաստել անցկացման վայրը /բակ, մարզադահլիճ, խմբասենյակ/:

Եթե առավոտյան մարմնամարզությունն անցկացվում է բակում, ապա նախապես այն պետք է ջրել, մաքրել և կարգի բերել: Մարզադահլիճը նույնպես պետք է լինի մաքուր և օդափոխված: Իսկ եթե մանկապարտեզը չունի մարզադահլիճ և մարմնամարզությունը պետք է անցկացվի խմբասենյակում, ապա այն պետք է օդափոխվի: Սեղանները և աթոռները հարկավոր է դասավորել սենյակի մի անկյունում, որպեսզի դրանք չխանգարեն երեխաների շարժումներին:

Առավոտյան մարմնամարզությունը երեխաները պետք է կատարեն թեթև հագուստով, կիսագուլպաներով, մաշիկներով, իսկ տաք եղանակներին մարզահագուստով: Այդ հանգամանքը նպաստում է, որ երոխաները վարժությունները կատարեն ազատ ու անկաշկանդ, ինչպես նաև կոփեն օրգանիզմը /օդային լոգանք/:

Առավոտյան մարմնամարզության վարժությունների քանակը միջին խմբերում 4-5 վարժություն է. դրանք կրկնվում են 4-5 անգամ՝ 5-6 րոպե տևողությամբ:

Առավոտյան մարմնամարզության ժամանակ երեխաները կանգնում են շրջանով, կամ շարքերով /միաշարք, երկշարք/: Վարժությունների կատարման ժամանակ դաստիարակը պետք է կանգնի այնպիսի տեղում, որ բոլոր երեխաները լինեն իր տեսադաշտում:

Դաստիարակը սկզբում բացատրում, ցուցադրում է վարժությունը, հետո հրահանգում: Նա հետևում է երեխաների կատարմանը, որպեսզի նկատի և ուղղի սխալները:

Մանկապարտեզներում առավոտյան մարմնամարզությունը կարելի է անցկացնել առանց առարկաների և առարկաներով /դրոշակ, օղակ, մարզափայտ, մեծ և փոքր գնդակ, ցատկապարան/:

Կոփման միջոցառումները

Կոփումը օրգանիզմի աստիճանական ընտելացումն է՝ արտաքին միջավայրի անբարենպաստ պայմանների ներգործությամբ: Կոփման միջոցով ոչ միայն բարձրանում է օրգանիզմի դիմադրողականությունը, այլև երեխան ունենում է լավ ախորժակ, հանգիստ քուն և բարձր տրամադրություն: Կոփված երեխաները հազվադեպ են հիվանդանում, կամ թեթև են տանում հիվանդությունը և արագ էլ կազդուրվում են:

Կոփման միջոցները բնության բնական գործոններն են՝ **օդը, ջուրը և արևը**: Անհրաժեշտ է իմանալ կոփման այս միջոցներով կոփվելու կանոնների մասին: Օդային լոգանքները պետք է անցկացնել ամբողջ տարվա ընթացքում: Օդային լոգանքը հիգիենիկ մարմնամաքության հետ տևում է 10-15 րոպե:

Կոփման միջոցներից է արևային արարողությունների /լոգանքների/ ընդունումը: Այդ արարողությունների օգտակարությունն ավելի բարձր է՝ առավոտյան (9-11-ը ժամանակահատվածում): Արևային արարողությունների տևողությունը նախ 5-6 րոպե է, ապա անհրաժեշտ է այն մեծացնել աստիճանաբար և հասցնել մինչև 10-15 րոպեի:

Ջրային արարողությունները կոփման լավագույն միջոցներից են:

Դրանց մեջ են մտնում՝

- ջրշփումները,
- ջրցանումը, ջրցողումը,
- մինչև գոտկատեղը լվացվելը,
- լողը:

Ջրշփումների օգտակարությունն արդյունավետ և լիարժեք կլինի միայն այն դեպքում, եթե կատարվի ջրի ջերմաստիճանի աստիճանական և պարբերաբար իջեցում:

Ընդհանուր ջրցանում կամ ցնցուղ պետք է կատարել. նախ՝ 34 աստիճանի ջրով, ապա աստիճանաբար այն իջեցնել ու հասցնել 24 աստիճանի: Ջրցողում պետք է կատարել 34 աստիճանի ջրով:

Նախապես պետք է կազմակերպել երեխաների ջրշփումը, ապա՝ ջրցանումը և վերջում անցնել լողի:

Ջրային լոգանքներ հարկավոր է անցկացնել այն ժամանակ, երբ արտաքին միջավայրի ջերմաստիճանը 21 աստիճանից ցածր չէ:

Մարզական միջոցառումներ և տոներ

Երեխաների շարժողական ակտիվության բարձրացման և ֆիզիկական դաստիարակության աշխատանքների ամփոփման նպատակով առաջարկվում է անցկացնել ֆիզկուլտուրայի ժամանցներ, մարզական հանդեսներ, սպորտլանդիաներ, առողջության օրեր և այլ մարզական միջոցառումներ: Այս միջոցառումներում երեխաները հնարավորություն կունենան ցուցադրելու իրենց ձեռք բերած կարողությունները և հմտությունները: Մանկապարտեզի միջին խմբերում կարելի է յուրաքանչյուր ամիսը 1-2 անգամ կազմակերպել ֆիզկուլտուրայի ժամանցներ՝ 20-30 րոպե տևողությամբ: Դրանց բովանդակության մեջ ընդգրկվում են ֆիզկուլտուրայի պարապմունքներում յուրացված վարժությունները, շարժախաղերը, փոխանցումավազքերը, որոնք անցկացվում են մրցակցական ձևով: Այդ միջոցառման կառուցվածքը նման է ֆիզկուլտուրայի պարապմունքին, որտեղ պետք է ծանրաբեռնվա-

ծությունն ավելացնել աստիճանաբար: Այսպես, սկզբում կարելի է կարդալ ուսանավոր կամ հանելուկ, հետո կատարել քայլք, ընդհանուր զարգացմանը նպաստող վարժություններ, այնուհետև 1-2 խաղ, վարժություններ, անցկացնել զվարճանքներ, վերջում նույնպես կատարել քայլք:

Երեխաների շարժողական ակտիվության և ունակությունների զարգացման նպատակով անհրաժեշտ է կազմակերպել նաև պարզագույն արշավներ, էքսկուրսիաներ, նպատակային զբոսանքներ:

Տարին 1-2 անգամ կարելի է կազմակերպել մարզական տոներ՝ 40-50 րոպե տևողությամբ: Այդ տոները պետք է կազմակերպել մանկապարտեզի մարզահրապարակում կամ մարզադահլիճում: Տոնը պետք է սկսել հանդիսավոր ձևով մարզահրապարակ մտնելով, այնուհետև երեխաները կատարում են շարային, ընդհանուր զարգացնող վարժություններ (առարկաներով և առանց առարկաների), հիմնական շարժումներ, շարժախաղեր, մարզախաղերի տարրեր, փոխանցումավազքեր և այլն: Առաջադրանքները պետք է լինեն զվարճալի և խաղային ձևով: Դրանց կատարման ընթացքում յուրաքանչյուր երեխայի տրվում է հնարավորություն՝ ցուցաբերելու արագաշարժություն, ճարպկություն, ճկունություն, հնարամտություն: Վերջում կարելի է երեխաներին հանձնել հուշանվերներ, մրցանակներ:

Տարին 1-2 անգամ կարելի է կազմակերպել առողջության օր՝ 40-50 րոպե տևողությամբ:

Մարզական տոներին և առողջության օրերին նախապատրաստվելիս դաստիարակը պետք է նախապես որոշի միջոցառման բովանդակությունը՝ հաշվի առնելով տարվա եղանակը: Հարկավոր է նկատի ունենալ նաև ֆիզիկական վարժությունների՝ բոլորին հետաքրքրաշարժ լինելու և չափավոր ծանրաբեռնվածության հագանանքը:

Մարզական միջոցառումների և տոների ընթացքում երեխաների շարժողական ակտիվությունը մեծանում է. նրանք ընտելանում են մասնակցելու տարբեր խմբային խաղերի, զվարճանքների, մրցումների, ձեռք են բերում համագործակցելու, փոխօգնության, կազմակերպվածության հմտություններ:

Երեխաների ինքնուրույն շարժողական գործունեություն

Շարժողական ռեժիմում կարևորվում է նաև երեխաների ինքնուրույն գործունեությունը: Երեխան իր նախասիրություններին համապատասխան ստանում է ազատ ընտրության հնարավորություն՝ զբաղվելու գործունեության տարբեր ձևերով, որոնք կնպաստեն նրա ստեղծագործական ակտիվության զարգացմանը: Անհրաժեշտ է խթանել երեխաների ինքնուրույն գործունեությունը՝ կազմակերպելու ֆիզկուլտուրայի մարզագույքի և սարքավորումների օգտագործումով, մրցակցական տարրերով տարբեր շարժախաղեր, մարզախաղեր և վարժություններ: Այստեղ երեխան ինքնահաստատման հնարավորություն է ձեռք բերում: Դառնալով իրերի, գործողությունների, հարաբերությունների տեր, նա նաև ինքնաճանաչման որակ է ձեռք բերում: Ձևավորվում են հասակակիցների հետ համագործակցելու հմտություններ:

Մանկապարտեզի միջին տարիքային խմբերում գերակշռում է երեխաների և դաստիարակների համատեղ գործունեությունը, քանի որ երեխաները դեռևս անփորձ են: Իսկ հետագայում երեխան պետք է ինքնուրույն կատարի շարժողական գործողությունը:

Երեխաների ինքնուրույն շարժողական գործունեության համար կարելի է օգտագործել տարբեր առարկաներ, մարզագույք, ինչպես նաև ծանոթ շարժախաղեր, մար-

զախաղերի տարրերով վարժություններ և այլն:

Դաստիարակը պետք է ուղղորդի տարբեր գործունեության տեսակների հաջորդականությունը և երեխաների հետաքրքրությունները:

Շարժումների հստակության և աչքաչափի զարգացման նպատակով կարելի է անցկացնել նաև այնպիսի խաղեր, ինչպիսիք են՝ գնդակներով, խաղաշշերով խաղերը և այլն:

Ձմռանը երեխաների համար պետք է ստեղծել հնարավորություն՝ սահելու սահնակով, քայլելու դահուկներով, իսկ տաք եղանակներին՝ վարելու հեծանիվ, խաղալու բադմինտոն և այլ խաղեր:

ՄՏԱՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Մտավոր գործունեության բովանդակությունը ներառում է երեխայի իմացական կարողությունների ու հմտությունների, երևակայության, ընկալման, մտածողության, հիշողության, հետաքրքրասիրության և մտավոր ընդունակությունների զարգացումը:

Երեխայի մտավոր զարգացման և դաստիարակության հիմքը զգայական դաստիարակությունն է: Երեխան շրջապատող աշխարհը ճանաչում է զգայական ընկալման միջոցով: Այդ մակարդակով էլ որոշվում է երեխայի ճանաչողական գործունեության հաջողությունը:

Մտավոր դաստիարակության խնդիրներն իրականացվում են ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ զբոսանքների, դիդակտիկ խաղերի և պարապմունքների ընթացքում:

Միջին խմբում կարևորվում են հետևյալ խնդիրները.

Զգայական դաստիարակություն

- Շարունակել աշխատանքը զգայական դաստիարակության ուղղությամբ՝ գործունեության տարբեր ձևերի կիրառման միջոցով:

- Ակտիվ գործունեության միջոցով կատարելագործել երեխաների տարբեր զգայությունների կիրառումը /տեսողության, լսողության, համի, հոտառության/:

- Ընդլայնել զգայական փորձը և կարողանալ դա արտահայտել խոսքի միջոցով:

- Խրախուսել առարկաների ուսումնասիրման, հետազոտման ինքնուրույն փորձերը /համեմատել, խմբավորել, դասակարգել/:

- Սովորեցնել առանձնացնել առարկաներն ըստ հատկանիշների /գույն, ձև, չափ, կշիռ/, խմբավորել դրանք ըստ 1-2 հատկանիշի՝ գույն-չափ:

ԵՐԵՒԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀ

Առարկայական միջավայր

- Շարունակել ծանոթացնել շրջապատող առարկաներին ու երևույթներին գործունեության տարբեր ձևերի ժամանակ՝ խաղ, աշխատանք, ուսուցում:

- Ընդլայնել երեխաների մտահորիզոնը՝ դրա համար ստեղծելով անհրաժեշտ պայմաններ:

- Երեխաներին վարժեցնել ճիշտ անվանել շրջապատի առարկաները և կարողանալ ըստ նշանակության օգտագործել դրանք խոսքի մեջ և առօրյայում (եթե հնարավոր է):

- Երեխաներին պատմել շրջապատում տեղի ունեցող երևույթների մասին: Հետաքրքրություն առաջացնել նկարների, գրքերի նկարազարդումների և հեռուստահաղորդումների նկատմամբ:

- Շարունակել ծանոթացնել առարկաների առանձնահատկություններին և որակին, կարողանալ տարբերակել դրանք: Պատմել, թե ինչից են պատրաստված /պլաստիլին, կավ, թուղթ, կտոր և այլն/: Խրախուսել երեխաների փորձերը՝ գուշակելու, թե ե՞րբ և որտե՞ղ է պատրաստվել այդ առարկան:

- Ընդլայնել հասարակական տրանսպորտի մասին ունեցած երեխաների պատկերացումները՝ ավտոմեքենա, ավտոբուս, ինքնաթիռ, մավ, գնացք:

- Ծանոթացնել ճանապարհային երթևեկության մի քանի կանոնների՝ փողոցը կարելի է անցնել միայն մեծերի հետ հատուկ տեղերում /վերգետնյա, ստորգետնյա անցումներով/, կարելի է անցնել կանաչ լույսի ժամանակ:

- Ձևավորել պատկերացում մարդկանց միջև մի քանի կապերի մասին. մարդիկ միմյանց նանակ են գրում, ուղարկում են ծանրոցներ, խոսում են հեռախոսով:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԵՐԵՎՈՒՅՑՆԵՐ

Ընտանիք

- Ձևավորել պատկերացում, թե ի՞նչ բան է ընտանիքը / նրանք, ովքեր ապրում են երեխաների հետ/: Հետաքրքրվել, թե ինչ պարտականություններ ունի երեխան տանը /հավաքում է խաղալիքները, օգնում է մայրիկին սպասքաղերելու սեղանը, զբաղեցնում է փոքրիկ քույրիկին .../:

- Սովորեցնել երեխաներին ճանաչել և անվանել ամենամոտ հարազատներին:

Մանկապարտեզ

- Շարունակել երեխաներին ծանոթացնել մանկապարտեզին և նրա աշխատակիցներին: Ընդարձակել պատկերացումները նրանց գործունեության մասին: Դաստիարակի հետ միասին երեխաները պետք է շնորհավորեն իրենց քաջ ծանոթ աշխատակիցներին՝ տոնի կապակցությամբ, հրավիրել նրանց թեյի:

- Ընդգրկել երեխաներին խմբասենյակի դասավորման կամ վերադասավորման աշխատանքներում:

- Կատարելագործել մանկապարտեզի տարածքում ճիշտ կողմնորոշվելու կարողությունը:

- Սովորեցնել զանգահարել հիվանդ ընկերոջը կամ հարազատին:

Հայրենի երկիր

- Շարունակել դաստիարակել սեր և հոգատար վերաբերմունք հայրենի երկրի, հարազատ վայրերի /փողոց, տուն, մանկապարտեզ/ նկատմամբ:

- Տալ տեղեկություններ հայրենի քաղաքի /գյուղի, ավանի/, մայրաքաղաք Երևանի ամենագեղեցիկ և տեսարժան վայրերի մասին:

- Ծանոթացնել պետական մի քանի տոներին և խորհրդանշաններին:

- Պատմել հայոց բանակի, զինվորների մասին, ովքեր պաշտպանում են մեր երկիրը:

- Երեխաներին հաղորդակից դարձնել ժողովրդական ավանդույթներին: Սեր և հետաքրքրություն առաջացնել ազգային տոների նկատմամբ:

Մեծերի աշխատանքը

- Շարունակել ծանոթացնել մեծերի աշխատանքին՝ բժիշկ, վարորդ, խոհարար,

վաճառող, դերձակ...: Ձևավորել հետաքրքրություն տարբեր մասնագիտությունների նկատմամբ:

- Տեղեկացնել ծնողների աշխատանքին. նրանք պետք է իմանան՝ որտեղ են աշխատում իրենց հայրերն ու մայրերը:

Երեխաները տարեվերջին պետք է կարողանան՝

✓ Անվանել ամենատարբեր առարկաներ, որոնք շրջապատում են իրենց /փողոցում, փակ տարածքում/, իմանալ դրանց նշանակությունը, նշել դրանց որակն ու հատկությունները՝ ուսումնասիրելու և հետազոտելու միջոցով:

✓ Դրսևորել հետաքրքրություն այն առարկաների ու երևույթների նկատմամբ, որոնք չկան իրենց շրջապատում, և հնարավորություն չեն ունեցել տեսնելու:

✓ Հաճույքով պատմել ընտանիքի, ընտանեկան կենցաղի, մանկապարտեզի աշխատակիցների մասին: Ակտիվորեն մասնակցել մանկապարտեզում և խմբում նշվող տարբեր իրադարձություններին, տոնախմբություններին՝ ուրախություն պատճառելով և՛ մեծերին, և՛ հասակակիցներին:

✓ Պատմել հայրենի քաղաքի /գյուղի, ավանի/ մասին:

✓ Պատմել ապագայում իր նախընտրելի մասնագիտության մասին /դառնալ ուսուցչուհի կամ բժիշկ/:

ՀԱՎԵԼՎԱԾ N2

ՄԵԹՈՂԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Ինտեգրել ճանաչողական հետաքրքրությունների զարգացումը գործունեության տարբեր ձևերի և ռեժիմային տարբեր պահերի մեջ:

2. Մեծ տեղ տալ հեքիաթների ընթերցմանը, որոնց միջոցով երեխաները բազմաթիվ գիտելիքներ են ձեռք բերում մոտ և հեռու շրջակա աշխարհի մասին՝ ոչ անմիջական ճանապարհով:

3. Երեխաների կյանքը հագեցնել զգացմունքներով և հուզականությամբ:

4. Համագործակցել ընտանիքի հետ:

Երեխաների հետ տարվող աշխատանքի կազմակերպման ձևերը

4-5 տարեկան երեխաների ճանաչողական զարգացման ուղղությամբ աշխատանքները տարվում են ինչպես պարապմունքների ընթացքում, այնպես էլ ազատ գործունեության ժամանակ:

Ընդհանուր պարամունքների քանակը տարվա ընթացքում կազմում է 36, որից 18-ը տրվում է «Առարկայական միջավայր» և «Հասարակական կյանքի երևույթներ», իսկ 18-ը՝ «Ծանոթացում բնությանը» և «Էկոլոգիական դաստիարակություն» բաժիններին:

Պարապմունքներն անցկացվում են շաբաթը մեկ անգամ: Դրանք երեխաների առօրյայում ձեռք բերած ճանաչողական գիտելիքների դասակարգման, ամփոփման, արդյունքների գնահատման միջոց են և նպաստում են նրանց ինքնուրույնության, ազատ ստեղծագործական զարգացմանը:

Աշխատանքի կազմակերպմանը ներկայացվող պահանջներ

- Ձարգացնող խոսքային միջավայրի ստեղծում,

- Աշխատանքի տարբեր ձևերի և մեթոդների օգտագործում,
- Աշխատանքի ճիշտ պլանավորում և կազմակերպում,
- Մանկապարտեզի և ընտանիքի սերտ համագործակցություն:

Մեծահասակի կողմից տրվող տեղեկատվության հիմնական ձևերը

Երեխաներին շրջապատի մասին նոր տեղեկատվության հիմնական աղբյուրը մեծահասակն է, իսկ հաղորդման հիմնական ձևը ճանաչողական *հեքիաթներն ու պատմվածքներն են, ինչպես նաև իրական պատմությունները` սեփական փորձից:* Նպատակն է՝ զարմացնել, հետաքրքրել զվարճացնել երեխային և զարգացնել նրա երևակայությունը:

Պապայմունքներից դուրս անցկացվող աշխատանքի ձևեր և միջոցառումներ

Տոներ

4-5 տարեկան երեխաների իմացական ոլորտի զարգացման գործում հատկապես մեծ է տոնակատարությունների դերը /պետական, ազգային, միջազգային/: Ողջ արարողությունը հարկավոր է կառուցել երեխաների հուզական ոլորտի մակարդակի վրա: Այս տարիքի երեխաների հետ աշխատելիս դաստիարակները կարող են ավագ խմբում ներկայացված տոնակատարությունների թիվը պակասեցնել կամ թեթևացնել ծրագիրը՝ հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները:

Ջրույցներ

Մեծ է զրույցի դերը երեխաների ճանաչողական զարգացման գործում: Այն իրականացվում է ինչպես պարապմունքների ժամանակ, այնպես էլ դրանցից դուրս: Ջրույցի պլանավորման և անցկացման ժամանակ հարկավոր է հաշվի առնել հետևյալ նախապայմանները՝

- զրույցը երկխոսություն է /երեխա-դաստիարակ/,
- երկու կողմերը նախապես պետք է ծանոթ լինեն թեմային,
- երեխաներին պետք է տրվի ազատ արտահայտվելու հնարավորություն:

Թեմատիկ հավաքածուներ

Յուրաքանչյուր թեմային առնչվող նյութերի հավաքածուները հնարավորություն են տալիս ճշտելու, ամրապնդելու, համադրելու և դասակարգելու շրջապատի մասին երեխաների ունեցած պատկերացումները: Դրանք հիմնականում լինում են թեմատիկ /օրինակ՝ կահույք, սպասք, ապակի, փայտ և այլն/:

Հավաքածուները կարող են լինել նաև անհատական և խմբային: Լինում են ինչպես պատրաստի, այնպես էլ դաստիարակի և երեխաների ձեռքով պատրաստված /օրինակ՝ մեքենաների կամ փայտե խաղալիքների հավաքածու/: Երեխաների ձեռքով ստեղծված հավաքածուներն այս տարիքում զարգացում են խաղի մեջ դրսևորվող համապատասխան ապրումներ:

Մակետներ (մանրակերտեր)

Դրանք տարբեր առարկաների կամ ինչ-որ բանի փոքրացված մոդելն է, որը նպաստում է շրջապատի մասին երեխաների պատկերացումների դասակարգմանը, հետաքրքրությունների շրջանակի ընդլայնմանը /թեմա՝ փողոց, մանկապար-

տեգ.../: Այստեղ մեծ է դաստիարակի օգնությունը: Կարևորվում է ոչ թե մանրակերտի բաղադրամասերի քանակը, այլ դրանց շարժունակությունը և բազմաֆունկցիոնալ լինելը: Հաշվի առնելով այս տարիքի երեխաների առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է մակետի բովանդակությունը «կենդանացնել» տարբեր գործողություններով ու գործունեության ձևերով /նկարչություն, ծեփ, ապլիկացիա, ձեռքի աշխատանք/:

Ժամանցներ

Ժամանցներն անցկացվում են եռամսյակը մեկ: Դրանք իրենց բովանդակությամբ տարբերվում են զվարճանքներից, որոնք անցկացվում են կրտսեր խմբում: Նման ժամանցների նպատակը շրջապատի մասին երեխաների պատկերացումների ամրապնդումն է՝ ինչպես նաև թեմային վերաբերող նոր, հետաքրքիր տեղեկատվության հաղորդումը: Թեման ընտրում է դաստիարակը՝ ելնելով խմբի երեխաների առանձնահատկություններից, ընդունակություններից, հետաքրքրություններից:

Ավանդույթներ

4-5 տարեկան երեխաների շրջանում հարկավոր է մշակել ճանաչողական հետաքրքրությունների գծով որոշակի ավանդույթներ: Ավանդույթը աշխատանքի պլանավորված և հաջորդաբար կրկնվող ձև է /օրինակ՝ «Մեր հյուրերի պատմությունը»/: Հյուր կարող են լինել մանկապարտեզի աշխատակիցները, տարբեր խմբերի երեխաները, ծնողները, հարազատները, անվանի մարդիկ, հեքիաթի հերոսները: Վերջիններս պատմում են հետաքրքիր պատմություններ իրենց կյանքի, շրջակա աշխարհի մասին: Այցելությունները կարող են լինել ամիսը մեկ անգամ:

Ցուցահանդեսներ

Դաստիարակը կարող է կազմակերպել թեմատիկ ցուցահանդեսներ: Դրանց պետք է ակտիվորեն մասնակցեն նաև ծնողները: Յուրաքանչյուր ցուցահանդեսից առաջ հարկավոր է մանրակրկիտ պլանավորել և սխտեմավորել աշխատանքը: Դրանք կարող են կազմակերպվել ինչպես խմբի ներսում, այնպես էլ մանկապարտեզի մասշտաբով:

Գեղարվեստական գրականություն

Հայտնի է գեղարվեստական գրականության դերը երեխաների համակողմանի զարգացման գործում: Այն ոչ միայն նպաստում է փոքրիկի ձևավորմանը՝ որպես անհատ, այլև ընդլայնում է նրա մտահորիզոնը, հետաքրքրությունների շրջանակը, հարստացնում է խոսքը և ձևավորում աշխարհայացք: Հեքիաթ ընթերցելիս կամ պատմելիս, դրա գեղարվեստահուզական մասն ապահովելուց հետո, իմացական ուղորտը զարգացնելու նպատակով պետք է երեխաների ուշադրությունը հրավիրել առանձին պահերի և դրվագների վրա:

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՍԵՊՏԵՄԲԵՐ			
I ՇԱՐԱԹ		III ՇԱՐԱԹ	
ԹԵՄԱ	Մանկապարտեզ	ԹԵՄԱ	Խաղ՝ « Խանութ» /Անհրաժեշտ ապրանքներ՝ տան համար/
ՆՊՄՏՈՒՄ	Երեխաներին ծանոթացնել մանկապարտեզին և նրա աշխատակիցներին: Ընդարձակել պատկերացումները նրանց գործունեության մասին: Կարողանալ ճիշտ ասել մանկապարտեզի հասցեն: Կատարելագործել մանկապարտեզի տարածքում և խմբասենյակում ազատ կողմնորոշվելու կարողությունը:	ՆՊՄՏՈՒՄ	Ամրապնդել երեխաների գիտելիքները կենցաղում կիրառվող տարբեր առարկաների մասին: Ծանոթացնել դրանց նշանակությանը, առանձնահատկություններին և որակին: Տեղեկացնել, թե ինչից են պատրաստված այդ առարկաները /պլաստիլին, թուղթ, կավ, կտոր և այլն/:
ՀՈԿՏԵՄԲԵՐ			
I ՇԱՐԱԹ		III ՇԱՐԱԹ	
ԹԵՄԱ	Իմ հայրենի քաղաքը	ԹԵՄԱ	Ապակու աշխարհում
ՆՊՄՏՈՒՄ	Դաստիարակել սեր և հոգատար վերաբերմունք հայրենի երկրի նկատմամբ: Պատմել հայրենի քաղաքի /գյուղի, ավանի/ ամենագեղեցիկ և տեսարժան վայրերի մասին: Սովորեցնել ճիշտ անվանել այն փողոցը, որտեղ գտնվում է մանկապարտեզը: Բացատրել «քաղաքացի» /գյուղացի/ բառի իմաստը:	ՆՊՄՏՈՒՄ	Շարունակել ծանոթացնել տարբեր առարկաների առանձնահատկություններին և որակին: Ճշտել երեխաների գիտելիքները ապակու մասին /հարթ է, թափանցիկ, կտրվող/: Դաստիարակել խնամքով վերաբերմունք ապակյա իրերի նկատմամբ:
ՆՈՅԵՄԲԵՐ			
I ՇԱՐԱԹ		III ՇԱՐԱԹ	
ԹԵՄԱ	Մեծերի աշխատանքը	ԹԵՄԱ	Ճանապարհորդություն դեպի անցյալ /թուղթ/
ՆՊՄՏՈՒՄ	Շարունակել ծանոթացնել մեծերի աշխատանքին: Ջրուցել խոհարարի աշխատանքի մասին: Դիտել մանկապարտեզի խոհարարի աշխատանքը: Ձևավորել հետաքրքրություն, սեր և հարգանք խոհարարի մասնագիտության նկատմամբ:	ՆՊՄՏՈՒՄ	Ծանոթացնել երեխաներին թղթի ստեղծման պատմությանը, տալ տեղեկություններ թղթի ժամանակակից տեսակների մասին: Ըստ որակի կարողանալ տարբերել դրանք: Խրախուսել երեխաների փորձերը՝ գուշակելու, թե ինչ կարելի է պատրաստել թղթից:

ԴԵԿՏԵՄԲԵՐ			
I ՇԱՐԱԹ		III ՇԱՐԱԹ	
ԹԵՄԱ	Մեզ հյուր է բժշկ Այբուլիտը	ԹԵՄԱ	Կախարդական արկղիկ
ՆՊԱՏԱԿ	Շարունակել ծանոթացումը մեծերի աշխատանքին: Այս անգամ, ստեղծելով խաղային իրավիճակ, ճշտել և ամրապնդել երեխաների գիտելիքները բժշկի և բուժքրոջ աշխատանքների մասին: Սովորեցնել ճիշտ դիմել մանկապարտեզի բուժքրոջը, լինել բուժկաբինետում, կարողանալ ճիշտ անվանել բժշկական մի քանի գործիքներ:	ՆՊԱՏԱԿ	Ընդլայնել երեխաների մտահորիզոնը շրջապատող առարկաների վերաբերյալ: Արտաքուստ գունեղ, գեղեցիկ ձևավորված և զվարճալի արկղիկում պահվում են դիտողական տարբեր պարագաներ: Առարկաների հետ երեխաները շփվում են ոչ միայն պարապմունքի ժամանակ, այլև պարապմունքից դուրս /տեղադրում են նոր առարկաներ, վերցնում շոշափում և ուսումնասիրում են դրանք/:
ՀՈՒՆՎԱՐ			
I ՇԱՐԱԹ		III ՇԱՐԱԹ	
ԹԵՄԱ	Ընտանիք	ԹԵՄԱ	Հայրիկներն ու պապիկները զինվորներ են
ՆՊԱՏԱԿ	Տալ պատկերացում, թե ինչ բան է ընտանիքը /հարազատներ, որ ապրում են երեխաների հետ/: Սովորեցնել երեխաներին՝ ճանաչել և անվանել ամենամոտ հարազատներին: Սովորեցնել պատմել ծնողների զբաղվածության, նրանց մասնագիտությունների մասին:	ՆՊԱՏԱԿ	Երեխաներին մատչելի ձևով ծանոթացնել պետական մի քանի տոների: Պատմել հայոց բանակի, զինվորների մասին, ովքեր պաշտպանում են մեր երկիրը: Նրանց նկատմամբ դաստիարակել սեր և հարգանք:
ՓԵՏՐՎԱՐ			
I ՇԱՐԱԹ		III ՇԱՐԱԹ	
ԹԵՄԱ	Մեր սիրելի խաղալիքները	ԹԵՄԱ	Իմ բարեկամ լուսակիրը
ՆՊԱՏԱԿ	Սովորեցնել երեխաներին՝ ինքնուրույն նկարագրել տարբեր նյութերից պատրաստված խաղալիքներ, նշել դրանց բնորոշ հատկանիշները՝ գույն, ձև, որակ: Խրախուսել առարկաների ուսումնասիրման, հետազոտման ինքնուրույն փորձերը /համեմատել, խմբավորել, դասակարգել/:	ՆՊԱՏԱԿ	Ծանոթացնել լուսակրի աշխատանքին, ճանապարհային երթևեկության մի քանի կանոններին՝ փողոցը կարելի է անցնել միայն մեծերի հետ հատուկ տեղերում /վերգետնյա, ստորգետնյա անցումներով/, կարելի է անցնել կանաչ լույսի ժամանակ:

ՄԱՐՏ			
I ՀԱՔԱԹ		III ՀԱՔԱԹ	
ԹԵՄԱ	Ի՞նչ մայրիկն ամենալավն է	ԹԵՄԱ	Կահույք
ՆՊՄՏԱԿԸ	Ընդլայնել երեխաների պատկերացումներն ընտանիքի մասին: Կարողանալ պատմել մայրիկի մասնագիտության ու սիրած զբաղմունքի մասին: Դաստիարակել սեր, ուշադրություն և հոգատարություն մայրիկների նկատմամբ:	ՆՊՄՏԱԿԸ	Շարունակել ծանոթացնել մեզ շրջապատող առարկաների առանձնահատկություններին և որակին: Ամրապնդել «կահույք» հասկացությունը: Խրախուսել երեխաների փորձերը՝ գուշակելու, թե ե՞րբ և որտե՞ղ է պատրաստվել այդ առարկան:
ԱՊՐԻԼ			
I ՀԱՔԱԹ		III ՀԱՔԱԹ	
ԹԵՄԱ	Տունը, որտեղ ես ապրում եմ	ԹԵՄԱ	Սպասք
ՆՊՄՏԱԿԸ	Շարունակել ծանոթացումը հարազատ վայրերի /փողոց, տուն/ հետ: Կարողանալ ճիշտ անվանել այն փողոցը,, որտեղ ապրում եմ: Բացատրել, թե ինչու է հարկավոր իմանալ տան, ինչպես նաև մանկապարտեզի հասցեն:	ՆՊՄՏԱԿԸ	Ծանոթացնել «սպասք» ընդհանրական հասկացությանը, նշել սպասքի մի քանի տեսակ՝ թեյի, ճաշի, խոհանոցի: Պատմել, թե ինչի՞ց են դրանք պատրաստված, ծանոթացնել առանձնահատկություններին և որակին, վարժեցնել օգտագործել դրանք՝ ըստ իրենց նշանակության:
ՄԱՅԻՍ			
I ՀԱՔԱԹ		III ՀԱՔԱԹ	
ԹԵՄԱ	Օգնականները	ԹԵՄԱ	Ինչո՞վ ենք մենք ճանապարհորդում
ՆՊՄՏԱԿԸ	Շարունակել զրուցել ընտանիքի և ընտանիքի անդամների մասին, նշել, թե ի՞նչ զբաղվածություն ունի տանը ընտանիքի յուրաքանչյուր անդամ: Հետաքրքրվել, թե ի՞նչ պարտականություններ ունի երեխան /հավաքում է խաղալիքները, օգնում է մայրիկին սպասքադրելու սեղանը, զբաղեցնում է փոքրիկ քույրիկին .../:	ՆՊՄՏԱԿԸ	Ընդլայնել հասարակական տրանսպորտի մասին ունեցած երեխաների պատկերացումները՝ ավտոմեքենա, ավտոբուս, ինքնաթիռ, ճոպանուղի, նավ, գնացք: Տալ պատկերացումներ տրանսպորտում ճիշտ պահվածքի մասին: Շարունակել ծանոթացնել մեծերի աշխատանքին՝ վարորդ:

ՃԱՆԱԴԱՐՈՒՄԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Նախադպրոցական տարիքի երեխաների՝ անվտանգ երթևեկության կանոնների ուսուցումը կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է նախադպրոցական ուսումնական հաստատությունում ստեղծել առարկայական զարգացնող միջավայրի հատուկ պայմաններ՝ հետևյալ բաղադրիչների ներառմամբ.

• Խաղալիքներ և խաղային սարքավորումներ

Փոխադրամիջոցներ, գնացք՝ երկաթգծով, մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ, նկարներ՝ պետավտոտեսուչ, տիկնիկներ, մանկասայլակներ, կառուցողական նյութեր, լուսակիր, կենդանիներ

• Ուեժիտրական խաղ

Խաղային դաշտ, ճանապարհ, «ճանապարհի հեքիաթային անտառում», նշաններ, հեքիաթային հերոսներ

• Ուսումնագնական պարագաներ

Հասարակական փոխադրամիջոցներ, տրոլեյբուս, միկրոավտոբուս, ավտոբուս, մետրոպոլիտեն, տաքսի, գնացք՝ երկաթգծով, նկարներ քաղաքի փողոցների արտացոլմամբ, երթևեկության նշաններ, լուսացույցով, խաչներով պետավտոտեսուչի հետ, նկար, որտեղ արտացոլված է երթևեկելի մասը և մեքենաները, մայթ՝ մարդկանցով, ճանապարհի վրա տարբեր իրավիճակային արտացոլմամբ քարտեր՝ 10 X 15 չափերի տարբեր սյուժեներով, ճանապարհի վրա խաղ գնդակով, մարդիկ, հետիոտնային անցում, ստորգետնյա անցում, ճանապարհային նշաններ, «Երկկողմանի ճանապարհ», «Զգուշացե՛ք, երեխաներ են»: Սեղանի վրա մանրակերտ (մակետ) կամ պատի վրա՝ թելերով ճանապարհ-մեքենա, մարդիկ: Լաբիրինթ՝ «ճանապարհորդություն քաղաքով», ալգորիթմներ՝ «Ինչպե՞ս պետք է ճանապարհը ճիշտ անցնել», «Գտե՛ք հետիոտնային անցումը»:

• Սյուժետադերային խաղերի բաղադրամասեր

Գոգնոցներ կամ գլխարկներ ճանապարհային նշաններով (4 հատ), լուսակիր, խաչներով՝ հատակի վրա ցանկացած նյութից գեբրային զծերով, պետավտոտեսուչին անհրաժեշտ հավելումներ, գլխարկ մեքենավարի համար, դեկ, նկարներ՝ հասարակական փոխադրամիջոցներ, ավտոբուս, գնացք, մեքենա, տների, շենքերի մանրակերտեր, ճանապարհային նշաններ:

• Դիդակտիկ խաղեր

«Ճիշտ է,ճիշտ չէ», «Թույլատրվում է, արգելվում է», «Գուշակիր՝ ինչո՞վ կտեղափոխես»:

Կրթական գործընթացի բովանդակությունը ներկայացվում է կրթադաստիարակչական գործընթացի բոլոր մասնակիցների համար:

Երեխաները: Կողմնորոշվում են, որ մեքենաները ընթանում են փողոցի երթևեկելի մասով, իսկ հետիոտները՝ մայթով: Գիտեն լուսացույցի նշանակությունը: Երեխաները տարածության մեջ կողմնորոշվում են տարբեր ուղղություններով՝ աջ,

ծախ, առաջ, հետ, վերև, ներքև: Ունեն պատկերացումներ փոխադրամիջոցների տեսակների, դրանց շարժման առանձնահատկությունների մասին: Գիտեն, թե ինչպես տարբերել բեռնատար, մարդատար ավտոմեքենաները, ունեն պատկերացումներ հատուկ մասնագիտացված տրանսպորտի նշանակության մասին. այդ թվում՝ հրշեջ, ոստիկանության, շտապօգնության: Կարողանում են իրենց ճիշտ պահել հասարակական տրանսպորտի բոլոր տեսակներում: Գիտեն՝ ճանապարհային անվտանգության ինչպիսի՞ կանոններ է անհրաժեշտ պահպանել. անցնել միայն կանաչ լույսի ներքո, անցնել միայն հետնիտոնի անցումով: Գիտեն խաչմերուկի, հասարակական տրանսպորտի երթևեկության առանձնահատկությունները: Իրազեկ են ճանապարհային երթևեկության նշանների մասին՝ «Ստորգետնյա, վերգետնյա անցումներ», «Չեփոտնային անցում», «Երկկողմանի շարժում», «Երեխաներ»:

Մանկավարժը: Խմբում ստեղծում է պայմաններ առարկայական զարգացնող միջավայրի՝ գեղարվեստական գրականության, խաղային գործունեության կազմակերպման միջոցով երեխաների կողմից երթևեկության կանոնների ուսումնասիրության համար: Ամրապնդում է երեխաների գիտելիքները դիդակտիկ, սեղանային-տպագիր, սյուժետադերային, շարժախաղերի միջոցով: Ընտրում է համապատասխան գեղարվեստական գրականություն, տեխնիկական միջոցներ երեխաների գիտելիքների ամրապնդման համար: Երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական գործընթացում կազմակերպում է խնդրահարույց իրավիճակներ, նպատակային էքսկուրսիաներ, երթևեկության կանոնների ծանոթացման և ուսուցման ուղղությամբ:

Ծնողները: Գիտեն և պահպանում են ճանապարհային երթևեկության կանոնները: Ակտիվ մասնակցություն են ունենում ճանապարհային երթևեկության կանոնների ծանոթացման ուղղությամբ հաստատությունում կազմակերպվող տոների և զվարճությունների: Ծանոթացնում են երեխաներին իրենց բնակության վայրին, տեղանքի առանձնահատկություններին, տեղեկություններ հաղորդում իրենց հասցեի վերաբերյալ, քննարկում նրանց հետ ճանապարհային իրավիճակներ: Պատկերացում ունեն այն մասին, թե այս տարիքի երեխան ի՞նչ պետք է գիտենա ճանապարհային երթևեկության կանոնների մասին: Ամրապնդում են երեխաների գիտելիքները ճանապարհային երթևեկության մասին գեղարվեստական ընթերցանության դիտումների, զրույցների միջոցով:

Տարեվերջին միջին խմբի երեխան պետք է գիտենա՝

- Ինչպիսի տրանսպորտ է ընթանում ճանապարհով:
- Ինչպես կողմնորոշվել տարածության մեջ: Լուսացույցի նշանակությունը:
- Տրանսպորտի կառուցվածքային մասերի անվանումները:
- Վարքի կանոնները՝ երթևեկելի մասում, փողոցում, տրանսպորտում, ձմռանը ճանապարհին, լուսակրի յուրաքանչյուր գույնի նշանակությունը:

Ունի պատկերացում տրանսպորտի տեսակների, դրանց շարժման առանձնահատկությունների վերաբերյալ:

- Ունի պատկերացում մասնագիտացված հատուկ տրանսպորտի տեսակների

մասին:

- Գիտի վարվելաձևի կանոնները բոլոր տեսակի հասարակական տրանսպորտի ձևերում:

- Գիտի՝ որ քաղաքում (գյուղում, ավանում) է ապրում, իր հասցեն:

- Գիտի ճանապարհային առանձին նշանների մասին. «Յետիոտնային անցում», «Ստորգետնյա անցում», «Վերգետնյա անցում», «Երկկողմանի շարժում», «Երեխաներ»:

ՃԱՆԱՊԱՐՅԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

1-ին եռամսյակ

Ամիս	Շաբաթ	Խնդիրներ ճեշ-ի ուսուցման ուղղությամբ	Պարապմունքի թեման և նպատակը	Դաստիարակի և երեխաների համատեղ գործունեություն	Նեղ մասնագետների հետ համագործակցություն
1	2	3	4	5	6
սեպտեմբեր	I	Ամրապնդել երեխաների գիտելիքներն այն մասին, որ փողոցը բաժանվում է 2 մասի՝ մայթ և երթևեկելի մաս:	Պարապմունք 1 «Լուսացույցը մեր ընկերն է». ամրապնդել երեխաների գիտելիքները լուսացույցի և նրա գույների նշանակության մասին:	Խաղային իրավիճակ. «Լուսացույցի արկածները» Ուտանավորի ընթերցում Բարտո «Ինքնաթիռը»	
	II	Ամրապնդել երեխաների գիտելիքները ճանապարհային անվտանգ վարքագծի կանոնների վերաբերյալ:		Իրավիճակային՝ «Ինչպե՞ս պետք է իրեն ճիշտ պահել ճանապարհին»: Շարժախաղ՝ «Գունավոր ավտոմեքենաներ»	Խաղեր՝ հաստատության հրապարակում. Ֆիզկուլտ-հրահանգիչ
	III	Շարունակել աշխատանքները՝ տրանսպորտի տեսակների վերաբերյալ պատկերացումների ընդլայնման ուղղությամբ:		Հաղորդակցական իրավիճակ. «Մենք ավտոբուսում ենք», «Կառուցում ենք լուսաֆոր»	Ծեփ՝ «Գունավոր լուսացույց»
	IV	Ջարգացնել երեխաների դիտունակությունը ճանապարհային նշանների և լուսացույցի աշխատանքի հանդեպ:		Դիդակտիկ խաղ՝ «Տրանսպորտ» Դիդակտիկ խաղ՝ «Գուշակիր» «Ինչո՞վ են երթևեկում	Էքսկուրսիա՝ միկրոտարածքով

հոկտեմբեր	I	Ընդլայնել երեխաների պատկերացումները քաղաքի փողոցների վերաբերյալ:	Պարապմունք 2 «Ծանոթացում քաղաքի փողոցներին». ընդլայնել փողոցների վերաբերյալ երեխաների պատկերացումները նոր տեղեկություններով (բնակելի տուն, շենք, խանութ, դպրոց, փոստ և այլն, ճանապարհ, որով երթևեկում է տրանսպորտը):	Խաղային իրավիճակ. «Տեղադրիր ճիշտ ճանապարհային նշանները»	Խաղեր՝ երթևեկության հրապարակում
	II	Ձևավորել հասկացություն այն մասին, որ ճանապարհին մեքենաների երթևեկությունը կարող է լինել միակողմանի և երկկողմանի: Ծանոթացնել «Երկկողմանի նշան»՝ ճանապարհային երթևեկության նշանին:	Ձևավորել հասկացություն այն մասին, որ մեքենաների շարժումը ճանապարհով լինում է միակողմանի և երկկողմանի, իսկ փողոցի երթևեկելի մասը երկկողմանի շարժման դեպքում կարող է անջատվել	Ոտանավորի ընթերցանություն Ս.Մարշակ՝ «Լուսաֆոր» Սյուժետադերային խաղ՝ «Ավտոբուս»: Դիդակտիկ խաղ՝ «Ճիշտ է, ճիշտ չէ»:	Խաղեր՝ մարզահրապարակում
	III	Ամրապնդել երեխաների գիտելիքները ճանապարհային նշանների վերաբերյալ:	գծով: Ծանոթացնել «Երկկողմանի շարժում» ճանապարհային նշանին:	Դիդակտիկ խաղ՝ «Ընտրիր՝ ըստ գույնի» Ընթերցանություն	
	IV	Շարունակել աշխատանքները՝ երեխաների մեջ հետիոտների անվտանգ վարքագծի մասին գիտելիքների ձևավորման ուղղությամբ:		Խաղ-մմանակումներ՝ «Ես վարորդ եմ», «Ես մեքենա եմ» Շարժախաղ՝ «Ծիտիկները և ավտոմեքենաները»	Նկարչություն՝ «Մեքենաները ճանապարհի վրա»:
	I	Ամրապնդել երեխաների գիտելիքները լուսացույցի յուրաքանչյուր գույնի մասին առանձին:	Պարապմունք 3 «Ճանապարհորդություն քաղաքում» Շարունակել քաղաքին (ավանին) ծանոթացնելու աշխատանքները.	Ընթերցանություն՝ ոտանավորներ տրանսպորտի մասին (դաստիարակի ընտրությամբ) Դիդակտիկ խաղ՝ «Յետիոտները և տրանսպորտը»	Չամենատական դիտումներ-տրանսպորտ

	II Ծանոթացում մետրոպոլիտենին: Տալ պատկերացումներ՝ «Ստորգետնյա անցում» մետրոպոլիտենի նշանի մասին:	տեղեկացնել, որ այն ունի փողոցներ, տներ, շենքեր, այգիներ, մանկապարտեզներ, դպրոցներ, հուշարձաններ: Ամրապնդել՝	Ընթերցանություն, Շարժախաղ՝ «Գունավոր ավտոմեքենաներ»	
	III Ամրապնդել վարքագծի կանոնները՝ հասարակական տրանսպորտում:	-գիտելիքներն այն մասին, որ քաղաքում կարելի է երթևեկել տրանսպորտով՝ տրոլեյբուսով, ավտոբուսով, երթուղային տաքսիով, -ծանոթացնել հասարակական տրանսպորտում վարքի կանոններին, -մետրոպոլիտենի առանձանահատկություններին, -տալ պատկերացում ստորգետնյա անցուղու մասին:	Խաղային իրադրություն՝ «Ինչպե՞ս պահել իրեն տրանսպորտում» Կառուցողական՝ «Ավտոպարկ սեփական մեքենայի համար»	Շարժախաղ մարզահրապարակում-ֆիզկուլտ-հրահանգիչ
	IV Ծանոթացնել «Անվտանգության կոդյակ»-ին և դրա նշանակությանը		Խաղային իրադրություն՝ «Ինչպե՞ս պետք է ճիշտ անցնել երթևեկելի մասով»:	Երաժշտադիդակտիկ խաղ՝ «Լսում ենք փողոցին», երաժշտական դաստիարակ

«ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ»

ԹԵՄԱՏԻԿ ՊԱՐԱՊՄՈՆԻՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

Սեպտեմբեր

1. Անծանոթ մարդկանց հետ հաղորդակցության վտանգը: Հմայիչ և ոչ հմայիչ արտաքին. կոնկրետ իրավիճակների վերլուծություն:
2. Երեխայի վարքը՝ մեծի կողմից նրա նկատմամբ բռնարարքի ցուցաբերման դեպքում:
3. Ծանոթացում ընտանեկան կենցաղում օգտագործվող այն առարկաներին, որոնք կարող են վտանգ ներկայացնել երեխաների համար:
4. Բաց պատուհաններ և պատշգամբ. ինչպե՞ս պետք է վարվել: Կոնկրետ իրավիճակների վերլուծություն:
5. Էքսկուրսիա դեպի երթևեկելի մաս (խաչմերուկ, ստորգետնյա անցում) :

Յուլիտեմբեր

1. Երեխայի համագործակցությունը անծանոթ երեխաների և հասակակիցների հետ: Կոնկրետ իրավիճակների վերլուծություն:
2. Հեռախոսով 1-01, 1-02, 1-03 հեռախոսահամարներից օգտվելու կանոնների ուսուցում (խաղային իրավիճակներում):
3. Ի՞նչն է կյանքում ամենակարևորը (առողջություն), ի՞նչ է նշանակում՝ պահպանել առողջությունը:

4. Մեքենա-օգնականներ (վերամբարձ կռուցկ, շտապօգնության մեքենա, հրշեջ-մեքենա):

Նոյեմբեր

1. Ծանոթացում մարդու մարմնի կառուցվածքին (ողնաշար, շնչառական օրգաններ, արյան շրջանառություն):

2. Սովորեցնել գիտակցել սեփական հույզերն ու զգացմունքները: Կոնկրետ իրավիճակների վերլուծություն:

3. Լուսակրի 3 գույները:

Դեկտեմբեր

1. Ինչպե՞ս կանխարգելել հիվանդությունները: Կոփման նշանակությունը: Կախարդական վիտամինները. որտե՞ղ են նրանք ապրում:

2. Ի՞նչ անել, եթե մարդը հիվանդացել է:

3. Որտե՞ղ են ապրում միկրոբները: Ինչպե՞ս հաղթահարել նրանց:

Յունվար

1. Վտանգավոր հատապտուղներ, սոււնկեր: Ինչպե՞ս պահել իրեն անտառում:

2. Վարքի կանոնները ջրի մոտ: Կոնկրետ իրավիճակների վերլուծություն:

3. Սառցադաշտ: Սառցադաշտը ճանապարհին: Ինչո՞վ է այն վտանգավոր հետիոտնի համար:

Փետրվար

1. Թափառական կատուներ և շներ: Նրանց հանդիպելու դեպքում վարվելաձևի կանոնները:

2. Ինչո՞ւ են երեխաները վիճում:

Մարտ

1. Ի՞նչ է նշանակում հասկանալ ուրիշների զգացմունքները և ցանկությունները: Ինչի՞ համար է դա պետք: Կոնկրետ իրավիճակների վերլուծություն:

2. Տնային օգտագործման առարկաները՝ վտանգի աղբյուր:

3. «Ջեբրը» ճանապարհի վրա: Ճանապարհին անցնելու կանոնները: Կոնկրետ իրավիճակների վերլուծություն:

Ապրիլ

1. Հասարակական տրանսպորտում վարքի կանոնները:

2. Եթե դու մոլորվել ես փողոցում:

Մայիս

1. Դժվարություններ կայացնող բաժինների ամրապնդում:

ԾԱՆՈԹԱՑՈՒՄ ԲՆՈՒԹՅԱՆԸ: ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի «Էկոլոգիա» բաժինը կոչված է իրականացնելու էկոլոգիական կրթության և դաստիարակության խնդիրներ: 4-5 տարեկան երեխաների էկոլոգիական կրթության իրականացման համար առաջնորդվում են՝ «Ճանաչիր, սիրիր, պահպանիր» կարգախոսով: Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքի երեխաներին հնարավորություն կընձեռի ստանալու ճանաչողական գի-

տելիքներ իր և շրջակա միջավայրի մասին, սեր կարթնացնի այն ամենի նկատմամբ, ինչ շրջապատում է երեխային. լինի դա կենդանի, թե անկենդան բնության տարր: Դրա շնորհիվ կծնավորվեն պահպանողական վերաբերմունք և ճիշտ վարքագիծ:

Ծրագրի ճիշտ իրականացման պարագայում երեխան կկառուցի իր սեփական «աշխարհը»՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի և նախասիրությունների շրջանակը: Երեխայի մեջ քայլ առ քայլ կծնավորվի այն գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, և բնության մեջ յուրաքանչյուր տարր պայմանավորված է մյուսի գոյությամբ, և դրանք բոլորը փոխկապակցված են:

Ծրագրի էկոլոգիական դաստիարակության բաժինը նպատակ ունի երեխայի մեջ ձևավորելու ճանաչողական, բնապահպանական գիտելիքներ, էկոլոգիական գիտակցություն, հուզական, հոգատար, մարդասիրական վերաբերմունք՝ բնության, շրջակա միջավայրի նկատմամբ, բնության հետ հաղորդակցվելու ունակություն, էկոլոգիական կուլտուրա:

Ծրագրի էկոլոգիական դաստիարակության բաժնի խնդիրն է՝

մանկավարժական ներգործությամբ երեխաների մեջ ձևավորել ճանաչողական ունակություններ բուսական և կենդանական աշխարհի, բնության սեզոնային երևույթների, անկենդան բնության վերաբերյալ, տալ պատկերացումներ դրանց փոխկապակցության մասին, մշակել շրջապատի նկատմամբ, հոգատար և գիտակցական վերաբերմունք, ձևավորել բնության մեջ ճիշտ վարքագծի դրսևորման սովորույթներ և հմտություններ:

Ծանոթացում բնությանը: Շարունակել ձևավորել երեխաների պատկերացումները բուսական և կենդանական աշխարհի, բնության սեզոնային երևույթների վերաբերյալ: Համակարգել պատկերացումները կենդանիների մասին: Սովորեցնել տարբերակել կենդանիների և բույսերի նմանություններն ու տարբերությունները: Ձևավորել գիտելիքներ՝ շրջապատող միջավայրի վերաբերյալ, սեր դաստիարակել շրջակա միջավայրի նկատմամբ՝ խնամքով վերաբերվել բուսականությանը, զգուշությամբ շրջանցել թփերն ու ծաղիկները, չվնասել ծառերը: Հոգատարություն ցուցաբերել կենդանի էակների նկատմամբ:

Անկենդան բնություն: Սովորեցնել տարբերել և անվանել տարվա եղանակները /ձմեռ, գարուն, աշուն, ամառ /անվանել օրվա եղանակը /տաք, ցուրտ, արևոտ, մռայլ, քամի, անձրև, ձյուն/:Նկատել սեզոնային փոփոխությունները: Ծանոթացնել շրջապատող բնաշխարհի որոշ տարրերի՝ ջրի, ձյան, սառույցի, ավազի, կավի, քարի հատկություններին / ջուրը թափանցիկ է, ձյունը փափուկ, կարելի է ձնեմարդ պատրաստել, ավազը սահող է, կավը՝ ամուր/: Ծանոթացնել շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությանն ու փոխկապակցվածությանը:

Էկոլոգիական դաստիարակություն: Ձևավորել վարքագծի ճիշտ դրսևորում շրջակա միջավայրի նկատմամբ:

Ծրագրային նյութի թեմատիկ բաշխումն ըստ եռամսյակների

Առաջին եռամսյակ

Բուսական աշխարհ: Շարունակել ձևավորել պատկերացումներ բանջարեղենի և մրգերի մասին: Երեխաները պետք է իմանան բանջարեղենի և մրգերի 5-6 տեսակներ, ճանաչեն դրանց կարևորությունը (ըստ գույնի, ձևի, համի) և սննդի մեջ օգտագործման եղանակները /հում, եփած, չորացրած, աղ դրած/, բանջարեղենը աճում է բանջարանոցում, իսկ մրգերը՝ այգում: Ըստ արտաքին տեսքի պետք է ճանաչեն և անվանեն 3-4 ծառատեսակ: Ձևավորել պատկերացումներ՝ բույսերի աճման առանձնահատկությունների և անհրաժեշտ պայմանների վերաբերյալ: Ծանոթացնել և սովորեցնել տարբերել պարտեզային 3-4 ծաղկատեսակ /վարդ, մեխակ, քրիզանթեմ/:

Կենդանական աշխարհ: Երեխաներին սովորեցնել ճանաչել 2 ընտանի /կով, ոչխար/, 2 վայրի /գայլ, վագր/ կենդանիներ: Ծանոթացնել կենդանիների մարմնի կառուցվածքին և ապրելակերպին: Սովորեցնել առանձնացնել մարմնի մասերը, ծածկույթը, վարքին բնորոշ առանձնահատկությունները: Ձևավորել պատկերացում՝ կենդանիների ապրելակերպի որոշակի պայմանների վերաբերյալ: Տարբերել թռչունների 2 տեսակ /աղավնի, հավ/ ըստ իրենց չափի, գույնի, կառուցվածքի, ծայրի:

Անկենդան բնություն: Սովորեցնել տարբերել և անվանել օրը և գիշերը: Գանաչողական ունակություններ ձևավորել, արևի, քամու և անձրևի մասին: Սահմանել կապեր՝ բնության երևույթների միջև. երբ արևը փայլում է՝ եղանակը տաք է, երբ քամի է՝ ծառերի տերևները ճոճվում են, երբ արևը մայր է մտնում՝ եղանակը մռայլվում է, և անձրև է գալիս: Ծանոթացնել ջրի, ավազի հատկություններին /ջրում որոշ առարկաներ սուզվում են, մի մասը մնում է ջրի երեսին, ավազը սահում է, խոնավ վիճակում՝ կպչուն: Շարունակել ձևավորել կոնկրետ գիտելիքներ բնության սեզոնային երևույթների մասին: Աշուն. աշնանը եղանակները ցրտում են, հաճախակի անձրև է տեղում, ծաղիկները չեն ծաղկում, ծառերի տերևները դեղնում են և թափվում: Այգիներում և բանջարանոցներում հասունանում են մրգերն ու բանջարեղենը, դաշտերում կատարում են բերքահավաք: Թիթեռները, բզեզները, մոծակները անհետանում են: Թռչունները չվում են տաք երկրներ:

Էկոլոգիական կուլտուրա: Ձևավորել որոշակի գիտելիքներ իր անձի սոցիալական դերի, հասակակիցների և մեծահասակների հարաբերությունների վերաբերյալ: Արթնացնել հետաքրքրություն, սեր և հոգատար վերաբերմունք բույսերի, կենդանիների, շրջակա միջավայրի նկատմամբ: Ձևավորել բնության գեղեցկությունը նկատելու ունակություն, հոգատար և խնայողական վերաբերմունք, վարքագծի ճիշտ դրսևորում բնության գրկում:

Երկրորդ եռամսյակ

Բուսական աշխարհ: Խորացնել երեխաների գիտելիքներն ու պատկերացումները բանջարեղենի, մրգերի, ծաղիկների վերաբերյալ: Ձևավորել պատկերացումներ սերմերով բույսերի աճեցման մասին/աճի հաջորդականություն, անհրաժեշտ պայմաններ, խնամք/: Ներկայացնել բույսերի կարևորությունը, անհրաժեշտությունն ու փոխկապակցվածությունը մարդկանց, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների միջև: Ծանոթացնել հատապտղային կուլտուրայի 2-3, դաշտային ծաղիկների 1-2 տեսակների: Ձևավորել պատկերացումներ՝ դաշտային ծաղիկների աճման համար անհրաժեշտ պայմանների վերաբերյալ, ներկայացնել դրանց կարևորությունը մեղուների, թիթեռների համար: Ընդլայնել երեխաների պատկերացումները եղևնու, դրա տեսակների, կառուցվածքի, օգտակարության, աճման պայմանների, մասին:

Կենդանական աշխարհ: Երեխաներին սովորեցնել ճանաչել 2 ընտանի /խոզ, ձի/, 2 վայրի /աղվես, սկյուռ, փիղ/ կենդանիներ: Ծանոթացնել կենդանիների մարմնի կառուցվածքին և ապրելակերպին: Ճանաչել տալ մարմնի մասերին, ծածկույթին, վարքին բնորոշ առանձնահատկությունները: Ձևավորել պատկերացումներ՝ կենդանիների ապրելակերպի որոշակի պայմանների և դրանց սեզոնային փոփոխությունների վերաբերյալ: Սովորեցնել տարբերել թռչունների 2 տեսակ /թութակ, ճնճղուկ/ ըստ իրենց չափի, գույնի, հանած ձայնի:

Անկենդան բնություն: Սովորեցնել տարբերել և անվանել շաբաթվա օրերը: Ճանաչողական ունակություններ ձևավորել ձյան, սառույցի մասին: Սահմանել կապեր բնության երևույթների միջև. երբ եղանակը ցրտում է՝ անձրևը փոխվում է ձյան, սառեցման հետևանքով ջուրը վերածվում է սառույցի, սառույցը տաքացնելիս վերածվում է ջրի: Ծանոթացնել ջրի, սառույցի, կափի հատկություններին/ ջրում որոշ նյութեր լուծվում են՝ փոխելով համը /աղ, շաքարավազ, սառույց. տաք պայմաններում հալչում է՝ վերածվելով ջրի, կավը կոշտ է. ջրով բացելիս այն կարող է փափկել, դրանով կարելի է ծեփել տարբեր առարկաներ/:

Շարունակել ձևավորել կոնկրետ գիտելիքներ՝ բնության սեզոնային երևույթների մասին. ձմեռ՝ ձմռանը ցերեկը կարճանում է, գիշերը՝ երկարում: Եղանակները ցրտում են: Ձյուն է տեղում: Բնությունը ծածկվում է ճերմակ սավանով: Ջրավազաններում սառնամանիքից ջրերը սառչում են՝ վերածվելով սառույցի: Սառույցը կոշտ է, սահում է: Ծառերն ու թփերն առանց տերևների են: Եղևնիները ծածկված են ասեղներ հիշեցնող փշերով, որոնք տարվա բոլոր եղանակներին կանաչ գույն ունեն: Բզեզներն անհետանում են: Թռչունները չվում են տաք երկրներ: Գնճղուկները ձմեռող թռչուններ են:

Էկոլոգիական կուլտուրա: Շարունակել ձևավորել գիտելիքներ իր անձի, ընտանիքի, սոցիալական դերի, հասակակիցների ու մեծահասակների հարաբերությունների վերաբերյալ: Ձևավորել ճանաչողական ունակություններ և պահպանողական վերաբերմունք իր տան, բակի, մանկապարտեզի նկատմամբ: Դաստիա-

րակել հոգատար վերաբերմունք բույսերի և կենդանիների հանդեպ՝ կարևորելով դրանց դերն իրենց կյանքում, խնամելու և դրանցով հիանալու կարողություն: Սովորեցնել նկատել բնության գեղեցկությունը ձմռանը, բնության երևույթների փոխկապակցվածությունը:

Երրորդ եռամսյակ

Բուսական աշխարհ: Ձևավորել պարզագույն գիտելիքներ՝ գարնանը բուսական աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների, զարթոնքի վերաբերյալ. ծառերը բողբոջում են, ծաղկում, տերևները բացվում են, ձևավորվում են պտուղներ: Ճշտել և ամրապնդել պատկերացումներ բույսերի կառուցվածքի մասին /ծառն ունի բուն, ճյուղեր, տերևներ, թփերն ունեն մի քանի բարակ բներ, ճյուղեր, տերևներ, դրանք ծառից ցածր են/: Բույսերն ունեն արմատներ, որոնց միջոցով հողից ներծծում են խոնավություն, սննդարար նյութեր: Սովորեցնել դասակարգել պտղատու և դեկորատիվ ծառեր: Ծանոթացնել գարնանային 2-3 ծաղկատեսակների/մանուշակ, կակաչ, նարգիզ/, ծանոթացնել նրանց կառուցվածքին /գլխիկ, տերևներ ցողուն, արմատ/: Ծանաչողական գիտելիքներ ձևավորել անտառի վերաբերյալ:

Կենդանական աշխարհ: Ընդլայնել երեխաների գիտելիքներն ընտանի և վայրի կենդանիների մասին /այծ, էշ, արջ, ոզնի, առյուծ/, ծանոթացնել նրանց կյանքի պայմաններին՝ գարնան շրջանում, նրանց օգտակարությամբ: Ընդլայնել և ամրապնդել երեխաների գիտելիքները կենդանիների զարգացման մասին. թռչունները ձու են ածում, կենդանիները ծնում են ձագեր, նրանց կերակրում են իրենց կաթով, պաշտպանում և խնամում են իրենց: Տեղեկացնել ընտանի կենդանիների օգտակարության մասին: Սովորեցնել տարբերել թռչունների 2 տեսակ /արագիլ, կարապ/՝ ըստ չափի, գույնի, մարմնի ձևի: Ձևավորել ճանաչողական ունակություններ ձկների մասին: Գիտելիքներ տալ բուսական և կենդանական աշխարհի փոխկապակցվածության մասին:

Շարունակել ձևավորել կոնկրետ գիտելիքներ՝ բնության սեզոնային երևույթների մասին: Գարուն՝ գարնանը եղանակները տաքանում են, օրերը՝ երկարում: Ձյունը հալչում է, ծառերը բողբոջում են, կանաչ խոտը դուրս է գալիս: Գարնան ավետաբեր առաջին ծաղիկները ձյան միջից բարձրացնում են իրենց գլխիկները, թռչունները վերադառնում են տաք երկրներից, դաշտերում սկսվում է գարնանացանը, բանջարանոցներում տնկում են բանջարեղեն, պարտեզներում՝ ծաղիկներ:

Անկենդան բնություն: Ձևավորել պատկերացումներ՝ օդի, արևի վերաբերյալ: Ծանոթացնել օդի և արևի կենսական նշանակությանը՝ մարդու, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների կյանքում: Ներկայացնել անտառների, այգիների դերը օդի մաքրման խնդրում: Ծանոթացնել տարվա եղանակներին: Պարզագույն պատկերացումներ տալ հայկական բնաշխարհին բնորոշ քարերի մասին, ներկայացնել դրանց կարևորությունն ու անհրաժեշտությունը: Սովորեցնել տարբերել տարվա եղա-

նակներն ըստ ամիսների:

Էկոլոգիական կուլտուրա: Ձևավորել բնության նկատմամբ վերաբերմունքի ճիշտ դրսևորում, հասկացնել, որ բույսերն ու կենդանիները կենդանի էակներ են. նրանք շնչում, ջուր են խմում և, ամենակարևորը՝ վնասվելիս ցավ են զգում այնպես, ինչպես մարդիկ: Ծառի կամ ծաղկի վնասված, կոտրված ճյուղը, կտրված եղևնին լաց են լինում և օգնություն խնդրում: Դաստիարակել հոգատար և խնամքոտ վերաբերմունք, վարքագծի ճիշտ դրսևորում շրջակա միջավայրի նկատմամբ:

Չորրորդ եռամսյակ

Բուսական աշխարհ: Ամրապնդել և խորացնել գիտելիքները ծառերի, ծաղիկների, բանջարեղենի մրգերի, նրանց աճման համար անհրաժեշտ պայմանների ու առանձնահատկությունների վերաբերյալ: Տարբերել ծառերն ըստ տերևների, դասակարգել պտղատու և դեկորատիվ ծառերը: ճանաչել և տարբերել պարտեզային, դաշտային, սենյակային ծաղկատեսակներն ըստ ձևի, գույնի, աճման վայրի: ճանաչողական ունակություններ ձևավորել սնկերի վերաբերյալ:

Կենդանական աշխարհ: Ամրապնդել և խորացնել գիտելիքները ծանոթ ընտանի և վայրի կենդանիների, թռչունների, ձկների վերաբերյալ: Ընդլայնել պատկերացումներն ընտանի կենդանիների մասին, ծանոթանալ նրանց հարմարվողականության առանձնահատկություններին, զարգացմանն ու օգտակարությանը: Սովորեցնել տարբերել ընտանի կենդանիները վայրի կենդանիներից, ձմեռող թռչունները՝ չվող թռչուններից: Արթնացնել սեր և հոգատար վերաբերմունք կենդանական աշխարհի ներկայացուցիչներին նկատմամբ: Շարունակել ձևավորել կոնկրետ գիտելիքներ՝ բնության սեզոնային երևույթների մասին. **ամառ**՝ ամռանը եղանակը տաք է, կիզիչ: Արևը հասունացնում է մրգերն ու բանջարեղենը, դաշտերը ծածկվում են կանաչ խոտով և նրբերանգ ծաղիկներով: Շատանում են թիթեռները, բզեզները, մորեխներն ու թռչունները: Մեղուները մեղր պատրաստելու համար ծաղիկներից նեկտար են հավաքում: Մարգագետիններում արածում են կովերը, ոչխարներն ու այծերը: Մարդիկ անասնակեր պատրաստելու համար դաշտերում հնձում են խոտը:

Անկենդան բնություն: Ամրապնդել և խորացնել գիտելիքները ջրի, անձրևի, օդի, ձյան, սառույցի ավազի, կավի, քարի, դրանց հատկությունների և առանձնահատկությունների վերաբերյալ: Ընդլայնել գիտելիքները տարվա եղանակների, ամիսների, շաբաթվա օրերի վերաբերյալ: Սովորեցնել տարբերել և անվանել օրվա տարբեր եղանակները/անձրև, ձյուն, քամի /:

Էկոլոգիական կուլտուրա: Շարունակել դաստիարակել սեր բնության նկատմամբ, խնամքոտ վերաբերմունք բույսերի ու կենդանիների հանդեպ: Սովորեցնել նկատել, հասկանալ շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականությունն ու փոխկապակցվածությունը: Շարունակել ձևավորել ճիշտ վարքագիծ և խնայողական վերաբերմունք բնության գրկում և շրջակա միջավայրում:

**ՄԵԹՈՂԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ
ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ միջավայրի ձևավորում**

Էկոլոգիական դաստիարակության գործընթացի շարունակությունը տարիքային միջին խմբում հիմնաքար է՝ այն կամրջի կառուցման համար, ինչը հետագայում պետք է կապի և բարենպաստ պայմաններ ստեղծի ավագ նախադպրոցական տարիքում էկոլոգիական դաստիարակության շարունակականության ապահովման համար: Էկոլոգիական դաստիարակության խնդիրները նախադպրոցական ուսումնական հաստատությունում արդյունավետ իրականացվում են բավարար էկոլոգիական կուլտուրա և համապատասխան իրազեկում ունեցող հմուտ մանկավարժների կողմից:

Ցանկալի է, որ խմբասենյակներում դաստիարակն ստեղծի համապատասխան միջավայր՝ ստվարաթղթից պատրաստելով տարվա տարբեր եղանակներին բնորոշ ծառերի մանրակերտեր /ապահովելով տերևների և ծառերի վրա աճող մրգեր տեղադրելու, հանելու հնարավորությունը/, լինեն կենդանիների /ընտանի, վայրի/, միջատների, թռչունների թեմատիկ հավաքածուներ, բանջարեղենի, մրգերի, ծաղիկների նկարներով ալբոմներ, բնության տեսարաններ, տարբեր եղանակներ, էկոլոգիական աղետներ պատկերող նկարներ, բնական նյութեր /կոներ, կաղիններ/, տարբեր թափոններ՝ խցաններ, քարեր, պոլիէթիլենի շշեր, կափարիչներ/ հավաքելու համար արկղեր: Տարվա բոլոր եղանակներին խմբասենյակների առանձին անկյունում պետք է տեղադրված լինեն ջրի, ավազի տարաներ, տարբեր չափի և ձևի քարեր: Բնության և կենդանական անկյուններ, բնության օրացույց:

Աշխատանքային գործունեություն բնության մեջ

Բնության մեջ և բնության հետ երեխայի կատարած աշխատանքը նրան առաջադրում է նպատակ և տալիս արդյունքին հասնելու հնարավորություն: Խնամելով բույսը, կենդանուն՝ երեխան կատարում է որոշակի աշխատանք, որի ընթացքում ձևավորվում են որոշակի գիտելիքներ, աշխատանքային հմտություններ, բնության նկատմամբ բարյացակամության և հոգատարության գեղեցիկ զգացմունքներ: Նման աշխատանքները կարելի է կազմակերպել մանկապարտեզի հողամասում (բանջարանոց, պարտեզ) և խմբասենյակում (բնության և կենդանի անկյուններ):

Մանկապարտեզի բակը պետք է լինի կանաչապատ և հարմարավետ՝ բույսերի տնկման և խնամքի աշխատանքներ իրականացնելու համար: Տարիքային միջին խմբի համար հատկացված հողատարածքում երեխաները աճեցնում են ծաղիկներ, բանջարեղեն: Բանջարեղենի տնկման համար հատկացված հողաբաժնում պատրաստվում է 1-3 մարգ: Երեխաները դաստիարակի հետ կատարում են բույսի տնկման և խնամքի որոշակի աշխատանքներ: Կատարելով դաստիարակի տրված

հանձնարարականները, աշխատելով հողաբաժնում՝ երեխան տեսնում է իր աշխատանքի արդյունքը, գնահատում այն, կարևորում դրա կենսական նշանակությունը:

Խմբասենյակում հնարավոր է իրականացնել բնության հետ ամենօրյա շփումներ՝ բնության և կենդանական անկյունում իրականացվող աշխատանքների միջոցով: Երեխաները սովորում են ուշադիր զննել բույսը, ջրել և ջրցանել հողը, միաժամանակ նկատել բույսի աճի փոփոխությունը: Ստեղծալով խմբասենյակում տեղադրված բնության կամ կենդանական անկյուններին՝ երեխաները սովորում են բարևել բույսերին և կենդանիներին, խնամել նրանց, հետաքրքրվել նրանց որպիսությամբ, նկատել արտաքին տեսքն ու առանձնահատկությունները: Երեխաների մեջ ձևավորվում է գեղեցիկը տեսնելու, զգալու և դրանով հմայվելու, ինչպես նաև նրանց հետ ճիշտ վերաբերվելու ունակություն: Արդյունքում՝ հիմք է դրվում երեխայի բարոյահոգեբանական վարքագծի՝ սիրելու, հիանալու, ուրախանալու, շրջապատին չվնասելու, չնեղացնելու, օգնելու ձևավորման նախադրյալները: Բնության անկյան համար անհրաժեշտ է ընտրել շուտ աճող ծաղիկներ, որպեսզի երեխաները նկատեն բույսի աճը, տեսնեն ծաղկումը և կատարվող փոփոխությունը: Խմբասենյակում բնության և կենդանի անկյունը պետք է ստեղծել առավել լուսավոր հատվածում և այնպես, որ հարմար լինի երեխաների ամենօրյա դիտումների և խնամքի համար: Բույսերի տեղաբաշխման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել լույսի, ստվերի և խոնավության գործոնները: Ակվարիումների, թռչնավանդակների, տերարիումների առկայությունը երեխաներին առաջադրում է կենդանիների, նրանց սննդի, ջրի, տեղի, խնամքի մասին հոգալու խնդիրներ: Կենդանիների մասին հոգ տանելն ու նրանց նկատմամբ հարգալից վերաբերմունքը դառնում են երեխայի ամենօրյա աշխատանքը և պատճառում մեծ բավականություն: Ձևավորվում են իմացական որոշակի գիտելիքներ կենդանիների մասին: Արթնանում է պատասխանատվության և բարյացակամության զգացում:

Տարիքային միջին խմբերի բնության անկյունում խորհուրդ է տրվում աճեցնել հետևյալ բույսերը՝ ֆիկուս, համերաշխ յոթնյակ, կլիվիա, սենյակային խաղող, սենյակային մանուշակ, բեզոնիա:

Բնության օրացույց: Շրջակա բնության առավել վառ և հաճախ հանդիպող երևույթներին, տարվա՝ առկա և հաջորդող եղանակներին ու մարդկանց կյանքում տեղի ունեցող համապատասխան փոփոխություններին ծանոթացումը իրականացվում է բնության օրացույցի միջոցով: Բնության օրացույցի վրա ամենօրյա նշումներն ու աշխատանքը հնարավորություն են ընդձեռնում՝ ծանոթանալու տարվա եղանակներին, ամիսներին, շաբաթվա օրերին և եղանակի սեզոնային փոփոխություններին:

Օրացույցի ձախ անկյունում փակցվում է տարվա համապատասխան եղանակին բնորոշ նկար: Սլաքի միջոցով ցույց է տրվում օրվա եղանակը խորհրդանշող պայմանական նշանը. արև-ամձրև-քամի, ձյուն-ամպամած-կիսաամպամած:

Բնության և շրջակա միջավայրի նկատմամբ վերաբերմունքի ձևավորման և ճիշտ դրսևորման լավագույն միջոցը խաղն է: Էկոլոգիական բնույթի խաղերը երե-

խային հնարավորություն են ընձեռում տեսողական, լսողական, շոշափելիքի միջոցով նկատել առարկայի առանձնահատկությունն ու յուրահատկությունը, որոշել չափը, գույնը, ձևը, համեմատել առարկաներն ըստ իրենց արտաքին նշանների, խմբավորել դրանք, տարբերել կենդանիներին և բույսերին, ճանաչել բնության երևույթները:

Խաղային գործունեություն: Խաղի ընթացքում ձևավորվում են միմյանց հետ շփվելու կարողություններ, ստեղծվում է հասակակիցների նկատմամբ վերաբերմունք արտահայտելու, գործողություններն ու արարքը հիմնավորելու հնարավորություն: Ծառերի, ծաղիկների, մրգերի, բանջարեղենի, կենդանիների թեմաներով լրտոներն ամրապնդում են երեխաների ճանաչողական ունակությունները, խորացնում գիտելիքները բույսերի կառուցվածքի, կենդանիների մարմնի կառուցվածքի վերաբերյալ: Առանձին մասերից երեխան ստանում է կոնկրետ բույսի, կամ կենդանու ամբողջական պատկերը: Խաղալով քարերի, ջրի, ավազի հետ՝ երեխաները մոտիկից են ծանոթանում դրանց հատկանիշներին, նրանց մեջ ձևավորվում են ստեղծագործական ունակություններ, շոշափելու կարողություններ, արդյունքում զարգանում է մանր մկանային համակարգը: Ավազի և ջրի անկյուններում երեխաները ձեռքերով վերցնում են ավազը, տեղափոխում ձեռքից ձեռք, փորում են, ծեփում, լցնում դուլի մեջ, ամրացնում և ավազից ստանում դուլի ձև: Ջրի հետ խաղալով՝ տեսնում են, որ ջուրը ցանցի մեջ լցնելիս թափվում: Դուլի շարժումից ջուրը տատանվում է: Ջրի մեջ որոշ խաղալիքներ և իրենց ծանոթ առարկաներ սուզվում են, մի մասը մնում է ջրի երեսին:

4-5 տարեկան երեխաների հետ կարելի է անցկացնել էկոլոգիական բնույթի տարատեսակ խաղեր.

«Ով որտե՞ղ է ապրում»

Խաղի նպատակը: Պատկերացում տալ կենդանական աշխարհի տարբեր ներկայացուցիչների օրգանիզմի գոյատևման համար համապատասխան միջավայրի կարևորության և կենսական նշանակություն ունեցող անհրաժեշտ գործոնների վերաբերյալ:

Անհրաժեշտ պարագաներ: Ստվարաթղթի վրա նկարված կամ կտրատված տեսարաններ՝ ծով, անտառ. երկինք ամպերով, անապատ, սառցեպատ սառուցյալ օվկիանոս և կենդանական աշխարհի տարբեր ներկայացուցիչների պատկերող նկարներ:

Առաջին տարբերակ

Խաղի ընթացքը: Առաջարկել երեխաներին՝ նստել սեղանների շուրջ:

Սեղանների վրա նախապես դասավորել տարբեր միջավայրեր պատկերող նկարներ և համաձայնաբեր անվանել պատկերված կենդանուն՝ ըստ համապատասխան բնակավայրի:

Երկրորդ տարբերակ

Սեղաններին շարել տարբեր միջավայրեր ներկայացնող տեսարաններ և փոքրիկ արկղի մեջ տեղադրել դրանցում բնակվող բազմատեսակ կենդանիների նկարներ: Հարկավոր է երեխաներին առաջարկել ուշադիր լսել դաստիարակի կողմից ընտրված որևէ միջավայրի նկարագրությունը և հանձնարարել նրանց արկղի միջից գտնել կենդանիների նկարները ու տեղադրել ըստ բնակության վայրի:

Խաղի ավարտին հաշվում են երեխաների տեղադրած նկարների քանակը և ըստ բնակության վայրի տեղադրված կենդանիների նկարների ճշտությունը: Հաղթող են ճանաչվում այն երեխաները, որոնք ճիշտ և քանակով շատ նկարներ են տեղադրել:

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՍԵՊՏԵՄԲԵՐ			
II ՀԱՔԱԹ		IV ՀԱՔԱԹ	
ԹԵՄԱ	Ամառ	ԹԵՄԱ	Մրգեր
ՆՊԱՏԱԿ	Ամրապնդել երեխաների գիտելիքները բնության սեզոնային երևույթների վերաբերյալ:	ՆՊԱՏԱԿ	Սովորեցնել մրգերի անվանումները, դրանք տարբերել ըստ ձևի և համի (խնձոր, տանձ):
ՀՈԿՏԵՄԲԵՐ			
II ՀԱՔԱԹ		IV ՀԱՔԱԹ	
ԹԵՄԱ	Աշուն	ԹԵՄԱ	Անկենդան բնություն /ջուր/
ՆՊԱՏԱԿ	Ամրապնդել երեխաների գիտելիքները բնության սեզոնային երևույթների վերաբերյալ:	ՆՊԱՏԱԿ	Ձևավորել պատկերացում ջրի վերաբերյալ, ծանոթացնել ջրի հատկություններին, ներկայացնել ջրի կարևորությունն ու անհրաժեշտությունը:
ՆՈՅԵՄԲԵՐ			
II ՀԱՔԱԹ		IV ՀԱՔԱԹ	
ԹԵՄԱ	Խոր աշուն	ԹԵՄԱ	Թռչուններ
ՆՊԱՏԱԿ	Խորացնել երեխաների պատկերացումները խոր աշնանը բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ, ներկայացնել մարդկանց հագուստների տեսակները ցուրտ եղանակին:	ՆՊԱՏԱԿ	Ձևավորել պատկերացումներ թռչունների վերաբերյալ, սովորեցնել առանձնացնել մարմնի մասերը, ծածկույթը:

ԴԵԿՏԵՄԲԵՐ			
II ՀԱՔԱԹ		IV ՀԱՔԱԹ	
ԹԵՄԱ	Չմեռ	ԹԵՄԱ	Ընտանի կենդանիներ
ՆՊՍՏԱԿԸ	Ամրապնդել երեխաների գիտելիքները բնության սեզոնային երեկույթների մասին:	ՆՊՍՏԱԿԸ	Սովորեցնել երեխաներին՝ ճանաչել 2 ընտանի / խոզ, ձի/ կենդանիների, ծանոթացնել կենդանիների մարմնի կառուցվածքին և ապրելակերպին, նրանց օգտակարությամբ:
ՀՈՒՆՎԱՐ			
II ՀԱՔԱԹ		IV ՀԱՔԱԹ	
ԹԵՄԱ	Վայրի կենդանիներ	ԹԵՄԱ	Անտառ
ՆՊՍՏԱԿԸ	Սովորեցնել երեխաներին ճանաչել 2 վայրի /արջ, առյուծ/ կենդանիների, ծանոթացնել կենդանիների մարմնի կառուցվածքին և ապրելակերպին:	ՆՊՍՏԱԿԸ	Հաղորդել գիտելիքներ անտառի վերաբերյալ, ներկայացնել անտառի կարևորությունն ու օգտակարությունը:
ՓԵՏՐՎԱՐ			
II ՀԱՔԱԹ		IV ՀԱՔԱԹ	
ԹԵՄԱ	Անկենդան բնություն /սառույց/	ԹԵՄԱ	Անտառ
ՆՊՍՏԱԿԸ	Ձևավորել գիտելիքներ սառույցի վերաբերյալ, ծանոթացնել հատկություններին:	ՆՊՍՏԱԿԸ	Հաղորդել որոշակի գիտելիքներ եղևնու մասին, ծանոթացնել արտաքին տեսքին, աճման համար անհրաժեշտ պայմաններին, օգտակարությամբ:
ՄԱՐՏ			
II ՀԱՔԱԹ		IV ՀԱՔԱԹ	
ԹԵՄԱ	Գարուն	ԹԵՄԱ	Ծառեր
ՆՊՍՏԱԿԸ	Խորացնել գիտելիքները գարնան մասին, ծանոթացնել բնության սեզոնային փոփոխություններին:	ՆՊՍՏԱԿԸ	Ձևավորել գիտելիքներ ծառերի վերաբերյալ, սովորեցնել ծառերի տեսակները, ծանոթացնել կառուցվածքին, ներկայացնել կարևորությունն ու օգտակարությունը:
ԱՊՐԻԼ			
II ՀԱՔԱԹ		IV ՀԱՔԱԹ	
ԹԵՄԱ	Թռչուններ /արագիլ/	ԹԵՄԱ	Պարտեզային ծաղիկներ
ՆՊՍՏԱԿԸ	Ծանոթացնել արագիլին, ներկայացնել նրա մարմնի կառուցվածքը, ապրելու համար անհրաժեշտ պայմաններն ու առանձնահատկությունները:	ՆՊՍՏԱԿԸ	Ծանոթացնել պարտեզային ծաղիկների մի քանի տեսակներին, ներկայացնել նրանց աճի համար անհրաժեշտ պայմանները: ճշտել նրանց նմանություններն ու տարբերությունները:

ՄԱՅԻՍ			
II ՀԱԲԱԹ		IV ՀԱԲԱԹ	
ՈՐՁ	Միջատներ	ՈՐՁ	Դեկորատիվ ծառեր
ՆՊՏԱԿԸ	Ծանոթացնել միջատների մի քանի տեսակներին, տարբերել նրանց՝ ըստ արտաքին ձևի և չափերի, (բզեզ, թիթեռ, ճանճ):	ՆՊՏԱԿԸ	Ծանոթացնել դեկորատիվ ծառերի մի քանի տեսակների, սովորեցնել նրանց անվանումները և տարբերել նրանց՝ ըստ արտաքին տեսքի (ուռենի, կաղնի):

Դիտումների, էքսկուրսիաների, զրույցների դերը երեխաների էկոլոգաստիարակության գործընթացում

Երեխաները բնությունից օժտված են հետաքրքրասիրությամբ: Նրանք սրտառուչ աշխուժություն են ցուցաբերում իրենց շրջապատող աշխարհի մասին տեղեկություններ ստանալիս: Բնական հետաքրքրասիրությունը նրանց առաջնորդում է դեպի արդյունավետ ուսումնասիրության: Դիտումների ընթացքում երեխաները հնարավորություն են ունենում ծանոթանալու և տեսնելու առարկան, երևույթը: Այդ ընթացքում ձևավորվում են իմացական գիտելիքներ: Անկախ դիտարկվող առարկայի բնույթից և երեխայի տարիքից՝ դիտումները լինում են դիպվածային-կարճատև՝ մի քանի րոպե տևողությամբ և երկարատև: Վերջիններս կարող են տևել օրեր, նույնիսկ շաբաթներ: Անհրաժեշտ է երեխային սովորեցնել դիտել ծառերը, ծաղիկները, թփերը, նկատել տերևների առանձնահատկությունները, երանգները, գարնանը թաց բամբակի վրա աճեցրած ցորենի աճը: Բնության մեջ պետք է երեխաներին ցույց տալ ամեն ինչ՝ ծառ ու ծաղկից մինչև բնապատկերը, ամպերն ու աստղերը, արևն ու երկինքը, շրջակա միջավայրում գտնվող ամեն մի տարր, առարկա, նյութ, մասնիկ և յուրաքանչյուրի զուգակցված կապը մեկը մյուսի հետ: Դիտումների ընթացքում երեխաները ձեռք են բերում համեմատելու, նկարագրելու, կանխագուշակելու, հաղորդակցվելու, դասակարգելու և չափումներ կատարելու կարողություններ: Այդ առումով բացառիկ է զբոսանքների և էքսկուրսիաների ընթացքում անցկացվող դիտումների, զրույցների, դերը: Դրանց շնորհիվ երեխաները անմիջականորեն առնչվում են բնությանը, ձեռք բերում որոշակի գիտելիքներ: Նրանց մեջ ձևավորվում է վերաբերմունքի և վարքագծի ճիշտ դրսևորում:

ԽՈՍՔԻ ՋԱՐԳԱՑՈՒՄ

Նախադպրոցականի ընդհանուր զարգացման և մտավոր դաստիարակության խնդիրների համակարգում առանձնանում է խոսքի զարգացումը: Այս տարիքում բարելավվում է հնչյունների և առոգանության արտաբերումը: Ակտիվանում է խոսքը: Երեխաները հաջողությամբ նմանակում են կենդանիների ձայները, տարբերակում կերպարների խոսքն ըստ առոգանության: Հետաքրքրություն է առաջանում խոսքի ռիթմի նկատմամբ, զարգանում է խոսքի քերականական կողմը: Երեխաների ձեռք բերած լեզվական գիտելիքների հիման վրա իրականացվում է բառաստեղծման երևույթը: Հասակակիցների հետ հաղորդակցման ընթացքում երեխաների խոսքը կրում է իրադրային բնույթ, իսկ մեծահասակների հետ հաղորդակցվելիս՝ արտաիրադրային:

Ծրագրում որոշարկված է խոսքի զարգացման օրինակելի չափանիշների՝ լեզվի հնչյունային համակարգի, բառապաշարի ձևավորման, քերականական կառուցվածքի յուրացման, կապակցված խոսքի զարգացման աշխատանքների հաջողականությունը: Խոսքի զարգացման պարապմունքների ընթացքում և առօրյայում, շրջապատող միջավայրի, բնության հետ ծանոթացման, ինչպես նաև գեղարվեստական գրականության ստեղծագործությունների ընթերցումների ընթացքում դաստիարակը երեխաների գիտակցությանն է հասցնում այն գաղափարը, որ առարկաները և երևույթները արտահայտվում են բառերի միջոցով և ունեն որոշակի նշանակություն: Իսկ մտքի առավել ճշգրիտ արտահայտման համար անհրաժեշտ է ընտրել իմաստով համապատասխան բառեր:

Խոսքի զարգացման հիմնական խնդիրներն են՝ խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակումը, բառապաշարի ձևավորումը, խոսքի քերականական կառուցվածքի յուրացումը, կապակցված խոսքի զարգացումը, ծանոթացումը գեղարվեստական գրականությանը:

Նախադպրոցական հաստատության մանկավարժական գործընթացում իրականացվող կրթադաստիարակչական համապատասխան աշխատանքի միջոցով ըստ ծրագրի նախատեսվում է.

Կատարելագործել երեխաների խոսքի հնչյունային կուլտուրան, հասնել բառերի ու հնչյունների մաքուր արտաբերմանը, ընդարձակել ակտիվ բառապաշարը:

Սովորեցնել խոսքը կառուցել քերականորեն ճիշտ, պատասխանել և՛ կարճ, և՛ ծավալուն նախադասություններով:

Ջարգացնել կապակցված ինքնուրույն խոսքը, տիրապետել երկխոսելու և մենախոսելու ունակությանը:

Ջարգացնել երեխաների գեղարվեստական ըմբռնումը՝ գրական ստեղծագործությանը, կերպարվեստին, երաժշտությանը ծանոթանալու ընթացքում: Դաստիարակել հուզական արձագանք և հետաքրքրություն այդ ստեղծագործությունների նկատմամբ: Ջարգացնել ստեղծագործության բովանդակության առանձնահատ-

կությունն առավել արտահայտչական միջոցներով վերարտադրելու կարողությունը:

Ծրագիրը նպատակաուղղված է երեխաների կողմից մայրենի լեզվի բոլոր հնչյունների ճիշտ արտաբերմանը, փոքրիկ պատմություններ վերապատմելու ունակության ձևավորմանը և հորինմանը: Այս խմբում կազմակերպվում են երկխոսության, խոսքային հաղորդակցման մշակույթի ձևավորման վարժություններ: Դաստիարակը զարգացնում է երեխայի ինքնուրույն, ակտիվ խոսքը, խրախուսում խոսելու, մարդկանց հետ հաղորդակցվելու ցանկությունը: Ծրագիրը ներառում է «Ձարգացնող խոսքային միջավայր» բաժինը, որի հիմնական նպատակն է՝ որոշել խոսքային զարգացնող միջավայրի կազմակերպման առանձնահատկությունները, կատարելագործել երեխաների հաղորդակցումը մանկապարտեզում մեծահասակների, հասակակիցների, կրտսեր և ավագ խմբերի երեխաների հետ:

Ձարգացնող խոսքային միջավայր: Բավարարել երեխաների պահանջը առարկաների, երևույթների և իրադարձությունների մասին ստացված տեղեկությունների վերաբերյալ՝ դուրս գալով իրենց համար սովորական դարձած միջավայրի սահմաններից:

Նպաստել հետաքրքրության ձևավորմանը՝ խոսքի զարգացման անկյունում տեղադրելով հետաքրքիր իրեր, բացիկներ, կենդանիներ, բույսեր, տրանսպորտ, սպորտ պատկերող նկարներ, լուսանկարներ, հումորիստական պատկերներ, տեսարժան վայրեր ներկայացնող տեսրաններ, գրքեր, տարբեր նյութերից պատրաստված առարկաներ:

Լսել երեխային, ճշտել նրա պատասխանները, հուշել այն բառերը, որոնք առավել ցայտուն են արտահայտում առարկաների, երևույթների և իրադարձությունների առանձնահատկությունները, օգնել՝ տրամաբանորեն ու հասկանալի ներկայացնելու դրանք:

Օգնել երեխային՝ բարյացակամորեն շփվելու հասակակիցների հետ, արտահայտելու իր վերաբերմունքը նրանց արարքների հանդեպ /ինչպես շնորհավորել, ինչպես ներողություն խնդրել, շնորհակալություն հայտնել և այլն/:

Բառապաշարի ձևավորում: Շրջապատող աշխարհի առարկաների ու երևույթների մասին գիտելիքների և պատկերացումների խորացմամբ ակտիվացնել բառապաշարը՝ որակ և զործողություն նշանակող բառերով: Սովորեցնել օգտագործել հատկանիշ ցույց տվող բառեր, որոնք նկարագրում են առարկայի որակը, նշանակությունը, մեծությունը, չափը, գույնը: Լրացնել և ակտիվացնել երեխայի բառապաշարը՝ շրջապատող միջավայրի մասին, ընդլայնել պատկերացումները առարկաների, երևույթների, իրադարձությունների վերաբերյալ: Խոսքի մեջ ակտիվացնել առարկաների կառուցվածքի, առանձին մասերի, տեսանելի և ոչ տեսանելի հատկանիշներ արտահայտող բառերի կիրառումը: Սովորեցնել խոսքի մեջ օգտագործել ածականներ, բայեր, որոշիչներ: Լրացնել երեխաների բառապաշարը մարդկանց հուզական հաղորդակցմանը վերաբերող բառերով: Շարունակել սովորեցնել

երեխաներին որոշել և անվանել առարկաների տարածական դիրքերը արտահայտող բառեր/ աջ, ձախ, կողքին, միջև/, օրվա ժամանակային հատվածները/ առավոտ, ցերեկ, կեսօր, երեկո, գիշեր/: Բառային աշխատանքում հիմնական ուշադրությունը դարձնել բառերի ճիշտ ընկալման, հետագա բառապաշարում դրանց ակտիվորեն կիրառման վրա: Շարունակել ակտիվացնել երեխաների բառապաշարում առարկաների և դրանց հատկությունների ու հատկանիշների անվանումների ուղղությամբ տարվող աշխատանքները: Ճշգրտել ընդհանրացվող անվանումները /խաղալիք, հագուստ, կահույք, բանջարեղեն, սպասք/: Երեխաները կարող են խաղալիքների, կենդանիների հետ կապված տարբեր գործողություններ նշել, հանձնարարված բառերին համապատասխան լրացումներ գտնել /ծյուն-ծնագնդի, ձմեռ, ձնեմարդ/:

Երեխաներին սովորեցնել հասկանալ հանելուկների իմաստը, համեմատել առարկաներն ըստ չափի, ձևի, մեծության: Սովորեցնել ոչ միայն գործողությանը համապատասխանեցնել առարկան /արդուկը, մուրճը, մեխը անհրաժեշտ են, որպեսզի.../, այլև ընտրել առարկային համապատասխան գործողություն /անհրաժեշտ է ջրել ծաղիկները, բույսերը: Արդուկով արդուկել հագուստը.../: Ջուգահեռաբար աշխատանք տանել վերացական իմաստ արտահայտող բառերի յուրացման ուղղությամբ/ աշխատասիրություն, հայրենասիրություն/:

Ուշադրություն դարձնել բառը ճիշտ հասկանալու, իմաստով ճիշտ օգտագործելու վրա, ընդարձակել ակտիվ բառապաշարը: Սովորեցնել առարկաների համեմատության ժամանակ առանձնացնել և նշել դրանց էական նշաններն ու յուրահատկությունները: Սովորեցնել օգտագործել հականիշ բառեր, որոնք նշանակում են առարկայի մեծություն, չափ, գույն/ մեծ-փոքր, երկար-կարճ, բաց-մուգ և այլն/:

Շարունակել զարգացնել տեսակ, հատկանիշ նշանակող բառերի իմացության և օգտագործման ունակությունը: Սովորեցնել օգտագործել ընդհանրացնող բառեր /խաղալիքներ, սպասք, կահույք, հագուստ, բանջարեղեն/:

Խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակում

Խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքներն իրենց մեջ ներառում են ճիշտ հնչարտաբերման ձևավորում, լսողական ընկալման, ձայնային ապարատի, խոսքային շնչառության, խոսքային արտահայտչամիջոցներից և խոսքի առոգանությունից ճիշտ օգտվելու ունակությունների զարգացում:

Ամրապնդել ձայնավոր և բաղաձայն հնչյունների ճիշտ արտաբերումը և մշակել շփական, պայթական, հնչյունների արտասանությունը: Ջարգացնել հնչարտասանական ապարատը, շարունակել աշխատանքը առոգանության ուղղությամբ, կատարելագործել բառերի և բառակապակցությունների հստակ արտաբերումը, սովորեցնել տարբերել և անվանել որոշակի հնչյունով սկսվող բառերը: Կատարելագործել արտահայտիչ խոսքը:

ճշտել, ամրապնդել ս, գ, ց, շ, ժ, չ, լ, հչյունների ճիշտ արտասանությունը: Հասնել նայրենի լեզվի բոլոր հնչյունների ճիշտ արտասանությանը, կատարելագործել արտասանության վարպետությունը, զարգացնել ձայնային ապարատը, խոսքային լսողությունը, հնչյունային ըմբռնումը, խոսքային շնչառությունը:

Շարունակել պրակտիկորեն ծանոթացնել «բառ», «հնչյուն» տերմիններին առանց սահմանման, այսինքն՝ սովորեցնել հասկանալ և օգտագործել այդ բառերը վարժությունների, խոսքային խաղերի ժամանակ: Ծանոթացնել լեզվական այն իրողությանը, որ բառերը կազմված են հնչյուններից, որոնք հնչում են տարբեր կերպ, և բառի հնչյուններն արտասանվում են որոշակի հաջորդականությամբ: Ուշադրություն դարձնել բառի հնչողության տևողությանը /կարճ և երկար/:

Որոշել և առանձնացված արտասանել բառի առաջին հնչյունը, ասել բառեր տրված հնչյունով: Չայնով առանձնացնել հնչյունը՝ բառի մեջ: Տրված հնչյունն արտասանել ձգված/ երկարացնելով/, բարձր, հստակ, քան արտասանվում է սովորաբար: Սովորեցնել արտասանել բառերը՝ պահպանելով գրական արտասանության նորմերը, դրանք կիրառել գեղարվեստախոսքային գործունեության մեջ:

խոսքի քերականական կառուցվածքի ձևավորում

Երեխաներին հնարավորություն ընձեռել քերականորեն ճիշտ արտահայտել խոսքը: Խրախուսել 5 տարեկանին բնորոշ բառաստեղծման երևույթը: Շարունակել օգնել երեխաներին՝ համաձայնեցնել բառերը նախադասությունների մեջ թվով, դեմքով, ժամանակով, կատարելագործել գոյականի եզակի թիվը հոգնակիի վերածելու, հոլովներից ճիշտ օգտվելու, բայերի ճիշտ կիրառման, ինչպես նաև կենդանիներին և դրանց ձագերին ճիշտ անվանելու կարողությունները: Երեխաներին սովորեցնել խոսքի մեջ ակտիվորեն օգտվել բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններից:

Խթանել երեխաների՝ խոսքի մեջ տարբեր տիպի նախադասություններից օգտվելու ջանքերը/ պարզ, բարդ/, առաջարկել դրանք կազմել դաստիարակի օգնությամբ, ապա նաև ինքնուրույն: Սովորեցնել քերականորեն ճիշտ փոխել բառը/ առօրյա խոսակցության ժամանակ/, կազմել մի քանի դժվար ձևեր/ եզակի- հոգնակի/, բայի հրամայական ձևեր/ նկարի՛ր, երգի՛ր, թռչկոտի՛ր/: Վարժեցնել, որ ճիշտ օգտագործեն օժանդակ բայերը: Սովորեցնել եզակի և հոգնակի թվով կազմել առարկաների, ինչպես նաև, մի քանի կենդանիների ու դրանց ձագերի անունները: Առաջացնել քերականորեն մաքուր և հստակ խոսելու ձգտում, սովորեցնել օտագործել բառերի տարբեր ձևեր միևնույն առարկայի անվանման ժամանակ/ տուն-տնակ, մուկ-մկնիկ, ձու-ձվիկ/: Խաղ-վարժություններով և խաղային հնարներով ամրապնդել երեխաների ձեռք բերած քերականական գիտելիքներն ու կարողությունները:

Կապակցված խոսքի զարգացում

Շարունակել զարգացնել երկխոսություն վարելու կարողություն, սովորեցնել ակտիվորեն մասնակցել զրույցներին, զրուցակցի համար հասկանալի կեր-

պով պատասխանել հարցերին և ինքնուրույն հարցեր տալ: Ընդլայնել երեխաների ինքնուրույն գործունեության ժամանակ բացատրական խոսքը կիրառելու փորձն այլ երեխաների հետ շփման ընթացքում: Դաստիարակել մեծերի նման խոսելու, ինչպես նաև հարցերին ճիշտ ու լիարժեք պատասխանելու ձգտում: Սովորեցնել երեխային նկարագրել առարկան, ներկայացնել նկարը /դաստիարակի օրինակով/: Վարժեցնել նկարի շուրջ պատումներ կազմել այն նկարներով, որոնք տվյալ պահին բաժանված են երեխային/«Ինձ մոտ ստացվեց այսպիսի անտառ... Այստեղ ապրում են... Աճում են...» և այլն/: Երեխաներին սովորեցնել բեմականացնել փոքրիկ հեքիաթներ կամ հեքիաթից որևէ հատված:

Սովորեցնել վերապատմել պարապմունքների ժամանակ ընթերցված կամ արդեն ծանոթ փոքրիկ հեքիաթներ և պատմվածքներ:

Ձևավորել նկարի բովանդակության վերաբերյալ փոքրիկ պատմվածք կազմելու կարողություն, դաստիարակի օգնությամբ, պատմվածք՝ անձնական փորձից/ նկարի բովանդակությանը համապատասխանող կամ նմանվող/:

Սովորեցնել կազմել պատմվածք խաղալիքի մասին/ սկզբում դաստիարակի հարցերով, ապա՝ ինքնուրույն/: Օրինակ՝ «Իմ տիկնիկը...» /անվանել տիկնիկի արտաքին տեսքը, հագուստը առավել բնորոշ նշանները.../:

Միջին խմբում լայնորեն կիրառվում է կապակցված պատմվածքի խմբակային կազմումը, երբ յուրաքանչյուր երեխա կարող է շարունակել դաստիարակի կամ մեկ այլ երեխայի կիսատ թողած նախադասությունը կամ միտքը:

Պատմումի ուսուցման գործընթացում հատուկ դեր ունի անհատական աշխատանքը /խաղալիքի, առարկայի, նկարի նկարագրության ժամանակ/ :

Կապակցված խոսքի զարգացման առաջադրանքներին զուգահեռ իրականացվում են բառակազմական, հնչյունային և քերականական վարժություններ:

Շարունակվում է պատմելու տարբեր ձևերի ուսուցման գործընթացը՝ նկարագրում, պատմվածք և մտահանգումների որոշ տարրերի ուսուցում / «Ես սիրում եմ ձմեռը, որովհետև...»/: Երեխաները հաճախ են կազմում խառը տեքստեր, երբ պատմվածքում հանդիպում են նկարագրման կամ մտահանգման տարրեր:

Այս խմբում հատուկ ուշադրություն է դարձվում նկարագրությանը: Երեխաները սովորում են համեմատել, համադրել, նկարագրել առարկաները, նկարները, խաղալիքներն ըստ հետևյալ սխեմայի.

1. Առարկայի մատնանշում, դրա անվանում,
2. Առարկայի որակի և հատկանիշների նկարագրում,
3. Առարկայի գնահատում կամ խոսողի վերաբերմունքը դրա նկատմամբ:

Նկարագրության կամ պատմվածքի համար առաջարկվող առարկաներն աստիճանաբար բարդեցվում են: Մանկավարժը պետք է հասնի նրան, որ երեխայի կողմից կազմվող պատմվածքն ունենա հստակ կառուցվածք.

- Առարկայի անվանում/ «Ին՞չ է սա», «Ո՞վ է սա», «Ի՞նչպես է կոչվում»/:
- Առարկայի բնութագրում՝ ըստ որակի, հատկանիշի, իրականացվող գործու-

ճեղքան / «Ինչպիսի՞ն է», «Ինչպիսի՞ն են», «Ի՞նչ ունի», «Ինչո՞վ է տարբերվում մյուս առարկաներից», «Ինչո՞վ է հետաքրքիր», «Ի՞նչ կարելի է դրանով անել», «Ի՞նչ կարելի է դրա հետ անել»/:

- Երեխայի վերաբերմունքը առարկայի նկատմամբ կամ գնահատականը /«Դու՞ր է գալիս արդյոք, ինչո՞վ է դուր գալիս»/:

Նկարագրական խոսքի (մենախոսության) նման ուսուցումը թույլ է տալիս երեխաների մեջ զարգացնել կառուցվածքային ամբողջականություն ունեցող տեքստ կազմելու, առարկաների հատկությունների և որակների մասին խոսելու, ինչպես նաև առարկային վերջնական գնահատական տալու ունակությունը:

Օրինակ՝ երեխան նկարագրում է աղվեսին/ կարելի է վերցնել խաղալիք աղվես կամ աղվես պատկերող նկար/.

- Սա աղվես է, այն շիկամազ է, փափլիկ: Աղվեսը շատ խորամանկ է, սիրում է մկներ որսալ և շատ գեղեցիկ է::

Նկարագրությունը կարող է տեղի ունենալ նաև տվյալ առարկային /խաղալիքին/ վերաբերող հանելուկների և հարցերի օգնությամբ.

-Շիկամազ է, փափլիկ է, բարձրանում է եղևնու վրա, կաղին է հավաքում: Երեխաները գուշակում են, որ դա սկյուռիկն է: Հետո սկյուռիկը/դաստիարակը/ ասում է երեխաներին.

-Նկարագրե՛ք ինձ, որ ես հասկանամ, թե ինչպիսի՞ն են, և ի՞նչ պետք է անեն:

Խաղալիքի նկարագրումը տեղի է ունենում, նախ, դաստիարակի հարցերի հիման վրա, հետո՝ մեծահասակի հետ համատեղ, այնուհետև՝ ինքնուրույն: Սյուժեի կառուցման հետ անմիջական կապ ունեցող խաղալիքների նկարագրության ժամանակ դաստիարակը պետք է ուշադրություն դարձնի ոչ միայն հերոսների արտաքին տեսքին, այլև նշի նրանց որոշ հատկանիշներ, բնավորության գծերը: Դրանով էլ որոշակիորեն կծրագրավորվի երեխաների վարքը: Օրինակ՝ սկյուռիկը շիկամազ է, փափլիկ է, խորամանկ է, արագավազ է, քաջ է, սրամիտ է: Նապաստակը փոքրիկ է, փափլիկ է, վախկոտ է, վախից դողում է: Մկնիկն ունի երկար պոչ և շատ հետաքրքրասեր է:

Ծանոթացում գեղարվեստական գրականությանը

Ծրագրում գեղարվեստական գրականությունը դիտվում է որպես արվեստի ինքնուրույն տեսակ: Գրականության նյութը կապված է խոսքի զարգացման բոլոր խնդիրների հետ և մեծ ազդեցություն է ունենում մտածողության, խոսքի և արտաքին աշխարհի նկատմամբ դրական վերաբերմունքի զարգացման վրա: Ծրագրային խնդիրներն անհրաժեշտ է լուծել ինչպես պարապմունքների ընթացքում, այնպես էլ դրանցից դուրս: Հնարավորության դեպքում անհրաժեշտ է երեխաների համար ամեն օր կարդալ (ինչպես նոր, այնպես էլ նրանց արդեն ծանոթ ստեղծագործություններ), արթնացնել սեր և հետաքրքրություն գեղարվեստական գրականության տարբեր ժանրերի հանդեպ/ հեքիաթ, պատմվածք, առակ, ոտանավոր/ ծանոթացնել գրողների, բանաստեղծների, հայ մանկագիրների, ինչպես նաև ժո-

ղվորդական ստեղծագործություններին: Ձարգացնել գրական ստեղծագործությունների իմաստն ըմբռնելու, դրանց բովանդակությունը հուզականորեն արտահայտելու կարողությունը: Սովորեցնել արտահայտիչ, հուզականորեն արտասանել ոտանավորը, օգտվել տրամաբանական դադարներից, շեշտադրումներից և այլն: Ձարգացնել գեղարվեստախոսքային գործունեությունը, ձևավորել կատարողական ընդունակություններ, յուրաքանչյուր կերպարին բնորոշ արտահայտչամիջոցներից օգտվելու կարողություն: Սովորեցնել զգալ ստեղծագործության տրամադրությունը, ռիթմը, երաժշտականությունը: Ձարգացնել ինքնուրույն, տրամաբանված հաջորդականությամբ վերապատմելու կարողություններ: Խոսքի զարգացման պարապմունքների ընթացքում դաստիարակը երեխաների ուշադրությունը հրավիրում է ոչ միայն գրական ստեղծագործության բովանդակությանը, այլև ինչ-որ չափով գրական լեզվի առանձնահատկություններին /համեմատություններ, հակադրություններ/: Ընթերցված նյութի վերաբերյալ զրույցի միջոցով հնարավորություն է ստեղծվում վերլուծել ստեղծագործությունը: Երեխայի խոսքի զարգացման առանձնահատուկ միջոց է՝ ուսուցումը, որն իրականացվում է հատուկ կազմակերպված պարապմունքների, խաղերի միջոցով և երեխայի առօրյա կյանքում: Ուսուցման կազմակերպման հիմնական ձևը պարապմունքն է: Խոսքի զարգացման մեթոդիկային համապատասխան կազմակերպվում է 18 պարապմունք, դրանց տեսակներն են՝

1. *Ջրույց*

2. *Ոտանավորի ուսուցում*

3. *Դիդակտիկ խաղ*

4. *Վերապատմում*

5. *Պատմում* /նկարով, խաղալիքների նկարագրություն, դաստիարակի ցուցումով, կիսատ թողած պատմության շարունակություն, հիշողությամբ, ստեղծագործական/

Ջրույցը նպաստում է երեխաների տրամաբանական մտածողության զարգացմանը, ճանաչողական հետաքրքրությունների ընդլայնմանը, երկխոսության զարգացմանը: Այն իրականացվում է հարց ու պատասխանի ձևով, հետևյալ թեմատիկ ուղղություններով՝ կենցաղային, հասարակական, բարոյագիտական:

Ոտանավորի ուսուցման նպատակն է՝ երեխայի մեջ սեր արթնացնել գեղարվեստական գրականության տվյալ ժանրի հանդեպ, զարգացնել գեղարվեստական ճաշակը, մայրենի լեզվի գեղեցկությունը, ստեղծագործության մեղեդայնությունը զգալու և գնահատելու կարողությունը:

Դիդակտիկ խաղերի միջոցով երեխաները ծանոթանում են առարկաների կառուցվածքին, հատկանիշներին, բնության երեկույթներին, մարդկանց կյանքին, դրանց փոխհարաբերություններին, որոնց շնորհիվ հարստանում, ակտիվանում է նրանց բառապաշարը: Ձարգանում է կապակցված խոսքը, կանոնավորվում արտասանությունը: Դիդակտիկ խաղերն ուղղված են երեխայի իմացական կարողությունների ձևավորմանը («Ի՞նչ է սա», «Ինչպիսի՞ն է այն», «Լրացրո՛ւ նախադասու-

թյունը», «Ասա և հնչյունով սկսվող բառեր») **Վերապատմելու** համար պետք է ընտրել հետաքրքրական փոքրիկ ստեղծագործություններ, որոնք ծավալով մեծ չեն և գրված են արտահայտիչ ու գեղեցիկ լեզվով: Երեխաները վերապատմումների ընթացքում հաղորդում են ստեղծագործության բովանդակությունն առանց բացթողումների: Սովորեցնել երեխաներին վերապատմումների ընթացքում համապատասխանաբար ներառել փոքրիկ բեմականացումներ՝ ծանոթ ժողովրդական հեքիաթներից: Երեխաներին սովորեցնել տարբերել գլխավորը երկրորդականից, գնահատել գլխավոր հերոսների արարքների դրական և բացասական կողմերը:

Պատմում նկարով պարապմունքի ընթացքում երեխաները սովորում են դիտել, հասկանալ և վերարտադրել նկարի բովանդակությունը: Անհրաժեշտ է երեխաների մեջ առաջացնել որոշակի վերաբերմունք՝ նկարչի կողմից պատկերվածի նկատմամբ:

Պաստիարակի ցուցումով պատմում պարապմունքի ընթացքում դաստիարակը երեխաներին առաջադրում է մի քանի հարց՝ կապված իրենց հետ տեղի ունեցած որևէ իրադարձության հետ: Թեմաների ընտրության մեջ կարևորվում է դրանց դաստիարակչական և ճանաչողական նշանակությունը:

Երեխաների ստեղծագործական երևակայության զարգացման լավագույն միջոց է՝ **կիսատ թողած պատմության շարունակությունը**: Դրա սկիզբը հաղորդում է դաստիարակը: Նա կանգ է առնում պատմության հանգուցային կետում և երեխաներին առաջարկում ինքնուրույն շարունակել այն:

Ստեղծագործական պատմումների համար դաստիարակը երեխաներին հանձնարարում է տպավորությունների հիման վրա որևէ կոնկրետ թեմա, նրանց մասնակից դարձնում սյուժեին, և երեխաներն իրենց երևակայությամբ հորինում են պատմություններ:

Ներկայացնենք պարապմունքների թեմաները և ծրագրային բովանդակությունը՝ ըստ եռանսյակների:

1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ

Սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր

Թեմաներ՝ «Ամառ», «Աշուն»

Ծրագրային բովանդակությունը

1. *Սովորեցնել երեխաներին նախադասություններ կազմել սյուժետային նկարներով, նախադասության մեջ համաձայնեցնել բառերը և դրանք քերականորեն ճիշտ գործածել:*
2. *Սովորեցնել նախադասության մեջ բառերը համաձայնեցնել դեմքով, թվով, ժանանակով և հոլովով: Նախադասությունները բարդացել՝ լրացումներ, մակբայներ, շաղկապ կիրառելով:*
3. *Սովորեցնել ճիշտ օգտագործել խոսքի մասերը, որոշել և անվանել առարկայի գտնվելու վայրը/ աջ, ձախ, կողքին, վերևում և այլն/:*

2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ

Դեկտեմբեր, հունվար, փետրվար

Թեմաներ՝ «Ձմեռ», «Մեր տոնակատարությունը», «Ընտանի կենդանիներ», «Վայրի կենդանիներ»

Ծրագրային բովանդակությունը

1. Սովորեցնել կազմել նախադասություններ՝ ըստ սյուժետային պատկերի,
2. Նախադասության մեջ բառերը համաձայնեցնել դեմքով թվով ժամանակով և հոլովով: Նախադասությունները բարդացնել՝ լրացումներ, շաղկապներ, մակբայներ կիրառելով:
3. Ծիշտ օգտագործել խոսքի մասերը, որոշել և անվանել առարկաների գտնվելու վայրը/ աջ, ձախ, վերևում, ներքևում և այլն/:
4. Սովորեցնել կազմել նախադասություններ՝ անցած տոնի վերաբերյալ:
5. Սովորեցնել նկարագրել առարկան՝ ըստ դաստիարակի կազմած ծրագրի. խոսքում կիրառել եզակի և հոգնակի թվով գոյականներ /կատու- կատուներ, տուն-տներ/:

3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ

Մարտ, ապրիլ, մայիս

Ծրագրային բովանդակությունը

Թեմաներ՝ «Գարուն», «Թռչուններ», «Միջատներ», «Աշխատանքային գործիքներ», «Սպորտային գույք»

1. Սովորեցնել կազմել նախադասություններ՝ ըստ սյուժետային պատկերի
2. Նախադասության մեջ համաձայնեցնել բառերը դեմքով թվով ժամանակով և հոլովով: Նախադասությունները բարդացնել՝ լրացումներ, շաղկապներ, մակբայներ կիրառելով:
3. Ծիշտ օգտագործել խոսքի մասերը, որոշել և անվանել առարկաների գտնվելու վայրը/ աջ, ձախ, վերևում, ներքևում և այլն/:
4. Սովորեցնել նկարագրել առարկան՝ ըստ դաստիարակի կազմած ծրագրի. խոսքում կիրառել եզակի և հոգնակի թվով գոյականներ:
5. Սովորեցնել կազմել գոյականի սեռական հոլովը՝ եզակի և հոգնակի թվերով, ճիշտ օգտվել ներքին և արտաքին հոլովումներից:
6. խոսքում ակտիվացնել առարկաների մասերը, որակը, նյութը նկարագրող բառերի կիրառումը:

**Խոսքի զարգացման պարապմունքների կազմակերպման նմուշ օրինակ
2-րդ եռամսյակ
/դեկտեմբեր, հունվար, փետրվար/**

ամիս	1-ին շաբաթ	2-րդ շաբաթ	3-րդ շաբաթ	4-րդ շաբաթ
դեկտեմբեր	<i>Հագուստի նկարագրում</i>	<i>Գ. Մովսիսյանի «Հնդկահավը թուխս նստեց» պատմվածքի վերապատմում</i>	<i>Խաղալիքներով պատմում</i>	<i>«Մանեն ցրտից չի վախենում» նկարի պատմում</i>
	Զրույց «Հրաշագործ ձմեռը»	Ուտանավորի ուսուցում Ա. Խնկոյան «Չմեռ պապի», արտահայտիչ արտասանություն	Հնչարտաբերական ունակությունների զարգացում: Դ հնչյունի ճիշտ արտասանություն: Խոսքի քերականորեն ճիշտ ձևավորում:	Դիդակտիկ խաղ՝ «Տիկնիկի համար սենյակ կահավորենք»
հունվար	<i>Սովորեցնել՝</i> -նկարագրել ձմեռային հագուստը, ճիշտ անվանել ձմեռային հագուստի պարագաները, բարձրաձայն և ճիշտ արտասանել «ժ» հնչյունը՝ ինչպես առանձին, այնպես էլ բառի կամ նախադասության մեջ, ընտրել տրված հնչյունին համապատասխան բառ: Ձևավորել պատկերացումներ ձմեռային հագուստի նշանակության մասին: Ամրապնդել «հագուստ» հասկացությունը:	<i>Սովորեցնել՝</i> վերապատմել փոքրիկ պատմվածք, որն առաջին անգամն է ընթերցվել, արտահայտիչ ներկայացնել հերոսների ուղղակի խոսքը. ինքնուրույն ընտրել «ս» հնչյունով բառեր:	<i>Ձևավորել՝</i> խաղալիքներով փոքրիկ պատմվածք կազմելու ունակությունը: Հատուկ վարժություններով ամրապնդել հնչարտասանական ապարատը: Ամրապնդել «ժ» հնչյունը բառերի և նախադասությունների մեջ ճիշտ գործածելու ունակությունը: <i>Սովորեցնել՝</i> բառերի մեջ առանձնացնել «ժ» հնչյունը, - պարզ և հստակ արտասանել այդ հնչյունով բառեր կամ նախադասություններ, -ճիշտ օգտագործել ձայնի առոգանությունը, խոսել չափավոր բարձր:	<i>Սովորեցնել՝</i> -դաստիարակի առաջարկությամբ կազմել փոքրիկ պատմվածք՝ նկարի բովանդակությամբ, - բառի միջից առանձնացնել հնչյունը, - առաջադրված հնչյունին համապատասխան ընտրել բառեր:

		<p>Ջարգացնել` երեխաների հետաքրքրությունը ձմեռային երևույթների նկատմամբ: Հարստացնել երեխաների բառապաշարը` «ձմեռ» բառին համապատասխան հատկանիշ ցույց տվող բառերը: Սովորեցնել հստակ արտասանել ձ հնչյունը, ասել այդ հնչյունով սկսվող բառեր</p>	<p>Սեր արթնացնել բանաստեղծության նկատմամբ, զգալ տալ ստեղծագործության ռիթմայնությունը և մեղեդայնությունը, հարստացնել բառապաշարը նոր բառերով:</p>	<p>Սովորեցնել` առարկաներն անվանել եզակի և հոգնակի թվերով, խոսքը քերականորեն ճիշտ կառուցել:</p>	<p>Սովորեցնել` երեխաներին անվանել կահույքի առարկաների անունները, իմանալ դրանց նշանակությունը:</p>
Հունվար	Թեման	Տոնական շաբաթ	Տոնական շաբաթ	Առարկաներով պատմում	Առարկայական նկարների համեմատում
	Թեման	Խաղալիքներով պատմում դիդակտիկ խաղ` «Կենդանիները պարծենում են»	Միմյանց արտաքին տեսքի նկարագրում	Դիդակտիկ խաղ` դաստիարակի ընտրությամբ	Զրույց` «Հայկական բանակ»
	Սպասում	<p>Սովորեցնել` -դաստիարակի օգնությամբ խաղալիքներով փոքրիկ պատմումներ կազմել, -հասկանալ հանելուկների իմաստը, ճիշտ անվանել առարկաների որակները, -«չ» հնչյունը ճիշտ արտասանել բառի կամ նախադասության մեջ, տրված հնչյունին համապատասխան բառեր ընտրել: Հնչարտասանական ապարատն ամրապնդել հատուկ վարժություններով:</p>	<p>Սովորեցնել` -նկարագրել դիմացինի արտաքին տեսքն ու հագուստի պարագաները: Պատկերացում տալ այն մասին, որ հնչյունները բառերի մեջ ունեն որոշակի հերթականություն:</p>	<p>Վարժեցնել` -կազմել պատմում` առարկաներով և դրանց կատարած գործողություններով, -սպասքի պարագաները ճիշտ արտասանել: Հնչարտասանական ապարատն ամրապնդել հատուկ վարժություններով: Սովորեցնել` -ճիշտ արտասանել «չ» հնչյունը, -պարզ արտասանել «չ» հնչյունով բառերը:</p>	<p>Սովորեցնել` -նկարում պատկերված առարկաները համեմատել ըստ մեծության և գույնի, -ընտրել հնչողությամբ նման և տարբեր բառեր:</p>

Փետրվար	Թեման	Պատկերի նկարագրություն	«Մայրիկը ափսեներն է լվանում» նկարի պատմում	Առարկայական պատկերների նկարագրում	Բանջարեղենի նկարագրություն. շոշափելով որոշել բանջարեղենը՝ ըստ խոսքային բնութագրության: Դիդակտիկ խաղ՝ «Հրաշալի պարկ»:
		Խ հնչյունի ճիշտ արտասանության նպատակով խաղալ «Ո՞ւմ ինչ է հարկավոր»	Խաղ՝ «Ավարտիր նախադասությունը»	«Իմ քաղաքամայր երևանը»	Ստեղծագործական պատմում՝ «Իմ սիրելի խաղալիքը»
Նպատակը		Հնչարտասանական ապարատն ամրապնդել հատուկ վարժություններով: Սովորեցնել՝ -նկարագրել նկարում պատկերված առարկան՝ առանձնացնելով էական առանձնահատկությունները. --հստակ արտասանել «շ» և «չ» հնչյունները, -տրված հնչյուններն առանձնացնել բառերի մեջ:	Սովորեցնել՝ «Մայրիկը ափսեներն է լվանում» նկարի հիման վրա, կազմել պատմություն: Հնչարտասանական ապարատն ամրապնդել հատուկ վարժություններով: Ամրապնդել՝ - «չ» հնչյունի արտասանությունը, -Պատկերացումն այն մասին, որ հնչյունները բառերի մեջ ունեն որշակի հերթականություն:	Սովորեցնել՝ -կազմել առարկայի նկարագրությունը -անվանել դիտվող /նկարագրվող/ առարկան, դրա որակները, գործողությունները -գնահատել նկարագրվող առարկան: Հնչարտասանական ապարատն ամրապնդել հատուկ վարժություններով: -բառի մեջ առանձնացնել հնչյունը: Ամրապնդել՝ -«Չ» հնչյունն արտասանելու ունակությունը, -կոշտ և փափուկ բաղաձայն հնչյունները տարբերելու կարողությունը:	Ամրապնդել՝ - բանջարեղենը ճիշտ անվանելու, դրանց ձևը և գույնը նկարագրելու կարողությունը: Ընդլայնել բանջարեղենի վերաբերյալ պատկերացումները: Սովորեցնել՝ -առանձնացնել բանջարեղենի որոշակի հատկանիշներ, -կարողանալ դրանք ճիշտ դասակարգել:
		Ամրապնդել երեխաների պատկերացումները, ըստ մասնագիտությունների, խոհարարին, բժշկին, հյուսնին, վարսավիրին, աշխատելու համար անհրաժեշտ գործիքների մասին:	Զարգացնել՝ տրամաբանական կապակցված խոսքը, քերականական կանոններին համապատասխան ճիշտ հոլովների և բայերի կիրառությունը:	Երեխաներին ծանոթացնել երևանի տեսարժան վայրերին, քաղաքի խորհրդանիշներին, հուշարձաններին, ճարտարապետական կոթողներին: Դաստիարակել սեր հայրենի եզերքի և մայրաքաղաքի նկատմամբ:	Զարգացնել՝ կապակցված խոսք կառուցելու երեխաների ունակությունը:

Տարեվերջին երեխաները պետք է կարողանան՝

- Ակտիվացնել իրենց բառապաշարն այնպիսի բառերով, որոնք արտահայտող առարկաներն ու երևույթները երեխայի անձնական փորձում չեն եղել:

- Ակտիվորեն կիրառել այնպիսի բառեր, որոնք ունեն զգացմունքային նշանակություն /բարկացած, տխուր/, բարոյական նշանակություն /խորամանկ, բարի/, գեղագիտական նշանակություն /գեղեցիկ, հարդարված/, նաև առարկաների բազմաթիվ որակներ և հատկություններ նշանակող բառեր:

- Հասկանալ և կիրառել հականիշ և հոմանիշ բառեր:

- Վերահսկել սեփական արտահայտչականությունը և կարողանալ առանձնացնել բառերի առաջին հնչյունները:

- Գիտակցել պատճառահետևանքային կապերը. կիրառել բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններ:

- Մանրամասնորեն պատմել սյուժետային պատկերի բովանդակությունը, մեծի օգնությամբ նկարագրել խաղալիքը և բեմականացնել ծանոթ հեքիաթից որևէ հատված:

- Պատմել անհավանական պատմություններ, որոնք կարող են լինել վառ երևակայության զարգացման արդյունք:

- Խոսքով ակտիվորեն ուղեկցել իրենց յուրաքանչյուր գործունեությանը /խաղային, կենցաղային և այլն/:

- Արտահայտել որոշակի գրական ստեղծագործություն լսելու ցանկություն:

- Հետաքրքրությամբ դիտել մանկական նկարազարդ գրքեր:

- Անվանել սիրելի հեքիաթը, արտասանել դուր եկած ոտանավորը:

- Բեմադրել փոքրիկ հեքիաթ՝ մեծահասակի օգնությամբ:

Երեխաների խոսքի զարգացման պարապմունքների կազմակերպման համար, ինչպես նաև առօրյա գործունեության ընթացքում առաջարկվում է գրական ստեղծագործությունների հետևյալ ցանկը՝ ըստ եռամսյակների: Դաստիարակն իր հայեցողությամբ կարող է ընտրել և համարժեք ստեղծագործություններով հարըստացնել տվյալ ցանկը:

1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ

Սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր

- **Երեխաներին պատմելու և ընթերցելու համար**

1. «Ամպն ու սարը»/ Յ. Թումանյան/

2. «Փիսիկների գնդակը» / Ռ. Ղարիբյան/

3. «Նունիկի փիսիկը»/ Լ. Պողոսյան/

4. «Ով աշխատի, նա կուտի» / ռուսական հեքիաթ/

5. «Այոն ու ոչը»/ Յ. Հայրապետյան/

6. «Ծիտիկի երգը»/ Լ. Թարգյուլ/

7. «Բարև, արջուկ» /Էդ. Ավագյան/

8. «Բարի գայլուկը» /Ա. Մովսիսյան/
9. «Խորամանկ կատուն և դյուրահավատ մկնիկը» /Ա. Մովսիսյան/
10. «Ընկերը» / Ա. Մովսիսյան/
11. «Ծիտը»/ Յովհ. Թումանյան/
12. «Մե՞ծ եմ, թե՞ փոքր»/ Ս. Մուրադյան/
13. «Աշուն քեռին»/ Գ.Մովսիսյան/

• **Արտահայտիչ արտասանություն**

1. «Սագիկ»/Ղ. Աղայան/
2. « Բլլիկ ձկնիկ»/Ա. Խնկոյան/
3. «Այս բոլորին»/Յ. Յայրապետյան /
4. «Բադիկ» /Ռ.Պատկանյան/
5. «Ընկերասերը» / Ս. Մուրադյան/
6. «Իմ գնդակը»/Ս.Մուրադյան/
7. «Իմ շնիկը» /Ավ. Ճողորյան/
8. «Գնացքը»/ Ս. Կապուտիկյան/
9. «Մուկն ու կատուն»/Ս.Կապուտիկյան/
10. «Կատու» /Յ. Աղաբաբ/
11. «Երևանը»/ Ն. Յովնաթան/
12. «Աշնան երգ»/Յ.Յայրապետյան/
13. «Աշուն»/Յ.Յայրապետյան/

• **Վերապատմում**

1. «Թե ինչու կատուն միայն նախաճաշից հետո է լվացվում» /լիտվական ժող. հեքիաթ/

2. «Ուլիկը» /Յովհ. Թումանյան/
3. «Նապաստակը առյուծի պալատում» /Ս.Մուրադյան/
4. «Նապաստակն ու բադը» /Ս.Մուրադյան/
5. «Գայլն ու կոշկակար նապաստակը» /Ս.Մուրադյան/
6. «Գայլն ու աղվեսը»/ Ս.Մուրադյան/

• **Ստեղծագործական պատմումներ**

1. «Իմ սիրելի խաղալիքը»
2. «Աշուն»
3. «Երևանն իմ սիրելի քաղաքն է»

2-րդ երևույթ

Դեկտեմբեր, հունվար, փետրվար

• **Երեխաներին պատմելու և ընթերցելու համար**

1. «Տոնածառն անտառում » /Ա. Մովսիսյան/
2. «Աղվեսն ու հավերը»/ Վ.Այգեկցի/
3. «Թե ինչպես Ձմեռ պապիկը հալվեց»/ Ս. Մուրադյան/
4. «Մեր բանակը» /Ա. Մովսիսյան/
5. «Թե ինչ պատահեց, երբ իշուկը չուզեց վերարկու հագնել» /գերմանական

ժող. հեքիաթ/

6. «Չորս ցանկություն»/Կ.Ուշինսկի/
7. «Եղանակ քույրերը»/Ս Մարշակ/
8. «Բարեսիրտ շունը»/ Ավ. Իսահակյան/
9. «Լավ ընկերը» /Ա.Մովսիսյան/
10. «Աղջիկն ու սունկերը» /Լ.Տոլստոյ/

• **Արտահայտիչ արտասանություն**

1. «Ձմեռ պապի» /Ա. Խնկոյան/
2. «Ձյունը» /Յ. Հայրապետյան/
3. «Սահմանապահ եղբայրս» /Ս.Մուրադյան/
4. «Գրադարանում»/ Ս.Կապուտիկյան/
5. «Հացթուխը»/ Ս.Մուրադյան/
6. «Շինարար Լևիկը» /Ս.Կապուտիկյան/
7. «Ժամացույցը» /Ս.Կապուտիկյան/
8. «Ամիսներ և չորս եղանակ» /Ղ.Աղայան/
9. «Ոսկե ձվիկը»/ ռուսական հեքիաթ/
10. «Գրիչը»/ Հովհ. Թումանյան/
11. «Հայոց լեզու» /Ռ. Ղարիբյան/
12. «Վագրն ու կատուն»/Պ.Սևակ/
13. «Որ մեծանամ» /Ս.Կապուտիկյան/
14. «Կարծում եք, թե կատա՞կ է»/Ս.Կապուտիկյան/
15. «Ինձ լավ լսիր, ա՛յ տիկնիկ»/ Ս.Կապուտիկյան/

• **Վերապատմում**

1. «Ծիտիկը ցուցահանդեսում»/ Ռ.Դավոյան/
2. «Խաղալիքների ժողովը»/ Լ.Պողոսյան/
3. «Նկարիչ կատուն» /Լ.Պողոսյան/
4. «Բոլորից շատ բոլորին եմ սիրում» /Ս.Աբրահամյան-Թաթևկյան/
5. «Ես արդեն մեծ եմ»/Ս. Աբրահամյան-Թաթևկյան/
6. «Փիսկն ու մկնիկը»/ զերմանական .ժող. հեքիաթ/

• **Ստեղծագործական պատմումներ**

1. «Ձմեռ»
2. «Նոր տարի»
3. «Մեր բանակը»

3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ
Մարտ, ապրիլ, մայիս

• **Երեխաներին պատմելու և ընթերցելու համար**

1. «Ծաղիկների թագուհին»/Ա. Մովսիսյան/
2. «Ծիածանի ծնունդը»/ Ա. Մովսիսյան/
3. «Ձատիկ»/ հայկական ժող. տոն/
4. «Գառնիկ ախպերը»/ Հովհ. Թումանյան/
5. «Շունն ու կատուն»/ Հովհ. Թումանյան/

6. «Ճանապարհորդ Ջեկոն»/ Ստ.Զորյան/
7. «Ագռավն ու աղվեսը» /Վ.Այգեկցի/
8. «Երեք արջի հեքիաթը»/ Լև Տոլստոյ/
9. «Սուտլիկ որսկանը»/ Յովհ. Թումանյան/
- 10.«Կենդանիների վեճը»/Ղ. Աղայան/
- 11.«Վատ ընկերը»/Խ.Աբովյան/
- 13.«Գիշերն անտառում»/ Սիմակ/
- 14.«Մանուշակը»/Գ.Մովսիսյան/
- 15.«Աղջիկն ու ծաղիկները»/ Ա. Մովսիսյան/
- 16.«Հայր մեր»
- 17.«Աղոթք երեխաների»
- 18.«Լորիկներ» /Վ.Անանյան/

• **Արտահայտիչ արտասանություն**

- 1.«Համբարձման տոն»/Յովհ.Թումանյան/
- 2.«Վարդավառ» /Ն.Միքայելյան/
- 3.«Արտուտիկ»/ Յովհ.Թումանյան/
- 4.«Մանուշակ» /Ղ.Աղայան/
- 5.«Մեղու»/ Ներսես Շնորհալի/
- 6.«Անհաշտ ծաղիկներ»/Յոթոս- Ապեր/
- 7.«Ծաղիկներ» / Յովհ. Թումանյան/
8. «Ծիծեռնակ» / Աթ. Խնկոյան/
- 9.«Ձնծաղիկ»/Ն.Յովնաթան/
- 10.«Մայիս»/ Յ.Յայրապետյան/
- 11.«Ձնծաղիկ»/Յ.Յայրապետյան/
- 12.«Մայր ճնճղուկը»/Լ. Պողոսյան/
- 13.«Իմ տատին»/Ս.Կապուտիկյան
- 14.«Մանուկներն ու սագը»/ Յովհ. Շիրազ/
- 15.«Պարտեզ»/ Ս.Կապուտիկյան/
16. «Կատու» /Ս.Կապուտիկյան/
- 17.«Մայիս» / Վ. Վարդանյան/
- 18.«Գարուն»/ Վ. Վարդանյան/
- 19.«Մեծամիտ Աքլորը»/ Վ. Վարդանյան/
- 20.«Ես թիթեռ եմ»/Յ. Պողոսյան/

• **Վերապատմում**

- 1.«Գառնիկ ախպերը»/ Յովհ. Թումանյան/
- 2.«Շունն ու կատուն»/ Յովհ. Թումանյան/
- 3.«Ճանապարհորդ Ջեկոն»/ Ստ.Զորյան/
- 4.«Պույպույ մկնիկը»/ Դ.Դեմիրճյան/
- 5.«Ով աշխատի, նա կուտի»/ ռուսական ժող. հեքիաթ/
- 6.«Լեզուն կտրած ծիտիկը»/Յովհ. Թումանյան/

• **Ստեղծագործական պատմումներ**

- 1.«Գարուն է»

- 2.«Մայրիկների տոնը»
- 3.«Կենդանաբանական այգուն»

Չանելուկներ, շուտասելուկներ, ասացվածքներ

Մեթոդական ցուցումներ

Կյանքի 4-5 տարիքային շրջանը խոսքային ակտիվության ամենացայտուն ժամանակահատվածն է: Երեխաները հեշտությամբ ընդգրկվում են սկսված գրույցի մեջ, շտապում են արտահայտվել, ընդհատում են իրար, բավական հաճախ գործողություններն ու խոսքը զուգորդում են իրար: Այս տարիքում երեխան խոսքով է զուգորդում իր՝ գրեթե յուրաքանչյուր գործունեությունը՝ խաղային, թե կենցաղային: Գրքերից, հեռուստահաղորդումներից և մեծահասակներից երեխաները տեղեկություններ են ստանում այնպիսի իրերի ու երևույթների մասին, որոնք նրանց կենսափորձում չեն եղել: Ձևավորվում է դրանց վերաբերյալ /խոսքային/ գիտելիքների շրջանակը: Այդ գիտելիքների յուրացման ընթացքում երեխաները հաճախ տրամաբանորեն ոչ ճիշտ եզրակացություններ են կատարում, արդյունքում ծնվում են անհամատեղելի մտքեր/ օր.՝ «Երկվորյակները երեխաներ չեն, այլ համաստեղության նշաններ», - բացատրում է փոքրիկը՝ լսելով մեծերի խոսակցությունը/: Դաստիարակները պետք է լրջորեն և հարգալից վերաբերվեն երեխաների յուրաքանչյուր պատմումին, քանի որ նրանց գնահատականին երեխաները շատ հուզականորեն են արձագանքում:

Մայրենի լեզվի զարգացման կարևոր խնդիրներից է՝ կապակցված խոսքի զարգացումը: Այդ առումով էական նշանակություն ունի մեծահասակների ճիշտ խոսքը: Դաստիարակը պետք է իր խոսքում կիրառի հատկանիշ ցույց տվող, հոմանիշ, հականիշ բառեր, բարեկիրթ վարվեցողության արտահայտություններ և այլն: Այս տարիքի երեխաներին պետք է գովաբանել ոչ միայն հարցերին պատասխանելու պատրաստակամության, այլև հաջող պատասխան տալու համար/ օրինակ՝ «Ապրե՛ս, Աշո՛տ, ես գոհ եմ, որ դու պատասխանեցիր դժվար հարցին, և՛ նախադասությանը համապատասխան հիանալի բառ ընտրեցիր»/:

4 - 5 տարեկան երեխաների խոսքը կատարելագործվում և հարստանում է.

- երեխաները խոսքի մեջ գիտակցված կիրառում են կապեր /մեջ, վրա, տակ, կողքին/, որոնք ցույց են տալիս առարկաների գտնվելու վայրը,

- իրականացնում են մտավոր գործողություններ՝ առարկաների համեմատում, համադրում, խմբավորում, դասակարգում,

- խոսքում ակտիվորեն կիրառում են ընդհանրական գոյականներ՝ սպասք /ափսե, գավաթ/, - կենդանի /վայրի, ընտանի/ հագուստ՝ /ձմեռային, տոնական/, ծաղիկներ՝ /դաշտային, սենյակային/,

- օգտագործելով համանման բառեր՝ հեշտությամբ յուրացնում են ածանցների օգնությամբ նոր գոյականներ և բայեր ստանալու եղանակները /փոքր- փոքրիկ, տուն - տնակ/,

- հաղորդակցման ընթացքում մեծ ուշադրություն է դարձվում մարդկային փոխհարաբերությունների առանձնահատկություններին. բառային աշխատանքի մեծ մասն ուղղված է վարվելաձևի և էթիկայի կանոնների յուրացմանը:

Մայրենի լեզվի ուսուցման առաջատար ձև է համարվում երկխոսության կիրառումը, որտեղ մեխահասակի խոսքը մեծ դեր ունի երեխայի խոսքի զարգացման գործում: Դաստիարակը պետք է իր խոսքում ակտիվորեն կիրառի ածականներ, որոշիչներ, հոմանիշներ, հականիշներ, բարեկիրթ վարվեցողություն արտահայտող բառեր, բարդ համադասական նախադասություններ: Ձգտելով երեխայի ուշադրությունը սևեռել իր խոսքին՝ դաստիարակը կարող է խորամանկել /օր.՝ «Վա՛յ, ես մոռացա և ասացի, որ գայլը փափիկ է, բայց պետք է ասեի, որ...նապաստակն է փափիկ»/: Եվ այդպես երեխաները միշտ հաճույքով օգնում են «մոռացկոտ» դաստիարակին: Այս տարիքի երեխաներին պետք է գովել ոչ միայն ճիշտ պատասխանելու, այլև անսխալ խոսելու համար: Նման ձևով աշխատելու պարագայում երեխաներն իրենք կսկսեն հետաքրքրվել, թե, արդյոք, ճի՞շտ են ասել խոսքը, և գեղեցի՞կ է ստացվել այն: Երեխաներն սկսում են հասկանալ, որ խոսքի զարգացման պարապմունքների ժամանակ իրենք սովորում են ճիշտ խոսել և լինել հետաքրքիր զրուցակից:

Բառապաշարի հարստացում և ակտիվացում

Երեխայի բառապաշարի հարստացման և ակտիվացման համար նախատեսվում են հատուկ պարապմունքներ, դիդակտիկ վարժություններ, որոնց ընթացքում իրականացվում են հետևյալ խնդիրները.

- Դաստիարակի կողմից նոր բառի կիրառում՝ տարբեր ենթատեքստերում/ օր.՝ «Սա ճենապակյա վարդ է. ճենապակին շատ նուրբկառուցվածք ունի. ճենապակյա սպասքը շատ գեղեցիկ է» և այլն/:
- Բառերի բացատրություն և ստուգաբանություն /էթիմոլոգիա/, օրինակ՝ բացատրվում են՝ բետոնախառնիչ մեքենա, շինարար, ուսուցիչ, ծանրամարտիկ և նմանատիպ այլ բառեր:
- Հարցական նախադասություններին պատասխանելու ունակության ձևավորում
- Դաստիարակի կողմից բաց թողնված բառերի կամ արտահայտությունների լրացում:
- Խաղ՝ «Հուշիր բառը» /օր.՝ կատու-կատվիկ, կով-կովիկ, տուն-տնակ և այլն/:
- Պատասխանել այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ «ի՞նչ են պատրաստում փայտից /սեղան, աթոռ մահճակալ/, «ի՞նչ են կարում կտորից/ զգեստ, տաբատ, վարագույր/»:
- Գտնել լրացումներ հանձնարարված բառերին համապատասխան /ծյուն, ձնագնդի, ձնեմարդ, ձնաթաթախ/:

խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակության նպատակով կազմակերպվում են հատուկ պարապմունքներ: Դաստիարակը պարապումքն սկսում է հնչարտասանական վարժություններից. երեխաների ուշադրությունը սևեռում է շրթունքների, ատամների, լեզվի դիրքերին: Երեխաներն արդեն կարողանում են

կատարել ցուցադրված վարժությունները, որոնք ուղեկցվում են բացատրություններով /«Շրթունքները բերել առաջ, ատամները քիչ սեղմել և լեզվի ծայրով հպվել վերևի ատամներին»/:

Յուրաքանչյուր հնչյունի համար տարվող աշխատանքը բաժանվում է մի քանի փուլերի:

Առանձին հնչյունի բազմակի արտասանություն, որի ընթացքում մշակվում է դրա մաքրությունը, կարգավորվում է խոսքային շնչառությունը, ձևավորվում է խոսքի ճիշտ արտահայտչականությունը:

Այնպիսի վանկերի արտասանություն, որոնց հնչյունները մեկ կոշտ են, մեկ փափուկ են /ռո-րե, լա-լյա/:

Ուսուցանվող հնչյունների կիրառում բառերի մեջ և կապակցված խոսքի ընթացքում/ հանելուկներ, բանաստեղծություններ, դիդակտիկ խաղեր, խաղ-բեմականացումներ/:

Համապատասխան ուսուցման արդյունքում երեխաները հանգիստ կարողանում են որևէ նախադասության, շուտասելուկի, ոտանավորի մեջ առանձնացնել ծանոթ հնչյունը, որը փոքր-ինչ ճշտվում է դաստիարակի կողմից: Դրա համար անհրաժեշտ է պարբերաբար պլանավորել նման առաջադրանքներ. «Ո՞ր ծանոթ հնչյունը լսվեց ոտանավորում», «Բառը կրկնի՞ր այնպես, որ անհրաժեշտ հնչյունը պարզ հնչի», «Գտի՞ր այն նկարը կամ առարկան, որտեղ հանդիպում է այս կամ այն հնչյունը»:

Միջին խմբում աշխատանք է տարվում երեխայի մենախոսական խոսքի զարգացման ուղղությամբ: Մենախոսության զարգացման լավագույն միջոց է խաղալիքի նկարագրությունը, որը բարդ գործընթաց է և մեծապես կախված է խաղալիքի ընտրությունից. խաղալիքը պետք է գրավի երեխային:

Այս խմբում երեխաներին շարունակում են սովորեցնել դիտել սյուժետային նկարներ: Դաստիարակը նկարի վերաբերյալ կազմում է փոքրիկ պատում /10-13 նախադասություն/, որտեղ առանձնացվում են որոշակի առարկա նկարագրող նախադասություններ /օր.՝ «Կատուն ունի ձագեր, որոնք արդեն մեծացել են և կարող են ինքնուրույն խաղալ: Այդպես չէ՞, երեխաներ»/: Երեխաները պատմում են կատվի ձագերի մասին/:

Տարվա առաջին կեսին խուրհուրդ չի տրվում հանձնարարել՝ դիտած նկարը ներկայացնել հենց նույն պարապմունքի ընթացքում /դա կարելի է անել հաջորդ պարապմունքին/: Սակայն դաստիարակի կողմից նկարի պատմումն ավարտելն անհարժեշտ է: Փոխկապակցված նախադասություններն աստիճանաբար օգնում են երեխաներին հասկանալու, որ նկարը պետք է դիտել և ներկայացնել որոշակի հերթականությամբ: Դա նրանց օգնում է տիրապետելու կապակցված խոսքին:

Տարվա երկրորդ կեսին հայտնվում են նկարը պատմել ցանկացողներ: Դաստիարակը երեխաներին հիշեցնում է փոխկապակցված նախադասություններ՝ խուսափելու համար հաճախ կրկնվող նախադասություններից: Երեխաների խոսքի ակտիվացմանը նպաստում է նկար-մատրիցաների(կաղապարների) կիրառումը նկարի պատմումի ուսուցման ընթացքում: Դաստիարակը երեխաներին բաժանում է նկար-մատրիցաներ՝ անտառի բացատի պատկերով և գազանների, հատապտուղների, սնկերի պատկերներով առարկայական նկարներ: Յուրաքանչյուր երեխա մատրիցայի վրա իր ունեցած խաղալիքները դասավորում է իր հայեցողու-

թյամբ: Հետո երեխաները հերթով պատմում են իրենց բացատի մասին:

Այս խմբում արդյունավետ է պարապմունքների մեջ ներառել հայտնի ժողովրդական հեքիաթներից փոքրիկ բեմականացումներ:

խոսքի զարգացման խնդիրների ձևավորում

Խնդիրը	Գործունեությունը	Պատիարակի հետ համատեղ գործունեություն	Երեխաների հետ համատեղ գործունեություն
Բառապաշարի հարստացում և ակտիվացում	Խմբային խաղեր, մեծահասակի հետ հաղորդակցական ձևերի օրինակներ	հաղորդակցական խաղեր՝ ժողովրդական բանահյուսության նմուշների կիրառմամբ, առակներ, ասացվածքներ, ոտանավորներ խաղեր/ սյուժետադերային, խաղ-բեմականացումներ գրքի նկարազարդումների դիտում, աշխատանք գրական անկյունում	երեխաների համատեղ առարկայական և կերպարվեստային գործունեություն /կոլեկտիվ, մոնոլոգ խոսք/ խաղ-թատերականացումներ, զույգերով համատեղ խաղեր
խոսքի քերականական կառուցվածքի ձևավորում	բանավոր դիդակտիկ խաղեր, աշխատանք գրական անկյունում խոսքային վարժություններ, զրույց, ոտանավորի ուսուցում ստեղծագործության ընթերցում,	ակտիվ հաղորդակցման սցենար, դիդակտիկ խաղեր, հեքիաթի վերապատմում, խաղ-թատերականացումներ բառաստեղծում	խաղ-թատերականացումներ՝ երեխաների համատեղ կերպարվեստային և խաղային գործունեություն
խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակում	հնչարտասանական վարժություններ խոսքային դիդակտիկ խաղեր, շուտասելուկների ուսուցում, անհատական աշխատանք	դիդակտիկ խաղեր, նմանակման /իմիտացիոն վարժություններ, ակտիվ հաղորդակցման սցենար	խաղ-բեմականացումներ, թատերական գործունեություն
Կապակցված խոսքի ձևավորում	հեքիաթների ընթերցում, նկարազարդումների դիտում, դիդակտիկ խաղեր	սյուժետային նկարներով պատմումի ուսուցման պարապմունք /գործողությունների սկզբի և վերջի տարանջատում, հեքիաթի նոր վերջաբանի հորինում/, գեղարվեստական ստեղծագործությունների վերապատմումի պարապմունք/, կոլեկտիվ պատմում, դիդակտիկ խաղ՝ «Գնացք», սեղանային թատրոնի բեմադրում, նկարազարդումների դիտում, զրույց՝ գործող անձանց մասին, թեմայի շուրջ երգերի ունկնդրում, ուսուցում, ոտանավորի ուսուցում, խաղ-բեմականացում	զույգերով խաղեր, թատերականացված գործունեություն

ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՔԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ծրագրի նոր տարբերակում հաշվի են առնված տարրական մաթեմատիկական պատկերացումների ուսուցման նորացման պահանջները: Ծրագրից բխող սկզբունքները, ելնելով երեխաների տարիքային և անհատական առանձնահատկություններից, ապահովում են ինչպես հոգեկան գործընթացների, այնպես էլ նախադպրոցականին հասանելի նախաթվային և թվային պատկերացումների զարգացումը:

Ծրագիրն իր մեջ ներառում է կրթական հինգ բաժիններ.

Քանակ և հաշիվ,

Մեծություն,

Ձև,

Տարածության մեջ կողմնորոշում,

Ժամանակի մեջ կողմնորոշում

Նշված բաժինների ծավալը մի խմբից մյուսն անցնելիս ընդլայնվում և խորացվում է: Յուրաքանչյուր բաժնում ընդգրկված են տարբեր բնույթի և բարդության առաջադրանքներ, որոնք ուսուցանվում են պարզից-բարդ սկզբունքով և ամրապնդվում առօրյայում՝ իրենց շրջապատող ծանոթ առարկաների վերաբերյալ բազմաբովանդակ, մատչելի և հրապուրիչ վարժությունների, խաղային բնույթի պարապմունքների օգնությամբ:

Ծրագրի նպատակն է.

- Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորում՝ նախաթվային և թվային
- Երեխաների ակտիվ բառապաշարում մաթեմատիկական պատկերացումների ներմուծում
- Դիդակտիկ նյութերով աշխատելու ցանկության ձևավորում
- Ուսումնական գործընթացի նկատմամբ հետաքրքրության արթնացում
- Մտավոր գործողությունների զարգացում՝ համեմատում, խմբավորում
- Հոգեկան գործընթացների՝ հիշողություն, ուշադրություն, տրամաբանական մտածողություն, զարգացում
- Ձգայական վերլուծիչների զարգացում, տեսողություն, լսողություն, շարժում
- Ձարգացման բարենպաստ պայմանների ստեղծում և երեխաների ինքնուրույն գործունեության խթանում

Ծրագրում ընդգրկված են մի քանի նոր շեշտադրումներ. դրանք են՝

- 1-5 թվանշաններին ծանոթացում,
- Առանձին տարրերից կազմված թվի կազմություն. այսպես, 5-ը՝ 1,1,1,1,1 և նորից 1 է:

• Երկրաչափական պատկերների առանձնահատկություններ՝ 4 կողմ, 4 անկյուն, 4 գագաթ, որոնք, ըստ երեխաների ներուժի, հնարավորություն կտան առաջ անցնել պարտադիր գիտելիքների և կարողությունների զարգացման մակարդակից:

Ծրագրով սահմանված մանկավարժական գործընթացի հիմքում դրված ծրագրային խնդիրներն իրականացվում են ամբողջ տարվա ընթացքում:

Հնգօրյա աշխատող մանկապարտեզներն ուսումնական տարին սկսում են սեպտեմբերից, նախատեսված է տարեկան 36, շաբաթական մեկ պարապմունք, ավարտվում է մայիսի վերջին: Սեպտեմբեր ամսվա 1-ի շաբաթը կարելի դիտարկել նաև հարմարունակության փուլ:

**ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԾՐԱԳՐԻ ԹԵՄԱՏԻԿ ԲԱՇԽՈՒՄՆ
ԸՍՏ ՀԱԲԱԹՆԵՐԻ
I ԵՌԱՄՍՅԱԿ
ՍԵՊՏԵՄԲԵՐ**

Պարապմունքի նպատակը 1-ին շաբաթ	Պարապմունքի նպատակը 2-րդ շաբաթ
<p>Նախապատրաստական շրջան-հարմարման փուլ Երեխաներին նախապատրաստել տարրական մաթեմատիկական պատկերացումների քանակական, մեծության, հատկանիշների՝ ձևի, տարածական և ժամանակային ընկալման զարգացմանը:</p>	<p>Մշակել կարողություններ՝ Համեմատելու առարկաների 2 անհավասար խմբեր: Արդյունքը նշել՝ «շատ են», «քիչ են», «հավասար քանակի են», «այնքան են, որքան» արտահայտություններով: Զույգերով համեմատել նույն չափեր ունեցող 2 առարկաները. մեծությամբ հավասար են, օրինակ՝ մեծությամբ հավասար 2 խրնձորներ:</p>
3-րդ շաբաթ	4-րդ շաբաթ
<p>Սովորեցնել՝ համեմատել՝ գույներով տարբեր առարկաների 2 խմբերի վերադրմամբ, առդրմամբ: Քանակական հարաբերությունների արդյունքը նշել՝ «շատ են», «քիչ է», «հավասար են» քանակով: Խորացնել «Որքա՞ն է» հարցի իմաստը: Ամրապնդել օրվա հակադիր հատվածները՝ ցերեկ-գիշեր:</p>	<p>Սովորեցնել՝ Տարբերակել առարկաների խմբերն ըստ 2 գույնի (քիչ կարմիր և շատ դեղին ավսեներ), Տարբերել, անվանել և օգտագործել երկրաչափական պատկերները (շրջան, քառակուսի, եռանկյուն), Անվանել իր մարմնի մասերը(աջ, ձախ ձեռքեր, ոտքեր) և որոշել տարածական ուղղությունը (ձախ, աջ):</p>

ՀՈԿՏԵՄԲԵՐ	
Պարապմունքի նպատակը 1-ին շաբաթ	Պարապմունքի նպատակը 2-րդ շաբաթ
<p>Սովորեցնել` 1 առարկայի քանակը համապատասխանեցնել թվանշանին. մեկ տիկնիկ` մեկ թվանշանը: Տարբերել և անվանել տարբեր մեծության երկրաչափական պատկերները:</p> <ul style="list-style-type: none"> • Ամրապնդել օրվա հատվածների` առավոտ-երեկո հասկացությունները: Ջույգեր կազմելով` համեմատել 2 խմբի առարկաների անհավասար քանակը, վերականգնել քանակական հավասարությունը` ավելացնելով 1 առարկա. արդյունքում նշել` չատ են, քիչ են, քանակով հավասար են: 	<p>Սովորեցնել` Տարբերել և անվանել գունդը և խորանարդը: Ջույգեր կազմելով` համեմատել 2 խմբի առարկաների անհավասար քանակը, վերականգնել քանակական հավասարությունը` 1 առարկա ավելացնելով, արդյունքում նշել` չատ են, քիչ են, քանակով նույնն են` դեղծերը այնքան են, որքան ափսեները: Ամրապնդել սեփական մարմնի մասերի տարբերակումը և, իրենից ելնելով, առարկաների տարածական ուղղության որոշումը: Նշելով` աջ, ձախ, աջ կողմում, ձախ կողմում բառերով:</p>
3-րդ շաբաթ	4-րդ շաբաթ
<p>Սովորեցնել` Համեմատել հավասար և տարբեր երկարություն ունեցող 2 առարկաներ, երկար, կարճ, երկարությամբ հավասար: Երկրաչափական պատկերները խմբավորել ըստ տարբեր հատկանիշների` <i>գլորվող, չգլորվող:</i> Ամրապնդել օրվա 4 հատվածների հաջորդականության վերաբերյալ հասկացությունները: Ծանոթացնել «օր» հասկացությանը:</p>	<p>Սովորեցնել` Կատարելով համեմատություններ` առարկաների քանակը համապատասխանեցնել թվանշաններին: Շրջապատում գտնել շրջանաձև, քառակուսի առարկաներ, նշել նմանություններն ու տարբերությունները:</p>

ՆՈՅՏԱՐԵՐ

<p align="center">1-ին շաբաթ Պարապմունքի նպատակը</p>	<p align="center">2-րդ շաբաթ Պարապմունքի նպատակը</p>
<p>Սովորեցնել՝ Երկու թվի ստացումը և երկու թվանշանի ուսուցում: Առարկաների խմբի համեմատում՝ համապատասխանեցնելով թվի քանակը թվանշանին: Հասկանալ ընդհանրացված թվի նշանակությունը՝ 1, 2. ընդամենը՝ 2 ավտոմեքենա: Տիրապետել նշված ուղղությամբ տեղաշարժվելու կարողությանը, փոխել շարժման ուղղությունը: Համակարգել օրվա հատվածների վերաբերյալ հասկացությունները, ձևավորել «օր» հասկացությունը: Ձևավորել ըստ ընդհանուր հատկանիշի ընտրելու և խմբավորելու կարողություն. բոլոր մեծ տիկնիկները, բոլոր կարմիր ծաղիկները:</p>	<p>Սովորեցնել՝ Ուղիղ և հետընթաց հաշիվ՝ 2-ի սահմանում: Թիվն անվանել հերթականությամբ, վերջին թիվը վերագրել առարկաների անվանը. 1,2, ընդամենը՝ 2 դուլլ: Համեմատել առարկաների մեծության երկու հատկանիշները՝ երկարություն և լայնություն. կարմիր վզպատը լայն է և երկար է, կապույտը՝ նեղ է ու կարճ: Ամրապնդել տարածական ուղղությունները՝ ելնելով իրենից. վերևում, ներքևում, առջևում, հետևում, աջ կողմում, ձախ կողմում:</p>
<p>3-րդ շաբաթ Սովորեցնել՝ Հրահանգի համաձայն՝ շրջապատում առարկաների նշված քանակական խմբերի որոնում: Ձույգ հասկացությունը: Արդյունքում նշել երկուական արտահայտությունը: Ծանոթացնել ուղղանկյուն երկրաչափական պատկերին: Երկրաչափական պատկերների միջից կարողանալ գտնել ուղղանկյունը:</p>	<p>4-րդ շաբաթ Սովորեցնել՝ Հաշվելով, ըստ մոուշի և ասված թվի, առանձնացնել պահանջված քանակի առարկաներ, պահպանելով հաշվի կանոնը՝ առարկաները հաշվել ձախից աջ, հասկանալ՝ «որքա՞ն է» հարցի իմաստը: Տիրապետել նշված ուղղության տեղաշարժվելու կարողությունը փոխել շարժման ուղղությունը: Տարբերել միմյանցից տարբեր և հավասար բարձրության զույգ առարկաներ: Ամրապնդել թվի անկախության մասին պատկերացումները: Թվանշանին համապատասխան քանակի առարկաներ վերագրելու կարողությունը: Գնդի և խորանարդի համեմատման կարողությունը:</p>

**II ԵՌԱՄՍՅԱԿ
ԴԵԿՏԵՄԲԵՐ**

<p align="center">Պարապմունքի նպատակը 1-ին շաբաթ</p>	<p align="center">Պարապմունքի նպատակը 2-րդ շաբաթ</p>
<p>Սովորեցնել՝ Ըստ նշված թվանշանի գտնել առարկաների խմբեր, շարունակել երկու անհավասարաթիվ խմբերի հավասարեցումը հաշվելու միջոցով: Արդյունքում օգտագործել երկուսը շատ է մեկից, մեկը քիչ է երկուսից, երկուսն էլ հավասար է երկուսի: Երկու առարկաների համեմատումը ըստ բարձրության՝ բարձր սեղան, ցածր աթոռակ: Աջ, ձախ, վերև, ներքև և տակ վրա տարածական ուղղության որոշումը՝ ըստ հրահանգի:</p>	<p>Սովորեցնել՝ Մեկական միավորներից թվի կազմությունը. 2-ը 1 և 1 է: Ձևավորել Երեկ-այսօր պատկերացումները: Յաշվի հիմքի վրա հաստատել առարկաների խմբերի քանակական հարաբերությունը: Թիվն անվանել հերթականությամբ, վերջին թիվը վերագրել հաշված առարկայի անվանը. 1, 2, ընդամենը՝ երկու նապաստակ: Երկրաչափական պատկերների համեմատում՝ ըստ տարբեր հատկանիշների՝ գունդ, ձև:</p>
<p align="center">3-րդ շաբաթ</p>	<p align="center">4-րդ շաբաթ</p>
<p>Սովորեցնել՝ Նմուշի համաձայն առարկաները դասավորել աճման և նվազման կարգով՝ օգտագործելով՝ «մեծ», «փոքր», «ավելի փոքր», «փոքր», «մեծ», «ավելի մեծ» արտահայտությունները: Աչքաչափով որոշել առարկաների չափը, հասկանալ հատկանիշի հարաբերականությունը՝ յուրաքանչյուր առարկա մեծ է, քան նախորդը և հակառակը: Ամրապնդել՝ թվի անկախ լինելը առարկայի գույնից և ձևից. 2 կապույտ ավտոմեքենա և 2 դեղին ավտոմեքենա, 2 շրջան և 2 եռանկյունի: «Օր» հասկացությունը համապատասխանեցնել օրակարգային պահերին:</p>	<p>Սովորեցնել՝ Թվանշանները դասավորել աճման և նվազման կարգով՝ 1,2,2,1: Տարբեր քանակային խմբերից ընտրել 20-ական առարկաներ: Անվանել և ցույց տալ քառակուսու և ուղղանկյան բնորոշ հատկանիշները շոշափման օգնությամբ՝ 4 կողմ, 4 >, 4 գագաթ: Ամրապնդել՝ աջ/ձախ/ ձեռքով որևէ գործողություն կատարելու, ձախից աջ շարժվելու կարողությունը: Տարբերել «ցերեկ և գիշեր» հասկացությունները՝ կապելով դրանք այդ ժամին կատարվող գործողությունների հետ:</p>

ՀՈՒՆՎԱՐ

Պարապմունքի նպատակը 1-ին շաբաթ	Պարապմունքի նպատակը 2-րդ շաբաթ
<p>Սովորեցնել՝ 3 թվի ստացում և 3 թվանշանի ուսուցում: Առարկաների խմբերի համեմատում: Առարկաների մեծ քանակությունից կազմել 1, 2, 3 խմբեր, արտահայտելով համապատասխան թվանշաններով: Առարկաները խմբավորել ըստ ձևի, գույնի, մեծության 3-ի սահմանում: Արդյունքում՝ նշել 3-ական արտահայտությունը: Ամրապնդել՝ Փայտիկների դասավորմամբ երկրաչափական պատկերներ ստանալու կարողությունը: Օրվա հատվածների հաջորդականությունը տարբերելու կարողությունը:</p>	<p>Սովորեցնել՝ Ուղիղ և ետընթաց առարկայական հաշիվ 3-ի սահմանում: Տարբեր զգայարաններով՝ լսողությամբ, շարժմամբ, ընկալվող քանակը արտահայտել համապատասխան թվանշանով: Հաշիվը կիրառել առօրյա կյանքում: Ամրապնդել թվանշանները աճման և նվազման կարգով դասավորելու կարողությունը: Ստացած մաթեմատիկական հմտությունները կիրառել խաղ-վարժությունների և հանձնարարությունների կատարման գործընթացում:</p>

3-րդ շաբաթ	3-րդ շաբաթ
<p>Սովորեցնել՝ Ծանոթացնել ուղղանկյան հետ, բնութագրել պատկերը: 3-ական առարկաների առանձնացումը թղթի տարբեր կողմերում վերևի աջ ձախ կողմերում, մեջտեղում.... Չափով տարբերել 3 առարկաների համեմատման կարողությունը: Արդյունքը նշել՝ «երկար, կարճ, ավելի կարճ, երկար ավելի երկար բառակապակցություններով</p>	<p>Սովորեցնել՝ Ծանոթացնել ուղղանկյան հետ, բնութագրել պատկերը: 3-ական առարկաների առանձնացումը թղթի տարբեր կողմերում վերևի աջ ձախ կողմերում, մեջտեղում.... Չափով տարբերել 3 առարկաների համեմատման կարողությունը: Արդյունքը նշել՝ «երկար, կարճ, ավելի կարճ, երկար ավելի երկար բառակապակցություններով»</p>

ՓԵՏՐՎԱՐ	
1-ին շաբաթ Պարապմունքի նպատակը	2-րդ շաբաթ Պարապմունքի նպատակը
<p>Սովորեցնել` 4 թվի ստացումը և 4 թվանշանը: Խմբավորել առարկաները: Օգտվել ընդհանրացնող բառերից` խաղալիք, կահույք, միրգ: Խմբում գտնել ավելորդը: Շարժվել առաջարկված ուղղությամբ` առաջ, աջ, ձախ:</p>	<p>Սովորեցնել` Մեկական միավորներից 4 թվի կազմությունը: Ուղիղ և հետընթաց հաշիվ` 4-ի սահմանում, 3 և 4 թվերի համեմատում. 4-ը շատ է 3-ից` 1-ով: Վերականգնել խմբերով հաշված առարկաների անունները` 1, 2, 3, 4` ընդամենը 4 եղևնի: Ամրապնդել շաբաթվա օրերի հերթականության վերաբերյալ հասկացությունները:</p>
3-րդ շաբաթ	4-րդ շաբաթ
<p>Սովորեցնել` 4 թվի նախորդող և հաջորդող թվերը, հարևան թվերը: Համեմատել բարձրությամբ 3 առարկաներ: Համեմատության արդյունքը նշել` «բարձր», «ցածր», «ավելի ցածր» բառակապակցություններով: Ամրապնդել` Շոշափելով և շարժումներով հաշիվը 4-ի սահմանում:</p>	<p>Սովորեցնել` Անվանել բաց թողած թվանշանը: Ըստ տրված հատկանիշի` առարկաները դասավորել աճման և նվազման կարգով, նշելով առարկաների չափերի միջև առկա հարաբերական բնույթը` «մեծ է», «երկար է», «բարձր է իր նախորդից», «փոքր է` հաջորդից» «կարճ է», «ցածր է»: «Այսօր», «վաղը», «երեկ» ժամանակային հասկացությունները:</p>
III ԵՌԱՄՍՅԱԿ ՄԱՐՏ	
1-ին շաբաթ Պարապմունքի նպատակը	2-րդ շաբաթ Պարապմունքի նպատակը
<p>Սովորեցնել` 5 թվի ստացում, 5 թվանշանի ուսուցում: Համապատասխան քանակի առանձնացումը 5 թվից: Մարմնի մասերի համաձայնեցումը 5 թվի հետ: Ամրապնդել` Շրջանը և քառակուսին աճման և նվազման կարգով դասավորելու կարողությունը:</p>	<p>Սովորեցնել` Ուղիղ հետընթաց հաշիվ 5-ի սահմանում: 5 թվի կազմության ուսուցում` առանձին տարրերից: Համեմատել լայնությամբ 2-3 առարկա: Արդյունքը նշել` «լայն», «նեղ», «ավելի նեղ», «ավելի լայն» բառակապակցությունները: Տարածական ուղղություններ գտնել մանկապարտեզի բակում:</p>

3-րդ շաբաթ	4-րդ շաբաթ
<p>Սովորեցնել` Առարկաների խմբերի համեմատում` 1-2, 2-3, 3-4, 4-5, 5-5...:</p> <p>Շրջապատում գտնել և խմբավորել ձև ունեցող առարկաներ:</p> <p>Ամրապնդել` Գնդի և խորանարդի մասին ունեցած պատկերացումները: Գտնել նմանություններն ու տարբերությունները: Հրահանգի համաձայն կողմնորոշվել խմբասենյակում:</p>	<p>Ամրապնդել` Խառը թվերի քանակական հարաբերությունները վերափոխելու կարողությունը` անհավասար խմբին 1 ավելացնելով դարձնել հավասարաթիվ 5-ի սահմանում, երկրաչափական պատկերների առանձնահատկությունները: «Երեկ», «այսօր» հասկացությունները:</p>
ԱՊՐԻԼ	
1-ին շաբաթ Պարապմունքի նպատակը	2-րդ շաբաթ Պարապմունքի նպատակը
<p>Ամրապնդել` Երեխայի պատկերացումները 1-5 թվերի և թվանշանների վերաբերյալ: Հավասար և անհավասար խմբերի համեմատում: Գնդի և խորանարդի նմանությունն ու տարբերությունը առանձնացնելու կարողությունը: Շրջապատում ճանաչել և բառերով նշել երկրաչափական պատկերներին նման առարկաները:</p>	<p>Ամրապնդել` 5 թվի միավոր կողմը: Առարկաները` առաջարկված մեծության հատկանիշի խմբավորելու կարողությունը: Առարկաներն ըստ լայնության և բարձրության աճման և նվազման կարգով դասավորելու կարողությունը: Շրջապատում, նկարներում, գրքերում գտնել առարկաների, խաղալիքների, ձկնիկների, կենդանիների, մրգերի, ծաղիկների խմբեր:</p>
3-րդ շաբաթ	4-րդ շաբաթ
<p>Ամրապնդել` 5 թվի սահմանում նախորդ և հաջորդ թվերի մասին ունեցած պատկերացումները: 5 թիվն ու թվանշանը տարբեր զգայարանների օգնությամբ: Առարկաներն ըստ մեծության, ըստ 2 հատկանիշի` լայնություն, երկարություն համեմատելու կարողությունը:</p>	<p>Ամրապնդել` Թվի անկախ լինելը` առարկաների տեսակից, ձևից, մեծությունից, տարածության մեջ գրաված դիրքից, գրաված տարածությունից: Երեխաների կողմնորոշման կարողությունները` օրվա հատվածների, շաբաթվա օրերի, «երեկ», «այսօր», «վաղը» ժամանակային հասկացությունների վերաբերյալ: Երեխաների գործունեության տարբեր ձևերում չափերի և երկրաչափական ձևերի վերաբերյալ պատկերացումները:</p>

ՄԱՅԻՍ

Նյութի կրկնություն: Երեխաների ուշադրության, հիշողության և երևակայության զարգացմանը նպաստող խաղերի անցկացում, զվարճալի ոտանավորների, գործնական բնույթ կրող վարժությունների, հանելուկների և տրամաբանական խնդիրների գուշակում:

Տարեվերջին երեխաները պետք է կարողանան`

- Կատարել առարկայական, ուղիղ և հետընթաց, տարբեր զգայարաններով համրանք` 5-ի սահմաններում: Գիշտ պատասխանել` **քանի՞**, **որքա՞ն** հարցերին:
- Հասկանալ թվի անկախությունը առարկաների ձևից, գույնից, տեսակից, մեծությունից, գրաված դիրքից և տարածությունից:
- ճանաչել 1-5 թվանշանները:
- Հասկանալ առանձին տարրերով մինչև 5 թվերի քանակական կազմությունը:
- Կարողանալ 1-5-ի սահմաններում տարբերել նախորդ և հաջորդ թվերը:
- Տարբերակել առարկաների մեծության հատկանիշները: Համեմատել և խմբավորել դրանք` ըստ երկարության, բարձրության և չափի:

Դասավորել առարկաները` ածման. նվազման կարգով:

- Կարողանալ աչքաչափով գտնել առարկաներ, որոնք մեծ են կամ փոքր նմուշից, ավել ուշ` առարկաներ, որոնք հավասար են նմուշին:
- Կարողանալ համեմատել տարբեր հատկանիշներով միևնույն տեսակի երկրաչափական պատկերները, որոշել կողմերի, գագաթների և անկյունների քանակը:
- Շրջապատում տեսնել երկրաչափական պատկերներին նման առարկաներ:
- Երկրաչափական պատկերները կարողանալ խմբավորել ըստ երեք հատկանիշների:
- Տարբերել տարածական ուղղությունները: Թվարկել աջ, ձախ, վերև, ներքև, տակ, վրա, ներս, դուրս բառերը:
- Կարողանալ շարժվել նշված ուղղությամբ, կողմնորոշվել թղթի և նկարների վրա:
- Դրսևորել ժամանակի հետ կապված պատկերացումների իմացություն (օրինակ, օրվա մասերի` «երեկ, այսօր, վաղը», շաբաթվա օրերի հասկացությունների վերաբերյալ):
- Մաթեմատիկական գիտելիքները կիրառել առօրյա կյանքում և խաղերում:
- Տարբերակել օրվա մասերը, շաբաթվա օրերը:
- Հասկանալ և օգտագործել ժամանակը բնութագրող` «այսօր», «երեկ», «վաղը» հասկացությունները:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ, ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

ՏԱՐԲԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՈՒՄ

ՔԱՆԱԿ ԵՎ ՀԱՇԻՎ

Ըստ ծրագրի՝ այս խմբում երեխաների մեջ զգայաշարժողական, դիտողական գործուն փուլից՝ «Տեսնում եմ-գործում եմ-ճանաչում եմ», անցում է կատարվում դեպի հետազոտական գործողություններ կատարելու՝ բառի օգնությամբ տեղեկատվության յուրացման փուլ. «Հասկանում եմ այն, ինչ լսում եմ»: Կրտսեր 2-րդ խմբում գործող «Կատարիր ինձ պես» հրահանգը փոխարինվում է «Ինքնուրույն կատարիր» հրահանգով: Ընկալման երկու միջոցներն էլ գործում են միաժամանակ ու նպաստում՝ «ինչու», «ինչպե՞ս», «ինչի՞ համար» հարցերի ակտիվացմանը: Գիտելիքները, ի տարբերություն նախորդ ծրագրերի, չեն տրվում պատրաստի վիճակով. ստեղծված պրոբլեմային իրադրություններում երեխաները հանդես են գալիս հետազոտողի դերում: Մասնակցում են գործընթացին ու գիտելիքը ձեռք բերում իրենց ինքնուրույն փորձի ընթացքում: Այդ կերպ բացահայտվում են առարկաների քանակական հարաբերություններն ու մեծության հատկանիշները: Տրվում են որոնումներ պահանջող հարցեր, որոնց միջոցով ուղղորդվում է նրանց գործունեությունը: Այս խմբում շարունակվում է մաթեմատիկական ընդունակությունների զարգացմանը նպաստող գործընթացը: Այն սկսվում է կրտսեր երկրորդ խմբի ծրագրային հինգ բաժինների վերաբերյալ խնդիրների կրկնությամբ: Պետք է շարունակել զարգացնել երեխաների դիտունակությունը, կամային հիշողությունը, տեսողական, պատկերային մտածողությունը, սովորեցնել տեսնել, ընկալել առարկաների հատկանիշները, քանակական հարաբերությունները, հարթապատկեր և ծավալային (գունդ, խորանարդ) ձևերը համեմատելու և խմբավորելու կարողությունը: Շարունակել դաստիարակի հրահանգներով ղեկավարվելու ունակության զարգացումը:

Աշխատանքի կազմակերպման անհրաժեշտ պայման է՝ բարյացակամ մթնոլորտի ստեղծումը; Դա ենթադրում է յուրաքանչյուր երեխայի համար հաջողության հասնելու իրավիճակ՝ հավատալով նրանց ուժերին: Դա անհրաժեշտ է ոչ միայն ինացական զարգացման, այլև հուզական բարեկեցության ապահովման, հոգեֆիզիկական վիճակի բարելավման համար:

Այս խմբի առաջնային խնդիրն է համարվում 1-5 թվերի վերաբերյալ պատկերացումների ձևավորումը և «որքա՞ն է» հարցի յուրացումը: Դրանք ծրագրի անկյունաքարերն են: Կարևոր է երեխաներին սովորեցնել՝ առարկաների քանակական կողմն առանձնացնել դրա հատկանիշներից. նրանք պետք է իմանան, որ թիվը տվյալ խմբի ընդհանուր քանակն է: Թվի ուսուցման սկզբնական փուլում պարտադիր պայման է, որ գործողությունները կատարվեն սյուժետային խաղալիքների (տիկնիկ, մկնիկ...) օգնությամբ, այնուհետև դրանք փոխարինվեն քարտերով, շրջաններով, քառակուսիներով, հատկապես փայտիկներով: Ցանկալի է, որ հաշվելիս երեխաներին տրվի առարկաներին ձեռք տալու, շարժելու հնարավորություն: Հաշվելիս նրանք պետք է յուրաքանչյուր առարկա ցույց տան ցուցամատով, ապա բարձրաձայն խոսքը (արդյունքը) փոխարինեն ձեռքի ընդհանրացնող շարժումով: Հարկավոր է հետևել, որ երեխաները պահպանեն **հաշվելու կանոնները**. հաշվեն

աջ ձեռքով՝ ձախից աջ, բաց չթողնեն որևէ առարկա, միևնույն առարկան կրկնակի չհաշվեն (մինչև առարկան չղնեն խմբի կողքին, օդում չանվանեն թիվը), վերջնական թիվը հարաբերակցեն համրած առարկաների ողջ խմբի անվան հետ՝ 1, 2, 3, 4, 5, ընդամենը՝ 5 ոգնի:

Յուրաքանչյուր թվի ուսուցումը երեխային պետք է նախապատրաստի՝ հասկանալու բնական թվերի շարքի հիմնական **սկզբունքները**.

- յուրաքանչյուր թիվ ունի որոշակի քանակ,
- յուրաքանչյուր թիվ թվաշարքում ունի իր ստույգ տեղը,
- յուրաքանչյուր թիվ ունի 1 հաջորդ թիվ, որը 1 միավորով մեծ է նախորդից,
- յուրաքանչյուր թիվ 1 միավորով փոքր է հաջորդից:

Թվի ուսուցումը կատարվում է երկու փուլով:

Առաջին փուլում համեմատվում են առարկաների երկու խմբերը, և որոշվում են թվերի միջև գոյություն ունեցող քանակական կապերը ($2 > 1$, $1 < 2$ և այլն): Պարզ է դառնում, որ առարկաների ցանկացած խումբ կարող է լինել մյուսի նկատմամբ մեծ (փոքր) կամ քանակով հավասար (4 եղևնի, 3 սունկ, 4 ափսե, 4 գավաթ): Առարկաների քանակը համեմատելու նպատակով օգտագործվում են տարբեր իրավիճակներ՝ ցույց տալով թվի անկախ լինելը առարկաների մեծությունից, ձևից, գույնից, գրաված տարածությունից. Օրինակ՝ 2 փիղ, 2 մկնիկ, 2-ն էլ 2 հատ են, բայց տարբեր չափի: Մի խմբի առարկաները կարող են դասավորված լինել իրար մոտ-մոտ կամ իրարից հեռու-հեռու. դրանից քանակը չի փոխվի: Երեխաների ուշադրությունը հրավիրեք այն իրողությանը, որ առանց գույգի մնացած առարկաները ոչ միայն ցույց են տալիս, թե ո՞րն է տվյալ թվից մեծ, այլ ո՞ր թիվն է մեծ ու որքանով: Տարաբնույթ վարժությունների միջոցով ձևակերպեք այնպիսի հարաբերություններ/ «շատ է, քան...», «շատ են, ...այսքանով», «քիչ է, քան...», «քիչ է, ...այսքանով», «նույնքան է» և այլն/, ինչպիսիք՝ կապված են բնական թվերի հասկացության աստիճանական ձևավորման և հաշվումների հետ:

Երկրորդ փուլում երեխաներն ըմբռնում են, թե ինչպես են ձևավորվում հաջորդ (նախորդ) թվերը:

Առաջարկեք երեխային վերցնել 2 սկյուռիկ, կողքին ավելացնել ևս մեկը, հաշվել 1, 2, 3 ընդամենը՝ 3 սկյուռիկ: Երեխաներին հանգեցրեք այն համոզման, որ յուրաքանչյուր թիվ ստացվում է այս եղանակով, և **ամեն մի թիվ մեծ է մեկից, փոքր է մյուսից** ($3 > 2$), ($2 < 3$): Նրանք պետք է հասկանան, որ 2 խմբերի միջև գոյություն ունեցող քանակական հարաբերությունները կարող են լինել 1 առարկայի սահմանում: Կից թվերի ստացումը նպաստում է ուղիղ և հետընթաց համրանքի յուրացմանը: Պետք չէ արագ անցնել հաջորդ թվին, քանի դեռ նախորդը լավ չեն յուրացրել: Յուրաքանչյուր թիվ յուրացնելուց հետո երեխան պետք է բնութագրի թիվը, օրինակ՝ 5 թիվն ի՞նչ հարևաններ ունի. որո՞նք են դրանք, քանի՞ միավոր ունի և այլն: Անհրաժեշտ է ամեն թվի հետ կապված անցկացնել մի քանի պարապմունք: Շատ կարևոր է, որ երեխաների գիտակցության մեջ յուրաքանչյուր թիվ զուգորդվի հետաքրքիր և վառ պատկերների ու կերպարների հետ:

1-5 թվերը հիշելու կարողությունը դեռ թվերի մասին լիարժեք իմացություն չէ. երեխան պետք է յուրացնի նաև թվի **քանակական կազմությունը**՝ ըստ առանձին տարրերի, օրինակ՝ 5-ը 1,1,1,1 և նորից 1 է: Թվի կազմությունը նպատակահարմար է տալ 2-3 տարբեր առարկաների (խաղալիքների), գույների օգնությամբ՝ շեշտելով նախ ընդհանուր քանակը՝ ընդամենը 4 խաղալիք, ապա տարբեր առարկաների

քանակը՝ միաժամանակ անվանելով և՛ առարկան, և՛ քանակը. 1 արջուկ, 1 տիկնիկ, 1 աղվես, 1 փիսիկ:

Թվին ծանոթացումը սերտորեն առնչվում է **թվանշանի** ծանոթացմանը, քանի որ երեխան իր առօրյա կյանքում մշտապես հանդիպում է թվանշանին՝ սկսած իր բնակարանի, տատիկի հեռախոսի, ավտոբուսի համարից: Ուստի պետք չէ երեխային արհեստականորեն հետ պահել դրանից: Հաշվի ձևավորման գործում թվանշանի իմանալը չի ազդում. հաշվում են առարկաները և ոչ թե թվանշանները, և դրանք օգտագործում են թվի գաղափարն ամրապնդելու համար: Թվանշանների ուսուցումը կատարվում է թվի խորացման ժամանակ: Դրանք չեն գրում, այլ ճանաչում և տարբերում են տպագիր ու ձեռագիր թվանշանները: Օրինակ՝ 1 թվանշանի ծանոթացման ժամանակ կարելի է ասել. «Իսկ դուք գիտե՞ք, որ յուրաքանչյուր թիվ ունի իր մշանը: Այսօր մենք կժամոթանանք 1 թվանշանի հետ»: Այդ տեսակետից նպատակահարմար է երեխաներին հանձնարարել, որ բերեն մեկական տարբեր խաղալիքներ, ցույց տալ 1 թվանշանով քարտը, որի վրա նկարված են քիթ, բերան, աչքեր, և ասել. «Ես 1 թվանշանն եմ, թվանշանների առաջնորդը»: Առարկաների քանակը կարելի է իմանալ ոչ միայն հաշվելով, այլև նայելով թվանշանին («Բեր 1 թվանշանին համապատասխան առարկաներ»): Հարցադրումով հնարավոր է պարզել, թե երեխաները որտեղ են հանդիպել 1 թվանշանին (ավտոմեքենաների, ժամացույցի վրա, խանութում և այլն): Կարելի է խնդրել երեխաներին անվանել առարկաներ, որոնք միայն 1 հատ են՝ արև, լուսին, մայրիկ, հայրիկ, քիթ.....: 2 թվի խորացման ժամանակ ցույց տալ 2 թվանշանը և տալ զույգի գաղափարը: Դա հնարավոր է ամրապնդել ինչպես առարկաների, այնպես էլ նկարների միջոցով. օրինակ՝ 2 ձեռք, 2 ոտք, 2 ականջ, 2 աչք, 2 փայտիկ, 2 խաղալիք: Այսպես՝ ցույց ենք տալիս 3 թվանշանը և ասում. «2 թվանշանի հաջորդն են»: 3 թվանշանը ցույց ենք տալիս այն ժամանակ, երբ կա 3 առարկա՝ 3 մատ, 3 խաղալիք, 3 փայտիկ և այլն: Սովորեցրեք շատ առարկաներից վերցնել պահանջվող քանակը, համոզեք, որ առարկաների քանակը որոշեն միայն համրանքից հետո:

Նմանօրինակ վարժությունների օգնությամբ ծանոթացնում ենք նաև 4 և 5 թվանշաններին՝ ամեն անգամ հիշելով 4 և 5 թվանշանները բնութագրող օրինակներ.

- Ի՞նչերն են միշտ 4 հատ (շան թաթերը, սեղանի ոտքերը, ավտոմեքենայի անիվները և այլն):

- Ո՞րն է 4-ի նախորդ (հաջորդ) թվանշանը:

- Ո՞ր թիվն է 3-ի և 5-ի միջև:

- Մեկ ձեռքը քանի՞ մատ ունի, և ի՞նչ թվանշանով ցույց կտաս այն: Թվանշանները փակցրեք պատին: Եթե երեխան սիրում է կտրատել, ապա նրան հին օրացույց տվեք: Ամեն տեղ թվանշաններ տեսնելով, նա ավելի շուտ կմտապահի սովորածը:

Թիվը և թվանշանը ամրապնդվում են ոչ միայն համագործակցված, այլև կոնկրետ զգայարանների միջոցով: Լսողությամբ հաշվի ժամանակ առաջանում են կապեր հնչյունների միջև, և որքան թիվը մեծ է, այնքան շատ են սխալվում: Հարվածների միջև ընդմիջումները պետք է լինեն հավասար, ռիթմիկ: Լսողությամբ հաշիվը տրվում է երկու փուլով.

1-ին փուլ: լսողական վարժությունը կատարվում է համալիր ձևով. զգայարանների օգնությամբ երեխան տեսնում է ձեռքի շարժումը և միաժամանակ լսում է խոսքը: **2-րդ փուլում** ընկալումը կատարվում է միայն լսողությամբ: Երկուսի դեպքում էլ հարկավոր է հանձնարարել նմանօրինակ վարժություններ (հարվածել

թմբուկին, սեղանին) և հաշվել տալ երեխաներին: Նրանք, լսած հնչյուններին համապատասխան, մտքում հաշվում են ինչպես հարվածները, այնպես էլ հարվածների քանակին համապատասխանող առանձնացված առարկաների քանակը: Լսողությամբ հաշիվը ճշտվում և ամրապնդվում է մեկ այլ զգայարանի միջոցով, կամ երեխան լսած հարվածների քանակին համապատասխան շարժումներ է անում՝ ծափ է տալիս, ցատկոտում է, գնդակը վերև կամ ներքև է նետում և այլն:

Շարժումներով հաշիվ : Հաշվի այս տեսակը ևս կազմակերպվում է մյուս զգայարանների հետ համագործակցված: Երեխաները հաշվում են դաստիարակի կամ երեխաների կատարած շարժումները: Ըստ նմուշի և ասված թվի վերարտադրում են շարժման քանակը: Որպեսզի երեխաներն ակտիվորեն ներգրավվեն աշխատանքի մեջ, անհրաժեշտ է առաջադրանքներին հաղորդել խաղի բնույթ. «Ծափ տու՛ր 5 անգամ կամ լսած հարվածներից 1-ով պակաս թռչկոտի՛ր»: Կարևոր է, որ երեխաների խոսքում արտացոլվեն շարժումների, ձայների, շոշափված առարկաների քանակի միջև գոյություն ունեցող կապերը:

ՄԻՆԶԹՎԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ. ՄԵԾՈՒԹՅՈՒՆ

Միջին խմբում ճշտվում և ամրապնդվում են՝

- Ըստ որևէ հատկանիշի՝ երկու առարկաների չափման հարաբերությունների (երկարություն, բարձրություն, լայնություն, մեծություն, չափ) մասին ունեցած պատկերացումները. «Գտի՛ր նույնից, բայց դեղին», «Գտի՛ր նույնից, բայց երկար», «Գտի՛ր նույնից, բայց բարձր»:

- Առարկաների մեծության որևէ հատկանիշին վերաբերող խմբավորման աշխատանքները: Օրինակ՝ երեխաներն առարկաները խմբավորում են.

- ըստ չափի (մի խմբում մեծ, մյուսում՝ փոքր գնդակներ),

- ըստ ձևի, գույնի (այս տուփում եռանկյունները, մյուսում՝ քառակուսիները, աջում՝ կարմիր, ձախում՝ դեղին կոճակները):

- Երեխաները սովորում են՝ աչքաչափով գտնել առարկաներ, որոնք մեծ կամ փոքր են (երկար և կարճ են, բարձր և ցածր են...) նմուշից, ավելի ուշ՝ առարկաներ, որոնք հավասար են նմուշին:

- Սովորում են ըստ որևէ հատկանիշի համեմատել նույն և տարբեր չափեր ունեցող 2, ապա 3-4 առարկաներ՝ դասավորելով դրանք աճման և նվազման կարգով:

Առաջադրանքների կատարումն իրականացվում է **խաղ-ուսուցում-խաղ** սկզբունքով: Հանձնարարությունները պետք է լինեն այնքան, որքան երեխան կարող է պահել իր հիշողության մեջ: Ըստ մեծության հատկանիշների՝ առարկաների համեմատման և շարքով դասավորելու առաջադրանքներն ընդգրկում են պարապմունքի հիմնական մասը: Այնուհետև պարապմունքի երկրորդ մասում՝ ծրագրի մյուս բաժինների ուսումնասիրման ժամանակ զուգահեռաբար՝ այդ հասկացությունների ամրապնդման նպատակով, հատկացվում է ավելի քիչ ժամաքանակ:

ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆ: Միջին խմբում կարևոր է՝ գործնականորեն, զույգեր կազմելով, բացատրել տարբեր և միանման 2 առարկաները երկարությամբ համեմատելու իմաստը: Դրա համար կարելի է օգտագործել բազմաբովանդակ խաղային իրավիճակներ՝ ընտրել տիկնիկի համար հագուստ, մահճակալ, շինանյութ՝ երկար և կարճ կամուրջներ կառուցելու համար, աղջիկների համար երկար և կարճ մազեր: Հա-

մենատուն են սկզբից 2, ապա՝ 3-4 առարկա՝ դասավորելով նախ աճման, ապա նվազման կարգով՝ սովորեցնելով հասկանալ առարկայի երկարության հարաբերականությունը: Օրինակ՝ կարելի է երեխաներին բաժանել տարբեր գույնի և երկարության երկու ժապավեն: Հարկավոր է նախ պարզել ժապավենների երկարու կարճ լինելը (ծախ կողմից հավասարեցնելով) և որոշել յուրաքանչյուր ժապավենի երկարությունը: Երեխան հասկանում է, որ շարքի յուրաքանչյուր առարկա ավելի կարճ է, քան նախորդը, և ավելի երկար՝ քան հաջորդը: Օրինակ՝ կարմիր ժապավենը ավելի կարճ է կապույտից, բայց ավելի երկար է դեղինից: Երեխան աստիճանաբար յուրացնում է, որ կան երկար, կարճ և միջին երկարության առարկաներ, որ կարճ առարկան կարող է լինել մի դեպքում երկար, եթե համեմատվում է իրենից կարճ առարկայի հետ և հակառակը. օրինակ՝ կարելի է սեղանի երկու կողմում դնել գույնով և երկարությամբ տարբեր քանոններ, այնուհետև առաջարկել երեխային՝ սեղանի աջ կողմից վերցնել դեղին քանոնը, ապա ձախ կողմի քանոններից **աչքաչափով** ընտրել երկարությամբ դրան հավասար քանոն և, իրար վրա դնելով, համոզվել դրանում: Կարելի է նաև խնդրել երեխային՝ երեք տարբեր երկարության մատիտները դասավորել երկարից-կարճ, ապա՝ կարճից-երկար հաջորդականությամբ: Հարցերի օգնությամբ պարզել մատիտների նոր դասավորվածությունը. ո՞ր մատիտն է աջից ամենաերկարը, ո՞ր մատիտն է ձախից ամենակարճը, ի՞նչ գույն ունի ամենաերկար (կարճ) մատիտը, միջին երկարության մատիտը: Առարկայի երկարության մասին պատկերացումները պետք է ամրապնդել երեխայի գործունեության տարբեր ձևերում, օրինակ՝ տալ առաջադրանքներ, որտեղ երեխան կնկարի հավասար և անհավասար երկարության մրգեր և բանջարեղեն (վարունգ, գազար, բանան):

Մատչելի և ուղղորդող առաջադրանքները, որոնք երեխաներին մղում են կոնկրետ գործողությունների, երեխան համեմատում է, վերլուծում, եզրակացության է հանգում սեփական կենսափորձի շնորհիվ: Դա մտածել սովորեցնելու կարևորագույն տարրերից է:

ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ: Բազմապիսի վարժությունների օգնությամբ ամրապնդվում են բարձրությամբ միմյանցից զգալի տարբեր և հավասար առարկաներ: Երեխաները պետք է յուրաքանչյուր առարկա զույգ-զույգ համեմատեն այն առարկաների հետ, որոնք անմիջականորեն գտնվում են նրա առջևում և ետևում (կարմիր աշտարակն ավելի բարձր է կապույտից): Երեխաներին բերել այն համոզման, որ առարկաների չափերի մասին տված գնահատականը կրում է հարաբերական բնույթ: Առանձնահատուկ տեղ է տրվում առարկաներն ըստ բարձրության **խմբավորման** աշխատանքներին: Երեխաները սովորում են, թե ինչպիսի հատկանիշների հիման վրա կարելի է խմբավորել առարկաները. օրինակ՝ մի խմբում երեխաները դասավորում են բարձրությամբ հավասար, մյուս խմբում՝ տարբեր բարձրությամբ առարկաները:

Բարդացնելով առաջադրանքները՝ երեխաներն արդեն պրակտիկ գործողությունների օգնությամբ համեմատում են 3-4 առարկաների համեմատական բարձրությունները: Սովորում են աճման նվազման կարգով դասավորել առարկաների հերթական շարքը՝ նշելով շարքի ուղղությունը (աջից-ձախ, ձախից-աջ): Օրինակ՝ ամենացածր- բարձր- ամենաբարձր, ամենաբարձր- ցածր- ամենացածր: Սկզբում, ըստ նմուշի, առդրման միջոցով դասավորում են աճման, ապա՝ նվազման կարգով: Դասավորվում են երեք առարկաներ, ապա յուրաքանչյուր առարկա զույգ-զույգ համեմատվում է այն առարկայի հետ, որոնք գտնվում են նրա առջևում և հետևում:

Վարժությունների ժամանակ անհրաժեշտ է օգտագործել ձեռքը՝ այն սահեցնելով չափվող առարկայի բարձրությամբ՝ ներքևից մինչև վերևի եզրը: Խնդրեք, որ երեխաները շարք կազմեն հասակի աճման և նվազման կարգով, հասկանան և տեղին օգտագործեն ձախից աջ բառերը:

Հարկավոր է երեխաներին աստիճանաբար հանգեցնել այն համոզման, որ արկաների չափերի մասին տվյալ պահի գնահատականը (ցածրն է, ամենաբարձրն է) հարաբերական է: Եթե մեկ առարկա մի դեպքում բարձր է, մյուս դեպքում կարող է ցածր լինել: Դժվար է, բայց պետք է փորձել: Օրինակ՝ համեմատեք երեք երեխաների հասակը՝ ասելով. «Աշտը բարձր է Դավիթից, ուրեմն Դավիթը ցածր է Աշտից, բայց բարձր է Աննայից»: Երեխաներին ուղղված հարցերը, հրահանգավորված առաջադրանքների մատուցումը երեխաներին կմղեն հաջորդաբար իրականացվող գործողությունների: Այդ ընթացքում էլ երեխան կկատարի ինքնուրույն վերլուծություն և վերջնական եզրահանգում: Սաթեմատիկայի պարապմունքների ժամանակ ստացած գիտելիքներն ու հմտությունները սխտեմատիկաբար ամրապնդվում են երեխաների գործունեության տարբեր ձևերում և դիդակտիկ խաղերում: Սենյակներով կազմակերպեք «Էքսկուրսիա»՝ փնտրելու իրենից բարձր և ցածր առարկաներ: Աստիճանները բարձրանալիս երեխաները խմբով ասում են՝ «բարձր-բարձր», իսկ իջնելիս՝ «ցածր-ցածր-ցածր»: Ջբոսանքի ժամանակ երեխային խնդրեք ցույց տալ ամենաբարձր, ամենացածր, բարձրությամբ հավասար շենքեր, ծառեր, թփեր, էլեկտրական սյուներ, վերամբարձ կռունկներ: Խաղացեք՝ «Գուշակիր, թե ո՞վ է հասակով բարձր (ցածր)», «Դասավորիր հերթականությամբ», «Ի՞նչն է բարձր» և այլ խաղեր:

ԼԱՅՆՈՒԹՅՈՒՆ: Ամրակայել այն պատկերացումը, որ երկու առարկաները լայնությամբ համեմատելիս անհրաժեշտ է տեղադրել իրար վրա այնպես, որ համընկնեն նախ ներքևի, ապա ձախ եզրերը: Եթե ներքևի և վերևի եզրերը չեն համապատասխանում, կարելի է ասել, որ դրանցից մեկը լայն է, մյուսը՝ նեղ: Օրինակ՝ կապույտ ժապավենը լայն է, կարմիրը՝ նեղ: Եթե վերևի և ներքևի, ինչպես նաև ձախ եզրերը հավասար են, նրանք լայնությամբ հավասար են: Առաջարկել շրջապատում գտնել այնպիսի առարկաներ, որոնց մասին կարելի է ասել, որ դրանցից մեկը ավելի լայն է (նեղ է), միատեսակ են լայնությամբ: Օրինակ՝ սրբիչներ, քանոններ...: Խաղացեք «Հայելի» խաղը: Երեխաների հետ կազմել շրջան և առաջարկել կրկնօրինակել ցույց տված շարժումները: Աստիճանաբար կողմ տարածելով ձեռքերը՝ ասել. «Լայն է, լայն է, լայն է»: Պարզել՝ ո՞վ ավելի լայն բացեց թևերը, ով՝ ավելի նեղ: Առաջադրանքը փոխելով՝ ասել. «Նեղ է, նեղ է, նեղ է»: Երեխան ևս մտնեցնում է ձեռքերը: Երեխայի հետ համեմատել նախ երկու տարբեր լայնությամբ ժապավեններ, ապա ավելացնելով ևս մեկը, ասել. «Ե՛լ դասավորիր ամենալայնից ամենանեղը»: Դրա համար պետք է ընտրել ամենալայն ժապավենը և մյուսները դնել դրա վրա՝ լայնից նեղ հաջորդականությամբ: Հետևել, որ ըստ դասավորվածության ասի ժապավենի համեմատական լայնությունը (ամենալայն-նեղ-ավելի նեղ, ամենանեղ-լայն-ավելի լայն): Օգնել երեխային՝ կտրելու, նկարելու լայն և նեղ զուլակներ, գրքերում նկարները դիտելիս որոշել առարկաների լայնությունը, զբոսանքի ժամանակ իրար դիմաց երկու պարան դնելով անվանել այն՝ «գետակ»: Առաջարկել թռչել «գետակի» վրայով, ապա լայնացնելով «գետակը»՝ ասել. «Հիմա «գետակը» ավելի լայն է. «Եղի՛ր ուշադիր, որ չթրջվես»: Հարցնել, թե որ գետակի վրայից էր հեշտ ցատկել՝ լայն, թե՞ նեղ: Առաջադրանքներ տալիս հենվել ոչ թե

խոսքային, այլ պատկերային մտածողության վրա, նպաստել բնածին հարցասիրության զարգացմանը: Ամրապնդել իմացական փորձը գործունեության տարբեր ձևերում, առավելապես՝ դիդակտիկ խաղերում: Հանձնարարեք Լեգո կառուցողական խաղի միջից գտնել «երկար, կարճ», «լայն-մեղ» մասեր:

ՄԵԾՈՒԹՅՈՒՆ (ՉԱՓ): 4 - 5 տարեկան երեխաների բազմաբնույթ գործունեության մեջ մեծ կարևորություն է տրվում նաև շրջապատի առարկաների չափերի զննմանը, հմտությունների և կարողությունների օգտագործմանը: Առարկաների չափը որոշելիս նույնպես վերցվում են հակադիր և նույն չափի 2 առարկաներ: Առդրման և վերադրման օգնությամբ որոշվում է նրանց մեծ (փոքր) և մեծությամբ հավասար լինելը, ապա **աչքաչափով** ընտրվում է նմուշից մեծ կամ փոքր չափի առարկա, և պարզվում է, թե դրանցից որն է ճիշտ, որը՝ ոչ և ինչու: Օգնել երեխաներին՝ հասկանալու «ինչու» բառի իմաստը: «Ի՞նչն է մեծ» խաղը, երբ երեխաները հիշողությամբ և **աչքաչափով** որոշում են ծանոթ առարկաների չափը: Օրինակ՝ ի՞նչն է մեծ՝ ավտոբու՞սը, թե՞ մարդատար ավտոմեքենան, փոքր փի՞ղը, թե՞ մեծ մուկը, փոքր իշու՞կը, թե՞ մեծ ճագարը, փոքր գետածի՞ն, թե՞ մեծ աղվեսը: Նկարներում որոշել՝ ինչն է մեծ (փոքր), կամ մեծությամբ հավասար են երկու առարկաներ: Տարեվերջին կարելի է որոշել միայն աչքաչափով, առանց նմուշի: Երեխան սովորում է 3 առարկաները դասավորել ըստ չափի՝ աճման և նվազման կարգով՝ նշելով շարքի ուղղությունը: Երեխան յուրացնում է, որ կան տարբեր չափի առարկաներ: Այդ չափերը հարաբերական են՝ կախված այն հանգամանքից, թե ինչ մեծության առարկայի հետ է համեմատվում: Շարքի յուրաքանչյուր առարկա ավելի մեծ է, քան նախորդը և փոքր՝ քան հաջորդը: Օգտակար է անցկացնել վարժություններ, որոնք կարող են պարզել առարկաների ոչ ճիշտ դասավորվածությունը: Հանձնարարել երեխային՝ հերթականությամբ դասավորել գավաթները ամենափոքրից ամենամեծը, կամ ամենամեծից ամենափոքրը: Ըստ դասավորվածության երեխան պետք է անվանի գավաթների համեմատական չափը: Օրինակ՝ «Դասավորի՛ր հերթականությամբ», «Դասավորի՛ր ըստ մեծության», «Գտի՛ր առարկայի տեղը», «Կարգ ու կանոն մտցրու՛» և այլն:

Երեխաները սովորում են **խմբավորել** առարկաներն ըստ չափի: Այդ աշխատանքը կատարվում է այլ առարկաների տարբեր հատկանիշների բացահայտման միջոցով (գույն, ձև): Օրինակ՝

- ըստ չափի՝ մի խմբում մեծ, մյուսում՝ փոքր ավտոմեքենաներ,
- ըստ ձևի՝ այս տուփում եռանկյունիներ են, մյուսում՝ քառակուսիներ,
- ըստ գույնի՝ աջում՝ կարմիր, ձախում՝ դեղին կոճակներ:

Հասնել նրան, որ երեխան ընդհանրացնի կատարած աշխատանքը:

Սովորում են ըստ որևէ հատկանիշի համեմատել 3-4 առարկաները, դասավորել ըստ չափի **աճման և նվազման** կարգով: Նշելով շարքի ուղղությունը՝ սովորում են աչքաչափով գտնել առարկաներ, որոնք մեծ կամ փոքր են նմուշից, իսկ ավելի ուշ՝ առարկաներ, որոնք հավասար են նմուշին:

Զեվ: Շարունակել շրջանի, քառակուսու և եռանկյան մասին պատկերացումները ճշտելու, դրանք անվանելու, համեմատելու ուղղությամբ աշխատանքները: Կարևոր է, որ երեխան ինքնուրույն կարողանա առանձնացնել պատկերների միջև գոյություն ունեցող տարբերությունն ու նմանությունը, գտնել խմբի մեջ ավելորդ պատկերները, իսկ դաստիարակը լինի միայն այդ եզրակացությունները ճշգրտողը:

Ծանոթացնել՝ ուղղանկյան հետ ուսուցումը կատարել ծանոթ երկրաչափական

պատկերների համեմատությամբ: Պատկերներն սկզբում համեմատվում են զույգերով: Օրինակ՝ քառակուսի և շրջան, քառակուսի և եռանկյուն, ուղղանկյուն և եռանկյուն, ուղղանկյուն և քառակուսի. երեխաները համոզվում են, որ ուղղանկյունը երկար է քառակուսուց: Դաստիարակը երեխաների հետ միաժամանակ մատով շրջագծում է ուղղանկյունը, նրանց ուշադրությունը հրավիրելով դրա կողմերի և անկյունների վրա, և անվանում է ուղղանկյունը: Երկրաչափական պատկերի մեկ կողմին հավասար հաշվիչ փայտիկի օգնությամբ պետք է չափել նախ քառակուսու կողմերը՝ պարզելով դրա առանձնահատկություններից մեկը (կողմերը չորսն են, և բոլոր կողմերն էլ հավասար են իրար), ապա չափել ուղղանկյան կողմերը և համոզվել՝ ուղղանկյան միայն հանդիպակաց կողմերն են հավասար, ունեն 4 անկյուն և 4 գագաթ: Երեխան պետք է զիտակցի, որ գագաթը կետ է (հարկավոր է հետևել, որ երեխան մատը դնի կողմերը միացնող կետի վրա): Անկյունը երկու կողմերը միացնող հատվածն է: Երեխան անկյունը ցույց տալիս մատը սահեցնում է՝ մի կողմից մյուսը տանելով:

4-5 տարեկան երեխաներին ծանոթացնում են նաև գնդին և խորանարդին: Հարկավոր է ցուցադրել գունդը, դրա հետ կատարել տարբեր գործողություններ. գլորել սեղանի վրայով, ափերի միջով, մի ձեռքից մյուսը գլորելու ընթացքում պատմել կատարվածի մասին, համանման վարժությունների օգնությամբ ծանոթացնել նաև խորանարդի առանձնահատկություններին՝ գունդը գլորվում է, խորանարդը՝ ոչ: Պետք է երեխաների ուշադրությունը հրավիրել խորանարդի գագաթների վրա: Հենվելով երեխաների կուտակած փորձի վրա՝ գունդը և խորանարդը համեմատվում են այդ երկրաչափական մարմինների մոդելների՝ քառակուսու և շրջանի հետ:

Հարկավոր է երեխաներին սովորեցնել պատկերները բաժանել երկու խմբի՝ գլորվող և չգլորվող, ապա խնդրել նրանց՝ նկարագրել յուրաքանչյուր պատկերներին բնորոշ հատկանիշները: Օրինակ՝ քառակուսին ունի 4 կողմ, 4 գագաթ, 4 անկյուններ և չի գլորվում, իսկ շրջանը չունի գագաթներ, գլորվում է: Աշխատելու ընթացքում հարկավոր է երեխային հանգեցնել այն համոզման, որ հարկ չկա այս կամ այն կողմ շրջել շրջանը: Այն մնում է նույնը: Կարևոր չէ նաև, թե քառակուսին որ կողմից կդնես, միևնույն է, դրա չորս կողմերն էլ հավասար են: Պետք է երեխաների ուշադրությունը հրավիրել պատկերների՝ ըստ ձևի աճման և նվազման կարգով դասավորելու վրա, սովորեցնել շրջապատում գտնել երկրաչափական պատկերների նման առարկաներ:

Կարևոր տեղ է հատկացվում տարբեր հատկանիշների հիման վրա երկրաչափական պատկերների **խմբավորման** վարժություններին: Օրինակ՝ հարկավոր է երեխաներին առաջարկել առանձնացնել բոլոր կարմիր քառակուսիները (գույնով), բոլոր փոքր (մեծ) պատկերները (չափով), պատկերները բաժանել երկու խմբի (գլորվող և չգլորվող) և այլն: Նմանօրինակ վարժությունները երեխաների մեջ զարգացնում են դիտումակությունը և ընդհանրացնելու հմտությունը:

Երկրաչափական պատկերներն ամրապնդելու նպատակով օգտագործվում են հաշվիչ փայտիկները (որոնց օգնությամբ կառուցվում են մեծ և փոքր պատկերները), երկրաչափական բովանդակությամբ դիդակտիկ խաղերը, հանելուկները, տարբեր զգայարանները: Առաջարկել սեղանի վրայից փակ աչքերով վերցնել որևէ պատկեր, շոշափել այն, ապա թվարկել դրա հատկանիշները: Հաճախակի օգտագործեք՝ «Նկարագիր», «Ցույց տու՛ր», «Փոխիր» հրահանգները, խաղացե՛ք՝ «Ի՞նչ

է ձեռքունդ», «Ընտրի՛ր անհրաժեշտ ձևը», «Հրաշալի պարկ», «Գտի՛ր ավելորդ ձևը» և այլն:

Այս խմբում ևս շրջանն ու քառակուսին օգտագործում են որպես դիդակտիկ նյութեր՝ քանակային պատկերացումները ուսուցանելու և ամրապնդելու նպատակով:

ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ: Այս խմբում ևս, գործնական հանձնարարությունների ձևով, շարունակվում են տարածության մեջ կողմնորոշվելու ունակությունների զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները, որոնք կառուցվում են հակադիր զույգ պատկերացումների ընդգծման սկզբունքով: Վարժությունները կրում են խաղային բնույթ: Որոշվում է նախ 2-3 հակադիր ուղղություններով (աջում, ձախում, առջևում) դասավորված առարկաների տեղը, ապա՝ 4 առարկայի (առարկաները սկզբում դրվում են երեխաներին մոտ գտնվող տարածության վրա):

Խաղացե՛ք երեխաների հետ. նախ թաքնվե՛ք դուք՝ ասելով, թե որտեղ եք (նստում եք բազմոցի վրա, սեղանի տակ, հետևում): Նույնը կատարում են երեխաները՝ ամրապնդելով տակ, վրա, աջ, ձախ, հետև, առաջ հասկացությունները: Երեխաները ձևավորում են «մեջ», «դուրս», «հեռու», «մոտիկ», տարածական պատկերացումներ: Երեխային տվե՛ք հետևյալ առաջադրանքները. «Դի՛ր արջուկը սեղանի վրա, իսկ հիմա սեղանի տակ»: Տվե՛ք մի բաժակ և խնդրե՛ք, որ արջուկին դնի բաժակի մեջ, բաժակի աջ կողմում և այլն: Հրահանգե՛ք՝ «Ի՞նչ կա խմբասենյակի ներսում, անվանի՛ր»: Դու՛րս եկե՛ք բակ և պահանջե՛ք նույնը կատարել դրսում: Արդյունավետ է կոնկրետ օրինակներով համապատասխան գործողություններ կատարելը: Օրինակ՝ երեխան գնդակը թող նետի նախ աջ, ապա ձախ ձեռքով և ասի, թե որ ձեռքի ժամանակ գնդակն ավելի մոտ (հեռու) գլորվեց, որ ավազապարկը մոտ ընկավ, ով ավելի հեռու նետեց ձնագնդիկը, որ նստարանն է մոտ տաղավարին և հեռու տաղավարից: Երկու երեխայի հանձնարարե՛ք՝ կանգնել մեջք-մեջքի հպած, և Հարցրե՛ք՝ նրանք մո՞տ են, թե՞ հեռու: Խնդրե՛ք երեխաներին՝ կրծքավանդակի մոտ ձեռքերը միացնել իրար, ապա իրարից հեռացնելով ասել՝ «հեռու-հեռու-հեռու», հետո մոտեցնելով՝ «մոտ են, մոտ են», «ահա նրանք հանդիպեցին»: Ձբոսանքի ժամանակ կոնկրետ առարկաների օգնությամբ պետք է պարզել յուրաքանչյուրի հեռու և մոտ լինելը: Հարկավոր է երեխաներին սովորեցնել շարժվել նշված ուղղությամբ, ավելի ուշ՝ փոխել շարժման ուղղությունը: Խաղացե՛ք «Քարացի՛ր» խաղը: Հրահանգը լսելով երեխան քարանում է տեղում, գտնում և անվանում է իր աջ (ձախ) կողմում, առջևում (հետևում) գտնվող առարկաները: Իսկ «Անկարգ մեղուն», որին փոխարինում է երեխան, դժժոցով մի տեղից տեղափոխվում է մեկ այլ տեղ, և երեխաները որոշում են նրա թաքնված տեղը՝ արկղի մեջ, սեղանի վրա, գորգի տակ, հեռուստացույցի հետևում (առջևում, աջ և ձախ կողմերում): Երեխաները կարողանում են նաև ինքնուրույն ստեղծել ցույց տված իրավիճակները. «Կանգնի՛ր այնպես, որ Աննան լինի քո առջևում, իսկ Անին՝ հետևում»:

4 - 5 տարեկան երեխաների մեջ անհրաժեշտ է զարգացնել նաև **թղթի և սեղանի** մակերեսի վրա կողմնորոշվելու կարողությունը: Սովորեցնել գտնել նախ թղթի կենտրոնը, հետո ներքևի (վերևի), աջ և ձախ անկյունները և պատմել, թե ո՞ր խաղալիքը որտե՞ղ է գտնվում:

Ինչպես առարկաների տեղը որոշելիս, այնպես էլ նկարները դիտելիս հարկավոր է ուշադրություն դարձնել երեխաների խոսքում տարածական պատկերացումները բնութագրող բառերի ճիշտ և տեղին օգտագործմանը:

Առարկաների տարածական դիրքորոշման ուղղությամբ հանձնարարություններ երեխաներին տրվում են մաթեմատիկական, ֆիզիկոլոտուրայի և երաժշտական պարամունքների, դիդակտիկ և շարժուն խաղերի ընթացքում, ինչպես նաև առօրյայում: Կազմակերպե՛ք «Գուշակի՛ր՝ ինչը որտեղ է», «Ճանապարհորդություն դեպի խմբասենյակ», «Գտի՛ր թաքցրած խաղալիքը», «Ասա՛՛ ուր դրեցինք», «Որտե՞ղ են ես» խաղերը:

ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵՋ ԿՈՂՄՈՐՈՇՈՒՄ: Հեմվելով երեխաների ձեռք բերած հմտությունների և կարողությունների վրա՝ տարաբնույթ գործունեության միջոցով, ամրապնդվում և խորապես իմաստավորվում են օրվա հատվածների հաջորդականությունը բնութագրող շղթայի՝ **առավոտ, կեսօր, երեկո, գիշեր** բառերը: Երեխաներն այս բառերը պետք է անգիր անեն, բազմակի կրկնությունների օգնությամբ հիշեն և գան այն եզրակացության, որ առավոտը լինում է գիշերից հետո, փոխարինվում է կեսօրով, կեսօրը՝ երեկոյով, իսկ երեկոն՝ գիշերով: Օրվա հատվածների օրինաչափությունների զարգացումը կարելի է իրականացնել նկար-քարտերի օգնությամբ: Երեխաները դասավորում են ճիշտ հերթականությամբ, անվանում և պատմում, թե ի՞նչ են անում երեխաները (մեծերը) օրվա տվյալ հատվածում: Նման վարժությունների միջոցով պատկերացում տալ օրվա մասին, որի բաղկացուցիչ մասերն են՝ առավոտը, կեսօրը, երեկոն և գիշերը: Զրույցների և հարց-առաջադրանքների միջոցով ամրակայվում են այդ հասկացությունները. «Հիշե՛ք՝ ինչ գիտեք օրվա մասին, օրվա ո՞ր հատվածն է այժմ, օրվա ուրիշ ի՞նչ հատվածներ գիտեք, ի՞նչն է հաջորդում երեկոյին և այլն»: Պահանջե՛ք, որ թվարկեն ցերեկային, գիշերային, առավոտյան ու երեկոյան կատարվող գործողությունների հնարավոր ձևեր, ինչպես նաև նկարագրեն օրվա տարբեր պահերին բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունները:

Ցանկալի է երեխաներին ծանոթացնել նաև օրվա տվյալ հատվածը բնութագրող մոտավոր գույնին, օրինակ՝ առավոտը ներկայացնել կապույտ քարտով, կեսօրը՝ դեղին, երեկոն՝ մոխրագույն, գիշերը՝ սև: Եվ երեխաները գունային նշանների օգնությամբ դասավորում են օրվա հատվածներն ըստ հերթականության: Հարկավոր է երեխաներին սովորեցնել, որ օրերը մեկը մյուսի հետևից փոխվում են, 7 այդպիսի օրը կազմում է շաբաթ: Շաբաթվա յուրաքանչյուր օրն ունի իր անվանումը, և դրանց հերթականությունը միշտ նույնն է: Շաբաթվա օրերի անվանումները պետք է կապել երեխաների կոնկրետ գործունեության, զանազան իրադարձությունների հետ (ցերեկույթների, մաթեմատիկայի, ֆիզիկոլոտուրայի, նկարչության պարամունքների հետ): Երեխաներն ամեն օր առավոտյան պետք է անվանեն շաբաթվա օրերն ըստ հերթականության, ինչպես նաև ասեն, թե շաբաթվա որ օրն է այսօր, որ օրն էր երեկ, որը կլինի վաղը: Օրինակ՝ «Այսօր առավոտյան ի՞նչ խաղ խաղացինք, այսօր դուք նկարեցիք», «Վաղը կծեփենք պլաստիլինով», «Այսօր ի՞նչ պարամունք է», «Ե՞րբ կլինի երաժշտության պարամունքը», «Ի՞նչ եք արել երեկ երեկոյան», «Ե՞րբ էր մայրիկների տոնը», «Երեկ դուք զբոսնեցիք այգում», «Վաղը կգնանք կենդանաբանական այգի»: Այսպես՝ դաստիարակի ամենօրյա շփման ժամանակ աստիճանաբար բացահայտվում է **այսօր-վաղը-երեկ** բառերի փոփոխա-

կան և հարաբերական իմաստը: Անհրաժեշտ է, ինչքան հնարավոր է՝ հաճախակի օգտագործել այդ բառերը, և երեխաներին մղել այդ նույնի կատարմանը: Կարելի է կազմակերպել «Շաբաթվա օրերը» խաղը:

Ժամանակային պատկերացումների ամրապնդման միջոցներն են՝

ռեժիմային տարբեր գործընթացները, առօրյա կյանքը, երեխաների գործու-
նեության տարբեր ձևերը, խաղերն ու վարժությունները, զրույցները, նկարները,
նտանավորները, պատմվածքներն ու հանելուկները:

ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՔԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԶԵՎԵՐԸ

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորումն ու զարգա-
ցումն իրականացվում են **պարապմունքների և խաղերի** օգնությամբ: Պարապ-
մունքները տարվում են 2 ձևով՝

Համընդհանուր (Ֆրոնտալ ուսուցում, որը հիմնականում կատարվում է նոր
նյութի հաղորդման ժամանակ),

Մի քանի պարապմունքների միասնացման ճանապարհով, օրինակ՝ մաթեմա-
տիկա-խոսքի զարգացում, մաթեմատիկա – երաժշտություն, մաթեմատիկա- կեր-
պարվեստ, կառուցողական աշխատանք:

Պարապմունքների ընթացքում երեխաները ձեռք են բերում մաթեմատիկական
որոշակի գիտելիքներ և հմտություններ, որոնք այնուհետև ավելի խորությամբ յու-
րացվում և ամրապնդվում են տարբեր մաթեմատիկական խաղերի, մեծերի ու հաս-
կակակիցների հետ ամենօրյա հաղորդակցման, ինքնուրույն գործունեության ըն-
թացքում: Մաթեմատիկայի պարապմունքի տեսակներն են՝

Ավանդական - «Ուսուցում», «Խորացում», «Խառը» և «Ամփոփիչ»,

Պարապմունք-ուսուցումը նվիրվում է նոր նյութի հաղորդմանն ու ամրապնդմա-
նը: Այս պարապմունքի միջոցով դաստիարակի հիմնական խնդիրը նոր նյութի հա-
ղորդումն է, որի ընթացքում նա լինում է առավել ակտիվ: Այս տիպի պարապմունք-
ների ժամանակ երեխաների գործունեության արդյունավետ ձևը խաղն է: Դրանք
կարելի է սկսել տվյալ թեմային վերաբերող քառյակով, հանելուկով կամ նտանա-
վորով:

Մանկապարտեզում քիչ են օգտագործվում զուտ ուսուցողական պարապ-
մունքները /յուրաքանչյուր խմբում մեկ պարապմունք/: Ուսուցում- պարապմունքի
ժամանակ օգտվում ենք երեխաների **մտավոր ակտիվացման** 2 ձևից՝

Անհատական, երբ հարցն ուղղվում ենք բոլորին, բայց պատասխան պահանջում
մեկից.

Ընդհանուր, երբ հարցն ուղղվում է բոլորին և պատասխանը պահանջվում է բո-
լորից:

Պարապմունք-խորացում, գործնական և ճանաչողական խնդիրների օգնու-
թյամբ համեմատության միջոցով ամրապնդվում են մաթեմատիկական հասկա-
ցությունները: «Ո՞վ կհիշի...» հարցին վերաբերող գործնական, խաղային վարժու-
թյունների օգնությամբ ստեղծվում են պայմաններ՝ հաղթահարելու մաթեմատի-

կական հասկացությունների վերաբերյալ դժվարությունները: Օրինակ՝ ծագում են թվի ուսուցման հետ կապված հետևյալ **դժվարությունները**. հաշվելուց հետո չեն ընդհանրացնում թիվը և չեն պատասխանում՝ «որքա՞ն է» հարցին: Վերջին անվանված թիվը չեն վերագրում հաշված առարկաների ողջ խմբի անվանը. 1.2.3. ընդամենը՝ 3 սունկ, այլ վերջին ավելացրած առարկային՝ 3-րդ սնկին. Նույն առարկան հաշվում են կրկնակի կամ բաց են թողնում (հետևել, որ երեխան մինչև առարկան չդնի մյուս առարկայի կողքին, թիվը չասի):

Յուրաքանչյուր ծրագրային նյութի խորացման և ամրապնդման լավագույն միջոցներ են.

- **հանձնարարություններ** (որոնք կատարվում են ասված թվի և օրինակի համաձայն),
- կոնկրետ զգայարանները (լսողություն, շոշափելի շարժում),
- մաթեմատիկական խաղեր և հաճախակի փոփոխվող բազմատեսակ դիդակտիկ նյութեր,
- մանկական գրականությունը,
- մաթեմատիկական բովանդակությամբ հանելուկներ:

Խառը տիպի պարապմունք: Սա ստեղծագործական բնույթի պարապմունք է: Այն պրակտիկայում ամենատարածվածն է: Այս պարապմունքներն իրենց մեջ ընդգրկում են ինչպես ուսուցման, այնպես էլ խորացման տարրեր: Կարելի է անցկացնել 3 տարիքային խմբերում էլ:

Պարապմունքի այս տեսակի ընթացքում պարտադիր է կիրառել գործնական աշխատանք: Այն ներառում է նույնատիպ, բայց աստիճանաբար բարդացող վարժություններ, որոնք ընդլայնում են տարրական մաթեմատիկայի ծրագրի 5 բաժինների վերաբերող պատկերացումները: Խառը տիպի պարապմունքին բնորոշ է **գործնական աշխատանքը**, որի նպատակն է մաթեմատիկական հասկացությունների, հմտությունների և ունակությունների գործնական յուրացումը:

Ուսուցման **ոչ ավանդական**՝ ժամանակակից ձևերն են՝

Մաթեմատիկական բովանդակությամբ թատերականացված խաղ-պարապմունքներ,

Խաղ- ճանապարհորդություններ, էքսկուրսիաներ,

Ուրախների և հնարամիտների մրցույթներ, զվարճալիքներ,

Մաթեմատիկական բնույթի տոներ և զվարճալիքներ,

Առօրյա մանկական գործունեությունը՝ կենցաղային, խաղային, աշխատանքային, կառուցողական,

Արվեստի ձևերի ներգործությունը,

Մաթեմատիկական բովանդակության տեսագրեր և սկավառակներ:

Մաթեմատիկայի ուսուցման նշված բոլոր ձևերն էլ կյանքի են կոչում ժամանակակից դիդակտիկայի հիմնական կարգախոսը, այն է՝ **«Սովորեցնել սովորել»:**

ՊԱՐԱՊՄՈՒՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐՆ ԵՆ.

- Ցուցադրական նյութերով խմբակային աշխատանք
- Երեխաների անհատական աշխատանք՝ բաշխիչ նյութերով

- Աշխատանք տարբեր խաղերով
- Պարապմունքի ընթացքում զուգահեռաբար աշխատանք է տարվում նաև ծրագրի մյուս բաժիններից՝ պահպանելով օրգանական կապ՝ դրանց միջև ապահովելով մտավոր ծանրաբեռնվածության բաշխումը:

Մաթեմատիկական պարապմունքներին ներկայացվող պահանջները

- Իմանալ երեխաների տարիքային և անհատական զարգացման առանձնահատկությունները:
- Ապահովել երեխաների ստեղծագործական մտածողության ձևավորման արդյունավետ նախադրյալները՝ կերպարային, վերացական պատկերացումներ:
- Ձևավորել դրական վերաբերմունք և հետաքրքրություն մաթեմատիկայի նկատմամբ:
- Չարգացնող միջավայր ստեղծել նախասիրությունների և ձեռներեցության զարգացման համար:
- Նպաստել բնածին հարցասիրության զարգացմանը:
- Նախապատրաստել դպրոցին:

Այս խմբում, որպես մաթեմատիկական պատկերացումների ձևավորման միջոց, լայնորեն օգտագործվում են նաև **դիդակտիկ խաղերը**, որոնք նպաստում են ինչպես երեխաների մտավոր գործողությունների՝ ընդհանրացման, համեմատման և դասակարգման զարգացմանը, այնպես էլ մաթեմատիկական պատկերացումների ընդլայնմանն ու ամրապնդմանը: Մաթեմատիկական **դիդակտիկ խաղերը** բաժանվում են 2 խմբի.

1. Առարկաներով խաղեր, որոնք նպաստում են մաթեմատիկական տարբեր հասկացությունների ամրապնդմանն ու յուրացմանը; Դրանցից են՝

- Քանակական հասկացություններն ամրապնդող («Թվանշանների ամրոցում», «Խաղալիքների խանութում», մաթեմատիկական բովանդակությամբ սյուժետադերային «Խանութ», «Կրկես...») և երաժշտամաթեմատիկական խաղերը
- Առարկայի **մեծության** հատկանիշներն ամրապնդող խաղերը՝ «Ո՞վ ավելի արագ» «Ո՞վ է առաջինը»
- Երկրաչափական ձևերն ամրապնդող՝ «Ծիծաղաշարժ տիկնիկներ», «Խոհանոցում», «Ծննդյան տոբ» և այլն
- Տարածական հասկացություններն ամրապնդող խաղերը՝ «Ով առաջինը կանցնի լաբիրինթոսը», «Կարմիր գլխարկը», «Պահմտոցի»
- Ժամանակը ցույց տվող խաղեր՝ «Այդ ե՞րբ է լինում», «Մեր օրը», «Տարվա եղանակներ»
- Երաժշտամաթեմատիկական, մաթեմատիկական բովանդակությամբ սյուժետադերային խաղերը՝ «Խանութ», «Կենդանաբանական այգի» և այլն

2. Բանավոր խոսքը զարգացնող խաղեր՝ «Ասա՛ հակառակը», «Լրացրո՛ւ նախադասությունը» և այլն

Նպատահարմար է նշված դիդակտիկ խաղերը ներկայացնել հեքիաթների հերոսների՝ Գիտունիկի, Ինչուիկի կամ երեխաներին քաջ ծանոթ Մեշոկ Պապի, Փղիկի կողմից:

Մաթեմատիկական դիդակտիկ խաղերի կազմակերպման նորացման ուղիներն են.

• Փոխել դաստիարակի կողմնորոշումը՝ խաղը վարելու առումով. նա խաղում հանդես է գալիս խաղընկերոջ դերում, և այդ կերպ խաղը դառնում է բնական և ինքնաբերական:

• Հաշվի առնել երեխաների տեսակետներն ու կարծիքները, ընդունակությունները, գնահատել նրանց:

• Խաղը հագեցնել ժամանակակից պահանջները վեր հանող հանձնարարություններով:

• Խաղը ներկայացնել հեքիաթներից մեկի տեսքով:

Մաթեմատիկական դիդակտիկ խաղերին ներկայացվող պահանջները

• Խաղի պետք է լինի հրապուրիչ և առաջացնի հետաքրքրություն:

• Խաղի միջոցով ստեղծվելու է զգացմունքային և զարգացնող միջավայր:

• Չի կարելի երեխաներին հանդիմանել՝ առաջադրանքը չհասկանալու կամ չկատարելու համար (պետք է նորից բացատրել՝ տալով հուշող հարցեր):

• Անհրաժեշտ է առաջացնել խաղին ակտիվ մասնակցելու ցանկություն:

Երեխաների գործունեության համար անհրաժեշտ նյութերի անվանացանկ

• Դիդակտիկ խաղալիքներ՝ լոտո, դոմինո, նկարներ

• Տարբեր խաղային հավաքածուներ՝ լեգոներ, խաղալիքներ

• Խաղեր երեխաների մտավոր զարգացման համար՝ շախմատ, շաշկի

• Կառուցողական խաղեր

• Նկարների հավաքածուներ, սեղանային տպագիր խաղեր

• Ցուցադրական և բաշխիչ նյութեր՝ սյուժետային խաղալիքներ, կոճակներ, խխունջներ, կոներ, երկրաչափական պատկերներ, հաշվեքարտեր, թվանշան և թվաբանական գործողություն պատկերող քարտեր՝ °, =, ≠, <, >

ՏԱՐԻՎԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ծրագրի արդյունավետ իրականացումն առնչվում է խմբում կազմակերպված զարգացնող միջավայրի և ուսուցման մեթոդների կիրառմանը: Ուսուննական գործընթացի կազմակերպումը պետք է իր մեջ ներառի ուսուցման բազմաթիվ մեթոդներ: Պայմանականորեն ուսուցման մեթոդներն այսօր 2 խումբ են կազմում՝ ավանդական և ժամանակակից.

Ավանդական

Դիտողական մեթոդ. գիտելիքը ձեռք է բերվում դիտողականության շնորհիվ

• Գործնական մեթոդ.. գիտելիքը գործնական փորձի արդյունք է

• Խոսքային. գիտելիքի աղբյուրը խոսքն է

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է գիտելիքի ձեռքբերման գործընթացում երեխայի անմիջական մասնակցությունը: Այս ասպարեզում առանձնացվում են.

• Խաղային մեթոդ

• Դիդակտիկ նյութերի շնչավորման մեթոդ (մաթեմատիկական բովանդակությամբ նյութի թատերականացում)

- Մտագրոհի մեթոդ
 - Մոդելավորման մեթոդ (երբ իրական առարկաները փոխարինվում են երկրաչափական պատկերներով. օրինակ՝ սեղանը՝ շրջանով, բազմոցը՝ ուղղանկյունով
 - Ակտիվ ուսուցման մեթոդներ: Վերջիններս հայտնի են որպես փոխներգործուն (ինտերակտիվ) և Համագործակցային մեթոդներ: Դրանք ներառում են զույգերով և խմբով մտավոր աշխատանք՝ ուղղված համատեղ որոնումների քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը:
 - Ուսուցման գործնական մեթոդներ, որոնց խմբին են դասվում տարատեսակ վարժությունները, փորձերն ու մոդելավորումը:
- Նշված բոլոր մեթոդներն էլ խթանում են երեխաների մտային գործունեությունը, մղում ավելին անելու և դրանով նպաստում նրանց մաթեմատիկական հետաքրքրությունների, ընդունակությունների զարգացմանը, ինքնավստահության կայացմանը, հնարավորությունների լիարժեք բացահայտմանն ու իրացմանը:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Բարոյական դաստիարակության առաջատար խնդիրը մարդասիրական հարաբերությունների մշակույթի դաստիարակումն է: Այս տարիքում երեխաներն իրենց հասակակիցների հետ շփումների ժամանակ պետք է ցուցաբերեն բարյացակամություն, հոգատարություն, կարեկցանք, փոխօգնության պատրաստակամություն:

Շարունակվում է աշխատանքը բարոյական նորմերի դաստիարակության ուղղությամբ: Դրա էությունը արդարամտության, ճշմարտասիրության, կարեկացանքի, բարության, բարի, լավ արարքը գնահատելու կարողության ձևավորումն է: Բարոյական զգացմունքներն ինքնատիպ խթան են՝ հասակակիցների, մեծերի հետ համատեղ գործունեության համար: Կուլտուրական վարքի, հմտությունների, բարյացակամ, հոգատար վերաբերմունքի ձևավորումը շարունակում է մնալ այս տարիքային խմբի երեխաների դաստիարակության կարևոր խնդիր: Երեխաներն աստիճանաբար սովորում են հմտորեն և բարեկիրթ կերպով օգտվել ճաշի սպասքից, ուտելուց հետո շնորհակալություն հայտնել , հարգալից բարևել, օգտագործել «ցտեսություն», «հաջողություն», «ներողություն», «բարի գիշեր» արտահայտությունները: Բարեկիրթ վարքի, հարգալից վարվելաձևի կանոնների, վարքի նորմերի դաստիարակման լավագույն միջոց են բարոյագիտական գրույցները, դիդակտիկ խաղերը, պարապմունքները, առօրյա տարաբնույթ միջոցառումները: Դրանց նպատակն է՝

- Երեխաների մեջ ձևավորել անձնական վերաբերմունք բարոյական նորմերի պահպանման կամ խախտման նկատմամբ:
- Սովորեցնել ճիշտ գնահատել ընկերների արարքները. կարեկցել վիրավորված և խրախուսել արդարամիտ ընկերոջը:
- Շարունակել աշխատանքները երեխաների միջև բարիդրացիական հարաբերություններ ձևավորելու ուղղությամբ /պատմել այն մասին, թե ինչով է աչքի ընկնում խմբի յուրաքանչյուր անդամ, օգնել երեխային համոզվելու, որ իրեն շատ են սիրում և գնահատում/:
- Դաստիարակել զսպվածություն, բարություն, արդարացիություն, սխալ արար-

քի համար ունենալ ամոթի զգացում:

- Հիշեցնել երեխաներին՝ բարևելու, հրաժեշտ տալու անհրաժեշտության մասին: Սովորեցնել քաղաքավարի արտահայտել խնդրանքը, ցուցաբերած օգնության համար հայտնել շնորհակալություն:

- Ճիշտ դիմել մանկապարտեզի աշխատակիցներին, չխառնվել մեծերի խոսակցությանը:

- Ամրապնդել առարկաների նկատմամբ խնամքով վերաբերմունքը, սովորեցնել օգտագործել դրանք ըստ նշանակության, դնել դրանք համապատասխան տեղում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍԻԱՐԱՎՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքային դաստիարակությունը երեխաների համակողմանի և ներդաշնակ զարգացման հիմնախնդիրներից է, որի ծրագրային բովանդակությունը որոշվում է նրանց տարիքային առանձնահատկություններով:

Աշխատանքային դաստիարակության խնդիրներն իրականացնելիս դաստիարակը ձգտում է երեխաներին ներշնչել աշխատելու ցանկություն և կարողություն, ապահովել յուրաքանչյուրի մասնակցությունը ձեռնարկվող աշխատանքին: Այդ տեսակետից անհրաժեշտ է ամենայն հոգատարությամբ բավարարել մեծերի գործողություններն ընդօրինակելու՝ երեխաների պահանջմունքները, խթանել աշխատանքային ակտիվության ձևերը: Խիստ կարևոր է դաստիարակի կողմից աշխատանքի նկատմամբ երեխաների հուզական և դրական վերաբերմունքի ստեղծումը:

Միջին խմբում աշխատանքային դաստիարակության խնդիրներն են.

- Երեխաների մեջ արթնացնել դրական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ և աշխատելու ցանկություն:

- Սովորեցնել կատարել անհատական և խմբային աշխատանքներ: Ձևավորել դաստիարակի օգնությամբ աշխատանքի բաժանում կատարելու ունակություն, կարողանալ ժամանակին աշխատանքն ինքուրույն հասցնել ավարտին:

- Ձևավորել հաճնարարված աշխատանքի նկատմամբ պատասխանատվություն և սկսած գործը մինչև վերջ հասցնելու կարողություն:

- Երեխաների գիտակցությանը հասցնել սեփական աշխատանքի կարևորությունը: Խրախուսել նախաձեռնողականությունը՝ ընկերներին և մեծերին օգտակար լինելու գործում:

ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Կատարելագործել ինքնուրույն հանվելու և հագնվելու ունակությունները, սովորեցնել կոկիկ դասավորել հագուստը, կախել համապատասխան տեղում, մեծերի օգնությամբ կարգի բերել այն /մաքրել, թափ տալ, չորացնել.../:

Դաստիարակել ինքնուրույնություն, մշտապես կոկիկ և մաքուր լինելու ձգտում:

ՏՆՏԵՍԱԿԱՆ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

- Երեխաներին սովորեցնել ինքնուրույն պահպանել մաքրություն խմբասենյակում և մանկապարտեզի տարածքում. հավաքել և տեղավորել կառուցողական

նյութերը, խաղալիքները, լվանալ տիկնիկի սպիտակեղենը, մաքրել խաղալիքների, կահույքի փոշին:

- Դաստիարակի հետ մասնակցել գրքերի, սեղանային խաղերի վերանորոգման աշխատանքներին:

- Սովորեցնել կատարել հերթապահի պարտականություններ՝ ճաշի ժամանակ դասավորել ափսեները, բաժակները, անձեռոցիկները, դնել գդալները, դանակները, պատառաքաղները:

- Տարվա երկրորդ կեսից երեխաները պարապմունքի ժամանակ կատարելու են հերթապահության պարտականություններ: Դրանք են՝ դասավորել և հավաքել անհրաժեշտ պարագաները:

ԱՇԽԱՏԱՆՔ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

- Ձևավորել բնության անկյան բնակիչներին ինքնուրույն խնամելու կարողություն՝ ջրել բույսերը, լվանալ կերակրամանները, ջրամանները, դրանք լցնել ջրով, կերը դնել կերակրամանների մեջ, կերակրել ձկներին:

- Երեխաներին ներգրավել սոխի, մաղաղանոսի, արմատապտուղների տնկման, ծաղկող բույսերի խոշոր սերմերի ցանման աշխատանքներում:

- Սովորեցնել օգնել դաստիարակին՝ բույսերի վերատնկման, ակվարիումի ջուրը փոխելու, բակի ձյունը մաքրելու, ձմեռող թռչուններին կերակրելու աշխատանքներում:

- Մասնակցել բանջարանոցի, ծաղկանոցի աշխատանքներին. փխրեցնել, ջրել հողը, ցանել սերմեր, տնկել սածիլներ:

- Կարգի բերել աշխատանքային գործիքները /մաքրել և դնել համապատասխան տեղը/:

ԵՐԵՒԱՆԵՐԸ ՏԱՐԵՎԵՐՋԻՆ ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱՆ՝

✓ Ինքնուրույն հանվել և հագնվել, կոկիկ դասավորել հագուստը, կախել համապատասխան տեղում, մեծերի օգնությամբ կարգի բերել այն:

✓ Յետևել անձնական հիգիենայի կանոններին /լվանալ, չորացնել ձեռքերը, մաքրել քիթը, հազալիս ձեռքով ծածկել բերանը/:

✓ Բավարարել կենսական առաջնային խնդիրները:

✓ Մասնակցել կրտսեր քրոջ կամ եղբոր խնամքին ուղղված աշխատանքներին:

✓ Ինքնուրույն կատարել հերթապահի պարտականությունները ճաշի ժամին:

✓ Պարապմունքի ժամանակ դասավորել և հավաքել անհրաժեշտ պարագաները:

✓ Պատրաստականություն հայտնել մասնակցելու տարբեր առաջադրանքների, օգնել առօրյա պարզագույն գործերում:

✓ Մեծահասակի հիշեցումով անցում կատարել գործողության մի տեսակից մյուսին:

✓ Մասնակցել մեծ և փոքր խմբերով կազմակերպված 20-25 րոպե տևողությամբ աշխատանքներին:

✓ Մասնակցել բանջարանոցի, ծաղկանոցի աշխատանքներին:

ՀԱՎԵԼՎԱԾ N6

Մեթոդական ցուցումներ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական տարիքում հատկապես կարևորվում է երեխաների աշխատանքային դաստիարակությունը: Այնպիսի կարևոր հատկանիշներ, ինչպիսիք են՝ աշխատասիրությունը, սերը աշխատանքի և աշխատավոր մարդու նկատմամբ, հարկավոր է երեխաներին ներարկել դեռ մանկուց:

Միջին խմբում աշխատանքային դաստիարակության հիմնական խնդիրն է՝ ձևավորել դրական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ: Դա իր մեջ ներառում է՝

- ծանոթացնել մեծերի աշխատանքին,
- ձևավորել պատկերացումներ հասարակական աշխատանքի վերաբերյալ և արժևորել այն,
- հարգել մեծերի աշխատանքը, խնամքով վերաբերմունք դրսևորել նրանց աշխատանքի արդյունքի հանդեպ:

Աշխատանքային դաստիարակության գծով տարվող աշխատանքների 1 տարվա հեռանկարային պլանավորում

Սեպտեմբեր	Հոկտեմբեր
<ul style="list-style-type: none">- Ինքնասպասարկման ուղղությամբ տարվող աշխատանքներ /սովորեցնել ինքնուրույն և կոկիկ հագնվել, հանվել/:- Պահպանել մաքրություն մանկապարտեզի տարածքում և խմբասենյակում /ինքնուրույն հավաքել և տեղավորել կառուցողական նյութերը, խաղալիքները/:- Ջրել և խնամել բնության անկյան ծաղիկներն ու բույսերը: Երեխաների գիտակցությանը հասցնել իրենց կատարած աշխատանքի կարևորությունը:- Սովորեցնել կատարել հերթապահի պարտականություններ՝ ճաշի ժամանակ օգնել դաստիարակի օգնականին սպասքաղերելու սեղանը: Դաստիարակել դրական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ:	<ul style="list-style-type: none">- Կատարելագործել ինքնուրույն հագնվելու և հանվելու ունակությունները, կոկիկ դասավորել հագուստը, կախել այն համապատասխան տեղում:- Սովորեցնել կատարել անհատական և խմբային աշխատանքներ բակում և խմբասենյակում, ձևավորել հաճնարարված աշխատանքի նկատմամբ պատասխանատվություն:- Դաստիարակի հետ միասին մասնակցել բանջարանոցի, ծաղկանոցի աշխատանքներին, այնուհետև կարգի բերել աշխատանքային գործիքները /մաքրել և դնել համապատասխան տեղը/:- Չեղքի աշխատանք: Դաստիարակի հետ մասնակցել գրքերի, սեղանային խաղերի վերանորոգման աշխատանքներին:

<p style="text-align: center;">Նոյեմբեր</p> <p>- Շարունակել կատարելագործել ինքնուրույն հանվելու և հագնվելու ունակությունները, մեծերի օգնությամբ կարգի բերել հագուստը /մաքրել, թափ տալ, չորացնել.../:</p> <p>- Ինքնուրույն խնամել բնության անկյան բույսերը, կերակրել ձկներին: Դաստիարակել պատասխանատվություն և հոգատար վերաբերմունք:</p> <p>- Բակում և խմբասենյակում պահպանել մաքրություն՝ մաքրել ծառերի շրջակայքը, հավաքել ավելորդ մանր քարերը, ճյուղերը, տերևները: Խրախուսել նախաձեռնությունը ընկերներին օգտակար լինելու գործում:</p> <p>- Խաղերից հետո հավաքել և տեղավորել կառուցողական նյութերը, խաղալիքները, կարողանալ ժամանակին աշխատանքն ինքուրույն հասցնել ավարտին:</p>	<p style="text-align: center;">Դեկտեմբեր</p> <p>- Վարժեցնել ինքնասպասարկման ուղղությամբ տարվող աշխատանքներում՝ հետևել արտաքին տեսքին, լինել կոկիկ և հարդարված:</p> <p>- Շարունակել սովորեցնել կատարել անհատական և խմբային աշխատանքներ խմբասենյակում և բակում, դաստիարակել դրական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ:</p> <p>- Կատարելագործել հերթապահի պարտականությունները՝ ճաշի ժամանակ ինքնուրույն դասավորել ափսեները, բաժակները, անձեռոցիկները, դնել գդալները, դանակները, պատառաքաղները:</p> <p>- Ձեռքի աշխատանք: Դաստիարակի հետ մասնակցել գրքերի, սեղանային խաղերի վերանորոգման աշխատանքներին: Երեխաների գիտակցությանը հասցնել իրենց կատարած աշխատանքի կարևորությունը:</p>
<p style="text-align: center;">Յունվար</p> <p>- Կատարելագործել ինքնասպասարկման ուղղությամբ տարվող աշխատանքները /լինել կոկիկ և հարդարված՝ հետևելով ընկերների և մեծերի օրինակին/:</p> <p>- Շարունակել անհատական և խմբային աշխատանքները բակում՝ մաքրել անցուղին ձյունից, կերակրել ձմեռող թռչուններին, ձնածածկի դեպքում ջրի օգնությամբ ստանալ սահադաշտ: Ձևավորել դաստիարակի օգնությամբ աշխատանքի բաժանում կատարելու ունակություն:</p> <p>- Պարբերաբար խնամել բնության անկյան բույսերը, կերակրել ձկներին: Դաստիարակել պատասխանատվություն և հոգատար վերաբերմունք:</p> <p>- Դաստիարակի օգնությամբ մաքրել խաղալիքների, կահույքի փոշին, լվանալ տիկնիկի սպիտակեղենը, կարողանալ ժամանակին աշխատանքն ինքնուրույն հասցնել ավարտին:</p>	<p style="text-align: center;">Փետրվար</p> <p>- Շարունակել սեզոնային աշխատանքները բակում՝ մաքրել անցուղին ձյունից, վրան ավազ ցանել, որ չսահի:</p> <p>- Դաստիարակի օգնությամբ ստանձնել հերթապահության պարտականություններ պարապմունքների ժամանակ:</p> <p>- Ինքնուրույն պահպանել մաքրություն, կարգուկանոն խմբասենյակում:</p> <p>- Չետևել արտաքին տեսքին, միշտ լինել կոկիկ և հարդարված:</p> <p>- Շարունակել խնամել բնության անկյան ծաղիկներն ու բույսերը, օգնել դաստիարակին փոխել ակվարիումի ջուրը: Ձևավորել հաձմարարված աշխատանքի նկատմամբ պատասխանատվություն և սկսած գործը մինչև վերջ հասցնելու ունակություն:</p>

Մարտ	Ապրիլ
<ul style="list-style-type: none"> - Շարունակել աշխատանքները բնության անկյունում, միշտ պահպանել մաքրություն. խոնավ լաթերով մաքրել տերևների փոշին, ջրել ծաղիկները, փխրեցնել հողը: - Օգնել դաստիարակի օգնականին՝ սպասքաղդելու սեղանը և կարգի բերելու խմբասենյակը: - Մանկապարտեզի տարածքում նույնպես պահպանել մաքրություն: Կերակրել թռչունների հացի փշրանքներով և ցորենի հատիկներով: - Ժամանակին կատարել դաստիարակի և նրա օգնականի հանձնարարությունները: Անհրաժեշտության դեպքում օգնության հասնել ընկերներին: - Ջրուցել մեծերի աշխատանքի մասին: Խրախուսել աշխատանքում նրանց օգտակար լինելու ցանկությունը: 	<ul style="list-style-type: none"> - Կատարելագործել հերթապահի պարտականությունների կատարումը, կարողանալ աշխատանքը կատարել հստակ, ճիշտ և ժամանակին: - Աշխատել բակում դաստիարակի ղեկավարությամբ՝ մաքրել տարածքն ավելորդություններից, մաքրել տաղավարների մատարանների փոշին: - Վարժեցնել երեխաներին՝ հողամասում կատարելու պարզագույն աշխատանքներ և հանձնարարություններ: - Կարգի բերել աշխատանքային գործիքները, լվանալ, դնել համապատասխան տեղում: - Տարբեր աշխատանքներում խրախուսել ընկերներին օգնելու նախաձեռնությունը: - Շարունակել աշխատանքները բնության անկյունում, օգնել դաստիարակին՝ փոխելու ակվարիումի ջուրը:
<p>Մայիս</p> <ul style="list-style-type: none"> - Կատարելագործել ինքնասպասարկման ուղղությամբ տարվող աշխատանքները, միշտ հետևել արտաքին տեսքին, լինել խնամված և հարդարված: - Մասնակցել բանջարանոցի, ծաղկանոցի աշխատանքներին. ցանել սերմեր, տնկել սածիլներ, հետևել դրանց աճին: - Շարունակել խնամել բնության անկյան բույսերը, կենդանիներին, բակում կերակրել թռչուններին: - Հմտորեն կատարել հերթապահի պարտականությունները ճաշի և պարապմունքների ժամանակ: - Հասնել այն բանին, որ երեխաներն, առանց մեծերի զգուշացման, խմբասենյակում պահպանեն մաքրություն և կարգուկանոն: - Երեխաների գիտակցությանը հասցնել իրենց կատարած աշխատանքի կարևորությունը: Ձևավորել հաճնարարված աշխատանքի նկատմամբ պատասխանատվություն և սկսած գործը մինչև վերջ հասցնելու ունակություն: 	

ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական տարիքում ի հայտ եկող մի շարք պահանջմունքներ չափազանց կարևոր են այն առումով, որ խթանում են երեխայի ընդհանուր զարգացումը: Այս տարիքի երեխայի մեջ դրսևորվում են մեծ քանակությամբ անիրագործելի մղումներ և երազանքներ: Փոքրիկը ցանկանում է դրանք բավարարել անմիջապես: Նա ամեն կերպ ջանում է գործել մեծի պես, սակայն այդ ձգտումը չի համապատասխանում իր հնարավորություններին: Խաղի մեջ ընդօրինակելով մեծերի գործունեությունը և նրանց հետ կիսելով իր համար հասկանալի ուրախություններն ու տխրությունները՝ երեխան նման յուրօրինակ ճանապարհով դառնում է իրական կյանքի մասնակիցը:

Խաղը երեխայի համար սոցիալական հասունացման ուղի է: Խաղի ժամանակ երեխաներն առաջին անգամ շփվում են իրենց հասակակիցների հետ: Նրանց միացնում են ընդհանուր նպատակը, դրան հասնելու միասնական ջանքերը, ընդհանուր հետաքրքրություններն ու ապրումները: Երեխան սկսում է զգալ իրեն որպես ընդհանուր խմբի անդամ, արդարացիորեն գնահատել իր և ընկերների գործողություններն ու արարքները: Միաժամանակ նա փորձում է կատարել մեծի դեր՝ հասկանալով հանդերձ, որ ինքը դեռ մեծ չէ: Եվ արդյունքում երեխայի մեջ ձևավորվում է մեծի, հասարակայնորեն արժեքավոր դեր կատարելու դրդապատճառը: Լ. Ս. Վիգոտսկու կարծիքով՝ քիչ խաղացող երեխան կորցնում է զարգացման բազում հնարավորություններ:

Խաղի ընթացքում նմանակելով մեծահասակների տնային գործերը՝ երեխաները յուրացնում են կենցաղային աշխատանքի որոշ հմտություններ. սրբում են տիկնիկների կահույքի փոշին, մաքրում իրենց «տան» հատակը, լվանում տիկնիկի սպիտակեղենը: Խաղերի ճնշող մեծամասնությունն արտացոլում է տարբեր մասնագիտության մարդկանց աշխատանքը: Այսինքն՝ խաղի միջոցով ընդլայնվում և խորանում է երեխաների հետաքրքրությունը՝ տարբեր մասնագիտությունների նկատմամբ, և հարգանք է ձևավորվում աշխատանքի հանդեպ:

Խաղի մեջ մտավոր ակտիվությունը միշտ շաղկապված է երևակայությանը. երեխան պետք է իր համար դեր գտնի, պատկերացնի, թե ինչպես է վարվում այն մարդը, ում ցանկանում է ընդօրինակել: Երևակայությունն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ երեխան փնտրում է իր մտադրությունն իրականացնելու միջոցներ. թռիչքի գնալուց առաջ պետք է ինքնաթիռ պատրաստել, խանութի համար համապատասխան ապրանքներ ընտրել, իսկ եթե դրանք պակասում են՝ ինքնուրույն պատրաստել: Այսպես՝ խաղի միջոցով, դրսևորվում և զարգանում են երեխայի ստեղծագործական ունակությունները: Վերարտադրելով կյանքի տարբեր իրա-

դարձություններ, դրվագներ հեքիաթներից ու պատմվածքներից՝ նա մտածում է այն ամենի մասին, ինչը տեսել է, կամ իր համար կարդացել ու ասել են մեծերը: Այդ կերպ բազում երևույթների իմաստն ու նշանակությունը նրա համար ավելի հասկանալի են դառնում:

Խաղի տեսակը /զարգացման փուլը/	Օպտիմալ զարգացման տարիքը	Նկարագրությունը	Ջարգացման իմաստը
Սյուժետա-դերային խաղ	4 - 5տ.	Երեխայի դերի ընդունում և կատարում	Դերակատարումների և հասարակական դերերի ըմբռնում, իրավիճակում «տեղափոխվելու» կարողություն

ՍՅՈՒԺԵՏԱԴԵՐԱՅԻՆ ԽԱՂԵՐ

Նախադպրոցական տարիքի երեխաների ակտիվության, ինքնուրույնության, երևակայության և նախաձեռնողականության դրսևորման արդյունավետ միջոցներից են ստեղծագործական խաղերը: Խաղի էական նշանակությունն այն է, որ երեխան հայտնվում է ուրիշ մարդու դիրքում և, կարծես, աշխարհին նայում է այն մեծահասակի տեսանկյունից, որի դերը կատարում է: Խաղը նոր պահանջմունքների դպրոց է, որտեղ ի հայտ է գալիս ստեղծագործական երևակայությունը, զարգանում են մտահղացման ունակությունը, երևակայությունը, ինքնաբերաբար ստեղծվում է խաղի բովանդակությունը: Երեխայի երևակայությունը զարգանում է հատկապես ստեղծագործական, դերային խաղերի միջոցով: Դրանք նաև ապահովում են երեխայի անցումը հաջորդ՝ զարգացման ավելի բարձր փուլ: Ստեղծագործական, դերային խաղերի բովանդակությունն ինքնանպատակ չէ. այն արտացոլում է իրականության մեջ գոյություն ունեցող հարաբերությունները:

Խաղերի ընթացքում նախադպրոցականի ստեղծագործական երևակայության զարգացման պայմաններն են.

ա. Գուլգական, բարյացական մթնոլորտի առկայություն խմբասենյակում:

բ. Անհրաժեշտ միջավայրի ստեղծում:

գ. Երեխայի ինքնուրույնության, նախաձեռնության ազատության ապահովում՝ դաստիարակի մանկավարժական ղեկավարման առկայությամբ:

Ստեղծագործական խաղերին բնորոշ առանձնահատկությունն այն է, որ երեխաներն իրենք են ստեղծում խաղը, և խաղային գործունեությունը կրում է ընդգծված ինքնագործ, այսինքն՝ ստեղծագործական բնույթ: Երեխան հավատում է իր հորինած կերպարներին: Նա ոչ միայն հավատում է, այլև ինքն է կատարում այդ դերերը:

Սյուժետադերային խաղը կարող է որպես ստեղծագործական երևակայության զարգացման պայման դիտվել այն դեպքում, երբ մեծահասակն իրականացնելով մանկավարժական ղեկավարում՝ ստեղծում է համապատասխան մթնոլորտ, չի խախտում երեխայի նախաձեռնությունը և խաղի ընտրության ազատությունը: Մտնելով կերպարի մեջ՝ երեխան դառնում է նա, ում ընդօրինակում է: Հետաքրքիր է, որ երեխան ոչ թե վերարտադրում է կերպարի ամբողջ գործունեությունը, այլ միայն այն գծերը, որոնք անհրաժեշտ են տվյալ խաղի ընթացքի համար:

Ստեղծագործական խաղը հիմնականում խմբային է: Մասնակցում են մի քանի երեխաներ, որոնցից յուրաքանչյուրը կատարում է իր դերը: Հարկավոր է երեխաների մեջ ձևավորել կարողություն՝ ստեղծագործական խաղերի ժամանակ ընդգրկելու կառուցողական, շինարարական տարբեր պարագաներ, ստեղծել հետաքրքիր կառույցներ, ընկերների հետ կատարել կառուցողական նյութերի և համապատասխան դերերի բաշխում:

Սյուժետադերային խաղերի ղեկավարումն ուղղված է խաղի մտահղացման հստակեցմանը և բովանդակության զարգացմանը, խաղային գործողությունների, դերերի ճշտմանը, երեխաների ընկերասիրական հարաբերությունների ստեղծմանը: Ղեկավարումը չպետք է հարկադրող, վիրավորող բնույթ կրի կամ երեխաների կողմից առարկություններ, բողոք կամ խաղից դուրս գալու ցանկություն առաջացնի:

ԴԻՂԱԿՏԻԿ ԽԱՂԵՐ

Նախադպրոցական հասակի երեխաների ուսուցման և դաստիարակության լավագույն միջոցներ են հատկապես դիդակտիկ խաղերը, որոնց խնդիրն է՝ նպաստել երեխաների ուսումնական և իմացական, ինչպես նաև մտավոր գործունեության ձևավորմանը: Ի տարբերություն ստեղծագործական դերերով խաղերի, որոնցում խաղի նպատակը, բովանդակությունը և ընթացքը որոշում են իրենք՝ մասնակիցները, դիդակտիկ խաղերը երեխաներն ստանում են պատրաստի վիճակում: Դրանց բովանդակությունը միշտ այնպիսի մտավոր խնդրի իրականացում է, որի լուծման համար երեխան պետք է արագ մտածի, համեմատի առարկաները, երևույթները, վերլուծի, համադրի դրանք և ինքնուրույն կերպով որոշակի եզրակացության հանգի:

Դիդակտիկ խաղերի միջոցով ընդլայնվում են նաև երեխաների պատկերացումները շրջապատի կյանքի և բնության մասին: Նրանք ծանոթանում են բնության երևույթներին, մարդկանց կենցաղին: Այս ձևով հարստանում և ակտիվանում է նրանց բառապաշարը, զարգանում են կապակցված խոսքը, դիտունակությունը և կամային ուշադրությունը: Կանոնավորվում է արտասանությունը: Դրանք ապագա դպրոցականի համար խիստ կարևոր հատկություններ են:

ՋԱՐԳԱՑՆՈՂ ԽԱՂԵՐ

Նախադպրոցական տարիքի երեխաների համար առաջատար են համարվում նաև զարգացնող խաղերը: Այս խաղերի նպատակը ոչ միայն գիտելիքների սովորական փոխանցումն է, այլև երեխաների ակտիվ, գիտակցված գործունեությունը, հոգեկան որոշակի գործընթացների զարգացումը, սոցիալական կարևոր փորձի փոխանակումը:

ԹԱՏԵՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽԱՂԵՐ

Մանկական թատերականացված խաղերը երեխայի կյանքի անբաժանելի մասն են կազմում: Դրանց սյուժետային կառուցվածքի մեջ յուրաքանչյուր «կերպար» ունի իր անելիքը: «Թատերական» խաղերը զարգացնում են երեխայի խոսքը, գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը և նպաստում նրա ինքնակազմակերպմանը, ինքնադրսևորմանն ու ինքնարտահայտմանը:

Թատերական արվեստն ինքնին միջառարկայական կապերի, երեխաների բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման նպատակի գործնական իրականացման առումով ընձեռում է լայն հնարավորություն: Ի վերջո, թատրոնը համադրական արվեստ է: Այն ձևավորում է երգելու, ասնունքելու, պարելու, հորինելու, նմանակելու հմտություններ, մշակում խոսքի կուլտուրա և տեխնիկական միջոցներ օգտագործելու կարողություն: Բենականացումներին մասնակցելը հաճախ վերացնում է նաև երեխայի արտասանական կամ այլ բնույթի թերություններ: Ազատ, սահուն, արտահայտիչ ընթերցելը, նույնիսկ թատրոնի միջոցով ենթատեքստի ընկալումն ու մեկնաբանումը վերածվում են կայուն որակների:

Ջարգացնող միջավայրը սկզբնաղբյուր է թատերական խաղի համար: Այն պետք է լինի անվնաս, մաքուր, գրավիչ, ոչ այնքան բազմազան և ներառի բոլոր այն պայմաններն ու համապատասխան տարածությունը, որը հնարավորություն կտա երեխային՝ պատկերացնելու, հորինելու և ստեղծագործելու: Ջարգացնող միջավայրի բաղկացուցիչ մասն է՝ այսպես կոչված «կախարդական արկղիկը»: Ցանկալի է, որ այն լինի ոչ միայն մանկապարտեզում, այլև յուրաքանչյուր ընտանիքում: Այնտեղ կպահվեն զանազան հագուստներ, պարագաներ՝ երեխայի թատերական գործունեությունը կազմակերպելու համար: Նա ազատ կարող է վերցնել իրեն անհրաժեշտ առարկան, որը կարճ ժամանակում հնարավոր է վերածել կոստյումի կամ զարդի: Օրինակ, փայտի կտորը հնարավոր է դարձնել և՛ փերիի կախարդական փայտիկ, և՛ թագավորական գավազան, և՛ անվախ ասպետի զենք, և՛ դիրիժորական փայտիկ:

Թատերական խաղեր կազմակերպելիս երեխաները հաճախ իրենք են ստեղծում դեկորատիվ պայմաններ՝ իրենց շրջակա միջավայրից կամ առօրյա կենցա-

ղային իրերից: Դեկորներ պատրաստելիս երեխան վերարտադրում է այն միջավայրը, որի մեջ պատկերացնում է այդ հերոսին: Այդ կերպ զարգանում է նրա պատկերային մտածողությունը:

ԽԱՂ - ՁՎԱՐՃԱԼԻՔՆԵՐ

Մանկապարտեզում երեխաների սիրած զբաղմունքներից են խաղ-զվարճալիքները, որոնք ապահովում են արդյունավետ, ուրախ հաղորդակցություն, զարգացում են ընդհանրության զգացումը, ուշադրությունը, անկաշկանդ գործելու կարողությունը:

ԽԱՂԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Ինքնաբուխ գործունեությունը ծնվում է երեխայի հետաքրքրություններից: Այն ամենաարդյունավետն է: Ինքնաբուխ գործունեության ընթացքում երեխայի մեջ դրսևորվում են խոսելու և շփվելու հակումները: Նրա խոսքն ու գործողություններն ավելի ազատ են, միտքը ճկուն է, որովհետև բացակայում են երեխային կաշկանդող թելադրանքն ու հսկողությունը: Նա ինքն է իրավիճակի «հեղինակը» և իր իսկ ստեղծած իրավիճակում իրեն զգում է՝ ինչպես ծուկը ջրում. ամեն ինչ անում է իր հակումների թելադրանքով:

Ինքնակազմակերպվող գործունեության ժամանակ երեխան՝

բավարարում է իր բնական հակումները,

բացահայտում է իր առանձնահատկությունները,

ինքնադրսևորվում է,

սոցիալական հարաբերությունների մեջ է մտնում ընկերների հետ և ինքնուրույն կարգավորում իր հարաբերությունները,

փորձում է ինքնուրույն հաղթահարել խոչընդոտները,

առօրյա խնդիրներին սովորական կամ անսպասելի լուծումներ է գտնում,

սովորում է իր առջև խնդիրներ դնել և լուծել:

Անկախ, ազատ գործող երեխան լիարժեքորեն օգտագործում է իր բոլոր հմտությունները, ունեցած տեղեկատվությունը՝ դրանք միաժամանակ փոխանցելով իր ընկերներին և յուրացնելով նրանցը: Այդ ընթացքում նա կենցաղային, սոցիալական և հոգեբանական խնդիրներ է լուծում:

Հատկապես օրվա երկրորդ կեսին երեխաներին շատ է ոգևորում խաղային իրավիճակների ստեղծումը, որը նրանց ինքնակազմակերպման, ինքնադրսևորման, ինքնարտահայտման, անհատականության դրսևորման հնարավորություն է տալիս: Երեխան դառնում է նախաձեռնող, սոցիալապես ակտիվ:

Երեխաների վերապրած հույզերն իրական խաղային և պայմանական իրավիճակ-

ներում, որոնք առաջանում են դաստիարակի նախաձեռնությամբ կամ տարերայնորեն, հարստացնում են նախադպրոցականների հուզաշխարհը, բացում նոր հնարավորություններ ինքնարտահայտման և համագործակցության համար:

Խաղարկային իրավիճակները կարող են նաև ընդհանրապես կապ չունենալ առօրյայի, կենցաղի հետ: Դրանց ստեղծողը երեխայի երևակայությունն է: Այս դեպքում նրա մտածողությունն ավելի ազատ ու անկաշկանդ է: Նման խաղեր կազմակերպում է նաև դաստիարակը և ինքն էլ խաղում է երեխաների հետ: Դրանք կարող են հստակ խնդիրներով փոքրիկ խաղ-ներկայացումներ լինել:

Շարժական առարկաները.

Միջավայրում գտնվող շարժական առարկաները զարմանալիորեն ազդում են երեխաների խաղի վրա: Խաղահրապարակների քանակն ու հասանելիությունը, տարածքների և պարագաների տարատեսակությունն ու բարդությունը ազդում են խաղի որակի վրա. «Ֆունկցիոնալ բարդության» /այսինքն՝ փոխգործունեության հնարավորությունների/ «շահարկումները» փոխում են խաղը: Պարագաների «խառնաշփոթ» ապահովող միջավայրն օժանդակում է խաղի առավել բարդությանը և փոխգործունեության հնարավորությունների ավելացմանը:

Ձևական խաղ՝ առարկաների հետ

Առարկաների հետ ձևական խաղը սովորաբար առաջին ունակությունն է խաղացանկում, որ երեխան ձեռք է բերում: Այդ պատճառով, եթե նախադպրոցականը չի կարող ձևացնել երևակայական առարկաներով և կախման մեջ է իրական առարկաներից, ապա պետք է կենտրոնանալ այս ասպեկտի վրա, որովհետև նա հետագայում սահմափակ է դառնում նաև դրամատիկ խաղում:

Վստահություն ձեռք բերելու համար.

- խաղացե՛ք երեխայի հետ, ինչպես ծնողը զավակի հետ: Խաղացե՛ք պահմտոցի, բռնոցի...,
- խաղացե՛ք տիկնիկներով, խաղալիքներով, ուժով չափվե՛ք երեխայի հետ,
- խաղի ընթացքում ուշադրություն դարձրե՛ք, թե ո՞ր խաղալիքներն է երեխան սիրում,
- խրախուսե՛ք երեխային կրկնել ձեր գործողությունները,
- ընտրե՛ք այնպիսի թեմա, որ երեխաների ամբողջ մի խումբ կարողանա գործողություն կատարել իրական առարկաներով,
- իրական առարկաները փոխարինե՛ք երևակայական առարկաներով,
- առաջարկե՛ք դեր այն երեխային, որը խաղին չի մասնակցում,
- խաղի ժամանակ օգտագործե՛ք խոսքն ու լեզուն խթանող վարժություններ,
- խոսե՛ք ինքներդ ձեզ հետ /երբ որևէ գործողություն եք կատարում, պատմե՛ք այն, ինչ անում եք/,

- արտասանե՞ք պարզ մանկական ոտանավորներ,
- ստեղծե՞ք սցենար, որը խաղի մեջ կընդգրկի բոլոր երեխաներին,
- դեր ստանձե՞ք և դեկավարե՞ք սցենարը,
- կատակե՞ք կամ ծիծաղելի մի բան արե՞ք խաղի ժամանակ,
- մի՛ ակնկալե՞ք, որ երեխան իր բոլոր խաղալիքները կտրամադրի ընկերներին,
- համոզվե՞ք, որ երեխան գիտի զգացական բառեր,
- հաճախակի գովե՞ք երեխային:

ԽԱՂԱԼԻՔԻ ԴԵՐԸ ԵՐԵՒԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Խաղալիքը մեծ դեր ունի երեխայի կյանքում: Գիշտ ընտրված խաղալիքների միջոցով երեխաները սովորում են սիրել, հոգատար լինել շրջապատի նկատմամբ, զարգանում է նրանց հուզական աշխարհը: Որպես մանկության անբաժանելի մաս՝ դրանք պետք է համապատասխանեն երկու կարևորագույն չափանիշի՝ չվնասեն երեխայի ֆիզիկական ու հոգեկան առողջությանը և լինեն էկոլոգիապես մաքուր ու անվտանգ:

Ձարգացնող խաղալիքները երեխայի կյանք ներխուժում են դեռևս կրտսեր տարիքից: Ցանկացած զարգացնող խաղալիք երեխայի առաջ դնում է ուսուցողական խնդիր, որի լուծումը խաղալիքի մեջ է: Կարևոր է հաշվի առնել այն փաստը, որ զարգացնող խաղալիքները նպաստում են մտավոր ունակությունների, ուշադրության և հիշողության զարգացմանը: Միաժամանակ ձևավորվում են մի շարք կարողություններ և հմտություններ՝ առարկաների միացման, անջատման, հրման, շարման, դասակարգման, տրամաբանական պատկերացման, գործողությունների վերլուծության, համեմատության և ընդհանրացման: Այսինքն՝ ձևավորվում են ճանաչողական ունակություններ, օրինակ՝ բացել և փակել տուփը, հավաքել ու շարել խորանարդիկները, ամրացնել շրջանակները ձողի վրա: Երեխան յուրացնում է առաջ և հետ գործողությունները, ճանաչում առարկաների հատկանիշները (մեծփոքր, լայն-մեղ), որակը (ամուր, կարծր, փափուկ, ծանր, թեթև), քանակը (մեկ, շատ, քիչ), չափը, ձևը, (շրջան, խորանարդ, գունդ, օղակ):

Երեխան ծանոթանում է նաև առարկաների այլ հատկություններին, օրինակ, գնդակը գլորվում է՝ կանգուն չէ, իսկ խորանարդիկները չեն գլորվում՝ կանգուն են:

ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՏԻԿՆԻԿ.: Առանց այս խաղալիքի չի անցնում ոչ մի սյուժետադերային խաղ: Խաղի և խաղալիքների (տիկնիկ) միջոցով երեխան ճանաչում և բացահայտում է

ինքն իրեն: Նա միաժամանակ խաղի մեջ է ներգրավում մուլտֆիլմի, հեքիաթների հերոսներին՝ վերարտադրելով իրավիճակը:

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ: Այս խաղերը երեք-չորս տարեկան երեխաների համար ավելի բարդ են: Ջարգացնում են մանր և միջին մոտորիկական և մարզում երևակայական մտածողությունը: Այսինքն՝ երեխան պետք է պատկերացում կազմի, թե ի՞նչ է ուզում կառուցել, և հետո իրականացնի այն:

ԳԼՈՒԽԿՈՏՐՈՒԿՆԵՐ: Սրանք հիանալի խաղեր են երեխայի մտածողությունը զարգացնելու համար: Այս խաղերի շարքում են նաև փազլները, անավարտ նկարները:

ԽՃԱՆԿԱՐ: Այս խաղերը շատ կարևոր են երեխայի հոգեկան ձևավորման համար: Դրանք մարզում են մանր մոտորիկական, զարգացնում պատկերավոր մտածողությունը: Խճանկարում երեխան մանր մասնիկներով պատկերում է ամբողջական նկարը:

ՍՅՈՒԺԵՏԱՅԻՆ ԽՍՂԱԼԻՔՆԵՐ: Այս խաղալիքների հիմնական խնդիրը ստեղծագործական ունակությունների զարգացումն է: Անհրաժեշտ է, որ դրանք մեթոդապես ճիշտ կիրառվեն մանկավարժի կողմից: Վերջինս պետք է որոշի խաղի բովանդակությունը, որպեսզի ուղղորդի երեխային, հետաքրքրություն և հույզեր առաջացնի նրա մեջ և տանի խաղի ընթացքը՝ սյուժետային խաղալիքներով:

ԵՐԵՄԱՆԵՐԸ ՏԱՐԵՎԵՐՋԻՆ ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱՆ՝

- ✓ Ստեղծել և խաղալ դերային խաղեր, համագործակցել հասակակիցների հետ:
- ✓ Քննարկել խաղի հետ կապված գաղափարներ, կատարել դերաբաշխումներ:
- ✓ Դերային խաղի ժամանակ ընտրել համապատասխան թեմատիկա և ստեղծել սյուժե՝ օգտագործելով տարբեր աղբյուրներից ձեռք բերած գիտելիքները:
- ✓ Ստանձնելով որևէ դեր՝ ընդլայնել խաղի միասնական թեմատիկան, կատարել դերերի փոփոխություն:
- ✓ Խաղում կիրառել տարբեր փոխարինող առարկաներ, կատարել պայմանական առարկայական գործողություններ, ժեստեր, բառախաղեր...:
- ✓ Ստեղծել առարկայական-խաղային իրավիճակ՝ իրագործելու սեփական մտահղացումները՝ օգտագործելով փոխարինող առարկաներ, խաղալիքներ, երևակայական առարկաներ, կերպարներ և այլն:
- ✓ Հասակակիցների հետ խաղալիս տալ իրավիճակին համապատասխան հարցեր:
- ✓ Դերային խաղերի ժամանակ փոխել ձայնի ինտոնացիան դերին համապատասխան:

✓ Մասնակցել պարզ կանոններով խաղերի, բակում և խմբասենյակում խաղալ բոլոր երեխաների հետ:

✓ Դիդակտիկ խաղերի ժամանակ ենթարկվել կանոններին, հաղթահարել դժվարությունները:

✓ Ընդհատել խաղը, կատարել այլ գործողություն, այնուհետև կրկին շարունակել խաղը:

✓ Խաղերի մեջ կիրառել գեղարվեստական գրականության, երաժշտական գործերի պատրաստի նմուշներ:

✓ Ինքնուրույն խաղերի ժամանակ հանդես գալ կազմակերպչի դերում, բացատրել խաղի կանոնները:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐ

Ներկայումս նախադպրոցական դիդակտիկայում լայն տարածում են գտել ուսուցման ժամանակակից /խաղային, գործնական, ակտիվ/ մեթոդները: Վերջիններս հայտնի են որպես ինտերակտիվ կամ փոխգործուն մեթոդներ:

խաղային մեթոդների առավելությունները պայմանավորված են խաղային մթնոլորտի բարձր հուզականությամբ, երեխայի համար խաղի բնական և հոգեհարազատ բնույթով: Ուսուցանող են խաղի բոլոր տեսակները: Սակայն հատուկ ուսուցմանն են միտված դիդակտիկ խաղերը, որոնք իրականացնում են երկու կարևոր գործառնություններ.

- խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացումը,

- նպաստում են գիտելիքների ամրապնդմանը և կատարելագործմանը:

Հետաքրքիր խաղային մեթոդ է երևակայական իրադրությունների խաղարկումը, որի ընթացքում երեխայի գիտելիքները և կարողությունները ձեռք են բերվում պարտադրված դերային գործողությունների միջոցով /խաղային իրավիճակներ/:

Ուսուցման **գործնական մեթոդների** խմբին են դասվում տարատեսակ վարժությունները, փորձերը, հետազոտումը և մոդելավորումը:

Ակտիվ ուսուցման մեթոդները նպաստում են ազատ մտածելու, համարձակ կարծիք հայտնելու կարողությունների և տարածականության զարգացմանը, ինացության գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը: Դրանք խմբային մտավոր աշխատանքի եղանակներ են՝ նպատակաուղղված համատեղ մտորումների և որոնումների քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը:

Ուսուցման փոխներգործուն /մտազրոհ, աշխատանք ենթախմբերով, հարցեր ու հարցադրումներ, իրավիճակի վերլուծություն, դերային խաղ.../ մեթոդները համապատասխանում են անհատակողմնորոշիչ ուսուցման սկզբունքներին¹:

Այդուհանդերձ, չկան ինտերակտիվ մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր: Ցանկացած խումբ, պարապմունք եզակի ու անկրկնելի են: Դաստիարակի խնդիրն է՝ ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել եզակի իրավիճակին:

ՈՒՍՈՒՑՍԱՆ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՍԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- Խմբասենյակը պատրաստել աշխատանքն սկսելուց առաջ:
- Ցանկալի է, որ երեխաների նստելու դիրքը կամ աթոռների դասավորությունը նպաստեն դրան/շրջանաձև, եղևնու ձևով և այլն/: Անհրաժեշտ պարագաները պետք է նախապատրաստել նախապես:
- Աշխատանքում պետք է այս կամ այն կերպ ներգրավված լինեն բոլոր երեխաները:
- Հարկավոր է հոգալ երեխաների հոգեբանական պատրաստվածության մասին: Երեխաների կաշկանդվածությունը, վարքի ավանդական ձևերը հաղթահարելու համար անչափ կարևոր է նրանց խրախուսելը՝ հնարավորություն ընձեռնելով, որ նրանք խորացնեն իրենց ընդունակությունները:
- Ցանկալի չէ սովորողների մեծաքանակ խումբը: Եթե խումբը մեծաքանակ է, արդյունավետ է աշխատանքը կազմակերպել փոքր խմբերով /ենթախմբերով/, որ բոլորն արտահայտվելու հնարավորություն ունենան:
- Կիրառել փոքր խմբերի բաժանման որոշակի սկզբունքներ՝ կամավորություն, պատահական ընտրություն, ըստ հետաքրքրությունների և այլն:
- Հետևել ժամանակին:

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Նախադպրոցական կրթության կարևոր խնդիրներից է ուսումնառությունը թեմատիկ պարապմունքերի միջոցով կազմակերպելը: Թեմատիկ պարապմունքները կարևորում են գործունեության այն ձևերը, որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում:

Թեմատիկ ուսուցումն ապահովում է երեխայի զարգացման մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի զարգա-

¹ Տե՛ս, Զ. Միտոյան, Լ. Սմբատյան «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Երևան, 2010թ.:

ցումը և չի կենտրոնանում մեկ՝ առանձնացված ոլորտի վրա: Այն ենթադրում է ուսումնական ծրագրի տարբեր բաժինների միավորում՝ մեկ հետաքրքիր գաղափար ուսումնասիրելու միջոցով, որի մեջ ամփոփված են տարբեր առարկաներից բովանդակային միավորներ: Թեմատիկ ուսուցման ծրագիրն այնպես է կազմված, որ երեխաները տեսնուն և հասկանուն են առարկայական ոլորտների միջև ու կյանքի հետ գոյություն ունեցող կապերը: Այսինքն՝ թեմատիկ ուսուցումը միջառարկայական է, ինչպիսին որ ինքը՝ կյանքն է:

Թեմատիկ ուսուցումը հնարավորություն է տալիս դաստիարակին՝ ծրագիրը կազմակերպել երեխաների համար հետաքրքրություն ներկայացնող թեմաների, խնդիրների կամ կենսական հարցերի շուրջ:

Թեմատիկ պարապմունքի ծրագրման ժամանակ դաստիարակը պետք է հաշվի առնի հետևյալ հարցերը.

- արդյոք, թեման համապատասխանում է երեխաների հետաքրքրություններին,
- նպաստում է երևակայության ու ստեղծագործական մտքի խթանմանը,
- հնարավոր է ընտրված թեման անցնել այնպես, որ ապահովվի երեխաների բազմամակարդակ մասնակցությունը, և, միաժամանակ, յուրաքանչյուր երեխայի գործադրած ջանքը պսակվի հաջողությամբ,
- երեխաները հնարավորություն կունենան համագործակցելու և որոշակի պատասխանատվություն կրելու,
- կարող են նրանք ավելացնել իրենց գիտելիքները և փորձը՝ առարկաների, մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԹԵՄԱՏԻԿ ՊԱՐԱՊՄՈՒՆԶՆԵՐԻ
ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ԹԵՄԱ	ՆՊԱՏԱԿԸ	ԺԱՄԱՆԱԿԱՎ- ՀԱՏՎԱԾԸ	ԹԵՄԱՅԻՆ ԱՐՆՉՎՈՂ ՄԻՋՈՑԱ- ՈՒՄՆԵՐ
Գիտելիքի օր	<p>Նպաստել երեխաների ճանաչողական ունակությունների զարգացմանը, հետաքրքրություն առաջացնել դպրոցի և գրքերի նկատմամբ: Ձևավորել ընկերական, բարեկամական հարաբերություններ: Շարունակել ծանոթացնել մանկապարտեզին՝ որպես ամենամոտ սոցիալական միջավայրի, ուշադրություն դարձնել մանկապարտեզում տեղի ունեցած փոփոխություններին /վերանորոգման աշխատանքներ, նոր կահույք կամ խաղալիքներ/: Ընդլայնել մանկապարտեզի աշխատակիցների մասնագիտությունների վերաբերյալ երեխաների պատկերացումները:</p>	01 -10 -ը սեպտեմբերի	<p>Ուրախ ցերեկույթ «Գիտելիքի օր»: Տոնակատարությունը կազմակերպում են մանկապարտեզի աշխատակիցները, մասնակցում են նաև ծնողները:</p> <p>Երեխաները չեն մասնակցում կազմակերպչական աշխատանքներին, բայց ցերեկույթի ակտիվ մասնակիցներն են և ցուցադրում են իրենց ընդունակությունները:</p>

Աշուն	<p>Ճշտել և ամրապնդել երեխաների գիտելիքներն աշնան մասին: Ձևավորել ունակություն՝ տարբեր դիտումների միջոցով գտնելու պարզագույն կապեր կենդանի ու անկենդան բնության միջև: Ընդլայնել երեխաների պատկերացումները մրգերի, բանջարեղենի մասին: Սովորեցնել հիանալ բնության գեղեցկությամբ, դրսևորել խնամքոտ վերաբերմունք:</p>	01 -10-ը հոկտեմբերի	Տոնահանդես՝ «Աշուն»: Երեխաների ստեղծագործությունների ցուցահանդես
Իմ ընտանիքը	<p>Ընդլայնել իրենց ընտանիքի մասին երեխաների պատկերացումները: Ձևավորել նախնական պատկերացումներ՝ ընտանիքում ազգակցական կապերի մասին /հայր, մայր, աղջիկ, տղա.../: Ամրապնդել իրենց անունը, ազգանունը, հայրանունը ճիշտ անվանելու կարողությունը, իմանալ ծնողների անուն-ազգանունները, ծանոթացնել նրանց մասնագիտություններին: Դաստիարակել հարգանք՝ մոտ հարազատների աշխատանքի հանդեպ:</p>	01 -10-ը նոյեմբերի	Բաց դռների օր Ցերեկույթ՝ «Տատիկը՝ մեզ հյուր» Չվարճալի ցերեկույթ՝ «Մրցում են հայրիկները»

<p>Գարուն և ծաղիկներ</p>	<p>Ընդլայնել պատկերացումները գարնան և գարնանային ծաղիկների մասին: Նպատակային դիտումների միջոցով կարողանալ գտնել պարզագույն կապեր կենդանի և անկենդան բնության միջև: Ձևավորել բնության գրկում անվտանգ վարքագիծ դրսևորելու ունակություն: Տալ պատկերացումներ գարնանը այգիներում և բանջարանոցներում տարվող աշխատանքների մասին: Կարողանալ անվանել և բնութագրել գարնանային մի քանի ծաղիկներ՝ ձմեռային, մանուշակ, կակաչ:</p>	<p>05 -15-ը մարտի</p>	<p>Տոնակատարություն՝ «Բարև, գարուն» Ուրախ ցերեկույթ նվիրված մայրիկներին</p>
<p>Երթևեկության կանոններ</p>	<p>Ծանոթացնել երեխաներին ճանապարհային երթևեկության պարզագույն կանոններին: Բացատրել, որ փողոցում անվտանգությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե երեխաները որքան լավ գիտեն և ինչպես են կիրառում ճանապարհային երթևեկության կանոնները /առանց մեծի չի կարելի անցնել փողոցը, չի կարելի դուրս գալ մայթից, պետք է քայլել մայթի աջ կողմով, անցնել փողոցը վերգետնյա կամ ստորգետնյա անցումով/: Ծանոթացնել լուսակրի աշխատանքին և գույների նշանակությանը:</p>	<p>15 -25-ը ապրիլի</p>	<p>Միջոցառում՝ «Պահպանենք երթևեկության կանոնները» Գործնական խաղ՝ «Խաչմերուկում»</p>

<p>Իմ հայրենի քաղաքը /գյուղը, ավանը/</p>	<p>Ծանոթացնել երեխաներին հայրենի քաղաքի /գյուղի, ավանի հետ/: Ձևավորել նախնական պատկերացումներ նրա պատմության և կուլտուրայի մասին: Սեր դաստիարակել հարազատ ծննդավայրի նկատմամբ, տալ տեղեկություններ պատմական և տեսարժան վայրերի մասին, նշել, թե ինչ ժողովուրդներ են ապրում այնտեղ: Պատմել իրենց շուրջը ապրող մի քանի նշանավոր մարդկանց մասին:</p>	<p>10 -20-ը մայիսի</p>	<p>Սպորտային միջոցառում՝ ծնողների մասնակցությամբ: Էքսկուրսիա՝ հայրենի քաղաքի տեսարժան վայրեր:</p>
------------------------------------------	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	------------------------	---------------------------------------------------------------------------------------------------

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Գեղարվեստագեղագիտական զարգացումն սկսվում է նախադպրոցական տարիքից՝ իր առջև խնդիր դնելով ակտիվացնել երեխաների շփումը արվեստի հետ: Արվեստը և բնությունն իրենց մեջ ներառում են կյանքի ու մարդկության հավաքական գեղեցկության տարրեր, որոնք ընկալելի և ընդունելի են բոլորի կողմից: Գեղարվեստագեղագիտական զարգացման հիմքում ընկած են գեղարվեստական արժեքներն ընկալելու, վերատադրելու, դրանց հանդեպ գիտակցական վերաբերմունք դրսևորելու գործընթացներ: Միջին խմբի տարիքային առանձնահատկությունը հնարավորություն է տալիս արդյունավետ կազմակերպել կերպարվեստային գործունեության ցանկացած տեսակ: Այս տարիքային խմբի երեխաները կարող են հեշտությամբ և ակտիվորեն շփվել, հաղորդակցվել, ներգրավվել խաղի մեջ, հրապուրվել հորինած կերպարներով: Տեսնել կենցաղում, բնության մեջ հանդիպող, արվեստում վերարտադրված առարկաների գեղարվեստական արտահայտչականությունը, դրանց բնորոշ հատկությունները, առանձին մասերը, ձևը, ուրվագիծը, գույները, նախշերը: Այս խմբի երեխաներին հատուկ է՝ մեծ ոգևորությամբ զննել և ուսումնասիրել այն նմուշը, որն առաջարկվում է նկարել կամ ծեփել: Նրանք ուսումնասիրում են առարկայի արտաքին տեսքը, դիտում են, զննում, շոշափում: Սովորում են թղթով, գործվածքով, բնական նյութերով, պլաստիլինով, կավով, խմորով, գունաներկերով տարբեր աշխատանքներ կատարելու ձևերն ու եղանակները: Նախադպրոցական տարիքի երեխաները հաճախ իրենց նախածեռնությամբ ինտեգրում են կերպարվեստային գործունեության տեսակները: Այդ գործընթացն ավելի

վառ է արտահայտվում տարբեր նյութերով և արտահայտչամիջոցներով կերպարները գեղարվեստորեն պատկերելու ժամանակ: Գեղարվեստագեղագիտական գործունեության բնագավառում կարևոր տեղ է զբաղեցնում կերպարվեստային գործունեությունը:

Կերպարվեստային գործունեության նպատակն է՝

- Երեխաների մեջ զարգացնել գեղագիտական ընկալման, գեղագիտական ճաշակի, իրական երևույթների ու առարկաների նկատմամբ հուզազգայական վերաբերմունք:

- Ջարգացնել նրանց գեղարվեստաստեղծագործական ունակությունները:

Կերպարվեստային գործունեության խնդիրներն են՝

Ընդլայնել պատկերացումներն ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային արվեստի ստեղծագործությունների վերաբերյալ, զարգացնել հետաքրքրասիրություն գեղանկարի, նատյուրմորտի, պատկերագարո գրքերի, դեկորատիվ կիրառական արվեստի մոտիվների նկատմամբ՝ որպես երեխաների գեղարվեստական ստեղծագործական աշխատանքի սկիզբ:

Շարունակել զարգացնել գեղագիտական զգացողությունը, երևակայությունը, գեղարվեստագեղագիտական ունակությունները, առարկաները դիտելու և հետազոտելու կարողությունները, այդ թվում նաև ձևավորել կերպարային պատկերացումները շոշափելու օգնությամբ:

Շարունակել զարգացնել հետաքրքրասիրություն կերպարվեստային գործունեության տեսակների նկատմամբ, տարբեր արտահայտամիջոցներով միևնույն ձևը կամ կերպարը վերարտադրելու ունակությունները:

Ընդլայնել և զարգացնել պատկերացումները կենցաղի, տրանսպորտի, մրգերի, բանջարեղենի, ծաղիկների, ծառերի, կենդանիների, բնության երևույթների, ինչպես նաև տոների ու նշանակալից իրադարձությունների վերաբերյալ:

Երեխաների ուշադրությունը հրավիրել տարբեր առարկաներին բնորոշ հատկությունների՝ դրանց ձևերի, ուրվագծի, առանձին մասերի, գույների, նախշերի և գեղարվեստական արտահայտչականության վրա:

Սովորեցնել տարբեր նյութերով բազմամաս կոմպոզիցիայի ստանալու ձևերն ու եղանակները:

Օգնել երեխաներին՝ ընտրելու թեմաներ խմբային աշխատանքների համար: Սովորեցնել ինքնուրույն գտնել պարզ թեմաներ՝ շրջակա միջավայրից, գեղարվեստական գրքերից:

Երեխաների համար ստեղծել ազատ, անկաշկանդ միջավայր, ինքնուրույն աշխատելու, ստեղծագործելու, գեղարվեստական գործունեությամբ զբաղվելու համար:

Կազմակերպել խմբային աշխատանք: Մեկ պարապմունքի շրջանակում կիրառել կերպարվեստային գործունեության տարբեր տեսակներ՝ նկարչություն, ապլիկացիա, ծեփ, կառուցումներ: Օրինակ, խմբի ենթախմբերից մեկը կատարում է ապլիկացիա՝ (կտրում և սոսնձում է), մյուսը ծեփում է, երրորդը՝ կառուցում:

Երեխային սովորեցնել համագործակցային աշխատանքներում համաձայնեցնել գործողությունները հասակակիցների հետ:

Ոգևորել և խրախուսել երեխաներին՝ արտահայտելու իրենց հույզերը, վերաբերմունքը, ապրումները, մտքերը գեղարվեստական գործունեության կամ որևէ ստեղծագործության վերաբերյալ:

Ձարգացնել հետաքրքրասիրությունն նոր բառերի իմաստի նկատմամբ՝ «Նկարիչ», «թանգարան», «նկար», «ցուցահանդես», «քանդակ» և այլն:

Դրսևորել հարգանք և հոգատար վերաբերմունք՝ գեղարվեստական գործունեության և աշխատանքի արդյունքի նկատմամբ:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Նկարչություն

Նկարչությունը առարկաների և երևույթների պատկերումն է՝ գծելու, նկարելու միջոցով: Այն դրսևորվում է տարբեր արտահայտչամիջոցներով՝ ընդգծելով արվեստի այդ տեսակին բնորոշ հատկանիշները՝ գույնը, ձևը, չափը և այլն:

Միջին խմբի երեխաների շրջանում պետք է շարունակել ձևավորել առանձին առարկաներ նկարելու հմտություններ և այդ առարկաների պատկերները կրկնելով ու դրանց ավելացնելով այլ պատկերներ՝ ստանալ թեմատիկ կոմպոզիցիաներ:

Ձևավորել ու ամրապնդել պատկերացումները առարկայի ձևի /շրջան, ձվածիր, քառակուսի, եռանկյուն, ուղղանկյուն/ մեծության, դիրքի, կառուցվածքի վերաբերյալ:

Երեխաների ուշադրությունը հրավիրել առարկաների՝ միմյանց նկատմամբ հարաբերությանը, ըստ բարձրության. օրինակ՝ ծառերը բարձր են, թփերը ցածր, իսկ ծաղիկներն ավելի ցածր են:

Շարունակել ամրապնդել և ընդլայնել երեխաների պատկերացումները շրջապատող առարկաների ու կառույցների, դրանց գույների ու գուններանգների վերաբերյալ:

Ձևավորել պատկերացումներ նոր գույների ստացման վերաբերյալ: Սովորեցնել գույների խառնուրդից նոր գույների և գուններանգների ստացման հնարները: Իրենց արդեն հայտնի գույներից երեխաները կարող են ստանալ նարնջագույն, շագանակագույն, բաց-կանաչ և այլն:

Սովորեցնել տարբերել հակադիր գույները: Առաջարկել ստանալ աստիճանա-

բար մի քանի բաց գույն՝ պահպանելով մեկ գույնից մյուսի ստացման տեխնիկան:
Նկարել բնօրինակից, մտահղացմամբ և երևակայությամբ պատկերել պարզ թեմաներ՝ ընդգծելով առարկաների հիմնական հատկանիշները՝ կառուցվածքը, գույնը, ձևը: Օգնել երեխաներին՝ նկարել թեմային համապատասխան՝ առանց շեղվելու դրա բովանդակությունից:

Կառուցել բազմաձև նախշեր, պատկերներ և կոմպոզիցիաներ՝ երկրաչափական ձևերի, գծերի, բծերի, կետերի, հպումների, քսվածքների, վրձնահարվածների միջոցով:

Ձևավորել նկարելու հմտություններ՝ զարգացնելով մանր մոտորիկան:

Կիրառել ոչ ավանդական մեթոդներով նկարելու հմարներ:

Տարեվերջին երեխաները պետք է կարողանան՝

ճանաչել, տարբերել, անվանել և նկարել երկրաչափական պատկերներ /եռանկյուն, շրջան, ձվածիր, ուղղանկյուն, քառակուսի/:

Ընտրել և օգտագործել տարբեր գույներ՝ կարմիր, դեղին, կանաչ, կապույտ, սև, սպիտակ, շագանակագույն և այլն:

Հստակ վերարտադրել առարկաներն ու երևույթները՝ օգտվելով ծանոթ արտահայտչամիջոցներից:

Կոկիկ և խնամքով երանգավորել պատկերվող առարկան, օգտագործել տարբեր նկարչական նյութեր:

Ծեփ

Շարունակել զարգացնել հետաքրքրությունն ծեփակերտման նկատմամբ, կատարելագործել ծեփանյութից (պլաստիլին, աղի խմոր, կավ) օգտվելու հմտությունները:

Ամրապնդել ծեփելու՝ նախորդ տարիքային խմբերում ուսուցանված եղանակները:

Ծանոթացնել կերտածողի օգտագործման եղանակներին և հնարներին:

Խրախուսել երեխայի ձգտումը՝ ծեփանյութով աշխատելու ուղղությամբ:

Ամրապնդել կոկիկ աշխատելու կարողությունները:

Միջին խմբում շարունակել զարգացնել նախորդ տարիքային խմբում երեխաների ձեռք բերած հմտությունները և կարողությունները: Ծեփակերտման միջոցով երեխաները պետք է կարողանան ծեփել պարզ կառուցվածք ունեցող առարկաներ:

Խորացնել մուշօրինակի առավել ճիշտ պատկերման ձգտումը:

Կիրառել ծեփանյութերից ծեփելու տեխնիկայի պարզ տարրեր՝ գնդի տափա-

կեցման միջոցով ստանալ շրջանաձև բլիթ և այլն:

Շարունակել ձևավորել՝ փոքր դետալներ ծեփելու, միմյանց միացնելու և ստացված հատվածը հարթեցնելու հմտություն: Սովորեցնել՝ ծեփագնդից մարմնի տարբեր մասեր՝ ականջ, կտուց, քիթ և այլն, առանձնացնելու ձևերը /2 մատով ձգել, թույլ սեղմել և հարթեցնել/:

Ծեփել ծանոթ առարկաներ և խաղալիքներ:

Ամրապնդել կերտածողից օգտվելու կարողությունները:

Ամրապնդել կոկիկ և խնամքով ծեփելու ունակություն:

Դեկորատիվ ծեփ

Շարունակել ծանոթացնել դեկորատիվ ծեփի առանձնահատկություններին: Ձևավորել հետաքրքրություն՝ դեկորատիվ կիրառական արվեստի նմուշների նկատմամբ:

Ծեփել և զարդանախշել սպասք: Չարդանախշել երկրաչափական պատկերներ՝ լրացուցիչ և օժանդակ նյութերով:

Ծեփակերտման միջոցով ստեղծել տարբեր առարկաներ, միավորելով դրանք ընդհանուր կոմպոզիցիայում. օգտվել արդեն ծանոթ ծեփակերտման եղանակներից և հնարներից:

Տարեվերջին երեխաները պետք է կարողանան՝

Ծեփակերտման միջոցով ստեղծել տարբեր առարկաներ և միավորել դրանք ընդհանուր կոմպոզիցիայի մեջ՝ օգտվելով արդեն ծանոթ ծեփակերտման եղանակներից և հնարներից:

Ապլիկացիա

Հետաքրքրություն արթնացնել ապլիկացիայի նկատմամբ՝ աստիճանաբար բարդացնելով դրա բովանդակությունը և ընդլայնելով բազմազան պատկերներ ստեղծելու երեխաների հնարավորությունները: Ձևավորել մկրատը ճիշտ բռնելու և դրանից օգտվելու կարողություններ: Ուսուցանել մկրատով թուղթ կտրելու տեխնիկան. ձևավորել թուղթը ուղիղ, կարճ, երկար զուլակներ կտրելու հմտություններ: Սովորեցնել զուլակներից կազմել տարբեր պատկերներ (ցանկապատ, նստարան, աստիճան, ծառ, թուփ և այլն), կտրելով ստանալ քառակուսի պատկերից շրջանաձև պատկեր, ուղղանկյունից՝ օվալաձև, մկրատով կորացնելով անկյունները: Այս հնարն օգտագործել բանջարեղեն, մրգեր, հատապտուղներ, ծաղիկներ պատրաստելու և այլ գործողությունների ժամանակ:

Շարունակել ապլիկացիայի եղանակով ստանալ պատկերներ (թռչուններ, կենդանիներ, ծաղիկներ, միջատներ, տներ՝ ինչպես իրական, այնպես էլ երևակայական)՝ ավելացնելով մասնիկների քանակը: Պատրաստի երկրաչափական ձևերից ստանալ պատկերներ: Սովորեցնել ձևափոխել դրանք՝ կտրելով բաժանել երկու, չորս մասերի (շրջանը բաժանել կիսաշրջանների, քառորդների, քառակուսին՝ եռանկյունների): Ամրապնդել կոկիկ կտրելու, սոսնձելու հմտությունները:

Տարեվերջին երեխաները պետք է կարողանան՝

Մկրատը ճիշտ բռնելով՝ թուղթը կտրել ուղիղ գծով և անկյունագծով (քառակուսի, ուղղանկյուն), ստանալ քառակուսի պատկերից շրջան, ուղղանկյուն պատկերից՝ ձվածիր՝ սահուն կտրելով և կորացնելով անկյունները:

Կոկիկ և խնամքով սոսնձել մի քանի մասերից բաղկացած պատկերները:

Ընտրել պատկերվող առարկային համապատասխան գույներ: Գույներն ընտրել ըստ նմուշի, ինչպես նաև ցանկությամբ:

Կազմել նախշեր՝ բուսական և երկրաչափական պատկերներից:

Կառուցողական

Ուշադրություն դարձնել մանկապարտեզի շրջակայքում գտնվող շենքերի, շինությունների տարբերություններին: Ջրոսանքների ժամանակ, խաղի ընթացքում դիտել մեքենաներ, սայլակներ, ավտոբուսներ և այլ տեսակի տրանսպորտի ձևեր, անվանել դրանց մասերը, առանձնացնել յուրաքանչյուրի ձևը, նկարագրել կառուցվածքը («Ո՞րն է ամենամեծ մասը, որը՝ փոքր, ավելի փոքր...»): Շարունակել զարգացնել շինարարական նյութերը (աղյուս, խորանարդ) ճանաչելու, անվանելու կարողությունները՝ հաշվի առնելով դրանց հատկանիշները (ամրություն, ձև, չափ): Ջարգացնել զուգորդական կապեր ստեղծելու կարողություններ, առաջարկել հիշել, թե ինչ նման կառույցների են իրենք հանդիպել:

Սովորեցնել վերլուծել կառույցը՝ առանձնացնելով հիմնական մասերը, տարբերել դրանց հարաբերական չափը և ձևը, որոշել տարածության մեջ դրանց դասավորվածությունը, մեկը մյուսի նկատմամբ հարաբերությունը (տներում՝ պատեր, վերևում՝ տանիքը, ծածկը, մեքենայում՝ խցիկ, թափք և այլն):

Սովորեցնել ինքնուրույն չափել կառույցն ըստ երկարության, բարձրության, լայնության՝ պահպանելով դաստիարակի կողմից ներկայացված պահանջը («Կառուցի՛ր այսպիսի տուն, բայց ավելի բարձր»):

Սովորեցնել կառուցել ինչպես մանր, այնպես էլ խոշոր շինարարական նյութերով կառույցներ՝ օգտագործելով տարբեր գույների դետալներ:

Երեխաներին մասնակից դարձնել բնական նյութերով (չոր ճյուղեր, աշնանային տերևներ, կոներ, շագանակ, ընկույզի կեղև, ծղոտ և այլն) աշխատանքներին: Սովորեցնել՝ կառուցվող պատկերի մասերը հիմքին ամրացնելու նպատակով և այլ աշխատանքների մեջ օգտագործել սոսինձ, ծեփոն, թելերից մնացած կոճեր, տարբեր տեսակի փոքր տուփեր և այլ առարկաներ:

Սովորեցնել կառուցումներ կատարել թղթով: Ուղղանկյուն թուղթը ծալել երկտակ՝ համատեղելով կողմերն ու անկյունները և ստանալ տարբեր կերպարներ՝ կենդանիներ, ծաղիկներ և այլն: Սուսնծել փոքր դետալները հիմնական մասերին /տնակին՝ պատուհան, դուռ, ծխնելույզ և այլն, ավտոբուսին՝ անիվ, պատուհան և այլն/: Ձևավորման համար օգտագործել տարբեր գույնի դետալներ:

Տարեվերջին երեխաները պետք է կարողանան՝

Օգտագործել կառուցողական նյութի դետալները՝ հաշվի առնելով դրանց կառուցողական հատկանիշները:

Փոփոխության ենթարկել կառույցը՝ դաստիարակի հրահանգին համապատասխան:

Ծալել ուղղանկյուն թուղթը երկտակ՝ համատեղելով կողմերը և անկյունները:

Վերլուծել շինությունը, կառույցը:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՄԻՋԻՆ ԽՄԲՈՒՄ

Շաբաթվա ընթացքում	Կերպարվեստային գործունեության տեսակները			
	4 պարապմունք	2 նկարչություն	1 ծեփ	0,5 ապլիկացիա
Ուսումնական տարվա ընթացքում ընդամենը	68-72 պարապմունք	34 -36 պարապմունք	17-18 պարապմունք	17-18 պարապմունք

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱԿՈՐՈՒՄ
Կերպարվեստային գործունեության բովանդակությունը
Ծրագրային բաժինների պարզաբանում

	Աշխատանքի տեսակը, նպատակը	Բովանդակությունը	Անհրաժեշտ նյութեր
Առաջին եռամսյակ	Նկարչություն, 24 պարապմունք	<p>Գծանկար: Գունանկար: Սովորեցնել նկարել ջրաներկով, գուաշով: Թղթի վրա մի գույն խառնել այլ գույնի հետ: Պատկերել բնության երևույթներ: Նկարել երանգված թղթի վրա, գուաշով, գունավոր կավիճներով: Նկարել «Նկարի՛ր ամառ», «Աշուն», «Ոսկե և սովորական ձվիկներ», «Նոր տարվա խաղալիքներ» և այլ թեմաներով: Երևակայությամբ և հիշողությամբ նկարել՝ «Խնձորենու վրա հասել են խնձորները», «Տիեզերական տարածություն», «Նավ», «Գունավոր փուչիկներ», «Կախարդական ծաղիկներ», «Գեղեցիկ ծաղիկներ», «Յեթիաթային ծառեր» և այլն :</p>	Պատկերագարդ նկարներ, գունավոր մատիտներ, ջրաներկ, գուաշ, վրձին, սպիտակ թղթեր, ջրաման, փորձաթուղթ, մոլբերտ, տակդիր, ծաղիկներ, մրգեր բանջարեղեն, խաղալիքներ
	Ծեփ 12 պարապմունք	<p>Ծեփակերտել հեքիաթների հերոսներին: Ծեփակերտել հիշողությամբ: Համամասնության պահպանում: «Ուրախ ձնեմարդ», «Ու՞մ ձնեմարդն է ավելի լավը» և այլն:</p>	Պատկերագարդ հեքիաթային գրքեր, պատկերագարդ նկարներ, մմուշօրինակներ՝ առարկաներ, կենդանիներ, մարդուկներ, երկրաչափական պատկերներ՝ գունդ, գլան, հարթաքանդակներ, պլաստիլին, կերտածող, տակդիր, լաթ

	<p>Ապիկացիա 6 պարապմունք</p>	<p>Գունավոր թղթերից կտրել քառակուսի, եռանկյուն, կազմել պարզ նախշերի կոմպոզիցիա՝ 2-3 երկրաչափական պատկերների համադրությամբ /շերտ, շրջան քառակուսի/, երանգավորել 3 հիմնական գույներով: Շրջանի, քառակուսու , գլի մեջ կազմել բուսական, երկրաչափական և կենդանական նախշեր, զարդանախշեր, Նոր տարվա խաղալիքներ, զարդաշղթա և այլն: Խմբային աշխատանք:</p>	<p>Գունավոր թղթեր, սպինձ, մկրատ, փորձաթուղթ, մատիտներ, պատրաստի պատկերներ, մկրատ՝ բութ ծայրով, մուշորինակներ</p>
<p>Երկրորդ եռամսյակ</p>	<p>Նկարչություն 24 պարապմունք</p>	<p>Գծանկար, գունանկար Նկարել բնօրինակից՝ մրգեր, բանջարեղեն: • Նատյուրմորտ Բնօրինակից նկարել մրգեր, ծաղիկներ : • Նկարել հիշողությամբ՝ Պատկերել թռչունների և կենդանիների շարժումներ, տարբեր հեքիաթներ /«Չմեռային հեքիաթ», օգտագործել գուններանգված թուղթ, գուլաշ/ Երևակայությամբ և մտահղացմամբ՝ առանձին առարկաների պատկերում՝ մրգեր, բանջարեղեն, կենցաղային առարկաներ, խաղալիքներ և այլն: Սովորեցնել նկարել բնական դիտումների հիման վրա, հակադիր գույներով՝ - «Առաջին ձյունը» , - «Սպիտակ ձյուն», - « Չմեռային երկինք և մռայլ գետին»: Գույների միջոցով ստեղծել տոնական տրամադրություն /սպիտակ թուղթ, գուլաշ/ Խմբային աշխատանք: Թեման՝ «Ուրախ մարդուկները սահադաշտում» և այլն:</p>	<p>Պատկերագարդ նկարներ, գունավոր մատիտներ, կավիճներ, ջրաներկ, գուլաշ, վրձիներ, սպիտակ և երանգավորված թղթեր, ջրաման, փորձաթուղթ մոլբերտ, տակդիր, ծաղիկներ, մրգեր բանջարեղեն, խաղալիքներ, դեկորատիվ նախշերով իրեր</p>

	<p>Ծեփ 12 պարապմունք</p>	<p>Թեմատիկ ծեփ</p> <ul style="list-style-type: none"> • «Երեք խոզուկները» • «Գառնիկ ախպեր» • Տիկնիկի համար դեկորատիվ սպասքև այլն • Պարզագույն երկրաչափական նախշ: 	<p>Հեքիաթների գրքեր, պատկերազարդ նկարներ, մնուշօրինակներ՝ առարկաներ, կենդանիներ, մարդուկներ, երկրաչափական պատկերներ՝ գունդ, գլան, հարթաքանդակներ, պլաստիլին, կերտածող, տակդիր, լաթ</p>
	<p>Ապլիկացիա և կառուցողական 6/6 պարապմունք</p>	<p>Գունավոր թղթից պատկերել պարզ խաղալիքներ: Ստանալ դեկորատիվ գունային կոմպոզիցիա: «Ուրախ խճանկար»՝ Գեղարվեստական իրերի նախշանկարում:</p> <p>Ծավալային մնուշներ՝ թղթից ու ստվարաթղթից: - Կառուցել խորամարդիկներ թղթից և նախշանկարել մեկ կամ երկու գույնով:</p> <p>Խմբային աշխատանք: Ապլիկացիա «Ձյունիկների պարը», - «Փաթիլներ՝ գունավոր թղթով, փայլաթիթեղով» և այլն</p>	<p>գունավոր թղթեր, սուսինձ, մկրատ, փորձաթուղթ, մատիտներ, տրաֆարետներ, բուբ ծայրով մկրատ, մնուշօրինակներ</p>

Երրորդ եռամսյակ	Նկարչություն 24 պարապմունք	<p>Սովորեցնել՝ բնության երևույթների դիտումներից հետո նկարել օրվա տրամադրությունը, եղանակը՝ արևոտ, ամպոտ, մռայլ / գծանկար, գունանկար/:</p> <p>Թեմատիկ նկարչություն «Մեր մանկապարտեզում տոն է »:</p> <p>Նկարել հիշողությամբ և պատկերացումներով /գծանկար, գունանկար/: թռչունների շարժումների պատկերում, կենդանիների շարժումների պատկերում, առանձին առարկաների պատկերում՝ մրգեր, բանջարեղեն, կենցաղային առարկաներ, խաղալիքներ: Նատյուրմորտ: բնօրինակից նկարել մրգեր, ծաղիկներ: Նկարել բնօրինակից՝ մրգեր, բանջարեղեն :</p>	Պատկերագարո նկարներ, գունավոր մատիտներ, կավիճներ, ջրաներկ, գուաշ, վրձիներ, սպիտակ և երանգավորված թղթեր, ջրաման, փորձաթուղթ մոլբերտ, տակդիր, ծաղիկներ, մրգեր, բանջարեղեն, խաղալիքներ դեկորատիվ նախշերով իրեր
	Ծեփ 12 պարապմունք	<p>Թեմատիկ ծեփակերտում հեքիաթների թեմաներով</p> <p>Պարզագույն երկրաչափական զարդանախշերի կազմում պլաստիլինե մակերեսի վրա կորիզներով, սերմերով և այլ նյութերով:</p>	Պատկերագարո հեքիաթային գրքեր, նկարներ, մմուշօրինակներ՝ առարկաներ, կենդանիներ, կորիզներ, սերմեր, պլաստիլին, լաթ, կերտածող, տակդիր, զարդաքանդակներ, հարթաքանդակներ

	<p>Ապիկացիա 6 պարապմունք</p>	<p>Կազմել բնական նյութերով կոմպոզիցիա: Ծաղկամանի, զարդանախշի պարզագույն գուներանգված նախշանկարում: Ծաղիկներով նախշի ստեղծում զուլակի մեջ: Դեկորատիվ կոմպոզիցիա՝ «Աշնանային փունջ»: Գաղափար՝ դեկորատիվ կոմպոզիցիայի համաչափության մասին: Մրցույթ՝ «Ուն փունջն է ավելի գեղեցիկ», «Ուն նապաստակն է գեղեցիկ», «Շնիկը», «Աքաղաղը» և այլ թեմաներ: Պարապմունքը կարելի է անցկացնել օրվա տարբեր ժամերին: Ծանոթացնել հայկական մանրանկարչությանը: Ցուցահանդեսի կազմակերպում:</p>	<p>Գունավոր թղթեր, սոսինձ, մկրատ, փորձաթուղթ, մատիտներ, տրաֆարետներ, բութ ծայրով մկրատ, նմուշօրինակներ</p>
<p>ամառ</p>	<p>Աշխատանք բնական նյութերով</p>	<p>Աշխատանք բնական նյութերով</p> <ul style="list-style-type: none"> Պարզագույն երկրաչափական զարդանախշերի կազմում՝ տարբեր նյութերով: Նախշանկարել, զարդարել հարթ և ծավալային աշխատանքներ տարբեր նյութերով: 	

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

4-5 տարեկան երեխաները բավականին ինքնուրույն են, նախաձեռնող: Նրանց մեջ ակտիվորեն զարգանում է մանր մոտորիկան, աչքաչափը: Ձեռքի շարժումները որոշակիորեն հստակ են, վարժ: Դա թույլ է տալիս վարժությունները բազմակի անգամ կատարելու ընթացքում զարգացնել կերպարվեստային կարողություններ: Ջարգանում է երեխայի հետաքրքրությունը իր իսկ կողմից կատարվող աշխատանքի որակի նկատմամբ: Նա գիտակցորեն ձգտում է պահպանել աշխատանքին ներկայացվող պահանջները: Կերպարվեստային գործունեության պարապմունքների կազմակերպման բաղադրիչներից են համագործակցային պարապմունքները: Որպեսզի աշխատանքն արդյունավետ լինի, սկզբում դաստիարակը ձևավորում է փոքր խմբեր: Յուրաքանչյուր խմբում պետք է ընդգրկել 4-5 երեխա: Մի քանի պարապմունքից հետո կարելի է միացնել խմբերը /ըստ նպատակի/: Դաստիարակը կարող է մոտենալ երեխաներին և ուղղորդել, օգնել խիստ անհրաժեշտության դեպքում: Պարապմունքի վերջում բոլոր խմբերի աշխատանքները ցուցադրվում են տեսանելի տեղում, և մասնակիցները խրախուսվում են:

Նկարչության պարապմունքների ընթացքում երեխաները պետք է սովորեն նկարել ջրաներկով, գուաշով, կավիճով, մատիտով և այլ ներկանյութով: Գուաշով կամ ջրաներկով աշխատելու համար դաստիարակը սովորեցնում է ներկապնակից և վրձնից օգտվելու ճիշտ ձևը. այն է՝ վրձինը զգուշորեն իջեցնել ներկանյութի մեջ, վրձնով վերցնել ներկը և քսել թղթի մակերեսին: Կարելի է առաջարկել՝ վրձնով անել վարժություններ՝ կատարել գծեր, բծեր, կետեր, ալիքներ և այլ ձևեր: Նոր գույն ստանալու համար երեխաներին պետք է սովորեցնել թղթի մակերեսի վրա վրձնի օգնությամբ 2 գույներ խառնելով ստանալ երրորդ գույնը: Սառը և տաք գույների, հակադիր գույների վերաբերյալ երեխաների պատկերացումները ձևավորելու համար կարելի է օգտագործել ոչ միայն սպիտակ, այլև երանգավորված թղթեր: Այս տարիքային խմբում կիրառվում են նաև ոչ ավանդական մեթոդով /մատիկներ, տպիչներ, ճմռթած թուղթ և այլն/ նկարչության ձևեր:

Ապլիկացիա

Ապլիկացիան դեկորատիվ գեղարվեստաստեղծագործական գործունեություն է, որն ուղեկցվում է հարթապատկերային ձևերի օգտագործմամբ՝ սոսնձման եղանակով: Երեխաները սովորում են գունավոր թղթերից կտրել քառակուսի, եռանկյուն: Օրինակ, քառակուսի թղթից եռանկյուն ստանալու համար հարկավոր է թուղթը կորացնելով ծալել այնպես, որ հակադիր սուր գագաթները համընկնեն: Ձեռքի սեղմումով ծալել, հարթեցնել ծալվածքը, ապա անկյունագծով կտրել մկրատով: Քառակուսու կամ զուլակի մեջ զարդանախշեր կազմելու համար, որպես

օրինաչափություն, երեխաների ուշադրությունը պետք է հրավիրել զարդանախշին բնորոշ ռիթմային հաջորդականության պահպանման՝ մեծ-փոքր, երկար-կարճ և գունային ներդաշնակ համադրումների վրա: Ջարդանախշեր կարելի է կազմել բնական նյութերով /կորիզներ, սերմեր, տերևներ և այլն/, ինքնուրույն կտրած կամ պատրաստի երկրաչափական, բուսական, կենդանական պատկերներով:

Թղթ պատրաստի պատկերները սոսնձելու և փակցնելու համար նախապես պետք է դետալները տեղադրել թղթի մակերեսին, որոշել դրանց տեղը, ապա նոր միայն սոսնձել: Հարկավոր է սոսինձը քսել միայն սոսնձվող մասի մակերեսին: Անհրաժեշտ է օգտագործել փորձաթուղթ: Աշխատանքը կոկիկ լինելու համար նպատակահարմար է օգտագործել չոր սոսինձ: Ամառային պարապմունքների թեմաներն ընտրում են երեխաները՝ նախազարդում, զարդարում և այլն:

Ծեփ

Ծեփակերտման գործունեության ընթացքում երեխան ճանաչում և ազատ օգտվում է ծեփանյութերից /կավ, պլաստիլին, աղի խմոր/, աշխատանքային գործիքներից և միջոցներից /կերտածող, տակդիր, լաթ/: Գնդաձև և գլանաձև ձևերից ծեփում է իրեն արդեն ծանոթ պարզ կերպարներ, առարկաներ, աստիճանաբար բարդացնելով աշխատանքը՝ օգտագործելով ծեփման բազմազան եղանակներ:

Կառուցողական աշխատանքներ

Կյանքի հինգերորդ տարում երեխան բավականին ինքնուրույն է և նախաձեռնող: Երեխայի մեջ ցանկություն է առաջանում կատարել դաստիարակի պահանջները: Նա ակտիվորեն երևակայում է, հորինում, մտածում, վերլուծում, քանդում և հավաքում շինվածքը, կառույցը: Ծինարարական և կառուցողական նյութերով /խորանարդ, աղյուս, բնական նյութեր և այլն/ աշխատելիս երեխան պետք է կարողանա ընտրել թեմային համապատասխան նյութեր՝ ըստ չափի, գույնի, ձևի, կառուցել ըստ նքուշի, դաստիարակի հրահանգի և սեփական մտահղացմամբ:

Ծանոթություն արվեստին

Երեխաներին հաղորդակից դարձնել արվեստի հանրահայտ նմուշներին, հետաքրքրություն առաջացնել դրանց նկատմամբ, ծանոթացնել հայ և այլազգի անվանի գեղանկարիչների, քանդակագործների ստեղծագործություններին:

Մարտիրոս Սարյան՝ «Դաշտային ծաղիկներ», «Կակաչներ», «Աշնանային նատյուրմորտ» և այլն:

Մինաս Ավետիսյան՝ «Ձմերուկով նատյուրմորտ», «Գյուղական բակ», «Գորգ են գործում». *գրաֆիկա*՝ «Իմ մայրը», «Պատշգամբում», «Զրույց» :

Գևորգ Բաշինջաղյան՝ «Կեչիով բնանկար», «Դիլիջանի ճանապարհը», «Սևան», «Արարատ» և այլն:

Արշիլ Գորկի՝ «Նկարիչն ու իր մայրը», «Զրվեժ» և այլն:

Գրիգոր Խանջյան՝ «Սևանի ձկնորսները», «Երևանի կառուցողները», «Գառնի»:

Փանոս Թերլեմեզյան՝ «Տաթևի վանքը», «Արագածը ձմռանը», «Աշնանային օր», «Երևանը գարնանը», «Սևանի կղզին»:

Էդուարդ Իսաբեկյան՝ «Պատանի Դավիթ», «Բյուրականցի ծերունին և Արտավազիկ եկեղեցին» և այլն:

Հակոբ Կոջոյան՝ «Սասունցի Դավիթ», Ստեփան Ջորյանի «Հագարան բլբուլ» հեքիաթի նկարագրողումները և այլն:

Վարդգես Սուրենյանց՝ «Տիրամայրը մանկան հետ», «Քասախ գետը», «Օշական»:

Երվանդ Քոչար՝ նկարներ՝ «Ձվածն նատյուրմորտ», «Ընտանիք–սերունդներ», «Կոմիտաս». քանդակներ՝ «Սասունցի Դավիթ», «Վարդան Մամիկոնյան»:

Ի. Շիշկին՝ «Անձրևը կաղնու անտառում»:

Ի. Լևիտան՝ «Արևոտ օր. գարուն» :

Օ. Ռոդեն՝ «Բարեկամություն»:

Երեխաներին ծանոթացնել դեկորատիվ կիրառական արվեստի ստեղծագործություններին՝ փայտարվեստ, գեղանկարչություն, քանդակագործություն, գրաֆիկա, մանրանկարչություն, ասեղնագործություն, գորգագործություն և այլն:

Տեղեկացնել արվեստի աշխարհում գոյություն ունեցող մասնագիտությունների մասին՝ նկարիչ, ոսկերիչ, արծաթագործ, ճարտարապետ, քանդակագործ, գորգագործ, խեցեգործ և այլն:

Ամրապնդել երեխաների գիտելիքները պատկերագարող գրքի մասին:

Ջարգացնել հետաքրքրություն՝ արվեստի օջախների (տիկնիկային թատրոն, մանկական պատկերասրահ, ցուցահանդեսներ), տեսարժան և պատմական վայրերի, ճարտարապետական կոթողների նկատմամբ: Ծանոթացնել Մատենադարանին, գրադարաններին, դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործություններին: Դաստիարակել գեղագիտական ճաշակ, ձևավորել հոգատար վերաբերմունք արվեստի գործերի նկատմամբ:

Պեղագիտական զարգացնող միջավայր

Երեխաներին ծանոթացնել մանկապարտեզի խմբասենյակներին, սրահներին, ննջասենյակներին, խոհանոցին, բուժկետին, երաժշտական և մարզական դահլիճներին և այլ տարածքներին: Նրանց ուշադրությունը հրավիրել դրանց կահավորանքի հարմարավետությանը և գեղեցիկ ու ներդաշնակ ձևավորմանը:

Սովորեցնել նկատել շրջակա միջավայրի գեղեցկությունը:

Կերպարվեստային պարապմունքների կազմակերպման նմուշօրինակ

Գործունեության ձև	1-ին շաբաթ Պարապմունքների թեմաները և նպատակները	2-րդ շաբաթ Պարապմունքների թեմաները և նպատակները	3-րդ շաբաթ Պարապմունքների թեմաները և նպատակները	4-րդ շաբաթ Պարապմունքների թեմաները և նպատակները	
1	2	3	4	5	
Սեպտեմբեր					
Նկարչություն	Թեմա	Նկարի՛ր ամառ	Գեղեցիկ ծաղիկներ	Ոսկե և սովորական ձվիկներ	Գոգնոցի ձևավորում
	Նպատակ	Սովորեցնել - վերարտադրել ստացած տպավորությունները վրձնի միջոցով: - Ամրապնդել վրձնից և ներկանյութերից ճիշտ օգտվելու ձևերը: - Խրախուսել ինքնուրույն նկարելու ցանկությունը:	Զարգացնել դիտողականությունը: Սովորեցնել պատկերել թղթի վրա ծաղիկների կառուցվածքը /ծաղկեզվիչիկ, ցողուն, տերև/: Ամրապնդել վրձնից և ներկանյութերից օգտվելու ճիշտ ձևերը:	Շարունակել սովորեցնել նկարել օվալաձև պատկեր: Վարժեցնել կոկիկ գունավորելու կարողությունները: Զարգացնել երևակայությունը:	Սովորեցնել - գուլակի մեջ կազմել պարզագույն զարդանախշ երկրաչափական պատկերներով: Զարգացնել ստեղծագործական կարողությունները, երևակայությունը:
		Գունավոր փուչիկներ	Խնձորենու վրա հասել եմ խնձորները	Չեքիաթային ծառեր	Աշուն
		Շարունակել ծանոթացնել շրջանաձև և օվալաձև առարկաներ պատկերելը: Համեմատել, գտնել նմանությունը և տարբերությունը, Սովորեցնել վերարտադրել թղթի վրա շրջանաձևի և օվալաձևի պատկերները: Ամրապնդել երանգավորման հմտությունները՝ պահպանելով եզրագծերը:	Սովորեցնել նկարել ծառ, բուն, երկար և կարճ ճյուղերը: Ամրապնդել մատիտով նկարելու կարողությունները: Երեխաներին մոտեցնել իրենց աշխատանքների հուզական, գեղագիտական գնահատման	Սովորեցնել - երևակայությամբ պատկերել ծառեր, - ճիշտ վերարտադրել ծառի կառուցվածքը, - գունաներկել: Զարգացնել երևակայությունը, ստեղծագործելու կարողությունը:	Սովորեցնել - վերարտադրել աշման պատկերը Վարժեցնել - նկարել ծառ՝ բուն, ճյուղեր, տերևներ: Պաստիարակել ինքնուրույնություն, ստեղծագործելու կարողություն:

	Թեմա	Խնձորներ և հատապտուղներ /ծիրաններ ու դեղձեր/	Մեծ և փոքրիկ գազարներ	Վարունգ և բազուկ	Ստահլացմամբ
Ճեփակելուսում	Խորտիկ	Ամրապնդել տարբեր մեծությամբ շրջանաձև առարկաներ ծեփելու կարողություններ: Սովորեցնել ծեփակելուսման միջոցով վերարտադրել շրջապատից ստացած տպավորությունները: Դաստիարակել դրական վերաբերմունք սեփական գործունեության նկատմամբ:	Սովորեցնել ծեփել երկարաձև առարկաներ, որը նեղանում է մի ծայրում՝ թեթևակի ձգել և նեղացնել մատերի ծայրերով: Ամրապնդել մեծ և փոքր առարկաներ ծեփելու կարողություններ: Խնամքով վերաբերվել ծեփանյութին:	Ծանոթացնել օվալաձև առարկաների ծեփման եղանակներին: Ամրապնդել օվալաձև և գլանաձև առարկաներ ստանալու եղանակները /գլորելով, ձեռքերի ուղիղ շարժումներով: Սովորեցնել գլանի ծայրերը ձգել մատներով և կլորացնել մակերեսը հարթեցնելով:	Սովորեցնել ընտրել սեփական աշխատանքի բովանդակությունը, օգտագործել արդեն ծանոթ ծեփակելուսման ձևերն ու եղանակները: Դաստիարակել ինքնուրույնություն: Զարգացնել երևակայությունը, ստեղծագործական կարողությունները:
	Թեմա	Գեղեցիկ դրոշակներ /ապլիկացիա/	Ցանկապատներ և պարիսպներ /կառուցողական/	Կտրիչ թղթե զուլակներ և կազմիչ ցանկացած առարկա /ապլիկացիա/	Տնակ կամ ցախանոց
Ապլիկացիա և կառուցողական	Խորտիկ	Սովորեցնել . ճիշտ բռնել մկրատը, - բացել և փակել մկրատի օղակները, -կտրել հավասար զուլակներ թղթի եզրի ուղղությամբ /դրոշակներ/: Ամրապնդել. խնամքով սոսնձելու կարողությունները, պատկերները հերթագայելու ըստ գույնի: Զարգացնել գույնի զգացողություն:	Վարժեցնել. -սահմանափակել տարածությունը հարթ ֆիգուրներով, -անվանել և տարբերակել հիմնական երեք գույները (կարմիր, կապույտ, դեղին) և կառուցել երկրաչափական պատկերներով (քառակուսի, եռանկյուն, շրջան, ուղղանկյուն): Սովորեցնել հասկանալ դաստիարակի խոսքը, մտածել, գտնել սեփական լուծումներ:	Սովորեցնել կտրել հաստ զուլակներ (մոտավորապես 5սմ), Կարողանալ ճիշտ բռնել և օգտվել մկրատից: Զարգացնել երևակայությունը և ստեղծագործելու կարողությունները: Դաստիարակել ինքնուրույնություն և ակտիվություն:	Վարժեցնել. Սահմանափակել փոքր տարածություններ՝ տեղադրելով դետալները /աղյուսներ, այլ շինարարական նյութեր/ հորիզոնական և ուղղահայաց դիրքով: -ծածկեր /տանիք/ կառուցելու կարողություններ: Զևակորել և -տարածական հասկացությունները (առաջ- հետ, ներքև- վերև, աջ- ձախ): Զարգացնել կառուցողական ձևերի ընտրության հմտություններ, -համագործակցելու և համատեղ խաղեր կազմակերպելու կարողություններ:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական միջին տարիքի երեխաների երաժշտական դաստիարակության ծրագրի հիմքում ընկած են նրանց երաժշտականության զարգացման համակարգի տրամաբանությունը, դրա մեջ ներառվող երաժշտական ընդունակությունները և երաժշտական գործունեության տեսակները: Դրանք բնականաբար կապված են միմյանց հետ և չեն գոյատևում մեկն առանց մյուսի:

Ծրագրում ներկայացված են երեխաների երաժշտական գործունեության ավանդական չորս տեսակները՝ երաժշտության ունկնդրում, երաժշտառիթմական շարժում, երգեցողություն, նվագ մանկական նվագարաններով:

Ծրագրի երաժշտական ցանկում առաջին հերթին ընդգրկվում է տարբեր ժամանակների և ոճերի դասական, ազգային և ժամանակակից երաժշտություն:

Հիմնարար խնդիրների լուծման համար երաժշտական ղեկավարը կարող է օգտագործել ինչպես ծրագրային, այնպես էլ սեփական ընտրությամբ նյութեր՝ հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկություններն ու ձայնածավալը:

Տարիքային բնութագրիչները

Այս տարիքում աճում է հետաքրքրությունը երաժշտության հանդեպ. երեխաներն սկսում են առավել սիրով ունկնդրել, ընկալում են երաժշտության տրամադրությունը և բնույթը, ճանաչում են ծանոթ երաժշտական ստեղծագործությունը:

Այս տարիքի երեխաների ուշադրությունն ավելի կայուն է: Ձարգանում է հիշելու և վերհիշելու կարողությունը, կատարելագործվում են տեսողական և լսողական ընկալումները: Ավելանում է բառապաշարը, խոսքը դառնում է առավել կապակցված: Խորանում է երգին արձագանքելու ընդունակությունը: Այս տարիքի երեխաները հեշտ են ընկալում ռիթմական պատկերը: Երեխաների մեջ ձևավորվում է լսողական վերահսկողություն: Վերարտադրում են երգերի ռիթմական պատկերը, հնչողության ուժը, ճանաչում և մտապահում են երգերը: Այդ պատճառով նրանց կատարած երգերը դառնում են առավել զուներդ ու բազմազան: Ավելանում են երեխաների երգչային կարողությունները:

Երաժշտառիթմական վարժությունների ընթացքում պահանջներն ավելանում են: Նրանց սովորեցնում են առավել հստակ կատարել հանձնարարությունները և ինքնուրույն ուղղել սխալները: Այս տարիքում պարերը բարդանում են, երաժշտական նյութը դառնում է առավել բազմազան: Ուսուցանվում են ամրագրված շարժումներով բազմազան պարեր: Երեխաները կարողանում են շարժումների միջոցով վերարտադրել ծրագրային երաժշտական կերպարները:

Այս տարիքում երեխաներին բնորոշ է բազմազան ռիթմական խնդիրներ լուծելու հակումը: Նրանք կարող են ռիթմական նվագարաններով ցույց տալ մետրիկ զարկերը, ինչպես նաև լսողությամբ վերարտադրել ռիթմական պատկերը՝ հարվածային նվագարանների նվագախմբում: Երեխաները հաղթահարում են տեմբրային և ռիթմական զգացողության աստիճանները: Լսողությամբ վերարտադրելը զարգացնում է երեխաների երաժշտական ստեղծագործական մտածողությունը, առանց որի անհնար են իմպրովիզացիաները: Իմպրովիզացիաները այս տարիքում երաժշտական ստեղծագործության հիմնական ձևն են: Երեխաներն արդեն անցնում են ռիթմական իմպրովիզացիայի փուլին:

Երաժշտական դաստիարակության խնդիրները

1. Երեխաների մեջ ձևավորել երաժշտությունը հետաքրքրությամբ և ուշադիր, մինչև վերջ ունկնդրելու կարողություն, արձագանքել դրա բնույթին և տրամադրությանը:

2. Ջարգացնել երաժշտական հիշողությունը՝ երաժշտական ստեղծագործության առանձին հատվածները գուշակելու միջոցով:

3. Երեխաների մեջ արթնացնել հետաքրքրություն և սեր երաժշտության հանդեպ, այն ունկնդրելու ցանկություն, երաժշտական տպավորությունների կուտակում:

4. Երաժշտական արտահայտչամիջոցներով հուզական վերաբերմունք ձևավորել շրջապատի նկատմամբ:

5. Սովորեցնել երգել արտահայտիչ, բնական ձայնով, առանց լարվածության:

6. Բառերն արտասանել հստակ և ճիշտ:

7. Երգն սկսել և ավարտել միասին, ճիշտ վերարտադրել երգի մեղեդին ռե-յա ձայնածավալում, երգելիս լսել ընկերներին:

8. Երգել նվագակցությամբ և առանց դրա:

9. Ջարգացնել երաժշտառիթմական զգացողություն և շարժումների ռիթմիկ կատարման կարողություն:

10. Սովորեցնել շարժումները համաձայնեցնել երաժշտության բնույթին, առավել վառ արտահայտչամիջոցներին և կողմնորոշմանը տարածության մեջ:

11. Մշակել երաժշտառիթմական կարողություններ և հմտություններ՝ պարերի, խաղերի և վարժությունների միջոցով:

12. Ջարգացնել ստեղծագործական կարողություններ:

13. Սովորեցնել նվագակցել երգերին և պարերին՝ ռիթմական նվագարաններով:

Տարեվերջին երեխաները պետք է կարողանան՝

- Ուշադիր լսել երաժշտական ստեղծագործությունը, զգալ դրա բնույթը, արտահայտել սեփական զգացմունքներ՝ բառերով, նկարով, շարժումներով:

- Ճանաչել երգը մեղեդուց:

- Տարբերել ձայնի բարձրությունը:

- Երգել ձգված, հստակ արտասանել բառերը, միասին սկսել և ավարտել երգը:

- Կատարել երաժշտության բնույթին համապատասխան շարժումներ, ինքնուրույն փոփոխել շարժումները՝ ելնելով երաժշտական ստեղծագործության բնույթից և ձևից:

- Կատարել պարային շարժումներ՝ զսպանակած, ցատկեր, շարժումներ զույգերով, շրջանով, պտույտներ՝ մենակ և զույգերով:

- Կատարել շարժումներ՝ առարկաներով:

- Բեմականացնել երգեր և շուրջպարեր:

- Նվագել մետաղաֆոնի վրա պարզ մեղեդիներ:

Երաժշտության ունկնդրում

Ձարգացման խնդիրները

Ձարգացնել հիմնական երաժշտական ընդունակությունները՝

- հուզական արձագանքը,

- լադային լսողությունը,

- ռիթմի զգացողությունը,

- երաժշտական զգացողությունը՝ երաժշտադիդակտիկ խաղերի և վարժությունների յուրացման ընթացքում:

1-ին եռամսյակ

1. «Ձան, ջան, ջան, աշուն է» -երաժշտ.՝ Դ. Ղազարյանի, խոսք՝ Զ.Հայրապետյանի:

2. «Բադիկ ջան, բադիկ» - երաժշտ.՝ Յ.Յուզբաշյանի, խոսք՝ Գ.Մովսիսյանի:

3. «Նապաստակն ու արջը» - երաժշտ.՝ Գ.Զթյանի:

4. «Նանիկ ասեմ» - հայկ. ժողովրդ. երգ. խոսք՝ Ս.Կապուտիկյանի:

5. «Կլոր պար» - հայկ.ժող., մշակումը՝ Գ. Զթյանի:

6. «Աշնան երգ» - երաժշտ.՝ Ա. Լուսինյանի, խոսք՝ Ս. Մկրտչյանի:

7. «Խաղաղություն» - խոսք՝ Լ.Պողոսյանի, երաժշտ.՝ Ն. Սահակյանի:

8. «Ծաղրածու» - երաժշտ.՝ Դ.Կաբալևսկու:

9. «Գնացք» - երաժշտ.՝ Ա. Լուսինյանի:

10. «Տխուր երգ» - երաժշտ.՝ Ումր - Շատի:

2-րդ- եռամսյակ

1. «Տոնածառ ջան» - երաժշտ. և խոսք՝ Ս.Միրզոյանի:
2. «Բռնոցի» - երաժշտ.՝ Ս.Բարխուդարյանի:
3. «Ծաղրածու» - երաժշտ.՝ Դ.Կաբալևսկու:
4. «Փոքրիկ ձիավորը» - երաժշտ.՝ Դ.Կաբալևսկու:
5. «Նանիկ ասեն» - հայկական ժողովրդական երգ:
6. «Հայկական բանակ» - խոսք և երաժշտ.՝ Ա.Մարտիրոսյանի:
7. «Ցատկապարան» - երաժշտ.՝ Ա.Խաչատրյանի:
8. «Կարապետի պարը» - երաժշտ.՝ Պ.Չայկովսկու:
9. «Փոքրիկ ձիավորը» - երաժշտ.՝ Դ.Կաբալևսկու:

3-րդ եռամսյակ

1. «Թզուկ» - երաժշտ.՝ Ա.Լուսինյանի:
2. «Տիկնիկի հիվանդությունը» - երաժշտ.՝ Պ.Չայկովսկու:
3. «Օրորոցային» - երաժշտ.՝ Ռ.Ամիրխանյանի, խոսք՝ Ն.Միքայելյանի:
4. «Դինգ-դոնգ» - երաժշտ.՝ Ռ.Ամիրխանյանի, խոսք՝ Ն.Միքայելյանի:
5. «Սարից իջնում է առուն» երաժշտ.՝ Ս.Սարուխանյանի, խոսք՝ Կ.Մելիքսեթյանի:
6. «Մայրիկի օգնականը» - երաժշտ.՝ Ա.Լուսինյանի, խոսք՝ Վ.Վարդանյանի:
7. «Ծաղիկների պարը» - երաժշտ.՝ Պ.Չայկովսկու:
8. «Ջրաղացում» - երաժշտ.՝ Ռ.Մելիքյանի:
9. «Նոր տիկնիկ» - երաժշտ.՝ Պ.Չայկովսկու:
10. «Թզուկ» - երաժշտ.՝ Ա.Լուսինյանի:

Ձարգացման ցուցանիշները

- Հուզականորեն արձագանքում են երաժշտությանը:

- Կարող են որոշել երաժշտության բնույթը, առանձին մասերի տրամադրությունը, առանձնացնել որոշ արտահայտչամիջոցներ՝ տեմպ, ուշգնություն, տեմբր:

Լսելով երաժշտությունը կարողանում են առանձնացնել կերպարային պատկերները, որոնք համապատասխանում են պիեսի անվանմանը:

- Որոշում են այն երեք ժանրերը, որոնք հնչում են երաժշտական ստեղծագործության մեջ՝ քայլերգ, երգ, պար, և որոշում են այն նվագարանները, որոնցով կատարվել են այդ ստեղծագործությունները:

Երգեցողություն /ձայնածավալը՝ ռե-յա/

Ձարգացման խնդիրները

- Երգել ինքնուրույն, խմբով և մեծահասակի հետ:
- Երգել վառ, արտահայտիչ բնությամբ և կերպարներով երգեր:
- Երգել արտահայտչամիջոցների կիրառմամբ՝ հնչյունի բարձրություն, ուժգնություն, տեմպ:
- Երգել մաքուր՝ ի հակադիր ցածր և բարձր հնչյունները:

1-ին եռամսյակ

1. «Գառնուկ» - հայկ. ժող. խոսք՝ Ս.Կապուտիկյանի:
2. «Նանիկ նինար» - հայկ. ժողովրդական երգ:
3. «Տոնական երգ» - երաժշտ. և խոսք՝ Ս.Սարուխանյանի:
4. «Ծիլը, ծիտը մեկ էլ ես» - երաժշտ.՝ Զ.Խրիմյանի, խոսք՝ Պ.Խաչատրյանի:
5. «Իմ ծառը» - երաժշտ. և խոսք՝ Ա. Մանդակունյանի:
6. «Տարեդարձի երգ» - խոսք Ռ.Ջոհրաբյանի, երաժշտ.՝ Զ.Խրիմյանի:
7. «Նռան երգը» - խոսք՝ Լ.Պողոսյանի, երաժշտ.՝ Ն.Սահակյանի:
8. «Թառ քամանչա ու դիոլ» - խոսք և երաժշտ.՝ Ա.Մովսիսյանի:
9. «Առվակ» - երաժշտ և խոսք՝ Ս.Վարդանյանի:

2-րդ եռամսյակ

1. «Սիրելի ձմեռ» - երաժշտ. և խոսք՝ Ա.Մովսիսյանի:
2. «Եղևնի» - երաժշտ.՝ Զ.Խրիմյանի, խոսք՝ Յու.Սահակյանի:
3. «Նոր տարվա երգ» - երաժշտ. և խոսք՝ Զ.Խրիմյանի:
4. «Արտուտիկ» - երաժշտ.՝ Ա.Լուսինյանի, խոսք՝ Վ.Վարդունու:
5. «Տեսե՛ք , ձյուն է գալիս» - երաժշտ. և խոսք՝ Ա.Մանդակունյանի:
6. «Խնձորի երգը» - խոսք Լ.Պողոսյանի, երաժշտ.՝ Ն.Սահակյանի:
7. «Կարուսել» - երաժշտ.՝ Ա.Լուսինյանի, խոսք՝ Ն.Միքայելյանի:
8. «Ուրախ ձկնիկ» - երաժշտ. և խոսք՝ Ա.Մովսիսյանի:
9. «Նապաստակի երգը» - երաժշտ.՝ Է. Միհրանյանի, խոսք՝ Ս.Մուրադյանի:

3-րդ եռամսյակ

1. «Առվակ» - երաժշտ. և խոսք՝ Ս.Վարդանյանի:
2. «Մայրիկիս տոնը» - երաժշտ.՝ Ա.Լուսինյանի, խոսք՝ Ա.Մանաշյանի:
3. «Մեծացել եմ» - երաժշտ.Զ.Խրիմյանի, խոսք՝ Ե.Պետրոսյանի:
4. «Թիթեռնիկ» - երաժշտ. Ս.Սարուխանյանի, խոսք՝ Լ.Պողոսյանի:
5. «Գարնան գույներ» - երաժշտ.՝ Ա. Մանդակունյանի, խոսք՝ Տ. Ջաքարյանի:

6. «Մայրիկ» - երաժշտ. և խոսք՝ Ա.Մանդակունյանի:
7. «Ծիտիկ» - երաժշտ. և խոսք՝ Ս.Վարդանյանի:
8. «Ծափիկ» - երաժշտ. և խոսք՝ Ս.Վարդանյանի:
9. «Գարնան գույներ» - երաժշտ՝ Ա.Մանդակունյանի, խոսք՝ Տ. Ջաքարյանի:

Ջարգացման ցուցանիշները

Ճիշտ երգելու համար յուրացրել է երգչային որոշակի կարողություններ:

- երգում է հստակ առոգանությամբ:
- Հաճույքով երգում է հարմար ձայնածավալում և ռեգիստրում՝ ոչ բարդ երգեր:
- Համեմատաբար ազատ հնչարտաբերման շնորհիվ կարող է արտահայտիչ երգել:

- Ձեռք է բերել ճիշտ երգչային կեցվածք և ճիշտ է բաշխում շնչառությունը երգելու ընթացքում:

Երաժշտառիթմական շարժում

Ջարգացման խնդիրները

- Ջարգացնել երեխաների երաժշտառիթմական զգացողությունը և շարժումների ռիթմիկ կատարումը:

- Կատարել շարժումներն ինքնուրույն և փոփոխել դրանք՝ երաժշտության բնույթին համապատասխան:

- Ջարգացնել երաժշտառիթմական հմտություններ՝ պարային վարժությունների միջոցով:

- Խթանել ստեղծագործական կարողությունները՝ պարերի, խաղերի միջոցով:
- Ձևավորել երաժշտառիթմական զգացողություն երաժշտական խաղային բնույթի վարժությունների միջոցով՝ կիրառելով արտահայտիչ դիմախաղ:
- Սովորեցնել պարել զույգերով, խմբական և բնութագրական պարեր:
- Սովորեցնել ազատ կողմնորոշվել տարածության մեջ:

1 - ին եռամսյակ

1. «Ու՞մ շրջանը շուտ կհավաքվի» - երաժշտ.՝ ռուսական ժողովրդական:
2. «Դափով խաղ» - երաժշտ.՝ ուկրաինական ժողովրդական:
3. «Հայկական շուրջպար» - երաժշտ.՝ հայկական ժողովրդական:
4. «Նորվեգական պար» - երաժշտ.՝ Է.Գրիգի:
5. «Աքլորը»-երաժշտ.՝ Ա.Լուսինյանի, խոսք՝ Լ.Պողոսյանի, բեմակ.՝ Կ.Ղազարյանի:
6. «Պար /Կոլո/» - ուկրաինական ժող. պար:

7. «Ես նկարեցի» - երաժշտ. Ա.Լուսինյանի, խոսք. Լ.Պողոսյանի, բեմակ. Կ.Ղազարյանի:

2-րդ եռամսյակ

1. «Փաթիլների պար» - Կատակ վալս, երաժշտ.՝ Դ.Շոստակովիչի:
2. «Նոր տավա պարերգ» - երաժշտ. Ա.Լուսինյանի:
3. «Թաշկինակներով խաղ» - Կատակ պար, երաժշտ.՝ Ա.Ալեքսանդրյանի:
4. «Խմբական պար» - երաժշտ.՝ Ա. Տիգրանյանի:
5. «Պոլկա Յանի» - Բելոռուսական ժողովրդական մեղեդի:
6. «Ով ինչպես է քայլում» - երաժշտադիդակտիկ խաղ՝ բեմականացումը՝ Կ.Ղազարյանի:

3-րդ եռամսյակ

1. «Գնացք» - խաղ, երաժշտ.՝ Ա.Լուսինյանի:
2. «Հոյ Նազան» - պարերգ, հայկ. ժողովրդական:
3. «Ռուսական պար» - երաժշտ.՝ ռուս. ժողովրդական:
4. «Ջան ծաղիկ» - հայկ. ժող. պարերգ:
5. «Համեմատի՛ր» - երաժշտ. Ա.Լուսինյանի, խոսք՝ Լ.Պողոսյանի, բեմակ. Կ.Ղազարյանի:
6. «Սկնիկ հարսնացուն» - երաժշտ. Լ.Ջալիլյանի, խոսք՝ Ս.Սուրադյանի:
7. «Շղիկ-մղիկ մի նապաստակ» - երաժշտ.՝ Ա. Լուսինյանի, խոսք.՝ Լ.Պողոսյանի, բեմակ.՝ Կ.Ղազարյանի:

Ձարգացման ցուցանիշները

- ճանաչում է քայլերգային երաժշտությունը, թեթև վազում է, պարում և ընտրում համապատասխան շարժումներ, ակտիվորեն ներգրավվում է ստեղծագործական խնդիրների լուծմանը:

- Սկսում է յուրացնել պարային շարժումների լեզուն, սակայն վերարտադրում է առայժմ միայն ընդհանուր պատկերը, առանց մանրուքների:

Նվագ՝ մանկական նվագարաններով

Ձարգացման խնդիրները

- Երեխաներին վարժեցնել՝ դաշնամուրի վրա լսողությամբ գտնել երաժշտության մեղեդային կառուցվածքը՝ տերցիայի սահմանում՝ կու-կու, վերընթաց՝ կվարտա:

- Ձարգացնել անսամբլային զգացողությունը, հետաքրքրություն արթնացնել փայտյա, պղնձյա և այլ նվագարանների հանդեպ:

- Խրախուսել երեխաների՝ իմպրովիզացիա կատարելու ձգտումը՝ երաժշտական նվագարաններով:

Ծրագրային նյութեր

1. «Հայրենի հող» - հայկ. ժող. երգ:
2. «Արև - արև» - հայկ. ժող. երգ:
3. «Քեռին եկավ» - հայկ. ժող. երգ:
4. «Հավիկ» - հայկ. ժող. երգ:
5. «Սիրելի ձմեռ» - խոսք և երաժշտ.՝ Ա.Մովսիսյանի:
6. «Առվակ» - խոսք և երաժշտ.՝ Վարդանյանի:

Զարգացման ցուցանիշները

- Կարող է կատարել ռիթմական պատկերներ՝ մանկական նվագարանների վրա:
- Կարող է համաչափ բաշխել մետրիկ զարկերը, հուզականորեն և թեթև վերարտադրել պարզ երգերի ռիթմերը՝ դաշնամուրի և այլ նվագարաններով:
- Սկսում է ստեղծագործել մանկական նվագարաններով:

Չորրորդ եռամսյակում կրկնում են տարվա ընթացքում սովորած երգերը, պարերը և բեմականացումները:

ՀԱՎԵԼՎԱԾ N 9

Մեթոդական ցուցումներ

Միջին խմբի երեխաներն արդեն ունեն բավարար երաժշտական փորձ, որի շնորհիվ սկսում են ակտիվ ներգրավվել երաժշտական գործունեության տեսակների մեջ՝ ունկնդրում, երգեցողություն, երաժշտառիթմական շարժում, նվագ մանկական նվագարաններով և իմպրովիզացիա:

Ունկնդրման համար նյութատեխնիկական բազայի ստեղծումը կարևոր պայմաններից մեկն է: Պարապմունքներին օգտագործվում են միայն բարձրարվեստ երաժշտական ստեղծագործություններ: Երաժշտական ղեկավարը պետք է ունենա բարձր մասնագիտական որակավորում: Նա պետք է տիրապետի մանկավարժական և մեթոդական բազմաթիվ հնարների:

Երգելուց առաջ պետք է կատարել ձայնային վարժություններ՝ ըստ ձայնային խմբերի: Անհրաժեշտ է ձևավորել երգչային ճիշտ կեցվածք՝ մեջքը ուղիղ, կուրծքը դուրս:

Մանկապարտեզում և տանը թե՛ երաժշտությունը և թե՛ խոսքը երեխայի ու մեծահասակի կողմից պետք է հնչեն ոչ բարձր, առանց բղավոցի: Այդպիսին պետք է լինի

նաև նրանց երգը: Խմբային երգեցողության ուղղությամբ աշխատելիս պետք է համակցել ձայնային ենթախմբերով և անհատական աշխատանքները: Ընտրված երգերի ցանկը պետք է բոլոր երեխաներին հնարավորություն տա մասնակցելու խմբային երգեցողությանը, և յուրաքանչյուրին՝ երգելու իրեն հարմար ձայնածավալում:

Այս տարիքում տարվում է հատուկ աշխատանք՝ տարածության մեջ երեխաների կողմնորոշման ուղղությամբ: Կարևոր է՝ երաժշտական պարապմունքների ժամանակ դաստիարակի կողմից շարժումների ցուցադրումը: Ցանկալի է, որ այդ գործողությունը երեխաների հետ կատարի կամ երաժշտական ղեկավարը, կամ լավ պատրաստված դաստիարակը: Այս տարիքի համար առաջնային խնդիր է հիմնական շարժումների զարգացումը՝ քայլք, վազք, ցատկ: Այստեղ մեծահասակի ցուցադրումը նվազում է: Երեխաները մտապահում են հիմնական ու պարային շարժումները և դրանց անունները՝ բարձր և հանգիստ քայլք, թեթև փափուկ վազք, ցատկեր, ուղիղ ձիատրոփ, ձեռքի ճոճումներ և այլն:

Երաժշտառիթմական շարժումների պարապմունքների համար անհրաժեշտ է՝

- Լուսավոր, ընդարձակ դահլիճ, չսահող, տաք հատակ:
- Լավ լարված երաժշտական նվագարան՝ դաշնամուր:
- Նվագարկիչ՝ ձայներիզներով, երաժշտական կենտրոն և այլ դիդակտիկ ու ցուցադրական պարագաներ:

Այս տարիքում երեխաների մեջ ձևավորվում են սկզբնական գեղագիտական զգացողություններ, որոնք արտահայտվում են երաժշտության ընկալման, ձայնակցման, պարերի և խաղերի կատարման ժամանակ և երեխայի հուզական արձագանքով այն ամենին, ինչ երեխան կատարում է: Ուստի առաջնային խնդիր է՝ երաժշտությունն ընկալելու կարողության զարգացումը, նյութի մտապահումը, հուզական արձագանքը, երաժշտության հետ շարժումների համաձայնեցումը երաժշտառիթմական շարժման ընթացքում:

Պարապմունքն ուսուցման հիմնական ձևն է: Այս ընթացքում երեխաներին տրվող հանձնարարություններն ավելի բարդ են: Դրանք պահանջում են մտածված և կենտրոնացված գործողություններ, չնայած դեռ որոշ չափով պահպանվում է պարապմունքների խաղային, զվարճալի բնույթը:

Պարապմունքներն անցկացվում են շաբաթը երկու անգամ՝ 25-ական րոպե տևողությամբ: Դրանց կառուցվածքը հենված է երաժշտական դաստիարակության ընդհանուր խնդիրների վրա, որոնք նշված են ծրագրում:

Երեխաների երաժշտական զարգացումն իրականացվում է և պարապմունքների, և՛ առօրյա կենսագործունեության ընթացքում:

Երաժշտական պարապմունքը բաղկացած է երեք մասից՝

1. Ներգրավիչ նախապատրաստական մաս՝ երաժշտառիթմական շարժումներ՝ վարժություններ:

Նպատակը. երեխային տրամադրել մասնակցելու պարապմունքին, զարգացնել պարային հիմնական շարժումներ կատարելու հմտությունը, որը կիրառվելու է պարերի մեջ:

2. Հիմնական մաս: **Երաժշտության ունկնդրում:** Նպատակը՝ ընտելացնել երեխաներին ունկնդրել երաժշտություն, լսել մեղեդու հնչողությունը, նվագակցությունը, հուզականորեն արձագանքել գեղարվեստաերաժշտական կերպարի ստեղծմանը:

Ձայնակցում և երգեցողություն: Նպատակը՝ զարգացնել երեխաների վոկալ կարողությունները, սովորեցնել մաքուր վերարտադրել մեղեդին, երգել առանց լարվածության, սկսել և ավարտել երգը դաստիարակի հետ միասին:

Հիմնական մասի մեջ են մտնում **երաժշտադիդակտիկ** խաղերը, որոնց նպատակն է՝ ծանոթացնել երեխաներին մանկական նվագարաններին, զարգացնել հիշողությունն ու երևակայությունը, երաժշտասենսոր ընդունակությունները:

3. Ամփոփիչ մաս: **Խաղեր և պարեր:** Նպատակը՝ երեխաներին հաճույքի զգացում պարզաբանել, ուրախություն պատճառել և առաջացնել հետաքրքրություն երաժշտական պարապմունքների հանդեպ:

Շաբաթը երկու անգամ անցկացվում են փոքր խմբերով և անհատական աշխատանքներ՝ 15 րոպե ետևողությամբ:

Ծրագրում գործունեության տեսակները ներկայացված են եռամսյակներով:

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Ներկայացնենք մեկ ամսվա ծրագրային նյութի օրինակելի բաշխում՝ երաժշտական գործունեության բոլոր տեսակներով: Այն կարող է փոփոխվել երաժշտական ղեկավարի նախասիրությամբ: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների տարիքային առանձնահատկություններն ու ծրագրային խնդիրները:

Առաջին եռամսյակ

Երաժշտական գործունեության կազմակերպման ձևերը	Ծրագրային խնդիրները	Երաժշտական ստեղծագործությունների ցանկ
1	2	3
Սեպտեմբեր		
<ul style="list-style-type: none"> - Երաժշտական պարապմունք - Երաժշտության ունկնդրում - Երաժշտական ստեղծագոր- 	<p><i>Սովորեցնել</i> տարբերել երաժշտության տրամադրությունը, որոշել վերևի, միջին և</p>	<p>«Նապաստակն ու արջը», երաժշտ.՝ Գ. Զթչյանի: «Նանիկ ասեմ», հայկ. ժող.</p>

ծության ընկալում	ներքևի ռեգիստրները: Ջարգացնել երաժշտությանն արձագանքելու կարողություն: Դաստիարակել հետաքրքրություն երաժշտության հանդեպ:	երգ, խոսք՝ Ս. Կապուտիկյանի
բ - Ձայնի և լսողության զարգացում	Ջարգացնել հնչյունի բարձրությունը լսելու կարողությունը:	«Ծաղրածու», երաժշտ.՝ Դ. Կաբալևսկու: «Գնացք», երաժ.՝ Ա. Լուսինյանի:
1. Երգեցողություն ա - Երգչային հմտությունների յուրացում	Սովորեցնել երգել բնական ձայնով, առանց բղավոցի, լսել մյուս երեխաների երգը, ճիշտ վերարտադրել մեղեդին, ձևավորել խմբային երգեցողության հմտություններ:	«Գառնուկ», հայկ. ժող. երգ: «Տոնական երգ», երաժշտ.՝ Ս. Սարուխանյանի:
բ - Երգչային ստեղծագործություն	Սովորեցնել ստեղծագործել տրված երաժշտական թեմայով:	«Ծիլը, ծիտը մեկ էլ ես», երաժշտ.՝ Յ. Խրիմյանի. խոսք՝ Պ. Խաչատրյանի:
3. Երաժշտառիթմական շարժում: ա - Վարժություններ	Սովորեցնել պարել զույգերով, չկորցնել զույգին ամբողջ պարի ընթացքում: Շարժումների միջոցով վերարտադրել երաժշտության բնույթը:	Քայլքի տարբեր տեսակներ: Պարային տարրերի ուսուցում: Վարժություններ:
բ - Պարեր	Սովորեցնել պարել հուզականորեն, ազատ, տիրապետել առարկաներին:	«Չայկական շուրջպար» - հայկ. ժող. պար:
գ - Խաղեր	Դաստիարակել տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողություն:	«Դավիով խաղ» - երաժշտ.՝ ուկր. ժող.:
դ - Երաժշտախաղային գործունեություն:	Կատարելագործել խաղային ստեղծագործությունը:	«Ու՞մ շրջանը շուտ կհավաքվի», երաժշտ.՝ ռուսական ժող.
2. Ինքնուրույն երաժշտական գործունեություն	Կատարելագործել երաժշտական լսողությունը խաղային գործունեության ընթացքում:	«Աքլորը», երաժշտ.՝ Ա. Լուսինյանի, խոսք՝ Լ. Պողոսյանի
3. Տոներ և զվարճանքներ	Դաստիարակել գեղագիտական ճաշակ, սովորեցնել վարքի կանոնները:	Երեխաները հյուր են ավագ խմբի երեխաների «Բերքի տոնին»:

Երկրորդ եռամսյակ

Երաժշտական գործունեության կազմակերպման ձևերը	Ծրագրային խնդիրները	Ցանկ
1	2	3
Փետրվար		
<p>Երաժշտական պարապմունքներ</p> <p>1. Երաժշտության ունկնդրում</p> <p>ա - երաժշտական ստեղծագործությունների ընկալում:</p>	<p>Չարստացնել երեխաներին երաժշտական տպավորություններով: Սովորեցնել ընկալել հակադիր բնույթի և տրամադրության պիեսներ, կերպարային բնույթի երաժշտություն, առանձնացնել 2-3 մասանի ստեղծագործություններ, արտահայտվել բնույթի մասին, նվագակցել պիեսներին, ինքնուրույն նվագել տարբեր նվագարանների վրա:</p>	<p>«Տխուր երգ» - երաժշտ.՝ Ունր-Շատի, «Փոքրիկ ձիավորը» - երաժշտ.՝ Դ. Կաբալևսկու</p>
<p>բ - Ձայնի և լսողության զարգացում:</p>	<p>Զարգացնել հնչյունի տեմբրի, բարձրության և ռիթմի ընկալումը:</p>	<p>«Տոնածառ ջան» - երաժշտ.՝ և խոսք՝ Ս. Միրզայանի: «Ցատկապարան» - երաժշտ.՝ Ա. Խաչատրյանի:</p>
<p>2. Երգեցողություն</p> <p>ա - Երգչային կարողությունների յուրացում:</p>	<p>Ամրապնդել՝ երգը նախանվագից հետո ինքնուրույն սկսելու կարողություն: Սովորեցնել երգել բազմաբնույթ երգեր, երգի միջոցով վերարտադրել երաժշտության բնույթը, երգել առանց նվագակցության:</p>	<p>«Սիրելի ձմեռ» - խոսք՝ և երաժշտ.՝ Ա. Սովսիսյանի, «Արտուտիկ» - երաժշտ.՝ Ա. Լուսինյանի, խոսք՝ Վ. Ծարդունու:</p>
<p>բ - Երգչային ստեղծագործություն:</p>	<p>Կատարելագործել ստեղծագործական նախածեռնությունը: Նմանակել կերպարների ձայներին:</p>	<p>«Գորտը» - երաժշտ.՝ Ա. Լուսինյանի, խոսք՝ Լ.Պողոսյանի:</p>
<p>3. Երաժշտառիթմական շարժում:</p> <p>ա - Վարժություններ</p>	<p>Սովորեցնել շարժվել երաժշտության բնույթին, ժանրին համապատասխան, փոփոխել քայլի բնույթը՝ հնչողության ուժգնությանը համապատասխան, ազատ տիրապետել առարկաներին: Կատարել շարժումներ՝ բովանդակությանը համապատասխան:</p>	<p>Քայլերգային, պարային երաժշտություն, «Շլդիկ, մլդիկ մի նապաստակ» - երաժշտ.՝ Ա. Լուսինյանի խոսք.՝ Լ. Պողոսյանի:</p>
<p>բ - Պարեր</p>	<p>Սովորեցնել՝ պարը նախանվագից հետո ինքնուրույն սկսել, պարել համաչափ, զույ-</p>	<p>«Փաթիլների պար» - Կատակ վալս - երաժշտ.՝ Դ. Շոտակովիչի:</p>

	գով, պարելու ընթացքում ազատ տիրապետել առարկաներին, սահուն կատարել շուրջպարերը, կատարել բովանդակությանը համապատասխան շարժումներ:	«Նոր տարվա պարերգ» - երաժշտ.՝ Ա. Լուսինյանի:
գ - խաղեր	Առաջացնել հուզական արձագանք, զարգացնել, ակտիվություն և շարժունություն:	«Թաշկինակներով խաղ» - երաժշտ.՝ Ա. Ալեքսանդրյանի:
դ - Երաժշտախաղային ստեղծագործություն	Խթանել հեքիաթային հերոսների շարժումները հորինելու կարողությունը:	«Մկնիկ հարսնացուն» - երաժշտ՝ Լ. Ջալիլյանի, խոսք՝ Ս. Մուրադյանի:
2. Ինքնուրույն երաժշտական գործունեություն	Կատարելագործել ռիթմիկ լսողությունը:	Երաժշտադիդակտիկ խաղ՝ «Ով ինչպե՞ս է քայլում», խաղի բեմականացումը՝ Կ. Ղազարյանի:
3. Տոներ և զվարճանքներ	Դաստիարակել սեր հայրենիքի հանդեպ:	Հայոց բանակին նվիրված ցերեկույթ:

Երրորդ եռամսյակ

Երաժշտական գործունեության կազմակերպման ձևերը	Ծրագրային խնդիրները	Ցանկ
1	2	3
Ապրիլ		
1. Երաժշտական պարապմունքներ -Երաժշտության ունկնդրում ա - Երաժշտական ստեղծագործության ընկալում:	Սովորեցնել տարբերել երաժշտական արտահայտչամիջոցները, որոշել ստեղծագործության կերպարային բնույթը, կուտակել երաժշտական տպավորությունները, առաջին տակտերից ճանաչել ծանոթ երաժշտական ստեղծագործությունը: Խորացնել պատկերացումները երաժշտության կերպարային բնույթի վերաբերյալ: Երաժշտական ստեղծագործության բնույթով որոշել կերպարի բնույթը:	«Ծաղիկների պարը» - երաժշտ.՝ Պ. Չայկովսկու; «Թզուկ» - երաժշտ.՝ Ա. Լուսինյանի
բ - Չայնի և լսողության զարգացում	Զարգացնել հնչյունի բարձրության զգացողությունը և երաժշտական հիշողությունը:	«Տիկնիկի հիվանդությունը», երաժշտ.՝ Պ. Չայկովսկու: «Զրադացուն», երաժշտ.՝ Ռ. Մելիքյանի:
2. Երգեցողություն Երգչային հմտությունների յուրացում	Սովորեցնել երգն սկսել նախանվագից հետո, երգել բազմաբնույթ երգեր, երգել անհա-	«Առվակ», երաժշտ. և խոսք՝ Ս. Վարդանյանի: «Գարնան գույներ»,

	տապես և փոքր խմբերով, առանց նվազակցության, երգել հուզական, պահպանել տոնիկան:	երաժշտ.՝ Ա. Մանդակունյանի, խոսք՝ Տ. Ջաքարյանի:
	Սովորեցնել ինքնուրույն ընկալել և ավարտել շարժումները երաժշտության հետ միասին, շարքում քայլել համաչափ: Մեջքը պահել ուղիղ, թեթև ցատկոտել, փոփոխել շարժումների ուղղությունը երաժշտության բնույթին համապատասխան:	Քայլերգեր, երաժշտ.՝ Ռ. Շումանի «Գնդակով խաղ», երաժշտ.՝ Ա. Լուսինյանի, խոսք՝ Լ. Պողոսյանի:
բ - Պարեր	Սովորեցնել կատարել պարը՝ զույգերով, համաչափ, հուզական, փոփոխել շարժումները:	«Ռուսական պար», երաժշտ՝ ռուսական ժող.: «Պոլկա», երաժշտ.՝ Մ. Գլինկայի:
գ - Խաղեր	Դաստիարակել հետաքրքրություն հայկական ժողովրդական խաղերի հանդեպ:	Սուրբ Ջատկի խաղեր:
դ - Երաժշտախաղային գործունեություն	Սովորեցնել ինքնուրույն գտնել արտահայտիչ շարժումներ կերպարների բնույթը վերարտադրելու համար:	«Արջն ու երեխաները», երաժշտ.՝ Է. Գրիգի /Լեռնային արքայի քարանձավում/ սյուիտից:
1. Ինքնուրույն երաժշտական գործունեություն	Սովորեցնել ընտրել խաղալիքներ՝ սիրելի երգերի համար:	Ծանոթ երգեր:
4. Տոներ և զվարճանքներ	Սեր արթնացնել հեքիաթների հանդեպ, ցանկություն առաջացնել՝ դրանք բեմականացնելու:	Հեքիաթների բեմականացումն ըստ ցանկության:

Երաժշտության ունկնդրման կազմակերպման օրինակելի տարբերակ՝ ըստ պարապմունքների

1-ին պարապմունք:

Թեման՝ «Գնացք», երաժշտ.՝ Ա. Լուսինյանի:

Դաստիարակը հակիրճ տեղեկություններ է տալիս ստեղծագործության անվանման մասին:

Նախնական ունկնդրում՝ երաժշտության բնույթի բացահայտում: Կրկնակի ունկնդրում:

Դաստիարակ՝ երեխաներ, դուք հիշում եք, որ ես ձեզ համար նվագել եմ Ա. Լուսինյանի երկու պիեսներ՝ «Թզուկ» և «Արջուկ»: Այժմ ես ձեզ համար կնվագեմ Լուսինյանի երկու պիեսները:

սինյանի ևս մեկ պիես՝ «Գնացք»-ը: Ի՞նչ ուրախ է այն. կարելի է այդ երաժշտության ուղեկցությամբ քայլել: Լսեք այն ևս մեկ անգամ /*նվագում է*: Ինչպե՞ս է կոչվում այս պիեսը, ո՞վ է այն գրել / լսում է և ճշտում երեխաների պատասխանները/:

2-րդ պարապմունք

Կրկնակի ունկնդրում՝ դիմամիկ աճի և տենպի արագացման պարզաբանում:

Պատարակ՝ երեխանե՛ր, լսենք Ա.Լուսինյանի «Գնացք» ստեղծագործությունը: Լսե՛ք ուշադիր և ասեք, արդյոք, ես անընդհատ նույն ձևով եմ նվագում /լսում է երեխաների պատասխանները/:

Սկզբում ես նվագեցի դանդաղ և մեղմ, իսկ հետո ավելի արագ և ուժեղ: Գնացքը սկզբում շարժվում է դանդաղ, հետո արագացնում է ընթացքը: Այժմ ես մեկ անգամ էլ կնվագեմ ձեզ համար:

3-րդ պարապմունք

Պիեսի ճանաչում: Առանձին հատվածների կատարում:

Պատարակ՝ Ի՞նչ եմ ես նվագում /լսում է պատասխանները/: Դա ուրախ, աշխույժ երաժշտություն է: Ո՞վ է հիշում, ինչպե՞ս է կոչվում այն, և ո՞վ է հեղինակը:

Այս ստեղծագործությամբ կոմպոզիտոր Ա. Լուսինյանը պատկերել է գնացքի ընթացքը՝ սկզբում դանդաղ և մեղմ, հետո արագ ու ուժեղ: Վերջում դանաղում և կանգ է առնում գնացքը, ավարտվում է նաև երաժշտությունը:

4-րդ պարապմունք

Պիեսի ճանաչում, բնույթի պարզաբանում:

Պատարակ՝ Երեխանե՛ր, լսե՛ք երաժշտությունը: Պատասխանե՛ք՝ ինչպե՞ս է կոչվում այս պիեսը, ո՞վ է այն գրել / լսում է պատասխանները/: Երեխանե՛ր, ո՞վ կպատմի երաժշտության բնույթի և տրամադրության մասին:

Նոր ունկնդրումն ավարտվում է, սակայն դաստիարակը պարբերաբար անդրադառնում է այդ ստեղծագործությանը:

Տոնահանդեսներ և զվարճանքներ

Տոնական հանդեսների, զվարճանքների նշանակությունը, դրանց կազմակերպումն ու անցկացումը:

Տոնական հանդեսների ու զվարճանքների կազմակերպումն ու անցկացումը մանկապարտեզում տարվող մանկավարժական աշխատանքների կարևոր բաղադրամասն է: Դրանց շնորհիվ իրագործվում են երեխաների բարոյական, մտավոր, գեղագիտական, աշխատանքային, ֆիզիկական դաստիարակության խնդիրները:

Արվեստի տարբեր ճյուղերի համատեղումը տոնական հանդեսների և զվաճանքների ժամանակ ներգործուն ազդեցություն է ունենում երեխաների զգայական աշխարհի և գիտակցության վրա:

Տոնական հանդեսների և զվարճանքների նախապատրաստումն ու ճիշտ կազմակերպումը մեծապես նպաստում են նախադպրոցականի դաստիարակության գործին: Երեխաները համախմբվում են, ապրում ընդհանուր հետաքրքրություններով, նրանց մեջ մշակվում է վարվելակերպի կուլտուրա, կարգապահություն:

Մեծ է ժողովրդական ստեղծագործությունների, հայրենիքին ու բնությանը, աշխատանքին նվիրված երգերի ու բանաստեղծությունների դերը հայրենասիրական ազնիվ զգացմունքների ձևավորման գործում:

Տոների և զվարճանքների համար սովորած երգերը, տարբեր ազգերի պարերը օգնում են հաղորդակցվելու տարբեր ազգերի մշակույթին, ձևավորելու գեղագիտական ճաշակ, ընդլայնելու երեխաների մտահորիզոնը, զարգացնելու հիշողությունը, երևակայությունը, նպաստելու մտավոր զարգացմանը:

Երաժշտական խաղերը, պարերը ամրապնդում և զարգացնում են երեխաների օրգանիզմը, նպաստում շարժումների ներդաշնակությանը:

Տոնական հանդեսների և զվարճանքների նախապատրաստումն ու անցկացումն իրականացվում է պլանավորված և պարբերաբար՝ չխանգարելով մանկապարտեզի ընդհանուր աշխատանքներին:

Այս տարիքային խմբի երեխաներն իրենց մասնակցությունն ունեն բոլոր հանդեսներին:

Հանդեսների կամ ցերեկույթների տևողությունը չպետք է գերազանցի 25 րոպեն:

Տարվա ընթացքում նախատեսվում է անցկացնել՝ Աշնան տոն, Ամանոր, Սուրբ Ծնունդ, Գարնան կամ ծաղկի տոն, Սուրբ Ջատիկ, Ծաղկազարդ, Բանակի տոն: Մանկապարտեզի ծրագրով նախատեսված մյուս բոլոր հանդեսներին և ցերեկույթներին այս տարիքի երեխաներն ունեն իրենց լիարժեք դերակատարումը: Հանդեսների ծրագրերը կազմվում են տարվա ընթացքում երեխաների կողմից սովորած և յուրացված երգերից, պարերից և բանաստեղծություններից: Ծրագրում կարող են ընդգրկվել ծրագրից դուրս երգեր, սակայն դրանք պետք է հաստատված լինեն նախարարության հանձնաժողովի կողմից՝ համապատասխան են երեխաների տարիքային առանձնահատկություններին և ձայնածավալին:

Չվարճանքներն անցկացվում են շաբաթը մեկ անգամ, 25-30 րոպե տևողությամբ:

Հանդեսների և զվաճանքների ծրագրերը կազմվում են տարվա սկզբին և հաստատվում մանկավարժական խորհրդի նիստում: Ձվարճանքներն անցկացվում են բացառապես օրվա երկրորդ կեսին:

Ձվարճանքների նպատակն է՝ ուրախության անմոռանալի պահեր պարզևել երեխաներին: Ձվարճանքի ժամանակ նոր նյութ չի ուսուցանվում:

Ներկայացնում ենք երկու ամսվա օրինակելի ծրագրի տարբերակ:

Նոյեմբեր

1. Մրցույթ մանկական նկարչություն ասֆալտի վրա՝ «Թող լինի միշտ արևը» թեմայով:

2. Ավագ խմբի երեխաները ելույթ են ունենում փոքրիկների համար:

3. Տիկնիկային թատրոն՝ «Բարեկենդանը» հեքիաթը:

4. Ծննդյան օրվա նշում: «Ճուտիկների մանկապարտեզ» - երգի բեմականացում: Երաժշտ.՝ Ա. Լուսինյանի, խոսք՝ Ն. Միքայելյանի:

Մայիս

1. Երաժշտական մրցույթ

2. Գրական երաժշտական ժամ «Կեցցե՛ հաղթանակի օրը»:

3. Մեզ հյուր են եկել պարային ստուդիայի սաները:

4. Ծննդյան օրվա նշում: Հ. Թումանյանի հեքիաթը «Ծիտը» ցուցադրում են խավատախտակի վրա:

ԸՆՏԱՆԻՔ ԵՎ ՄԱՆԿԱՊՈՐՏԵԶ

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների ու հակակրանքների մասին: Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին:

Մանկապարտեզ-ընտանիք համագործակցության արդյունքում պետք է իրականացվեն հետևյալ խնդիրները.

1. Ծնողներին ծանոթացնել մանկապարտեզում իրականացվող մանկավարժական գործընթացի առանձնահատկություններին, նախադպրոցականի դաստիարակության և զարգացման ժամանակակից մոտեցումներին:

2. Ճիշտ հաղորդակցվել երեխայի հետ, գնահատել նրա ձեռքբերումներն ու շտկել թերությունները:

3. Ապահովել յուրաքանչյուր ծնողի ակտիվ մասնակցությունը մանկապարտեզի մանկավարժական գործընթացին:

4. Աշխատանք տանել ծնողների մանկավարժական գիտելիքների բարելավման ուղղությամբ:

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Անտարակույս, նա է իր կրթության ու զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում: Սակայն համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողության:

Առաջարկում ենք մանկապարտեզի և ընտանիքի կանոնավոր ու արդյունավետ համագործակցության հետևյալ ուղղությունները.

- **Շաբաթական կամ ամսական լրատուներ.** տեղեկություններ են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները:

- **Ծնողական ժողովներ.** քննարկվում են կրթության կամ երեխայի զարգացման փուլերին առնչվող մտահոգություններին առնչվող հարցեր:

- **Ծնողական համաժողովներ.** դրանց նպատակը ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակումն է:

- **Առավոտյան հանդիպումների** ընթացքում ծնողներին նախապես հայտնվում են ներկայացվող թեմաները, որոնք սովորաբար զետեղվում են շաբաթական լրատուներում:

- *Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին*. Այդ ժամանակ դաստիարակները ներկայացնում են այն գործողությունները, որոնք հաջողությամբ են իրականացվել երեխաների հետ և կարող են կատարվել նաև տանը:

- *Գրքերի փոխանակումներ*. սրանք ոչ պաշտոնական հանդիպումներ են այն ծնողների և մանկավարժների համար, ովքեր հետաքրքրվում են գրքով: Նրանք հավաքվում են՝ կիսելու իրենց մտորումներն ու կարծիքներն ընթերցած գրքերի մասին:

- *Այցելություններ ընտանիք*
- *Քաց դռների օրեր*
- *Հարց ու պատասխանի ցերեկույթներ*
- *Մանկավարժական հյուրասրահ*
- *Գաղափարների տոնավաճառ*
- *Վստահության հեռախոս*
- *Քարի գործերի օրեր*
- *Կլոր սեղան*
- *Ջրույցներ՝ անհատական և խմբային*
- *խորհրդատվություններ՝ անհատական, ենթախմբերով և խմբային*
- *Անկետավորում*
- *Երեխաների ընդհանուր նպատակային զննումներ*
- *Փառատոներ և տոնակատարություններ*
- *Սպորտային միջոցառումներ*
- *Ցերեկույթներ*

Կարևոր տեղ է հատկացվում **ծնող-մանկավարժ** ժողովների անցկացմանը: Դրանց նախապատրաստումը դաստիարակները պետք է դիտեն որպես մի շարունակական գործընթաց, որի ժամանակ ծնողներին տեղեկատվության ձևով հաղորդվում են մանկավարժական գիտելիքներ::

Ձևավորվում են պաստառներ, որոնցում տեղադրվելու են ծնողների համար խորհրդատվական նյութեր՝ բոլոր բաժինների ծրագրով: Հատուկ թղթապանակներով ներկայացվում են հակիրճ տեղեկատվական խորհրդատվություններ՝ մանկավարժի, հոգեբանի և բժշկի կողմից: Կան այլ **թղթապանակներ**, որոնցում դաստիարակները տեղադրում են ֆոտոնյութեր: Դրանց միջոցով լուսաբանվում է երեխաների մասնակցությունը մանկապարտեզի միջոցառումներին: Հատուկ ուշադրության են արժանի **«խորհուրդ են տալիս ծնողները»** ընդհանուր խորագրով նյութերը /այստեղ հայրիկները և մայրիկները գաղտնիքներ են փոխանակում/: Ներառված են նաև «Նոր բուժման ձև գրիպից», «Աղցանների բաղադրատոմսեր», «Լա-

վագույն տոնական սեղան՝ ծնողների մասնակցությամբ» և այլ օգտակար խորհուրդներ:

ժողովների անցկացման ուղեցուցիչներ

- ճանաչելով ընտանիքներին՝ դուք ավելի հեշտությամբ կհարմարվեք ծնողների միջև առկա անհատական տարբերություններին²: Ծնողների վերաբերմունքն ըստ իրենց կրթության և փորձի՝ կարող է տատանվել *գոհունակությունից մինչև թերահավատություն*³: Նախապես իմանալով ժողովների նկատմամբ ծնողների վերաբերմունքի այս տարբերությունները՝ յուրաքանչյուր իրադրությունից դուրս գալու համար ձեզ ավելի պատրաստ կզգաք:

- ժողովների մասին հայտարարությունից և ընդհանուր տեղեկատվությունից բացի՝ յուրաքանչյուր ծնողի կոնկրետ տեղեկություններ հաղորդեք ժողովին առնչվող ձեր նպատակների մասին: Այդ կերպ նրանք մինչև ձեր հանդիպումը մտածելու բան կունենան: Ժամանակ հատկացրեք ժողովի համապատասխան միջավայրի ստեղծմանը:

- Ստեղծեք ընկերական մթնոլորտ՝ թեթև հյուրասիրությունն առաջարկելով: Ծնողների հետ քննարկեք երեխային առնչվող սոցիալական, հուզական, կրթական, ճանաչողական և ֆիզիկական նպատակները: Բացատրեք, թե ինչպես կարելի է հասնել դրանց: Նշեք անհրաժեշտ ռազմավարություններն ու պլանները:

ժողովներ վարելիս հարկավոր է ձգտել՝

- օգնել ծնողներին՝ իրենց հանգիստ, հարմարավետ և ցանկալի հյուր զգալ, քանի որ մանկապարտեզը մանկավարժի «տարածքն» է,

- ծնողների հետ հաղորդակցվել՝ իրենց մակարդակին համապատասխան, խուսափել նեղ մասնագիտական բառապաշարի օգտագործումից,

- շեշտը դնել երեխայի բնավորության դրական հատկանիշների վրա,

- ծնողներին առաջարկել հատուկ մեթոդներ, որոնցով նրանք կարող են տանը օգնել իրենց երեխաներին:

Տնային այցելությունների ծրագրերը բովանդակային և մեթոդական առումով խիստ բազմազան են: Դրանք իրարից նշանակալիորեն տարբերվում են ըստ այն հանգամանքի, թե այցելության նպատակը ծնողի հետ հաղորդակցումն է, երեխա՞ն, թե՞ ընտանիքը: Տնային այցելություն կատարողի և ծնողի միջև փոխհարաբերությունները պետք է կառուցվեն համագործակցային սկզբունքով:

Տնային այցելությունները մի յուրահատուկ ուղի են հարթում դեպի ընտանիք և բացառիկ տեղեկատվություն ապահովում ընտանեկան իրավիճակի մասին: Միև-

² Հայմեն, 1974:

³ Նեդլեր և Մաք ԱՖի, 1979:

նույն ժամանակ պետք չէ ակնկալել, որ տնային այցելությունները կկարողանան լուծել խոշոր հիմնախնդիրներ:

Ոչ պաշտոնական գրառումներ

Մանկավարժական կազմը կարող է երեխայի միջոցով տուն ուղարկել կարճ գրառումներ: Դրանք կպարունակեն ընտանիքի անդամներին ուղղված տեղեկություններ՝ երեխայի կողմից որոշակի հմտությունների ձեռք բերման կամ իրականացված որևէ այլ գործունեության մասին: Կարելի է նաև այդ կերպ շնորհակալություն հայտնել ծնողներին ուսումնական հաստատությանն այս կամ այն ձևով աջակցելու համար: Ընտանիքի անդամները նույնպես կարող են մանկավարժներին ուղարկել երախտագիտություն կամ որևէ խնդրանք պարունակող գրություններ:

Անհատական գրառումների գրքույկներ

Այս գրքույկները կարող են ամեն օր տնից հաստատություն և հակառակը փոխանցել ընթացիկ տեղեկատվությունը: Ընտանիքները կարող են մանկավարժներին նախազգուշացնել հատուկ իրադարձությունների, ինչպես, օրինակ, ծննդյան տոների, նոր աշխատանքի հնարավորության, ճանապարհորդությունների և այցելությունների մասին:

Պատի տեղեկատվական թերթեր

Պատի տեղեկատվական թերթն օգտակար է՝ ընտանիքներին միշտ թարմ տեղեկատվություն հաղորդելու առումով: Դրա միջոցով հնարավոր է ազդարարել ժողովները, հատուկ իրադարձությունները, ընտանիքների համար նախատեսված միջոցառումները, ընդհանուր առմամբ ուսումնական հաստատության անցուղարձը:

Առաջարկությունների տուփ

Ծնողներին առաջարկվում է՝ իրենց մտքերը, մտահոգությունները, առաջարկություններն ու հարցերը մանկավարժական կոլեկտիվի անդամներին ներկայացնել հատուկ տուփի միջոցով: Նրանք կարող են տուփի մեջ գցել գրավոր ձևակերպված իրենց հուզող հարցերը:

Նախադպրոցական հիմնարկներում պետք է գործեն նաև «Վստահության հեռախոս», «Մանկավարժի հյուրասրահ», «Գաղափարների տոնավաճառ»: Դրանք հաղորդակցության և համագործակցության ժամանակակից ձևեր են, որոնց միջոցով տարբեր մասնագետներ կապի մեջ են մտնում (ընդ որում, նրանք աշխատում են որոշակի օրերի և ժամերի ընթացքում, ասենք՝ ամեն ամսվա առաջին շաբաթվա օրերից մեկը) նախադպրոցականների ծնողների հետ և օժանդակում նրանց ամենատարբեր հարցերում:

Նպատակահարմար է տարվա ընթացքում անցկացնել մրցույթ՝ «Ամենահամերաշխ ընտանիքը»: Դրան մասնակցելու համար ընդհանուր ծնողական ժողովում ընտրվում են ամենակատիվ ծնողներն ու իրենց երեխաները:

Մանկապարտեզ-ընտանիք կապը հիմնվելու է փոխադարձ վստահության վրա: Արդյունավետ հաղորդակցությունը բազմապատկում է այն:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ՝ ՈւՂԴՎԱԾ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ

• Ծնողներին պարապմունքների և կազմակերպչական աշխատանքների մեջ ներգրավելու համար օգտագործե՛ք բազմատեսակ ձևեր: Ստեղծագործական և ճկուն մոտեցում ցուցաբերե՛ք:

• Ժողովները և հանդիպումները կազմակերպե՛ք ծնողներին հարմար ժամերի:

• Թո՛ւյլ տվե՛ք, որ ընտանիքն ինքը որոշի ընդհանուր գործին իր մասնակցության լավագույն ձևը:

• Պահպանե՛ք սերտ կապ:

Հետևե՛ք, որ մանկավարժական կոլեկտիվի անդամը յուրաքանչյուր երեխայի ծնողների հետ զրուցի առնվազն շաբաթը մեկ անգամ:

• Փորձե՛ք ներգրավել ամբողջ ընտանիքին:

Երբեմն հայրերը դուրս են մնում երեխաների համար իրականացվող ծրագրերից: Ստեղծագործաբար որոնե՛ք տարբերակներ՝ հայրերին, եղբայրներին, քույրերին և ընտանիքի մյուս անդամներին ներգրավելու համար:

• Հենվե՛ք երեխաների և ընտանիքի ուժեղ կողմերի վրա և արձագանքե՛ք դրականորեն:

• Եղե՛ք համբերատար: Պահպանե՛ք գաղտնիությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-15թթ. ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարության 2008 թ., մարտի 13, հ.10 արձանագրության որոշում:
2. 0-6 տարեկան երեխաների զարգացման չափորոշիչներ, ԿԳՆ 30 մարտի 2011թ. 257-Ն հրաման.
3. Մանուկյան Լ., Միտոյան Հ. և ուրիշներ, Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, Եր., 2008 թ.:
4. Միտոյան Հ., Սմբատյան Լ., Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, «Էդիթ Պրինտ», Եր., 2010թ.:
5. Միտոյան Հ., Վարվեցողություն, «Զանգակ-97», Եր., 1999թ.:
6. Լ. Մանուկյան և ուրիշներ, Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր «Զանգակ -97» հրատարակչություն, Երևան, 1999 թ.:
7. Լ.Մանուկյան,Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերը մանկապարտեզում,Երևան-1974 թ.:
8. Ս. Բաղդասարյան, Մայրենի լեզվի ծրագրային նյութեր,Երևան,1980 թ.:
9. Ֆիզիկական կուլտուրան մանկապարտեզում, Երևան, 1985 թ.:
10. Ռ. Առաքելյան, Շարժախաղեր, Երևան, 2009 թ.:
11. Ս. Հովեյան, Հայկական ազգային շարժախաղերը նախադպրոցական կրթական համակարգում, Երևան, 2010 թ.:
12. Ա. Չիլինգարյան, Բնության պահպանության և վերափոխման էկոլոգիական Ասպեկտներ, Երևան, 1995թ.:
13. Ս. Թուրունջյան, Ծաղկաբուծությունը դպրոցում, Եր., 2005թ.:
- 14.Գ.Մարտիրոսյան, Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում, Եր., 2002 թ.:
- 15.Ա.Ն. Զիմինա, Երաժշտական դաստիարակության և զարգացման հիմքերը, «Վլադոս», Մոսկվա, 2000թ.:
- 16.Կ.Ղազարյան, Երաժշտադիդակտիկ խաղեր, Երևան, 2007թ.:
- 17.Լ.Պողոսյան, Եկեք երգենք ու խաղանք, «Արևիկ», Երևան, 1997թ.:
- 18.Ա.Հովհաննիսյան և ուրիշներ, «Պարտեզ», Նախադպրոցական /5-6 տարեկան/ կրթադաստիարակչական ծրագիր:
19. Ս.Սարուխանյան,Խաղի, Երգի և պարի աշխարհ, «Լույս», հրատարակ., 1996թ.:
20. Ա.Լուսինյան, Կ.Ղազարյան, Երաժշտությունը մանկապարտեզում, «Զանգակ-97», Երևան, 2009 թ.:
- 21.Մետլինա Լ.,Ս.,Մաթեմատիկական մանկապարտեզում,Երևան, 1988թ.:
- 22.Հ.Հարությունյան, Ս. Չիբուխչյան, Մաթեմատիկայի իմ այբուբենը, մաս 1,2, Երևան, 2007 թ.:

23. Հարությունյան Հ., Ս., Խաղալով սովորենք մաթեմատիկա, Երևան, 2003 թ.:
24. Piaget J. Play, dreams and imitation-2008г
25. М.М Марковская «Уголок природы в детском саду»-2006г.
26. Т. И. Гризик « Из детства – в отрочество » комплексная программа Просвещение 2007г.
- 27.Н.А.Атарщикова, И.А.Осина, Е.В.Горюнова - “Развернутое перспективное планирование по программе воспитания и обучения в детском саду” -“Волгоград, 2010г.
- 28.М.А.Васильева, В.В Гербова, Т.С.Комарова-§Программа воспитания и обучения в детском саду”-Москва, Мозаика-Синтез , 2005г
- 29.Костина “Камертон” Москва,Просвещение-2004г
- 30.О.Ушакова.Е.Струнина»Методика развития речи детей»-Москва,2004г
- 31.Белошистая А.В Формирование и развитие математических способностей дошкольников М.Владос 2004
- 32.Шевелев К.В Дошкольная математика в играх М 2004
- 33.Цмоленцева А.А Сюжетно-дидактические игры с математическим содержанием М. 1997
- 34.Черенкова Е.Ф Развиваем Логику и мышление для детей 3-6 лет М., 2007.
- 35.Узорова О,Нефедова “1000 упражнений для подготовки к школе”М., 2002.
- 36.Попова Г,П Усачева “Занимательная математика “Волгоград, 2006.
- 37.Петерсон Лю,Г,Холина Н,П ” Математика для дошкольников часть 1,2” М.,1998
- 38.Колесникова Е,В,”Математика для детей 6-7 лет” М., 2008.
- 39.Соловьева Е,В “Математика и логика для детей дошкольников М,2001”
- 40.Программа воспитания и обучения в детском саду “Радуга”, Москва, 2006 г.
- 41.Общеобразовательная программа дош. образования «От рождения до школы», Москва, 2010 г.
- 42.Программа для родителей и воспитателей “Из детства — в отрочество”.Москва, 2006 г.
43. Программа развития и воспитания детей в детском саду «Детство» Санкт-Петербург, 2004 .
- 44.Методика обучения ИЗО деятельности и конструированию, Т.С Комарова, Москва 1991г.
- 45.ИЗО деятельность в детском саду, И.А.Лыкова, Москва, 2009г.
- 46.Декоративное рисование , В.В.Гаврилова, А.А.Артемьева, Волгоград 2011г.
- 47.Рисование с детьми 3-4 лет, Д.Н.Колдина, “Мозаика-Синтез”, 2008 г.
- 48.Нетрадиционные техники рисования в детском саду, Г.Н. Давыдова, Москва 2007г.
- 49.Аппликация в детском саду, А.Н Малышева, Н.В. Ермолова, Ярославль, 2002 г.

50. Занятия аппликацией в детском саду, З.А. Богатеева, Москва 1988 г.
51. Занятия по конструированию из строительного материала, Л.В. Куцакова, Москва 2007 г.
52. Конструирование из природного материала в детском саду, И.В.Новикова, Ярославль 2009 г.
53. Азбука лепки И.А.Лыкова, Москва 2005 г.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բացատրագիր	3
Ծրագրի կառուցվածքը և հիմնական առանձնահատկությունները	4
Միջին խմբի երեխաների հոգեֆիզիոլոգիական զարգացման տարիքային առանձնահատկությունները	5
Դաստիարակության և ուսուցման խնդիրները	9
Միջին խմբի շաբաթական պարապմունքների տեղաբաշխման օրինակելի ցանկ	11
Միջին խմբում տարեկան պարապմունքների քանակը	11
4-5 տարեկանների խմբի օրվա օրինակելի ռեժիմի տարբերակ	12
Ֆիզիկական դաստիարակություն	13
Չավելված N1. Կրթադաստիարակչական աշխատանքների պլանավորումը, ֆիզիկական դաստիարակության աշխատանքների կազմակերպումը.....	27
Մտավոր դաստիարակություն	36
Երեխան և շրջակա աշխարհը.....	36
Հասարակական կյանքի երևույթներ	37
Չավելված N 2. Մեթոդական ցուցումներ	38
ճանապարհային երթևեկության կանոնների ուսուցում	44
ճանապարհային երթևեկության կանոնների ուղղությամբ տարվող աշխատանքների հեռանկարային պլանավորում	46
Ծանոթացում բնությանը: Էկոլոգիական դաստիարակություն	49
Չավելված N 3. Մեթոդական ցուցումներ: Էկոլոգիական միջավայրի ձևավորում	55
Կրթադաստիարակչական աշխատանքների հեռանկարային պլանավորում, մեթոդական ցուցումներ	58
Խոսքի զարգացում	61
Չավելված N 4. Խոսքի զարգացման պարապմունքների կազմակերպման նմուշ օրինակ	70
Տարրական նախնադաստիարակական պատկերացումների զարգացում.....	81
Չավելված N 5. Մեթոդական ցուցումներ, հանձնարարականներ	90
Բարոյական դաստիարակություն	104
Աշխատանքային դաստիարակություն	105
Չավելված N 6. Կրթադաստիարակչական աշխատանքների հեռանկարային պլանավորում, մեթոդական ցուցումներ	107
Խաղային գործունեություն	110

Ֆավելված N 7. Ինտեգրված թեմատիկ պարապմունքների հեռանկարային պլանավորում	122
Գեղարվեստա-գեղագիտական դաստիարակություն.....	124
Ֆավելված N 8. Մեթոդական ցուցումներ, կրթադաստիարակչական աշխատանքների հեռանկարային պլանավորում	132
Երաժշտական դաստիարակություն.....	142
Ֆավելված N 9. Մեթոդական ցուցումներ, կրթադաստիարակչական աշխատանքների հեռանկարային պլանավորում	148
Ընտանիք և մանկապարտեզ	157
Օգտագործված գրականության ցանկ.....	163

**ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԻՋԻՆ ԽՄԲԻ
(4-5 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ)
ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐ**

Ծրագրի համակարգող՝ Հ. Միտոյան
Հեղինակային խումբ՝

Հ. Միտոյան, Ս. Մարության - *մանկ. գիտ. թեկնածու, պրոֆ-ր,*
Լ. Սմբատյան, Հ. Մինասյան, Գ. Մարտիրոսյան, Հ. Հարությունյան,
Կ. Ղազարյան, Լ. Վերոյան, Ժ. Ավետիսյան

Հրատարակչական աշխատանքները՝ Մարիամ Պետրոսյանի
Աշխեն Այվազյանի

Սրբագրիչ՝

Գոհար Ամիրբեկյան

Ստորագրված է տպագրության 03. 11. 2011 թ.: Ծավալը՝ 10.5 մամուլ:
Ֆորմատ՝ 70X100^{1/16}:
Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 2000 օր.:
«Կրթության ազգային ինստիտուտ», Երևան, Տիգրան Մեծի 67, հեռ.՝ 57 48 20:

ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ